# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009-2012 ԹԹ. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ 2011 Թ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ
## (2011 Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ)

ԵՐԵՎԱՆ - 2011

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ....................3

1. ՀՌԻՄԾ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ ....................5

2. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ....................11

3. ՀՌԻՄԾ 2011Թ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԸՍՏ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ....................30

3.1 Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտ....30

3.2 Հանրային ֆինանսների կառավարման ոլորտ ....................33

3.3 Պետական գնումների համակարգ ....................42

3.4 Հարկային և մաքսային համակարգեր ....................46

3.5 Կրթության ոլորտ ....................57

3.6 Առողջապահության ոլորտ ....................67

3.7 Դատական համակարգ ....................85

3.8 Քրեակատարողական ծառայություն ....................88

3.9 Իրավաբանական անձանց պետական գրանցում ....................90

3.10 Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն ....................92

3.11 ՀՀ ոստիկանություն ....................94

3.12 Քաղաքական կոռուպցիա ....................103

3.13 Ընտրական համակարգ ....................109

3.14 Տեղական ինքնակառավարում ....................118

3.15 Մասնավոր հատված ....................124

3.16 Բարեխղճությունը հանրային ծառայությունում ....................130

3.17 Հրապարակային հաշվետվություն ....................145

3.18 Կոռուպցիայի քրեականացում և իրավապահ գործունեություն ....................146

3.19 Կադրերի պատրաստում և վերապատրաստում, կոռուպցիայի մասին տեղեկատվության կառավարում ....................158

3.20 Կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության աջակցություն ....................166

3.21 ՀՌԻՄԾ մոնիտորինգի ու գնահատման համակարգը ....................173

3.22 Հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմիններ ....................176

4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ....................178

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագիրը (ՀՌԻՄԾ) ՀՀ կառավարությունը հաստատել է 2009թ. հոկտեմբերի 8-ի թիվ 1272-Ն որոշմամբ: Նույն որոշմամբ սահմանվել են ՀՌԻՄԾ մոնիտորինգի իրականացման մոտեցումներն ու պահանջները:

ՀՀ Նախագահի 2004թ. հունիսի 1-ի թիվ 100-Ն հրամանագրի 14-րդ կետով ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի աշխատանքների համակարգումն իրականացնում է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովը (ՀՌԻՄՀ):

ՀՌԻՄԾ 2011թ. արդյունքների մոնիտորինգի առաջին կիսամյակի հաշվետվությունը մշակվել է ի կատարումն ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 8-ի թիվ 1272-Ն վերը հիշատակված որոշման 5-րդ կետի պահանջների և ՀՀ ՀՌԻՄՀ նախագահի` ՀՀ հանրապետական գործադիր մարմինների կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի անդամներին ու օրենքով ստեղծված մարմինների ղեկավարներին ուղղված նամակ- հանձնարարականների հիման վրա:

ՀՌԻՄԾ 2011թ. արդյունքների մոնիտորինգն ու գնահատումն իրականացվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 254-րդ կետի և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի 120.1 կետի պահանջներով: ՀՌԻՄԾ 2011թ. արդյունքների մոնիտորինգի առաջին կիսամյակի հաշվետվության նյութերը մշակվել են ՀՌԻՄԾ իրականացման պատասխանատու ՀՀ հանրապետական գործադիր և այլ մարմինների կողմից:

ՀՌԻՄԾ 2011թ. արդյունքների կատարման առաջին կիսամյակի հաշվետվությունը կազմվել է ՀՀ հանրապետական գործադիր ու օրենքով ստեղծված այլ մարմիններից ստացված նյութերի հիման վրա` «ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի իրականացման մոնիտորինգի արդյունքների հաշվետվության կազմման ուղեցույցի» պահանջներին համապատասխան:

ՀՌԻՄԾ մոնիտորինգն իրականացվել է 2011թ. համար նախատեսված ակնկալվող արդյունք-ների դիտարկմամբ: Յուրաքանչյուր արդյունքի համար գնահատվել է դրա իրականացվածության աստիճանը, այն հիմնավորող փաստացի կամ իրավական հիմքերը, չիրականացվածության պատ-ճառները:

Հաշվետվությունը բաղկացած է չորս հիմնական բաժիններից:

**Հաշվետվության «1. ՀՌԻՄԾ գնահատման հիմնական ցուցիչները» բաժնում** տրված են Հայաստանում կոռուպցիայի ընկալման մակարդակը և դրա փոփոխության պատճառները նկարա-գրող, միջազգային կազմակերպությունների կողմից հաշվարկվող, 9 ցուցիչների արժեքները և դրանց փոփոխության միտումները:

Այդ ցուցիչներից Թրանսփերենսի Ինթերնեյշնլ կազմակերպության կողմից հաշվարկվող «**Կոռուպցիայի ընկալման ինդեքսը»** և Համաշխարհային բանկի ինստիտուտի կողմից հաշվարկվող «**Կոռուպցիայի վերահսկման ինդեքսը»** ՀՌԻՄԾ-ով սահմանված են որպես Հայաստանում կոռուպցիայի գնահատման վերջնական ցուցիչներ:

Մյուս 7 ցուցիչները, որոնք ՀՌԻՄԾ-ում սահմանված են կոռուպցիայի գնահատման միջանկյալ ցուցիչներ, գնահատում են պետության կառավարման այն առանձնահատկությունները, որոնք շաղկապված են կոռուպցիայի մակարդակի հետ և, հետևաբար, ունակ են բացատրելու կոռուպցիայի աճի կամ նվազման պատճառները: Այդ ցուցիչներն են` Համաշխարհային բանկի ինստիտուտի կողմից հաշվարկվող «**Կարգավորման որակի ինդեքսը**», «**Կառավարման արդյունավետության ինդեքսը**», «**Օրենքի գերակայության ինդեքսը**», «**Ձայնի լսելիության և հաշվետվողականության ինդեքսը**», «**Քաղաքական կայունության և ճնշումների բացակայության ինդեքսը**», ինչպես նաև Ֆրիդոմ Հաուս միջազգային կազմակերպության կողմից հաշվարկվող «**Քաղաքական իրավունքների ինդեքսը**» և «**Քաղաքացիական ազատությունների ինդեքսը**»:

**Հաշվետվության «2. Ամփոփ նկարագրություն» բաժնում** տրված են 2011թ. Հայաստանի հասա-րակությունում կոռուպցիոն իրավիճակի փոփոխության ընկալումները: Դրանք հիմնված են «Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվության ինստիտուտի «ՀՀ իշխանությունների գործունեության գնահատականները. տեսանելիությունը, ձեռքբերումներն ու բացթողումները սոցիոլո-գիական հետազոտության»[1] տվյալների վրա: Դա պայմանավորված է նրանով, որ հաշվետվության կազմավորման ժամանակահատվածում (2011թ. օգոստոս) Թրանսփերենսի Ինթերնեյշնլ, Համաշ-խարհային բանկի ինստիտուտ և Ֆրիդոմ Հաուս միջազգային կազմակերպությունները դեռևս չեն

[1] Հետազոտությունը տեղադրված է ՀՀ Կառավարության http://www.gov.am/am/announcements/ կայքէջում:

հրապարակել 2011 և 2010 թվականների ցուցիչների արժեքները: Մյուս կողմից, ԱՄՆ ՄԶԳ «Հակակոռուպցիոն գործողությունների մոբիլիզացման ծրագրի» աջակցությամբ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան (ՀՌԿԿ) կազմակերպության կողմից «Կոռուպցիան Հայաստանում. տնային տնտեսությունների հետազոտություն»-ը իրականացվել էր 2010թ. աշնանը և, հետևաբար, այն կիրառելի չէ 2011թ. Հայաստանի հասարակությունում կոռուպցիայի մակարդակի ընկալման և դրա հետ շաղկապված հարցերի ուսումնասիրության համար:

Հաշվետվության **«3. ՀՌԻՄԾ 2010թ. արդյունքները ըստ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտների ու բնագավառների» բաժնում** ներկայացված է ՀՌԻՄԾ 2011թ.ակնկալվող արդյունքների գործոնային մակարդակում մոնիտորինգը՝ ըստ ՀՌԻՄԾ 2009-2012թթ ռազմավարության դրույթների ու միջոցառումների: Մոնիտորինգի ու գնահատման են ենթարկվել յուրաքանչյուր միջոցառումից 2011թ. ակնկալվող արդյունքների փաստացի ստացումը և հաշվարկվել են յուրաքանչյուր ռազմավարական դրույթի իրականացվածության չափն արտահայտող գործոնային ցուցիչների փաստացի արժեքները: ՀՌԻՄԾ ըստ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտների ու բնագավառների 2011թ. արդյունքների իրավիճակի ու ընթացքի վերաբերյալ մեկնաբանությունները, դրանց կատարման (կատարված է ամբողջությամբ, կատարված է մասնակիորեն և չի կատարված) գնահատականները, ինչպես նաև ցուցիչների փաստացի արժեքների վերաբերյալ տվյալները հավաքագրվել ու սահմանվել են ՀՀ պետական մարմինների մոնիտորինգի ու գնահատման պատասխանատուների կողմից և համաձայնեցված են համապատասխան մարմինների ղեկավարների հետ:

Հաշվետվության **«4.Առաջարկություններ» բաժնում** ներկայացված են ՀՀ պետական մարմինների ՀՌԻՄԾ մոնիտորինգի պատասխանատուների կողմից իրականացված մոնիտորինգի արդյունքում նկատված ու բացահայտված բացերի վերաբերյալ նկատառումները: Դրանք հիմնականում վերաբերում են ՀՌԻՄԾ այս կամ այն ռազմավարական դրույթի միջոցառումների պատասխանատու կատարող գերատեսչության փոփոխությանը, նախանշված միջոցառումների, աղյունքների ու սահմանված ցուցիչների վերանայմանը: Դրա հետ մեկտեղ առաջարկությունների մի մասն առընչվում է նաև գնահատող ցուցիչների հաշվարկման գործում մեխանիզմների ու գործընթացների սահմանմանը, միջգերատեսչական համագործակցության ապահովմանը: Այս բաժնում ներկայացված են նաև առաջարկներ ՀՀ-ում հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի լրամշակման վերաբերյալ:

ՀՌԻՄԾ 2009-2012թթ. ռազմավարության 2011թ. արդյունքների մոնիտորինգի առաջին կիսամյակի հաշվետվության նյութերը ամփոփվել են ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի կողմից ՀՌԻՄՀ-ին ցուցաբերվող աջակցության շրջանակում ներգրավված փորձագետների կողմից:

## 1. ՀՌԻՄԾ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ

ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագիրի նպատակներն ու ակնկալվող վերջնական արդյունքները (impact) գնահատվում են Թրանսփերենսի Ինթերնեյշնլ (ԹԻ) կազմակերպության «**Կոռուպցիայի ընկալման ինդեքսի**» և Համաշխարհային Բանկի Ինստիտուտի (ՀԲԻ) «**Կոռուպցիայի վերահսկման ինդեքսի**» միջոցով:

ՀՌԻՄԾ իրականացման ընթացքում ստացվող «ելքերը» (outcomes) կամ՝ ՀՌԻՄԾ տերմինաբանությամբ՝ **միջանկյալ մակարդակի** արդյունքները գնահատվում են հետևյալ ցուցիչներով:

1. **Գործառնական կոռուպցիայի**[2] նվազեցման ոլորտում առաջընթացը գնահատվում է ՀԲԻ «**Կառավարման արդյունավետության ինդեքսի**» և ՀԲԻ «**Կարգավորման որակի ինդեքսի**» միջոցով:
2. **Վարչական կոռուպցիայի**[3] նվազեցման ոլորտում առաջընթացը գնահատվում է ՀԲԻ «**Օրենքի գերակայության ինդեքսի**» և «**Ձայնի լսելիության ինդեքսի**» միջոցով:
3. **Քաղաքական կոռուպցիայի**[4] ոլորտում առաջընթացը գնահատվում է ՀԲԻ «**Քաղաքական կայունության և ճնշումների բացակայության ինդեքսի**», Ֆրիդոմ Հաուս (ՖՀ) կազմակերպության «**Քաղաքական իրավունքների ինդեքսի**» և ՖՀ «**Քաղաքացիական ազատությունների ինդեքսի**» միջոցով:

Նկատի ունենալով, որ սույն հաշվետվության կազմավորման ժամանակահատվածում (2011թ. օգոստոս) Համաշխարհային բանկի ինստիտուտ, Թրանսփերենսի Ինթերնեյշնլ և Ֆրիդոմ Հաուս միջազգային կազմակերպությունները դեռևս չեն հրապարակել համապատասխանաբար 2010 և 2011 թվականների ցուցիչների արժեքները, այդ իսկ պատճառով ՀՌԻՄԾ վերջնական և միջանկյալ մակարդակում արդյունավետության գնահատման համար օգտագործված են վերը նշված 9 ցուցիչների 2009 և 2010 թվականների արժեքները և դրանց փոփոխության միտումները վերջին տասնամյակում:

Աղյուսակ 1-ում տրված են նշված 9 ինդեքսների բազային արժեքները,[5] սույն զեկույցի կազմավորման ընթացքում հրապարակված վերջին տարվա՝ 2009թ. արժեքները,[6] ՀՌԻՄԾ-ով 2012 թվականի համար սահմանված թիրախ արժեքները և յուրաքանչյուր ինդեքսի չափման սանդղակը: Բոլոր ինդեքսների փոփոխությունները՝ սկսած դրանց գնահատման առաջին տարվանից ընդհուպ մինչև 2009թ. գնահատականները, տրված են Դիագրամ 1-ից 9-ում: Ստորև տրված են բոլոր ինդեքսների բովանդակության բացատրությունները, դրանց փաստացի արժեքները և փոփոխության միտումների համառոտ մեկնաբանությունները:

**«Կոռուպցիայի ընկալման ինդեքս» (ԹԻ).** Ցուցիչը գնահատում է կոռուպցիայի մակարդակը հասարակական ընկալումներում: Ցուցիչի փոփոխության միջակայքն է 0-ից 10-ը: Որքան բարձր է գնահատականը, այնքան հասարակության ընկալումներում քիչ կոռումպացված է համարվում տվյալ երկիրը: 2010թ.ՀՌԻՄԾ-ով ցուցիչի թիրախ արժեք 2012թ. համար սահմանվել է 4.1-ը: 2010թ. Հայաստանը «Կոռուպցիայի ընկալման ինդեքսի» 2.6 արժեքով, 178 երկրների շարքում կիսել է 123-126 տեղերը: Ադրբեջանը նույն ինդեքսի 2.4 արժեքով զբաղվում էր 134-րդ տեղը, իսկ Վրաստանը՝ ինդեքսի 3.8 արժեքով՝ 68-րդ տեղում էր: 2007-2010թթ. Հայաստանում դիտվել է «Կոռուպցիայի ընկալման ինդեքսի» նվազման միտում 3.0-ից՝ մինչև 2.6: Հետևաբար, ԹԻ «Կոռուպցիայի ընկալման ինդեքսի» տեսակետից, իրավիճակը Հայաստանում ոչ թե բարելավվում է, այլ հեռանում է 2012թ. թիրախ սահմանված 4.1 արժեքից:

**«Կոռուպցիայի վերահսկման ինդեքս» (ՀԲԻ).** Արտահայտում է հասարակական ընկալումները, թե որքանով են իշխանություններն իրենց դիրքն օգտագործում մասնավոր շահերի առաջխաղացման համար, որքանով են նրանք ընդգրկված խոշոր և փոքր չափի կոռուպցիայում, որքանով է «պետությունը գրավված» վերնախավերի և մասնավոր շահեր հետապնդող շրջանակների կողմից: Ցուցիչի փոփոխության միջակայքն է -2.5-ից՝ 2.5: Որքան ավելի բարձր է ցուցիչի արժեքը՝ այնքան ավելի ցածր է կոռուպցիայի մակարդակը:

---

[2] **Գործառնական կոռուպցիա**՝ կոռուպցիոն հարաբերությունների կամ վարքի տեսակ, որը նպատակաուղղված է արագացնելու գործընթացները կամ պաշտոնական ընթացակարգերը:

[3] **Վարչական կոռուպցիան** այն երևույթն է, երբ պաշտոնյան շահադիտական նպատակով խախտում է կամ վերապահորեն է կիրարկում գործող իրավական նորմերը:

[4] **Քաղաքական կոռուպցիա**՝ երբ կոռուպցիոն գործարքը նպատակաուղղված է օրենսդրական կամ կարգավորիչ նորմերի փոփոխությանը ի շահ մասնավոր անձի կամ խմբի: Քաղաքական կոռուպցիան հանրային քաղաքականությունը ծառայեցնում է մասնավոր շահերին, որը խաթարում է մրցակցային միջավայրը և խոչընդոտում է քաղաքացիական հասարակության կայացման:

[5] Այդ ինդեքսների համար որպես բազային արժեքներ են սահմանվել դրանց՝ ՀՌԻՄԾ իրականացմանը նախորդած 2008 թվականի արժեքները:

[6] Զեկույցի նախապատրաստման փուլում 2010թ. համար հրապարակված էին միայն ԹԻ “Կոռուպցիայի ընկալման ինդեքսի», ՖՀ “Քաղաքական իրավունքների ինդեքսի» և “Քաղաքացիական ազատությունների ինդեքսի» արժեքները:

Այս ցուցիչի արժեքը Հայաստանում 2009թ. գնահատվել է -0.591: Հայաստանի համար ցուցիչի փոփոխության ընդհանուր միտումը 2000-2009թթ. եղել է աստիճանական բարելավումը՝ միջին հաշվով տարեկան 0.02 միավորով (այդ տարիների տվյալները մոտարկվում են y = 0.0209x - 42.445 հավասարմամբ): Եթե պահպանվի ցուցիչի վերջին 10 տարիների միտումը, ապա 2012թ. ցուցիչի արժեքը կկազմի -0.48 միավոր, այսինքն, այդ տեմպերով Հայաստանը կհասնի 2012թ. համար սահմանված թիրախ -0.05 արժեքին՝ 2028թ.:

**«Կարգավորման որակի ինդեքս» (ՀԲԻ).** Արտապատկերում է հասարակական ընկալումները, թե որքանով է կառավարությունն ունակ ձևակերպելու և իրականացնելու մասնավոր սեկտորի զարգացմանը նպաստող որակյալ քաղաքականություններ և կանոնակարգեր: Ցուցիչի արժեքը փոխվում է -2.5-ից 2.5 սահմաններում: Որքան բարձր է ցուցիչի արժեքը՝ այնքան բարձր է երկրում կարգավորման որակը:

ՀՌԻՄԾ-ում ցուցիչի թիրախ արժեքը 2012թ. համար սահմանված է 0.37 միավոր: ՀԲԻ կողմից իրականացված գնահատականների վերահաշվարկից հետո պարզվել է, որ 2008թ. ՀՀ-ն արդեն հասել էր այդ թիրախ արժեքին (0.379): 2009թ. ցուցիչի արժեքը հավասար էր 0.344, սակայն հաշվի առնելով գնահատականի վիճակագրական սխալի միջակայքը և ցուցանիշի գնահատականների ժամանակային շարքի միտումները 2005-2009թթ., կարելի է հիմնավորված համարել այն, որ այս ցուցանիշի գծով ՀՌԻՄԾ-ն հասել է իր թիրախ արժեքին:

**«Կառավարման արդյունավետության ինդեքս» (ՀԲԻ).** Արտապատկերում է հասարակական ընկալումները պետության կողմից մատուցվող հանրային և քաղաքացիական ծառայությունների որակի, քաղաքական ճնշումներից այդ ծառայությունների անկախության, իշխանությունների կողմից քաղաքականությունների ձևակերպման և իրականացման որակի նկատմամբ: Ցուցիչն արտապատկերում է նաև այն ընկալումները, թե որքանով են իշխանությունները միտված իրականացնելու իրենց իսկ ձևակերպած քաղաքականությունները: Ցուցիչի արժեքը փոխվում է -2.5-ից 2.5 սահմաններում: Որքան բարձր է ցուցիչի արժեքը՝ այնքան բարձր է երկրում կառավարման արդյունավետությունը:

ՀՌԻՄԾ-ում ցուցիչի թիրախ արժեքը 2012թ. համար սահմանվել է 0.15: «Կառավարման արդյունավետության ինդեքսի» միտումները 2007-2009թթ. ընթացքում բավական բարենպաստ են՝ երկու տարի շարունակ գրանցվել է ցուցիչի արժեքի աճ: Եթե առանց փոփոխության շարունակվի 2000-2009թթ. ընթացքում ցուցիչի տարեկան միջին աճը (որը մոտարկվում է y = 0.0569x - 114.35 մոդելով), ապա կարելի է սպասել, որ 2012թ. ցուցիչի արժեքը կհասնի 0.13-ի, որը վիճակագրական սխալի սահմաններում, միանգամայն բավարար է համարելու համար, որ այս ցուցիչի գծով ՀՌԻՄԾ-ն կհասնի իր նախանշված թիրախին:

**«Օրենքի գերակայության ինդեքս» (ՀԲԻ).** Արտապատկերում է ընկալումները, թե որքանով են պետական, գործարար և քաղաքացիական մարմիններն ու անձինք վստահում օրենքին և, միաժամանակ, հետևում օրենքին: Մասնավորապես, որքանով են նրանք կատարում գործող պայմանագրերի դրույթները, որքանով է պաշտպանված սեփականության իրավունքը, որքանով են ոստիկանությունն ու դատարանները հետևում օրենքի պահանջներին, որքանով են հավանական հանցագործություններն ու բռնությունները: Ինդեքսի արժեքը փոխվում է -2.5-ից 2.5 սահմաններում: Որքան բարձր է ինդեքսի արժեքը՝ այնքան ավելի բարձր է երկրում օրենքի գերակայությունը:

ՀՌԻՄԾ-ով ցուցիչի համար որպես 2012թ. թիրախ սահմանված է՝ -0.15-ը: 2000-2009թթ. միջակայքում ցուցանիշի արժեքը «տատանվել է» -0.4 արժեքի սահմաններում: Այդ միտումների պահպանման դեպքում Հայաստանի համար ցուցիչի արժեքը 2012թ. կլինի -0.42: Հետևաբար, անհրաժեշտ է բարձրացնել երկրում օրենքի գերակայությանը նպաստող գործողությունների արդյունավետությունը:[7]

**«Ձայնի լսելիության և հաշվետվողականության ինդեքս» (ՀԲԻ).** Արտապատկերում է, այն ընկալումները, թե որքանով են երկրի քաղաքացիներն ունակ մասնակցելու իրենց քաղաքական իշխանությունների ընտրությանը (կազմավորմանը), ինչպիսին է խոսքի, միավորումներ կազմելու և լրատվամիջոցների ազատությունը: Ցուցիչի արժեքը փոխվում է -2.5-ից 2.5 սահմաններում: Որքան բարձր է ցուցիչի արժեքը՝ այնքան երկրում ավելի բարձր է հաշվետվողականությունն ու ձայնի լսելիությունը:

[7] 2009թ. Զեկույցում այս ցուցանիշի դինամիկան մեկնաբանվել էր որպես դրական՝ հիմնվելով 2006-2008թթ. արձանագրված դրական աճի վրա: Սակայն ցուցանիշի 2009թ. արժեքը ցույց է տալիս, որ, այնուամենայնիվ, այս ցուցանիշի դինամիկան պետք է գնահատել ավելի երկարատև միջակայքի տվյալներով:

ՀՌԻՄԾ-ում ցուցիչի համար որպես 2012թ. թիրախ արժեք է սահմանվել 0.47-ը: 2009թ. ցուցիչի արժեքը եղել է -0.82 (ՀԲԻ վերահաշվարկի արդյունքում նվազել է նաև ցուցանիշի 2008թ. արժեքը՝ -0.66-ից մինչև -0.72): Ցուցիչի արժեքների դինամիկան բացասական է սկսած 2000 թվականից:

**«Քաղաքական կայունության և ճնշումների բացակայության ինդեքս» (ՀԲԻ).** Արտապատկերում է քաղաքացիների ընկալումները, թե որքանով է հավանական իշխանության ապակայունացումը, իշխանափոխությունը բռնի կամ ոչ սահմանադրական եղանակով, այդ թվում նաև՝ քաղաքական դրդապատճառներ ունեցող բռնություններն ու տեռորիզմը: Ցուցիչի արժեքը փոխվում է -2.5-ից 2.5 սահմաններում: Որքան բարձր է ցուցիչի արժեքը՝ այնքան երկրում ավելի բարձր է քաղաքական կայունությունը և ցածր են քաղաքական ճնշումները:

ՀՌԻՄԾ-ով որպես ցուցիչի թիրախ արժեք 2012թ. համար սահմանված է 0.23-ը: 2009թ. 2008-ի համեմատ ցուցիչի արժեքն աճել է հասնելով 0.09-ի (ՀԲԻ վերահաշվարկի արդյունքում 2008թ. գնահատականը նվազեցված է 0.01-ից՝ -0.07): Հայաստանում, այդ ցուցիչի փոփոխության միտումները 2000-2008թթ. եղել են դրական: Այդ միտումների պահպանման դեպքում կարելի է սպասել, որ ցուցիչի արժեքը 2010թ. կլինի՝ 0.318, այսինքն կգերազանցի իր 2012թ. թիրախ արժեքը:

**«Քաղաքական իրավունքների ինդեքս» (ՖՀ).** Այն արտապակերում է երկրում ընտրական գործընթացների, քաղաքական բազմակարծության և մասնակցության, ինչպես նաև կառավարության գործունեության իրավիճակը: Ցուցիչի արժեքը փոխվում է 1-7 միջակայքում: Որքան ավելի բարձր է ցուցիչի արժեքը, այնքան ավելի անբարենպաստ է երկրում ընտրական գործընթացների, քաղաքական բազմակարծության, մասնակցության և կառավարության գործունեության իրավիճակը:

ՀՌԻՄԾ-ով ցուցիչի թիրախ արժեքը 2012թ. համար սահմանվել է 2-ը: Ցուցիչի արժեքներն առավել բարենպաստ են եղել 1993-1994թթ. 2000-2003թթ. այն հավասար է եղել 4-ի, 2004-2007թթ. ընթացքում՝ 5-ի, իսկ 2008թ. ցուցիչի արժեքը դարձել է 6 և այդպիսին է մնացել 2009-ին: Ցուցիչի 6 արժեք ունեցող երկրների շարքում են՝ Աֆղանստանը, Ադրբեջանը, Եթովպիան, Իրանը, Ղազախստանը, Ռուսաստանը, Ռուանդան, Տաջիկստանը, Հորդանանը:

**«Քաղաքացիական ազատությունների ինդեքս» (ՖՀ).** Արտահայտում է երկրում առկա իրավիճակը խոսքի և խղճի, ասոցացիաների կազմավորելու և դրանց գործունեության ազատության, օրենքի գերիշխանության և անձի ազատության ոլորտներում: Ցուցիչը չափվում է 1-7 սանդղակով, որտեղ 7 արժեքն բնորոշում է քաղաքացիական ազատությունների ամենացածր մակարդակը: Որքան ավելի բարձր է ցուցիչի արժեքը, այնքան ավելի անբարենպաստ է երկրում իրավիճակը խոսքի, խղճի, ասոցացիաների կազմավորելու և դրանց գործունեության ազատության, ինչպես նաև օրենքի գերիշխանության և անձի ազատության ոլորտներում:

ՀՌԻՄԾ-ով որպես ցուցիչի թիրախ արժեք 2012թ. համար սահմանվել է 2-ը: Ցուցիչի արժեքը 2000-2009թթ. ընթացքում անփոփոխ կերպով հավասար է եղել 4-ի: Ցուցիչի 4 արժեք ունեն նաև այնպիսի երկրներ, ինչպիսիք են՝ Բանգլադեշը, Սինգապուրը, Կոստվոն, Կոլումբիան:

**Աղյուսակ 1. ՀՌԻՄԾ վերջնական և միջանկյալ արդյունքների գնահատման ցուցիչները**[8]

| Մակար-դակ | Արդյունք | Ցուցիչ | Բազային արժեք՝ 2008թ. | Արժեքը՝ 2009թ. | Թիրախ արժեք՝ 2012 | Չափման սանդղակ ցածր÷ բարձր |
|---|---|---|---|---|---|---|
| Վերջնա-կան | Կոռուպցիայի ընդհանուր մակարդակի կրճատում | 1. Կոռուպցիայի ընկալման ինդեքսը (ԹԻ) . | **2.7** (2009թ.) | **2.6** (2010թ.) | **4.1** | **0 ÷ 10** |
| | | 2. Կոռուպցիայի վերա-հսկման ինդեքսը (ՀԲԻ) | **-0.545** (-0.54) | **-0.591** | **-0.05** | **-2.5 ÷ 2.5** |
| Միջան-կյալ | Գործառնա-կան կոռուպցիա | 4. Կարգավորման որակ (ՀԲԻ) | **0.379** (0.32) | **0.344** | **0.37** | **-2.5 ÷ 2.5** |
| | | 3. Կառավարման արդյու-նավետություն (ՀԲԻ) | **-0.03** (-0.07) | **0.069** | **0.15** | **-2.5 ÷ 2.5** |

[8] Համաշխարհային բանկի ինստիտուտը յուրքանչյուր տարի հաշվարկում է նախորդ տարվա տվյալները (2010թ. ընթացքում հաշվարկվել են ցուցիչների գնահատականները 2009թ. համար: 2010թ. Արժեքները հաշվարկվելու են 2011թ. ընթացքում: Դրանք դեռևս բացակայում են): Միաժամանակ, ՀԲԻ-ն իրականացնում է նաև նախորդ տարիների գնահատականների վերահաշվարկ: Աղյուսակի «Բազային արժեք» սյունակում փակագծերում տրված են նախորդ տարվա չվերահաշվարկված գնահատականները, որոնք ներկայացված են եղել ՀՌԻՄԾ 2009թ. նախորդ զեկույցում: Առանց փակագծերի տրված են ներկայում գործող վերահաշվարկված գնահատականները:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Վարչական կոռուպցիա | 6. Օրենքի գերակայություն (ՀԲԻ) | **-0.28** (-0.36) | **-0.398** | **-0.15** | **-2.5 ÷ 2.5** |
| | | 5. Ձայնի լսելիություն և հաշվետվողականություն (ՀԲԻ) | **-0.72** (-0.66) | **-0.82** | **0.47** | **-2.5 ÷ 2.5** |
| | Քաղաքա-կան կո-ռուպցիա | 7. Քաղաքական կայու-նություն և ճնշումների բացակայություն (ՀԲԻ) | **-0.07** (0.01) | **0.09** | **0.23** | **-2.5 ÷ 2.5** |
| | | 8. Քաղաքական իրավունքներ (ՖՀ) | **6** | **6** | **2** | **7 ÷ 1** |
| | | 9. Քաղաքացիական ազատություններ (ՖՀ) | **4** | **4** | **2** | **7 ÷ 1** |

Դիագրամ 1




Դիագրամ 2




Դիագրամ 3




Դիագրամ 4



Դիագրամ **5**




Դիագրամ **6**




Դիագրամ **7**




Դիագրամ **8**




Դիագրամ **9**



ՀՌԻՄԾ գնահատման վերջնական և միջանկյալ ցուցիչների վերլուծությունը ցույց է տալիս, որ.

- Հայաստանի Հանրապետությունում առկա են հակակոռուպցիոն պայքարի արդյունավետության աճին նպաստող միտումներ: Մասնավորապես, 2008-2010թթ. ընթացքում նշանակալի չափով բարելավվել է պետական կառավարման որակը (ՀԲԻ «**Կարգավորման որակ**» և ՀԲԻ «**Կառավարման արդյունավետություն**» ինդեքսները աճել և հասել են ՀՌԻՄԾ-ով սահմանված թիրախ արժեքներին):
- Կոռուպցիայի նվազեցման համար ձևավորվել են բարենպաստ քաղաքական պայմաններ: Բարելավվել է ՀԲԻ «**Քաղաքական կայունության և ճնշումների բացակայության**» ինդեքսը:
- Այդուհանդերձ, հասարակական ու տնտեսական հարաբերություններում դեռևս շարունակում է ցածր մակարդակի վրա մնալ պետական, գործարար և քաղաքացիական մարմինների ու անձանց կողմից օրենքների նկատմամբ վստահությունը և դրանց կատարումը (ՀԲԻ «**Օրենքի գերակայություն**» ինդեքսի արժեքը մնում է ցածր և էական փոփոխություններ չեն գրանցվել):
- Բացասական միտումներ են արձանագրվում նաև պետական կառավարման մարմինների կողմից հասարակության հետ հետադարձ կապի արդյունավետության տեսակետից (նվազում է ՀԲԻ «**Ձայնի լսելիություն և հաշվետվողականություն**»ինդեքսի արժեքը):
- Հայաստանի պետական և հասարակական զարգացումների վրա հատկապես բացասական ազդեցություն են գործում ազգային մակարդակում ընտրությունների հետ առընչվող գործընթացները (նվազել է և շատ ցածր արժեք ունի ՖՀ «**Քաղաքական իրավունքների**» ինդեքսը):
- Հայաստանի հասարակությունում շարունակում է անբավարար դերակատարում ունենալ քաղաքացիական հասարակությունը (սկսած 1993 թվականից անփոփոխ է և ցածր արժեք ունի ՖՀ «**Քաղաքացիական ազատություններ**» ինդեքսը):

Նշված տարամետ միտումների հանրագումարային ազդեցության արդյունքում Հայաստանի հասարակության ընկալումներում 2008-2010թթ. ընթացքում Հայաստանում նվազել են ԹԻ «**Կոռուպցիայի ընկալման ինդեքսի**» և ՀԲԻ «**Կոռուպցիայի վերահսկման ինդեքսի**» արժեքները):

## 2. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում կոռուպցիայի մակարդակը և դրա հետ շաղկապված հարցերի ուսումնասիրությունը 2011 թվականին նկարագրված են «Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվության ինստիտուտի «ՀՀ իշխանությունների գործունեության գնահատականները. տեսանելիությունը, ձեռքբերումներն ու բացթողումները» համահայկական ներկայացուցչական սոցիոլոգիական հետազոտության տվյալների հիման վրա:[9]

«ԱՅ Փի Էս Սի» կազմակերպության եռամսյակային 5 հետազոտություններում, որոնք իրականացվել են 2010թ. հունիս - 2011թ. հունիս ընկած ժամանակահատվածում, առկա է մեկ հարց, [10] որին տրված պատասխանների հիման վրա կառուցված ժամանակային շարքերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս եզրակացություններ կատարել հասարակական ընկալումներում Հայաստանում կոռուպցիայի մակարդակի փոփոխության միտումների վերաբերյալ: Համաձայն այդ հետազոտական տվյալների, **2011թ. առաջին կիսամյակում, 2010թ. դեկտեմբերի համեմատ**, **դիտարկված ոլորտների վերաբերյալ հասարակական ընկալումներում, նվազել է այն անձանց քանակը, ովքեր համարում են, որ կոռուպցիան աճել է**:

Այսպես, եթե 2010թ. դեկտեմբերին հարցվածների 27.4%-ն էր համարում, որ դպրոցներում վերջին մեկ տարվա ընթացքում կոռուպցիան աճել է, ապա 2011թ. հունիսին նրանց թիվը նվազել է և դարձել՝19.4% (Աղյուսակ 2): Աղյուսակ 2-ի տվյալներից երևում է, որ համանման նվազում առկա է հետազոտությամբ ընդգրկված բոլոր ոլորտներում:

**Աղյուսակ 2. Ոլորտում «կոռուպցիան աճել է» և «կոռուպցիան նվազել է» համարող հարցվածները 2010թ. դեկտեմբերին և 2011թ. հունիսին[11] (տոկոսներով՝ հարցվածների քանակի նկատմամբ)**

| Ոլորտներ | Համարել են, որ «Կոռուպցիան նվազել է» (դեկ. 2010թ.) | Համարել են, որ «Կոռուպցիան նվազել է» (հունիս 2011թ.) | Համարել են, որ «Կոռուպցիան աճել է» (դեկ. 2010թ.) | Համարել են, որ «Կոռուպցիան աճել է» (հունիս 2011թ.) |
|---|---|---|---|---|
| Դպրոցներ | 27.7 | 36.4 | 27.4 | 19.4 |
| Բուհեր | 18.5 | 26.6 | 40.1 | 32.1 |
| Ճանապարհային ոստիկանություն | 33.9 | 41.9 | 31.1 | 24.5 |
| Բուժհաստատություններ | 22.7 | 30.8 | 34.9 | 27.9 |
| Հարկային մարմիններ | 19.5 | 24.8 | 35.8 | 27.9 |
| ՏԻՄ | 18.0 | 26.7 | 16.5 | 13.1 |
| Դատաիրավական մարմիններ | 15.9 | 21.8 | 37.5 | 28.4 |
| Կադաստր | 17.8 | 23.9 | 28.6 | 19.7 |

Միաժամանակ, **2011թ. առաջին կիսամյակում, 2010թ. դեկտեմբերի համեմատ**, **դիտարկված ոլորտների վերաբերյալ հասարակական ընկալումներում, աճել է այն անձանց քանակը, որոնք համարում են, որ Հայաստանում կոռուպցիան նվազել է:**

Այսպես, եթե 2010թ. դեկտեմբերին հարցվածների 33.9%-ն էր համարում, որ ճանապարհային ոստիկանությունում վերջին մեկ տարվա ընթացքում կոռուպցիան նվազել է, ապա 2011թ. հունիսին այդ անձանց քանակը դարձել է 41.9% (Աղյուսակ 2): Ընդ որում, երևույթը դիտվել է հետազոտությամբ ընդգրկված բոլոր ոլորտներում (Տես՝ Դիագրամ 10 - Դիագրամ 17 ):

Հետազոտության տվյալներից հետևում է, որ 2010թ. ընթացքում դիտարկված ոլորտներից կոռուպցիայի մակարդակի փոփոխության ընկալման տեսանկյունից առավել խնդրահարույց էին բուհերը (Դիագրամ 11), բուժհաստատությունները (Դիագրամ 13), հարկային մարմինները (Դիագրամ

[9] Բոլոր հետազոտություններում հարցվել են 1612 անձ, որոնցից 569-ը մայրաքաղաքում, իսկ 1043-ը՝ Հայաստանի 10 մարզերում:

[10] Հարցը ձևակերպված է հետևյալ շարադրմամբ. «Վերջին մեկ տարվա ընթացքում կաշառակերության մակարդակը նվազե՞լ է, մնացե՞լ է նույնը, թե՞ աճել է [ոլորտի անուն] ոլորտում»: Հետազոտություններում դիտարկվել են «դպրոցներ», «բուհեր», «ճանապարհային ոստիկանություն», «բուժհաստատություններ», «հարկային մարմիններ», «տեղական ինքնակառավարման մարմիններ», «դատաիրավական համակարգ» և «կադաստր» ոլորտները: Ոլորտները տրված են այն ձևակերպմամբ, որոնք կիրառվել են «ԱՅ Փի Էս Սի» կազմակերպության հետազոտություններումում: Ոլորտների անվանումները վերցված են չակերտների մեջ, քանի որ դրանք ուղղակիորեն չեն համապատասխանում ՀՌԻՄԾ ոլորտների անվանումներին:

[11] Աղբյուրը՝ Այ Փի Էս Սի, «ՀՀ իշխանությունների գործունեության գնահատականները. տեսանելիությունը, ձեռքբերումներն ու բացթողումները», դեկտեմբեր 2010թ. և հունիս 2011թ.:

14), դատաիրավական համակարգը (Դիագրամ 16) և կադաստրը (Դիագրամ 17), քանի որ այս ոլորտներում, 2010թ. ընթացքում, այն անձանց քանակը, ովքեր համարել էին, որ կոռուպցիան աճել է գերազանցում էր այն անձանց քանակին, ովքեր համարել էին, որ կոռուպցիան նվազել է: Սակայն, 2011թ. հունիսի տվյալներով, բուժհաստատություններում և կադաստրում իրավիճակը որակապես փոխվել է՝ այն անձանց քանակը, ովքեր համարում են, որ տվյալ ոլորտում կոռուպցիան նվազել է գերազանցել է այն անձանց քանակը, ովքեր համարել են, որ տվյալ ոլորտում կոռուպցիան աճել է:

**Դիագրամ 10.** Կոռուպցիայի մակարդակի փոփոխության ընկալումները հունիս 2010թ. - հունիս 2011թ., դպրոցներ




**Դիագրամ 11.** Կոռուպցիայի մակարդակի փոփոխության ընկալումները հունիս 2010թ. - հունիս 2011թ., բուհեր




**Դիագրամ 12.** Կոռուպցիայի մակարդակի փոփոխության ընկալումները հունիս 2010թ. - հունիս 2011թ., ճանապարհային ոստիկանություն




**Դիագրամ 13.** Կոռուպցիայի մակարդակի փոփոխության ընկալումները հունիս 2010թ. - հունիս 2011թ., բուժհաստատություններ



**Դիագրամ 14. Կոռուպցիայի մակարդակի փոփոխության ընկալումները հունիս 2010թ. - հունիս 2011թ., հարկային մարմիններ**




**Դիագրամ 15. Կոռուպցիայի մակարդակի փոփոխության ընկալումները հունիս 2010թ. - հունիս 2011թ., ՏԻՄ**




**Դիագրամ 16. Կոռուպցիայի մակարդակի փոփոխության ընկալումները հունիս 2010թ. - հունիս 2011թ., դատաիրավական համակարգ.**




**Դիագրամ 17. Կոռուպցիայի մակարդակի փոփոխության ընկալումները հունիս 2010թ. - հունիս 2011թ., կրթություն**




Ինչ վերաբերվում է հասարակական ընկալումներում կոռուպցիայի մակարդակին և պետական պաշտոնյաների հետ շփումներում կոռուպցիան ռիսկերին, ապա «Այ Փի Էս Սի» կազմակերպության հետազոտություններում բացակայում են այդ ցուցանիշները հաշվարկելու համար անհրաժեշտ հարցերը:

Հարկ է նշել, որ ՀԲԻ «Կարգավորման որակ» և «Կառավարման արդյունավետություն» ինդեքսների մինչև 2009թ. տեղի ունեցած դրական փոփոխության միտումները թույլ էին տալիս սպասել, որ Հայաստանում կոռուպցիոն ռիսկերը կնվազեն: Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ–Հայաստան կազմակերպության (ՀՌԿԿ) կողմից 2008-2010թթ. ընթացքում իրականացված երեք հետազոտությունների արդյունքների համաձայն Հայաստանում կոռուպցիոն ռիսկերը նվազել էին 15.3% 10.3%[12]: Իսկ, Այ Փի Էս Սի կազմակերպության 2011թ. հետազոտությունների

[12] Կոռուպցիոն ռիսկը հաշվարկվում է որպես հետազոտության ընթացքում քաղաքացու և պետական պաշտոնյայի միջև կոռուպցիա պարունակող շփումների գրանցված քանակի հարաբերություն` քաղաքացու և պետական պաշտոնյայի միջև բոլոր շփումների քանակին` արտահայտված տոկոսով: Միաժամանակ այդ տոկոսը կարելի է մեկնաբանել, որպես քաղաքացու և պետական պաշտոնյայի միջև շփման դեպքում կոռուպցիոն հարաբերության առաջացման հավանականության գնահատական:

տվյալները փաստում են, որ կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը հանգեցրել է հասարակության շրջանում կոռուպցիայի մակարդակի ընկալումներում դրական փոփոխությանը:

Կարևոր է նշել, որ, ըստ ՀՌԿԿ 2010թ. հետազոտությունների, կոռուպցիոն իրավիճակի ընկալումներում դրական փոփոխությունները տեղի են ունեցել կոռուպցիայի տարածվածության առավել բարձր մակարդակ ունեցող ոլորտներում, ինչպիսիք են՝ առողջապահությունը (68.3%), կրթությունը (62.3%), պետավտոտեսչությունը (57.7%) և հարկային ծառայությունը (57.4%):

Եթե համադրենք Այ Փի Էս Սի և ՀՌԿԿ կազմակերպությունների հետազոտական տվյալները, ապա կարելի է ենթադրել, որ **հասարակական ընկալումներում 2011թ. հունիսին 2010թ. դեկտեմբերի նկատմամբ կոռուպցիայի մակարդակը նվազել է**:

Կարևոր հանգամանք է նաև, որ «ԱՅ Փի Էս Սի» և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ–Հայաստան կազմակերպությունների կողմից 2008-2010թթ. իրականացված հետազոտու-թյունների արդյունքներով արձանագրված կոռուպցիայի մակարդակի նվազեցումը հաղորդակցվում է ՀՌԻՄԾ 2009-2012թթ. միջոցառումների իրականացման արդյունքների հետ:

Մասնավորապես, կոռուպցիոն ռիսկերի նվազումը կարելի է բացատրել.

- Առողջապահության ոլորտում՝ ծննդօգնության հավաստագրերի համակարգի ներդրմամբ,
- Կթության ոլորտում՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում անվճար ուսուցման համակարգի ներդրման, ընդունելության քննությունները հանելու, մի շարք բուհերի լիցենզիաների կասեցման և դադարեցման հետ,
- Ոստկանության համակարգում՝ տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման, հաշվառման, համարանիշների հատկացման, վարորդական վկայականների տրման ընթացակարգերի պարզեցման հետ,
- Հարկային ոլորտում՝ Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ընդունման, տնտեսվարողների սպասարկման նոր մշակույթի, ռիսկերի վրա հիմնված ստուգումների իրականացման համակարգի ներդրմամբ:

Ընդհանուր առմամբ, ըստ ՀՌԻՄԾ 2009-2012թթ. ռազմավարության միջոցառումների 2011թ. նախատեսված 271 արդյունքներից, «ամբողջությամբ իրականացված» է 97-ը, «մասամբ է իրականացված» է 116-ը, «Իրականացված չեն»՝ 58-ը: Եթե ամբողջությամբ իրականացված արդյունքը գնահատենք 1 միավոր, մասամբ իրականացված արդյունքը 0.5 միավոր, իսկ չիրականացված արդյունքը՝ 0 միավոր, ապա 2011թ. առաջին կիսամյակում ակնկալվող արդյունքները իրականացված են 57.2 տոկոսով[13]:

ՀՌԻՄԾ 2011թ. ակնկալվող արդյունքների իրականացվածության բաշխումները ու դրանց կատարման մակարդակը ըստ ոլորտների տրված են Աղյուսակ 3-ում: Հարկ է նշել, որ 100%-ով իրականցված են Քրեակատարողական ծառայության և Հրապարակային հաշվետվության ոլորտների միջոցառումների ծրագրերը: Պետական գնումների համակարգում և Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում միջոցառումների իրականացվածությունը կազմել է 90.0%:

Միջոցառումների իրականացման ամենացածր աստիճանը Քաղաքական կոռուպցիայի (11.1%), Հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմինների (25.0%), Կադրերի պատրաստման և վերապատրաստման (30.8%) և Կոռուպցիայի քրեականացման (33.3%) ոլորտներում են:

**Աղյուսակ 3. ՀՌԻՄԾ 2010թ. ակնկալվող արդյունքների իրականացվածության բաշխումները ու դրանց կատարման մակարդակն ըստ ոլորտների:**

| Ոլորտ | Ամբող-ջությամբ | Մասնա-կիորեն | Իրակա-նացված չէ | Ընդա-մենը | Կատար-ման չա-փը, % |
|---|---|---|---|---|---|
| Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտ | 4 | 1 | 0 | 5 | 90.0% |

[13] Գնահատումը իրականացված է որպես վարիացիոն շարքի համակշռված միջին, այսինքն (97x1 + 116x0.5 + 0x58)/271 = 0.572 կամ մոտավորապես 57.2 տոկոս:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Հանրային ֆինանսների կառավարման ոլորտ | 2 | 7 | 3 | 12 | 45.8% |
| Պետական գնումների համակարգ | 4 | 1 | 0 | 5 | 90.0% |
| Հարկային և մաքսային համակարգեր | 14 | 10 | 5 | 29 | 65.5% |
| Կրթության ոլորտ | 7 | 6 | 2 | 15 | 66.7% |
| Առողջապահության ոլորտ | 14 | 7 | 7 | 28 | 62.5% |
| Դատական համակարգ | 1 | 6 | 2 | 9 | 44.4% |
| Քրեակատարողական ծառայություն | 1 | 0 | 0 | 1 | 100.0% |
| Իրավաբանական անձանց պետական գրանցում | 3 | 2 | 0 | 5 | 80.0% |
| Դատական ակտերի հարկադիր կատար-ման ծառայություն | 1 | 1 | 0 | 2 | 75.0% |
| ՀՀ ոստիկանություն | 2 | 11 | 0 | 13 | 57.7% |
| Քաղաքական կոռուպցիա | 0 | 2 | 7 | 9 | 11.1% |
| Ընտրական համակարգ | 10 | 3 | 0 | 13 | 88.5% |
| Տեղական ինքնակառավարում | 5 | 13 | 1 | 19 | 60.5% |
| Մասնավոր հատված | 2 | 9 | 1 | 12 | 54.2% |
| Բարեխղճությունը հանրային ծառայու-թյունում | 10 | 18 | 3 | 31 | 61.3% |
| Հրապարակային հաշվետվություն | 2 | 0 | 0 | 2 | 100.0% |
| Կոռուպցիայի քրեականացում և իրավապահ գործունեություն | 3 | 8 | 10 | 21 | 33.3% |
| Կադրերի պատրաստում և վերապատրաստում, կոռուպցիայի մասին տեղեկատվության կառավարում | 2 | 4 | 7 | 13 | 30.8% |
| Կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքա-ցիական հասարակության աջակցություն | 6 | 3 | 5 | 14 | 53.6% |
| ՀՌԻՄԾ մոնիտորինգի ու գնահատման համակարգը | 3 | 3 | 1 | 7 | 64.3% |
| Հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմիններ | 1 | 1 | 4 | 6 | 25.0% |
| **Ընդամենը** | **97** | **116** | **58** | **271** | **57.2%** |

ՀՌԻՄԾ 2011թ. արդյունքների իրականացվածության մակարդակն ըստ պատասխանատու կատարող պետական կառավարման մարմինների ներկայացված է Աղյուսակ 4-ում: ՀՌԻՄԾ 2011թ. առաջին կիսամյակում ակնկալվող արդյունքները լիովին (100%) իրականացրել են ՀՀ Վերահսկիչ պալատը և ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Բարձր կատարողական են ապահովել ՀՀ Կենտրոնական բանկը (83.3%), ՀՀ Պետական եկամուտների կոմիտեն (65.0%), ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը (65.0%), ՀՀ Տարածքային կառավարման նախարարությունը (62.5%) և ՀՀ Առողջապահության նախարարությունը (62.5%):

Հարկ է նշել, որ ՀՌԻՄԾ 2011թ. ակնկալվող արդյունքների իրականացվածության միջինից ցածր կատարման մակարդակ են ունեցել ՀՀ Դատախազությունը (18.2%.), ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը (33.3%), ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ( 33.3%) և ՀՀ կառավարության աշխատակազմը (46.2%):

**Աղյուսակ 4. ՀՌԻՄԾ 2010թ. արդյունքների իրականացվածությունն ըստ պետական կառավարման մարմինների**

| Պետական կառավարման մարմին | Ամբող-ջությամբ | Մասնա-կիորեն | Իրակա-նացված չէ | Ընդա-մենը | Կատար-ման չա-փը, % |
|---|---|---|---|---|---|
| ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն | 0 | 2 | 1 | 3 | 33.3% |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 0 | 2 | 1 | 3 | 33.3% |
| ՀՀ Առողջապահության նախարարություն | 14 | 7 | 7 | 28 | 62.5% |
| ՀՀ Արդարադատության նախարարություն | 19 | 15 | 10 | 44 | 60.2% |
| ՀՀ Դատախազություն | 1 | 2 | 8 | 11 | 18.2% |
| ՀՀ Դատական դեպարտամենտ | 0 | 2 | 0 | 2 | 50.0% |
| ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն | 2 | 7 | 1 | 10 | 55.0% |
| ՀՀ ԿԱ Ոստիկանություն | 2 | 12 | 0 | 14 | 57.1% |
| ՀՀ Կառավարության աշխատակազմ | 14 | 8 | 17 | 39 | 46.2% |
| ՀՀ Կենտրոնական բանկ | 2 | 1 | 0 | 3 | 83.3% |
| ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով | 2 | 0 | 0 | 2 | 100.0% |
| ՀՀ Կրթության և գիտության նախարարություն | 8 | 10 | 2 | 20 | 65.0% |
| ՀՀ Պետական եկամուտների կոմիտե | 14 | 11 | 5 | 30 | 65.0% |
| ՀՀ Վերահսկիչ պալատ | 1 | 0 | 0 | 1 | 100.0% |
| ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն | 5 | 10 | 1 | 16 | 62.5% |
| ՀՀ Քաղաքաշինության նախարարություն | 0 | 2 | 0 | 2 | 50.0% |
| ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհուրդ | 7 | 12 | 2 | 21 | 61.9% |
| ՀՀ Ֆինանսների նախարարություն | 6 | 13 | 3 | 22 | 56.8% |
| Ընդամենը | 97 | 116 | 58 | 271 | 57.2% |

ՀՌԻՄԾ 2011թ. ակնկալվող արդյունքների առաջին կիսամյակի հաշվետվությամբ ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից ծրագրված արդյունքների կատարողականը 50%-ից բարձր լինելու հանգամանքը փաստում է, որ 2011թ. ծարագրային առաջադրանքները իրականացվում են բավարար տեմպով:

Դրա հետ մեկտեղ, ՀՀ պետական կառավարման մարմինների նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պատասխանատու կատարող ՀՀ պետական մարմինների կողմից , ըստ ՀՌԻՄԾ համապատասխան ոլորտների չկատարված միջոցառումների հիմնական պատճառներ են:

- Կոռուպցիայի քրեականացման ու իրավապահ գործունեության ոլորտում ՀՀ դատախազության մասով միջոցառումների չկատարման պատճառները պայմանավորված են, ինչպես առանձին օրենսդրական ակտերի նախագծերի մշակման համար աշխատանքային խմբերի ստեղծման, այնպես էլ օրենսդրական մի շարք նախաձեռնությունները միջգերատեսչական և ներգերատեսչական երկարատև (շուրջ 2 տարի) քննարկումների գործընթացներով:
- ՀՌԻՄԾ «Քաղաքական կոռուպցիա» ոլորտի 56, 57, 58 կետերի ռազմավարական դրույթներով նախատեսված միջոցառումների չիրականացման կապակցությամբ՝ ՀՀ արդարադատության նախարարությունը գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովի հետ կապված օրենքների նախագծերը պետք է մշակվեն ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կամ ԱԺ պատգամավորների կողմից:
- Կադրերի պատրաստման և վերապատրաստման ոլորտում, հանրային ծառայողների հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստման ծրագրերի, նոր մոդուլների մշակման վերաբերյալ միջոցառումների իրականացվածության մասով չկատարումը պայմանավորված է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը ԱԺ-ի կողմից 2011թ. ընդունման հանգամանքով: Օրենքի կիրակումը կսկսվի 2012թ. հունվարից:
- ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը գտնում է որ, կոռուպցիայի վերաբերյալ վիճակագրությունը ձևավորվում է կոռուպցիոն իրավախախտումների ոլորտում համապատասխան լիազորությունների տիրապետող իրավապահ պետական մարմինների կողմից կոռուպցիոն բոլոր դեպքերի (ըստ օրենսդրությամբ սահմանված տեսակների) գրանցումների հիման վրա ձևավորված վարչական ռեգիստրների տվյալներով, որոնք անարգել այդ մարմինները պետք է տրամադրեն ՀՀ ԱՎԾ-ին՝ վերջինիս կողմից այն ամփոփ տեսքով որոշակի

պարբերականությամբ հրապարակելու (հանրությանը ներկայացնելու) նկատառումներով: Խնդրո առարկա ոլորտում ՀՀ ԱՎԾ-ն չունի կոորդինացում իրականացնելու համար անհրաժեշտ օրենսդրական կարգավիճակ և առաջարկում է ՀՀ-ում ձևավորել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում համակարգման համապատասխան լիազորություններով օժտված մարմին կամ` որևէ իրավապահ պետական լիազոր մարմնի պատվիրակել խնդրո առարկա ոլորտում համակարգողի լիազորությունները:

- ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմինների ոլորտում նախանշված միջոցառումների չկատարման պատճառները կապված են ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովի բնականոն գործունեությունն ապահովող մշտական հիմունքներով գործող աշխատանքային խմբի բացակայությամբ (այն գործում է կարճաժամկետ փորձագետների կազմով):
- ՀՀ աշխատանքի ու սոցիական հարցերի նախարարության կողմից Բարեխղճությունը հանրային ծառայության ոլորտում նախանշված «Բարձրացնել հանրային ծառայության համակարգում վարձատրության մակարդակի մրցունակությունը» միջոցառման չկատարումը հիմնավորված է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով ՀՀ տնտեսությունում առաջացած ֆինանսական դժվարություններով, որի արդյունքում ՀՀ կառավարության 2010թ. հուլիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության 2011-2013 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» թիվ 859-Ն որոշմամբ և 2011թ. հուլիսի 7-ի ՀՀ կառավարության նիստում հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության 2012-2014 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրով» հանրային ծառայողների աշխատավարձի բարձրացում չի նախատեսվել:

Ստորև ամփոփ ներկայացված են ՀՌԻՄԾ 2011թ. միջոցառումների մոնիտորինգի հիմնական արդյունքները, որոնք ամբողջությամբ կատարված են 2011թ. առաջին կիսամյակի ընթացքում: Դրանց կատարման վիճակի ու ընթացքի վերաբերյալ մանրամասն նկարագրությունն ու գնահատականները տրված են սույն հաշվետվության 4-րդ բաժնում:

**Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ( ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի ոլորտում** ՀՀ օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցման նպատակով ապահովվել է քաղաքական ազդեցություն ունեցող անձանց միջազգային ռեեստրների հասանելիությունը ՀՀ ՖԴԿ և ֆինանսական հաստատությունների համար: Բարձրացել է ՓԼ/ԱՖ դեպքերի բացահայտման արդյունավետությունը: ՖԴԿ 19 աշխատակիցներ մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով 2011թ-ին վերապատրաստվել են արտերկրում: 2011թ. 1-ին կիսամյակի ընթացքում ՓԼ/ԱՖ հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է 3 քրեական գործ: Նախաքննություն է կատարվել 8 քրեական գործով: Նախաքննությամբ ավարտվել 3 գործ. 1-ի վարույթը կասեցվել է մեղադրյալի քննությունից թաքնվելու պատճառաբանությամբ, իսկ 2 գործ` 2 մարդու նկատմամբ (որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը) հաստատված մեղադրական եզրա-կացությամբ ուղարկվել է դատարան: 2011թ. 1-ին կիսամյակի ընթացքում դատարանի կողմից մեղադրական դատավճիռ է կայացվել 1 գործով` 2 անձի նկատմամբ և պատիժ է նշանակվել ազատա-զրկում: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 3-րդ փուլի գնահատման հաշվետվությամբ ներկայացված գնահատականների համաձայն` հանձնարարականների կատարման առումով Հայաստանը գտնվում է 10-րդ տեղում, որը բավականին մեծ առաջընթաց է թվով 29 պետությունների ցուցակում:

**Հանրային ֆինանսների կառավարման և պետական գնումների ոլորտում** իրականացված աշխատանքները համահունչ են ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներին: Ծրագրային բյուջետավորման պահանջներին համապատասխանող ձևաչափով բյուջետային փաստաթղթերի մշակման ընթա-ցակարգերը համապատասխանում են օրենսդրության պահանջներին: Ծրագրային բյուջետավորման ներդրման գործընթացում ընդգրկված են բյուջետային ծրագրեր իրականացնող բոլոր պետական մարմինները: Գնումների մասին ՀՀ օրենքով պետական գնումների համակարգը լիովին ապակենտրոնացվել է, բոլոր պետական մարմինները 2011թ.-ից ինքնուրույն են կազմակերպում իրենց գնումները: Ուժի մեջ են մտել Գնումների մասին ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ենթա-օրենսդրական փաստաթղթերը: Մասնավորապես, պետական գնումների գործակալությունը վերափոխվել է Էլեկտրոնային գնումների սպասարկման կենտրոնի, ներդրվել են գնումների գործ-ընթացի մասնակիցների, այդ թվում գնումների մասնագետների համար վարքագծի և շահերի բախման կարգավորման ընթացակարգեր, լիազոր մարմնի www.gnumner.am կայքում հրապարակված են 2010 թվականի հանրային գնումների վերաբերյալ հաշվետվությունները, ստեղծվել է բողոքարկման

խորհուրդ, որի կազմում ընդգրկվել են ոչ միայն ՀՀ պետական մարմինների, այլ նաև համայնքների, ՀՀ կենտրոնական բանկի և մասնավոր հատվածը ներկայացնող հասարակական կազմակերպությունների ներկայցուցիչները: Հանրային գնումների մրցութային գործընթացների ավարտի և դրանց արդյունքների հրապարակման միջև ընկած ժամանակահատվածի միջին տևողությունը կազմում է 7 օրացուցային օր: Ներքին աուդիտի մասին ՀՀ նոր օրենքով պայմաններ են ստեղծված հանրային ֆինանսների կարգապահության ամբողջականացման, հաշվետվողականության ու թափանցիկության բարելավման ուղղությամբ: Դրանց գործնական կիրառման արդյունքները ակնկալվում են 2012-2013թթ-ին: Վերահսկիչ պալատն իր իրավասության շրջանակներում համաչափորեն կիրառում է վերահսկողության` ֆինանսական, համապատասխանության և արդյունավետության տեսակները:

**Հարկային ոլորտում** հարկային ծառայողների և հարկ վճարողների միջև անմիջական շփումները նվազեցնելու ուղղությամբ միջազգային լավագույն փորձի հիման վրա ներդրվել է հարկային հանցագործությունների քննության ընթացքում կոռուպցիայի հանցակազմը վեր հանելու և տնտեսական հանցագործությունների և կոռուպցիոն իրավախախտումների կապերը բացահայտելու մեթոդներ և ընթացակարգեր:

Ընդլայնվել է էլեկտրոնային հարկային ծառայությունների շրջանակը: Ենթաօրենսդրական ակտով ամրագրվել է հարկային հաշվետվությունները բացառապես փոստով կամ էլեկտրոնային եղանակով ընդունելու պահանջը: Ներդրված է հարկ վճարողներին հիշեցում-ծանուցումների առաքման ավտոմատացված համակարգը: Հարկային մարմիններին ներկայացվող հաշվետվությունների 59.1 % ը իրականացվում է ոչ առձեռն եղանակով:

Բարելավվել է հարկային մարմնի գործունեության հրապարակայնությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը: Հարկային վարչարարության ներքին ընթացակարգերի միատեսակ կիրառման վերաբերյալ հաստատվել է 2011թ. ուսուցման ծրագիրը, որը ներառում է 32 անվանում նախապատրաստական, վերապատրաստման և փորձի փոխանակման դասընթացներ` հարկային և մաքսային ծառայողների տարբեր խմբերի համար: 2011թ.-ին տպագրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում 2009-2010թթ.-ին մշակված` 10 ոլորտային և մասնագիտական ստուգումների ուղեցույցների երկհատոր ժողովածուն, որը հասանելի է ընթերցողներին նաև էլեկտրոնային եղանակով: Ներդրված ու ամբողջությամբ գործում է հարկային ծառայության գործունեության և պաշտոնատար անձանց գործողությունների բողոքարկման ընթացակարգերը և հասարակությանն ու հարկ վճարողներին վստահություն ներշնչող «թեժ գիծը» (info@petekamutner.am): 2011թ. ընթացքում ՀՀ ԿԱ ՊԵԿ «թեժ գծով» ստացվել է 5900 դիմում, որից 373` բողոքներ և առաջարկություններ, իսկ մնացածը` հարցադիմումներ: Բոլոր հարցադիմումները և բողոքները սահմանված կարգով ընթացք են ստացել: Հարկ վճարողների սպասարկման կենտրոնների ստեղծման ծրագրի շրջանակներում 2011թ. ընթացքում գործարկվել է Վանաձորի հարկ վճարողների սպասարկման կենտրոնը:

Սահմանվել են հարկային ծառայության ներհամակարգային միասնական ընթացակարգերը և դրանց կիրարկման ուղեցույցներն ու ձեռնարկները: Հաստատվել են «Տրանսպորտի ոլորտում հարկային ստուգման», «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և դրանց շահագործման կանոնների պահպանման ճշտության ստուգումների իրականացման», «Անշարժ գույքի գործարքների ստուգումների իրականացման», «Զբոսաշրջության ոլորտում հարկային ստուգումների» ուղեցույցները:

Հաստատվել են հարկային ծառայողների պաշտոնեական առաջխաղացման ընթացակարգերը: Ներդրված է հարկային և մաքսային ծառայողների տարեկան աշխատանքային ծրագրի կատարողականի և կառավարչական հմտությունների, մասնագիտական պատրաստվածության և որակավորման մակարդակի գնահատման համակարգերը: 2011թ. առաջին կիսամյակում իրականացվել է 27 պաշտոնեական առաջխաղացում և 53 հարկային ծառայողների ատեստացիա:

Կատարելագործվել է հարկային ծառայողների վերապատրաստման համակարգը: Հաստատված են հարկային ծառայողների պարտադիր վերապատրաստման ուսումնական ծրագրերը: 2011թ. առաջին կիսամյակում իրականացվել է 705 հարկային ծառայողների վերապատրաստում:

Ուժեղացվել է հարկային ծառայողների գործունեության օրինականության նկատմամբ ներքին հսկողությունը: Վերանայվել են հարկային ծառայության գործունեության օրինականության հսկողության ընթացակարգերը: 2011թ. ընթացքում իրականացվել է թվով 23 ծառայողական քննություն, ինչի արդյունքում 10 հարկային ծառայողներ ազատվել են պաշտոնից:

**Մաքսային ոլորտում** բարձրացել է մաքսային ծառայության կառավարման արդյունավետությունն ու հաշվետվողականությունը: Ներդրվել է մաքսային ծառայության կատարողականի

գնահատման համակարգ և դրա վրա հիմնված մաքսային ծառայողի պաշտոնական առաջխաղացման ընթացակարգեր և մաքսային ծառայողի պարտադիր պարբերական ռոտացիայի կարգ: Բոլոր մաքսային ծառայողները ընդգրկված են աշխատանքի կատարողականի գնահատման համակարգում: Ներդրվել են մաքսային ծառայողի էթիկայի կանոններ և սահմանվել է դրանց նկատմամբ վերահսկողություն: Մաքսային ծառայողների էթիկայի կանոնների խախտումների վերաբերյալ բողոքներ չեն եղել: Մաքսային գործունեության հաշվետվությունը հրապարակված է ՀՀ ԿԱ ՊԵԿ կայքէջում:

Ռիսկերի կառավարման վրա հիմնված մաքսային հսկողության համակարգի ներդրման ուղղությամբ վերանայվել են մաքսային հսկողության ռիսկի չափորոշիչները: Ընդլայնվել է մաքսային հայտարարագիր ներկայացնողների շրջանակը, ինչպես նաև մեծացել է մաքսային միջնորդի ինստիտուտի մատչելիությունը: Բոլոր մաքսատներում ամբողջությամբ ներդրված է ինքնահայտարարագրման համակարգը և  բոլոր տնտեսավարողները մաքսային հայտարարագրերը ներկայացվում են առանց մաքսային տեսուչի միջամտության, անմիջականորեն ԱՏԳ մասնակցի կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչի կողմից: Բոլոր մաքսային մարմինները, ինչպես նաև դրանց գործունեության վայրում գտնվող մաքսային պահեստները սպասարկվում են մաքսային միջնորդական ծառայություն իրականացնող անձանց կողմից

ՀՀ մաքսային սահմանով ավտոտրանսպորտային միջոցներով մեկնող և ժամանող քաղաքացիների մաքսային հսկողության երկուղային (կարմիր և կանաչ ուղիներ) համակարգը գործում է 6 մաքսակետերից 5-ում: Կանաչ ուղով ընտրված հայտարարագրերի թվաքանակը հայտարարագրերի ընդհանուր թվաքանակում կազմում է  69,0 տոկոս: Կրճատվել է մաքսային հսկողության նպատակով ներկայացվող փաստաթղթերի թիվը` 6-ից դարձել է 3: Ոչ սակագնային կարգավորում չպահանջող ապրանքների դեպքում, ներմուծման մաքսային ձևակերպումների ողջ ժամանակահատվածը տատանվում է 2,5 – 6,5 ժամ միջակայքում:

Տնտեսվարող սուբյեկտների միջև մաքսային բեռի արդարացի բաշխման և մաքսային ծառայության թափանցիկության ու օրինականության ապահովման ուղղությամբ ապրանքների մաքսային արժեքի գնահատման ընթացակարգերը համապատասխանում են ԱՀԿ պահանջներին և տեղադրված են մաքսային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքում: Գործարքի գնի մեթոդով որոշված գործարքները կազմում են  գործարքների ընդհանուր թվաքանակի 68.0 տոկոսը:

Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է մաքսային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքի և թեժ հեռախոսագծի միջոցով մաքսային մարմնի ղեկավարի, քաղաքացիների և տնտեսվարողների միջև արդյունավետ հաղորդակցություն: ՊԵԿ համակարգում գործում է զանգատարկման հանձնաժողով, հասարակությանն ու տնտեսվարող սուբյեկտներին վստահություն ներշնչող թեժ գիծը, իսկ մաքսային ծառայության պաշտոնական կայքում՝ հետադարձ կապը:

Մաքսային իրավախախտումների համար կիրառված պատասխանատվության միջոցների թիվը 2011թ. առաջին կիսամյակում կազմել է 1020: Դրանք, ինչպես նաև մաքսային ընթացակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու վերաբերյալ ուղեցույցերը տեղադրված են ՊԵԿ-ի էլեկտրոնային կայքէջում:

**Կրթության ոլորտում** կառավարման թափանցիկության, հաշվետվողականության ու օրինականության բարձրացման ռազմավարական դրույթի շրջանակում` ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքում և «Կրթություն» շաբաթաթերթում հրապարակվել են հանրակրթական ուսումնական հաստատությունների 2010թ. տեսչավորման և ուսումնասիրությունների ու ստուգումների հաշվետվությունները: Հաստատվել են «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը», «Պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը» և «ՌԻսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման կարգը»: Մշակվել է նաև «Հանրակրթական դպրոցի մանկավարժական աշխատողների անվանացանկը և դրանց նկարագիրը»:

Ոլորտում հանրակրթական դպրոցների կառավարման թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության ու օրինականության բարձրացման ռազմավարական դրույթի շրջանակում` Հանրակրթական դպրոցների նոր օրինակելի կանոնադրությամբ ամրագրվել են դպրոցի կառավարման և վերահսկողության գործառույթներում ծնողական և մանկավարժական խորհուրդների, ինչպես նաև մեթոդական միավորումների մասնակցությունն ապահովող դրույթները: Հանրակրթական դպրոցների նոր օրինակելի կանոնադրությամբ ամրագրվել են աշակերտական խորհուրդների լիազորությունները: Հաստատվել է աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությունը, որով հստակեցվել են խորհրդի իրավասությունների և պատասխանատվության շրջանակները:

Գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման համակարգերի թափանցիկության ու անկախության ապահովման ռազմավարական դրույթի շրջանակում ՀՀ հանրակրթության համակարգում ներդրված է 10 բալանոց գնահատման համակարգը: Սահմանված են թեստավորման ու գնահատման միասնական քննական կենտրոնի ղեկավարի, ներկայացուցչի, միասնական քննության ընթացքի կազմակերպչի և պատասխանատու կազմակերպչի, քննական կենտրոնի հերթապահի և համակարգչային օպերատորի աշխատակարգերը:

Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքով սահմանված պահանջներին համապատասխան հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև ծնողները ներգրավված են քննությունների ընթացքի նկատմամբ վերահսկողության գործընթացում: Մասնավորապես, ներկա են թեստերի ծրարների բացմանը, մոնիտորների միջոցով հետևում են քննության գործընթացին, ԶԼՄ-ները լուսաբանում են քննական գործընթացը: Քաղաքացիական հասարակության միավորումները պատշաճ տեղեկատվություն են ստանում քննական գործընթացի վերաբերյալ:

**Առողջապահության ոլորտում** հանրային ֆինանսների կառավարման թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման ռազմավարական դրույթի շրջանակում վերանայված և փոփոխված է հիվանդանոցային ծառայությունների փաթեթը, որն արտացոլված է ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին օրենքում և «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» բուժհաստատությունների հետ կնքված պայմանագրերում: Հիվանդանոցներում համավճարային սկզբունքի ներդրման համար հաստատվել են «Անհետաձգելի և գինեկոլոգիական բժշկական օգնության» բյուջետային ծրագրերը: 2011 թվականի համար բժշկական ծառայությունների գների ձևավորման ժամանակ մի շարք հիվանդությունների պարագայում միջին բաժանմունքային գներից անցում է կատարվել ըստ հիվանդությունների գների ձևավորման, այդ թվում` դիֆերենցված ըստ ծանրության աստիճանի:

Առողջապահության համակարգում գնագոյացման համակարգի բարելավման և ոչ պաշտոնական վճարումների համար նպաստավոր պայմանների վերացման ռազմավարական դրույթների շրջանակում ՀՀ կառավարության 23.12.2010թ. թիվ 1762-Ն որոշմամբ համավճարային սկզբունքը ներդրվել է «Անհետաձգելի և գինեկոլոգիական բժշկական օգնության» ծրագրերում 2011 թվականի փետրվարի 1-ից պետական պատվեր իրականացնող հանրապետության բոլոր բուժհաստատություններում: ՀՀ կենտրոնական բանկի հետ մշակվել է Հայաստանի Հանրապետությունում բժշկական ապահովագրության ներդրման հայեցակարգի նախնական տարբերակը: Պետական պատվեր իրականացնող հիվանդանոցային բուժօգնության բնագավառում հաստատված է բուժանձնակազմի վարձատրման կարգ, իսկ առողջության առաջնային պահպանման օղակում` ըստ կատարողականի (խրախուսական) ֆինանսավորման և վարձատրության կարգը: Պետական պատվեր իրականացնող բժշկական հաստատությունների ընդհանուր ծախսերում դեղորայքային ծախսը, առանց մարդասիրական օգնության, կազմում է շուրջ 20%:

Ստվերային դրամաշրջանառության ծավալների կրճատման, առողջապահական ծառայությունների պետական պատվերի թափանցիկության, հասցեականության և հաշվետվողականության բարձրացման, բուժհաստատությունների գործունեության թափանցիկության ու հաշվետվողականության բարձրացման ռազմավարական դրույթի շրջանակում` պետական պատվերի պայմանագրային գումարները հաշվարկված են հիմք ընդունելով նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, որի ժամանակ պայմանագրային գումարներից ավել կատարված և չֆինանսավորված ծավալները, որպես պայմանագրային գումարի հաշվարկման հիմք չեն ընդունվում: Անհետաձգելի բժշկական միջամտություն պահանջող վիճակների և հիվանդությունների ցանկը վերանայված և հստակեցված է: 2011 թվականի սկզբից պետական պատվեր իրականացնող բժշկական բոլոր բուժհաստատություններում գործում է ՄԻԴԱՍ 3 էլեկտրոնային տեղեկատվական համակարգը, որը ավելի ամբողջական տվյալներ է պարունակում:

Դեղորայքի պետական գնումների և բաշխման կենտրոնացված գործընթացի թափանցիկության, հաշվետվողականության ու օրինականության ապահովման ռազմավարական դրույթի շրջանակում` դեղերի կենտրոնացված գնումների մրցույթում հաղթող կազմակերպությունների կողմից դեղերի մատակարարման պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 168-Ն որոշման հիման վրա: Միաժամանակ ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան ստորաբաժանումների կողմից պարբերաբար իրականացվում են մատակարար կազմակերպությունների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման դիտարկում-

ներ և կետանցներ թույլ տված կազմակերպությունների նկատմամբ կիրառվում են ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով նախատեսված համապատասխան տույժեր և տուգանքներ:

Շտապ բժշկական օգնության ծրագրի պատշաճ ֆինանսավորման ապահովման ռազմավարական դրույթի շրջանակում՝ 2011 թվականի ՀՀ պետական բյուջեում շտապօգնության ծառայության բարեփոխումների համաձայն, ծրագրի բյուջեի աճը 2010թ. համեմատ կազմել է 105%:

Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատությունների գործունեության թափանցիկության, հաշվետվողականության և օրինականության ռազմավարական դրույթի շրջանակում հաստատվել է Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական ծառայությունների կատարողականի գնահատման հիման վրա ԱԱՊ ծառայություններ իրականացնողների ֆինանսավորման և վարձատրության կարգը: Ներդրված են ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական ծառայությունների կատարողականի գնահատման հիման վրա ընտանեկան բժիշկների, թերապևտների և մանկաբույժների և նրանց բուժքույրերի խրախուսական վարձատրության մեթոդներն ու ընթացակարգերը:

**Դատական համակարգում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախատեսված միջոցառումների իրականացման առաջընթացը գնահատվում է բավարար: Մասնավորապես, ընդհանուր իրավասության դատարանների դատավորների աշխատավարձի դրույքաչափի բարձրացման ուղղությամբ ուսումնասիրվել է լավագույն միջազգային փորձը:

Դատավորների շահերի բախման, եկամուտների և գույքի հայտարարագրման թափանցիկության և վերահսկելիության ապահովման ուղղությամբ ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է դատավորների շահերի բախման ինստիտուտը:

Դատավորների թեկնածուների նախնական ուսուցման և դատավորների վերապատրաստման գործընթացի բարելավման միջազգային փորձի հիման վրա օրենսդրական նախագծերով դատավորի թեկնածու դատախազների, փաստաբանների և քննիչների թեկնածությունների ուսուցման ժամկետը 6 ամսվա փոխարեն սահմանվելու է 1 տարի: Ընդ որում, նշված նախագծով առանձնահատկություն սահմանված չէ, նրանք բոլորը ընդհանուր հիմունքներով պետք է ուսուցում անցնեն արդարադատության ակադեմիայում:

ՀՀ դատական դպրոցի կառավարման խորհուրդը հաստատել է դատավորների, դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց 2011թ. վերապատրաստման ծրագիրը: Ծրագրում ներառվել են կոռուպցիայի կանխարգելմանը և դրա դեմ պայքարին, ինչպես նաև դատավորի վարքագծի կանոններին վերաբերող ուղղություններ, որոնք ներառում են նաև միջազգային փորձը:

**Քրեակատարողական ծառայության ոլորտում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախատեսված միջոցառումների իրականացման իրավիճակը գնահատվում է բավարար: Հասարակական վերահսկողության դիտորդների խմբի հաշվետվությունները և դրանց վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարի մեկնաբանությունները հրապարակվում են ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում:Կատարելագործվել են քրեակատարողական ծառայողների վերապատրաստման ծրագրերը: Քրեակատարողական ծառայողի և պատիժ կրող անձանց սերտաճման հնարավորությունների բացառման ուղղությամբ օրենսդրորեն սահմանվել են քրեակատարողական ծառայողին այլ պաշտոնի փոխադրելու իմպերատիվ դեպքերը՝ քրեակատարողական հիմնարկի պետերի պարտադիր ռոտացիայի սկզբունքը:

**Իրավաբանական անձանց պետական գրանցման ոլորտում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախատեսված միջոցառումների իրականացման իրավիճակը գնահատվում է բավարար: Իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացի պարզեցման ուղղությամբ ներդրվել է իրավաբանական անձանց պետական գրացման ժամանակ նրանց քրեական անցյալի վերաբերյալ տեղեկությունների ստուգման մեխանիզմ, ըստ որի պետական գրանցման մերժման հիմք է հանդիսանում նաև նոր գրանցվող (ստեղծվող) առևտրային կազմակերպության հիմնադրի, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի կամ անհատ ձեռնարկատիրոջ՝ օրենքով սահմանված կարգով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու դատապարտված լինելը՝ պատժի կատարման ժամկետում: 2011թ. հունվար-հուլիս ժամանակահատվածում վերը նշված հիմքով իրավաբանական անձանց գրանցման մերժումներ չեն եղել:

Սահմանվել են ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքի միջոցով առևտրային իրավաբանական անձանց պետական գրանցման համար պահանջվող փաստաթղթերի նմուշային ձևերը: Պետական ռեգիստրի գործակալության կողմից մատուցվող ծառայություններից էլեկտրոնային եղանակներով օգտվողների թիվը 2011թ. կազմել է 490:

Իրավաբանական անձանց գրանցման մեկ պատուհանի համակարգը, ներառյալ` ՀՎՀՀ ստացման առցանց համակարգը ներդրված է և գործում է 2011թ. ապրիլի 1-ից: 660 իրավաբանական անձ և 2009 անհատ ձեռնարկատեր առցանց ստացել են ՀՎՀՀ սկբնական գրանցման ընթացքում: Օրենսդրորեն պետական գրանցող մարմնի հարցմանը հարկային մարմինները նախկին 30 օրվա փոխարեն պարտավոր են արդեն պատասխանել 20 օրվա ընթացքում: Սակայն, դեռևս տեղեկանքը ՊԵԿ-ից ստացվում է թղթային եղանակով:

**Դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախատեսված միջոցառումների իրականացման իրավիճակը գնահատվում է բավարար:

Հարկադիր կատարողների կողմից պարտապանի գույքը հայտնաբերելու կարողությունների բարձրացման ուղղությամբ ներդրվել է պարտապանի գույքի հայտնաբերմանն ուղղված հարցումների էլեկտրոնային համակարգ: 2011 թվականի հուլիսի 1-ի դրությամբ համակարգին միացված են 19 առևտրային բանկեր, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն: Դրա արդյունքում պարտապանի գույքը հայտնաբերելու համար պահանջվող միջին ժամկետը նախորդ տարվա համեմատությամբ 15 օրից կրճատվել է 2 օրվա: Հարկադիր կատարողների կողմից պարտապանի գույքը չհայտնաբերելու դեպքերի հարաբերությունը ԴԱՀԿ վարույթի շրջանակներում գույքի հայտնաբերման դեպքերին կազմել է 13.0 տոկոս:

Բարելավել ԴՀԱԿ-ի նկատմամբ ՀՀ արդարադատության նախարարության շրջանակներում իրականացվող վերահսկողության մեխանիզմները: Վերանայվել են դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության նկատմամբ վերահսկողության մեթոդներն և ընթացակարգերը: Սահմանվել է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության արդյունքների ամփոփման ընթացակարգ, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ծառայողների նկատմամբ կարգապահական վարույթի նյութեր նախապատրաստելու և վարույթ հարուցելու միասնական կարգ: Դրա արդյունքում 2011թ. առաջին կիսամյակում ծառայողների նկատմամբ կիրառված կարգապահական պատասխանատվության միջոցների թվի հարաբերությունը ծառայողների ընդհանուր թվաքանակին կազմել է 2.3%, այն դեպքում երբ կիրառված խրախուսման դեպքերի թվի հարաբերությունը ծառայողների ընդհանուր թվաքանակին կազմել է 60.0 տոկոս:

**Ոստիկանության ոլորտում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախատեսված միջոցառումների իրականացման իրավիճակը և առաջընթացը գնահատվում է բավարար:

Ճանապարհային երթևեկության կանոններն ու դրանց խախտման համար պատասխա-նատվություն նախատեսող նորմերի կատարելագործման վերաբերյալ ռազմավարական դրույթի 2011թ. «Ակնկալվող արդյունքները» վերախմբագրվել են ՀՀ կառավարության 02.06.2011թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 1272-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 748-Ն որոշմամբ: Ճանապարհային ոստիկանությունում ներդրվել է ճանապարհատրանսպորտային պատահարների գրանցման և դրանց վերաբերյալ վիճակագրության վարման համակարգչայի ծրագիր: Հանրապետությունում վթարայնության համեմատական մակարդակը իրար հաջորդող ժամանակահատվածներում, տոկոսային հարաբերակցությամբ կազմում է 110. 8 տոկոս:

Բարելավվել է բնակչության պետական ռեգիստրի համակարգը: ՀՀ կառավարությունը « ՀՀ –ում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» թիվ 1231-Ն որոշման մեջ լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» որոշման մեջ կատարված փոփոխություններով հստակեցրել է պետական ռեգիստրում քաղաքացիների հաշվառման մասին տեղեկանքների ձեռքբերման ընթացակարգերը: Պետական ռեգիստրի համակարգում տվյալների անճշտությունների հետ կապված դիմումների հարաբերությունը նույն ժամանակահատվածում տվյալների բանկի վերանայումների ու թարմացումների ընդհանուր թվաքանակում կազմել է 2.81 տոկոս: Անճշտությունների վերաբերյալ դիմումների քանակը 2011թ. առաջին կիսամյակում եղել է 879, իսկ ընդհանուր վերանայումների քանակը` 31245:

Ոստիկանության միջանկյալ օղակների և ծառայող-քաղաքացի շփման բարդությունները կրճատելու նպատակով պարզացվել է վարորդական վկայական ստանալու քննություններ ընդունելու, տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման, հաշվառման, համարանիշների և վկայագրերի հատկացման, ինչպես նաև վարորդական վկայականների տրման, փոխանակման ընթացակարգերը: Դադարեցվել է հատուկ պաշտպանություն պահանջող պետական

նշանակության փաստաթղթերի տպագրության գործունեության համար լեցենզիան: ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության սահմանային անցակետերում գործում է «մեկ պատուհան» կամ «մեկ կանգառ» սկզբունքը: Գյումրիի և Վանաձորի անձնագրային բաժանմունքներում տեղադրվել են անձնագրային ծառայությունների մատուցման համար նախատեսված պետական տուրքերը, վարչական տուգանքները և այլ վճարներն ընդունող էլեկտրոնային վճարային տերմինալներ: Ստեղծվել է արագ արձագանքման «Թեժ գիծ» ծառայությունը: 2011թ. առաջին կիսամյակի ընթացքում, ՀՀ ոստիկանության police.am և ՀՀ ոստիկանության ԱՎՎ passportvisa.am կայք էջերից օգտվողների թիվը կազմում է մոտ 139324 մուտք:

**Քաղաքական կոռուպցիայի ոլորտում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախատեսված միջոցառումների իրականացման իրավիճակը և առաջընթացը գնահատվում է անբավարար, քանի որ ՀՀ արդարադատության նախարարությունը գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովի հետ կապված օրենքների նախագծերը պետք է մշակվեն ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կամ ԱԺ պատգամավորների կողմից:

**Ընտրական համակարգում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախանշված հիմնական միջոցառումների իրաանացման գործընթացը գնահատվում է բավարար: Բոլոր մակարդակների ընտրական հանձնաժողովի անդամների, ՀՀ ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում գրանցված թեկնածուների անձեռնամխելիության վերացման գործում «ՀՀ ընտրական օրենսգրքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով բոլոր մակարդակների ընտրական հանձնաժողովի անդամների և ՀՀ ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում գրանցված թեկնածուների անձեռնամխելիությունը վերացված է:

Ըստ ընտրական օրենսգրքի կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները ձևավորվելու են մասնագիտական սկզբունքով, իսկ տեղամասային ընտրական հանձնաժողովները՝ խառը: Ընտրական հանձնաժողովներին ուղղված դիմումների և բողոքների քննարկման գործընթացը իրականացվելու է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան: Առաջիկա խորհրդարանական ընտրություններին ընդառաջ կենտրոնական ընտրական հանձնաժողովում կսահմանվի «թեժ գիծ», որը կսպասարկի հանրապետության ողջ տարածքը: Ընտրական օրենսգրքի միատեսակ կիրառումն ապահովելու նպատակով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին հասցեագրված ահազանգերը տվյալ հանձնաժողովում գործող քաղաքացիական ծառայողը «Ընտրություններ ավտոմատացված համակարգ»-ի միջոցով կփոխանցի կենտրոնական ընտրական հանձնաժողովի «թեժ գիծ», որից հետո կենտրոնական ընտրական հանձնաժողովը յուրաքանչյուր ահազանգի կապակցությամբ կձեռնարկի համապատասխան օպերատիվ միջոցներ կամ կտա համապատասխան պարզաբանում:

Պաշտոնատար անձանց քաղաքական ընթացիկ գործունեությունը նախընտրական քարոզչությունից հստակ տարանջատման ռազմավարական դրույթի տեսակետից քաղաքական, հայեցողական պաշտոններ զբաղեցնող, պետական, կամ համայնքային ծառայող հանդիսացող թեկնածուներին արգելվում է նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված տարածքների, տրանսպորտային և կապի միջոցների, նյութական ու մարդկային ռեսուրսների օգտագործումը, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող միջոցառումների:

Ընտրակաշառք երևույթի դեմ պայքարի խստացման ռազմավարական դրույթի շրջանակում «Նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ: Այն բարեգործական կազմակերպությունները, որոնց անվանումները կարող են նմանեցվել (ասոցացվել) կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների անվանումներին, թեկնածուների անուններին, նախընտրական քարոզչության ժամանակ բարեգործություն չեն կարող իրականացնել այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, որոնց մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները կամ նրանց առաջադրած թեկնածուները»:

**Տեղական ինքնակառավարման ոլորտում** համայնքի ֆինանսական անկախության և համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի կառավարման արդյունավետության ուղղությամբ մշակվել է համայնքի սեփականություն համարվող գույքի կառավարման պլանների մշակման վերաբերյալ ուղեցույց և տրամադրվել է բոլոր համայնքներին:

ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության և հրապարակայնության բարձրացման ուղղությամբ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ համատեղ մշակվել և կիրառության մեջ են դրվել գույքի պետական գրանցման գործընթացը պարզեցնող իրավական ակտեր և ընթացակարգեր: ՀՀ մարզխորհուրդների նիստերում և համայնքներում կազմակերպվում են խորհրդակցություններ, քննարկվում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության առնչվող խնդիրներ և դրանց վերաբերյալ տրվում պարզաբանումներ: ՀՀ մարզպետարանների կողմից համայնքներում հրավիրվում են բնակիչների ընդհանուր ժողովներ, ՀԿ-ների կողմից կազմակերպվում են համայնքների բյուջեների և դրանցում փոփոխություններ կատարելու նախագծերի հրապարակային քննարկումներ:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայություններում տեղադրված են էլեկտրոնային կառավարման համակարգեր, գործառույթներն իրականացվում են տեղեկատվական տեխնոլոգիաների և տվյալների էլեկտրոնային բանկերի կիրառմամբ:

**Մասնավոր հատվածում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախանշված հիմնական միջոցառումների իրականացման գործընթացը գնահատվում է բավարար: Կոռուպցիայի առաջարկի կանխարգելման գործում, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները (IFRS) ու Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտը (IFRS for SME) թարգմանվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից սահմանված ընթացակարգերին համապատասխան և հրապարակվել: Ստանդարտները կիրառության մեջ են դրվել 2011 թվականի հունվարի 1-ից:

Մրցակցության հավասար պայմանների ապահովման ուղղությամբ ՀՀ տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովը «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2010-2012 թվականների ռազմավարության ծրագրի շրջանակներում իրականացրել է օրենսդրական բարեփոխումների, ռեսուրսների բարելավման, ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման, միջազգային համագործակցության, քարոզչության և իրազեկվածության բարձրացման միջոցառումներ: Դրա արդյունքում 2011թ. առաջին եռամսյակում հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցվել է 32 վարչական վարույթ, որոնց արդյունքում կիրառվել է 30 պատասխանատվության միջոց:

Մասնավոր հատվածի կազմակերպություններում բարեխղճության նորմերի ներդրման ուղղությամբ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի (ԱԱՊ) կողմից գործարար համայնքի համար մշակել և հրատարակել է «Գործարար էթիկայի կանոնակարգ–հակակոռուպցիոն ուղեցույցը», որը ներկայացվել է ինչպես գործարար համայնքին, այնպես էլ պետական հատվածին: «Գործարար էթիկայի կանոնակարգ–հակակոռուպցիոն ուղեցույցը», ներառում է Առևտրի միջազգային պալատի (ԱՄՊ) կողմից ընդունված կոռուպցիայի դեմ պայքարի կանոնակարգերն և էթիկայի կանոնները:

Առևտրային կազմակերպությունների և պետության միջև համագործակցության խրախուսման գործում ՀՀ ԱԱՊ կողմից վարվում է «Վստահելի գործընկերներ» գրանցամատյանը, իրականացվում «Մերկուրի մրցանակաբաշխությունը»: Արդեն իսկ գործում է e-gov.am-1 էլեկտրոնային կառավարման պորտալը, որում մատուցվում են լիցենզիաների հայտերի էլեկտրոնային ընդունման, կազմակերպությունների էլեկտրոնային գրանցման, հարկային հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման, էլեկտրոնային վիզայի, Մտավոր սեփականության գործակալության էլեկտրոնային հայտերի ընդունման, էլեկտրոնային ստորագրությունների ստացման և այլ ծառայություններ: ՀՀ կառավարությունը հաստատել է ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագիրքը, որով սահմանվել են ընկերությունների կորպորատիվ կառավարման սկզբունքների միջազգային լավագույն պրակտիկայից բխող չափանիշները՝ հաշվի առնելով Հայաստանում առկա պրակտիկան և միջավայրը:

ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատի, ինչպես նաև խոշոր գործարարների շահերը ներկայացնող այլ կազմակերպությունների կարողությունների զարգացման գործում, առևտրի միջազգային պալատի հետ համագործակցության զարգացման ուղղությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը, Զարգացման հայկական գործակալությունը և Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությունը ստորագրել են

«Տեղեկատվության և ռեսուրսների փոխանակման ուղղությամբ համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիր:

**Բարեխղճությունը հանրային ծառայության ոլորտում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախանշված հիմնական միջոցառումների իրականացման գործընթացը գնահատվում է բավարար: ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որը կանոնակարգում է հանրային ծառայողների իրավունքների ու պարտականությունների, հավաքագրման, առաջխաղացման և պաշտոնաթողության, վարքագծի և շահերի բախման միասնական սկզբունքները: Դրա հետ մեկտեղ, առանձին բաժնով կանոնակարգված են ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկան, շահերի հայտարարագրման մեխանիզմներն ու շահերի բախման դեպքերի վարույթի իրականացման կարգերը:

Հանրային ծառայության արդյունավետության բարձրացման ուղղությամբ քաղաքացիական ծառայության մասին օրենքի փոփոխությամբ ՀՀ ՔԾԽ կողմից սահմանվել է կրտսեր պաշտոնների համալրման նոր ընթացակարգ: ՀՀ ՔԾԽ կողմից առնվազն երեք ամիսը մեկ անգամ անց է կացվում թեստավորում, որի արդյունքում հավաստագիր ստացած քաղաքացիները կրտսեր թափուր պաշտոնի զբաղեցման համար դիմում են ներկայացնում համապատասխան աշխատակազմերի ղեկավարներին: ՔԾ օրենքը սահմանել է նաև հարցազրույցների գնահատման բալային համակարգ, ինչպես նաև մրցույթում հաղթող թեկնածուների ընտրության կոլեգիալ կարգ: Համաձայն մրցույթների անցկացման նոր կարգի, փոփոխվել է հարցազրույցի փուլի հարցերի կազմման, գնահատման և հաղթողների որոշման մեխանիզմները: Հարցազրույցի փուլում առնվազն 75 տոկոս արդյունք ստանալու դեպքում մասնակիցները կհամարվեն հարցազրույցի փուլը հաղթահարած, իսկ թեստավորման և հարցազրույցի փուլերի արդյունքում ստացած տոկոսների երեք առավելագույն հանրագումար ունեցող մասնակիցները ճանաչվում են մրցույթի հաղթողներ:

Հանրային ծառայողների հաշվետվողականության մակարդակի բարձրացման ուղղությամբ բոլոր պետական մարմիններում ներդրվել է պետական ծառայողների տարեկան աշխատանքային ծրագրերի համակարգ: Սահմանվել ու քաղաքացիական ծառայողների համար ամբողջությամբ կիրառվում է կատարողականների գնահատման հաշվետվությունների կազմման կարգն ու ուղեցույցը:

Հանրային ծառայության որակի չափորոշիչների, քաղաքացիներին մատուցվող ծառայություններում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ուղղությամբ ուսումնասիրվել է 6 նախարարությունների (ՀՀ մշակույթի, առողջապահության, կրթության և գիտության, գյուղատնտեսության, տրասպորտի և կապի) և կառավարության աշխատակազմի կողմից մատուցվող ծառայությունների գործող ընթացակարգերը, դրանց համապատասխանությունը սահմանված օրենսդրությանը, միջազգային չափանիշներին: Դրա հետ մեկտեղ, կանոնակարգվել ու հստակեցվել է հողերի նպատակային նշանակության փոփոխման ընթացակարգը, այն նախաձեռնելու իրավունք ունեցող անձանց շրջանակը: Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի (բացառությամբ անտառային հողերի) նպատակային նշանակության վերաբերյալ որոշման առկայության պայմաններում, վերացվել է հանքավայրի շահագործման, հանքային իրավունքով ծանրաբեռնված և փաստացի շահագործման փուլում գտնվող` արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի` լեռնահատկացման ակտով սահմանված չափով ու սահմաններով նոր որոշման ընդունման անհրաժեշտությունը: Արդյունքում հնարավորություն է ընձեռնվել քաղաքացիներին փոփոխելու հողերի կատեգորիան:

Սահմանվել են նոտարական ծառայությունների վճարովի մատուցման սակագները, հստակեցվել է դրանց գանձման ընթացակարգը, որի արդյունքում նոտարական ծառայությունների սակագները միասնականացվել են:

Պարզեցվել է տրանսպորտային միջոցի տեխնիկական զննության, հաշվառման, գրացման, վարորդական իրավունքի ստացման ընթացակարգերը: Մասնավորապես, տրանսպորտային միջոցի սեփականատերը տեխնիկական զննություն անցնելու նպատակով այսուհետ բանկից ստանում է տեխնիկական զննության կտրոնը՝ կատարելով համապատասխան վճարումներ, և միայն դրանից հետո տրանսպորտային միջոցը տեղափոխում է տեխնիկական զննության կայան, որտեղ լրացուցիչ վճարումներ այլևս չեն կատարվում: Տրանսպորտային միջոցների պետական հաշվառման գործողությունները, անկախ տրանսպորտային միջոցի կամ դրա սեփականատիրոջ հաշվառման վայրից, այսուհետ կատարվում են ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության վարչական մասի և տարածքային հաշվառման-քննական բոլոր ստորաբաժանումների կողմից: Հաշվառման գործողությունները՝ սկսած քաղաքացու կողմից դիմելու, վերջացրած հաշվառման համարանիշեր և հաշվառման վկայագիր տրամադրելը այսուհետ կատարվում են «մեկ հոսքագծի» սկզբունքով: Վերացվել է տրանսպորտային միջոցի հաշվառման, հաշվառումից հանելու և

վերահաշվառելու դիմումներ լրացնելու, ինչպես նաև իրավաբանական անձանց համար պետական գրանցման վկայական և պատճեններ ներկայացնելու պահանջը: Միաժամանակ, վերացել է նաև վարորդական քննություններ ընդունելու համար քաղաքացիներից որևէ ուսումնական կազմակերպություն ավարտելու վերաբերյալ, ինչպես նաև պոլիկլինիկական, հոգեբուժական և նարկոլոգիական հաստատություններից տեղեկանքների ստացումը:

**Հրապարակային հաշվետվության ոլորտում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախանշված հիմնական միջոցառումների իրականացման գործընթացը գնահատվում է բավարար: Հայաստանի Հանրապետության կառավարության և առընթեր մարմինների կայքերում 2011թ. տեղադրվել են նախարարությունների և կառավարությանն առընթեր մարմինների ամենամյա գործունեության հաշվետվությունները, որոնք արտացոլում են Հայաստանի Հանրապետության նախարարությունների միջոցով ֆինանսավորվող ծրագրերի իրականացման աստիճանը բնորոշող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ տվյալները, դրանց դինամիկան և վերլուծությունը:

**Կոռուպցիայի քրեականացման ոլորտում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախանշված հիմնական միջոցառումների իրականացման գործընթացը գնահատվում է բավարար: Կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի ամբողջականացման և որոշակիացման գործում ՀՀ դատախազության կողմից սահմանված կոռուպցիոն հանցատեսակների թիվը համապատասխանեցված է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» դրույթներով սահմանված կոռուպցիոն հանցատեսակների ընդհանուր թվաքանակին: Նվազեցվել է դատախազի նկատմամբ քրեական հետապնդման հարուցման հարցում վերադաս անհատական որոշում կայացնողների մասնակցությունը: Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի ներդրման ոլորտում ուսումնասիրվել է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի կիրառման միջազգային փորձը: Վեր են հանվել իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող սանկցիաները, որոնք համապատասխանում են ՀՀ օրենսդրությամբ իրավաբանական անձանց համար նախատեսված տույժերին: Ֆիզիկական անձի կողմից սեփական ազդեցությունը ի նպաստ իրավաբանական անձի շահադիտական նպատակով օգտագործելը քրեականացված է ՀՀ քրեական օրենսգրքի 311.2-րդ հոդվածով:

Եթե 2010թ. 1-ին կիսամյակի ընթացքում հանրապետությունում իրավասու մարմինների կողմից նախապատրաստվել է 441 նյութ, որոնցից 221-ով հարուցվել է քրեական գործ, ապա 2011թ. նույն ժամանակահատվածում նախապատրաստվել է 522 նյութ կամ նախորդ տարվա համեմատությամբ 81-ով ավել, որոնցից 226-ով հարուցվել է քրեական գործ, որը նախորդ տարվա համեմատությամբ ավել է 5-ով:

Հանրապետությունում 2011 թ. 1-ին կիսամյակում հարուցված 226 կոռուպցիոն բնույթի քրեական գործերից 36-ը (նախորդ տարի 35-ը) վերաբերվել է ՀՀ քր. օր-ի 179-րդ հոդ. 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված հափշտակություններին, 77-ը՝ (նախորդ տարի 70-ը) ՀՀ քր. օր-ի 205-րդ հոդ. նախատեսված հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելուն, 22 քրեական գործ՝ (նախորդ տարի 16-ը) ՀՀ քր. օր-ի 214-րդ հոդ. նախատեսված առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելուն, 23-ը՝ (նախորդ տարի 46-ը) ՀՀ քր. օր-ի 308-րդ հոդ. նախատեսված պաշտոնեական լիազորությունները չարաշահելու վերաբերյալ, 14-ը՝ (նախորդ տարի 12-ը) ՀՀ քր. օր-ի 311-րդ հոդ.՝ կաշառք ստանալու վերաբերյալ, 6-ը՝ ՀՀ քր. օր-ի 311.1 -րդ հոդ.՝ հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու վերաբերյալ (նախորդ տարի կրկին 6-ը), 9-ը՝ (նախորդ տարի 10-ը) ՀՀ քր. օր-ի 314-րդ հոդ. նախատեսված պաշտոնեական կեղծիքին և այլն:

Ըստ էության ավարտվել են կոռուպցիոն բնույթի 123 գործ (նախորդ տարի նույն ժամանակահատվածում՝ 152-ի համեմատ), 70 քրեական գործի վարույթ կարճվել է (նախորդ տարի 82-ը), 24-ը՝ արդարացման հիմքով (նախորդ տարի 23-ը), 46-ը՝ ոչ արդարացման հիմքով (նախորդ տարի 59-ը):

Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված 61 քրեական գործով 26 անձ գտնվել է նախնական կալանքի տակ (նախորդ տարի 97-ը):

2011թ. առաջին կիսամյակում դատարաններում քննվել է կոռուպցիոն բնույթի ընդամենը 65 քրեական գործ՝ 97 անձի նկատմամբ (նախորդ տարի 65 քրեական գործ՝ 84 անձի նկատմամբ) կամ 13 անձով ավելի, որոնցից դատապարտվել է 52 քրեական գործով 75 անձ (նախորդ տարի 62 քրեական գործով 79 անձ), կամ 10 գործով և 4 անձով պակաս: Դատապարտված 75 անձից 32-ը կամ դատապարտված անձանց 42.7%-ը եղել է պաշտոնատար անձ (նախորդ տարի՝ 79-ից 32-ը կամ 40.5%-ը):

**Կադրերի պատրաստում և վերապատրաստում, կոռուպցիայի մասին տեղեկատվության կառավարման ոլորտներում** ՀՌԻՄԾ ռազմավարական դրույթներով նախանշված հիմնական միջոցառումների իրականացման գործընթացը գնահատվում է բավարար: Կոռուպցիայի դեմ պայքարի կրթա-լուսավորչական քաղաքականության առանձին ծրագերի շրջանակներում հիմնական դպրոցի «Հասարակագիտություն» առարկայի համար «Ապագան քոնն է» ՀԿ-ի կողմից ստեղծվել է «Կրթությունն ընդդեմ կոռուպցիայի» մեթոդական ուղեցույց-ձեռնարկը հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար: Հակակոռուպցիոն թեմաների ուսուցում իրականացվել է 1393 հանրակրթական դպրոցներում, 9 նախնական և միջին մասնագիտական, 10 բարձրագույն ուսումնական հաստատություններում: Մշակվել է «Կոռուպցիան և նրա կանխարգելումը» ծրագիր-ուղեցույցը նախնական (արհես-տագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կրթական ծրագրի մասնագիտությունների՝ «Տնտեսագիտության հիմունքներ», «Իրավագիտության հիմունքներ» և «Քաղաքագիտության հիմունքներ» առարկաների ծրագրերում (որոնցից մեկի ուսուցումը պարտադիր է ուսանողի համար), ներառվել են կոռուպցիային և դրա կանխարգելմանը վերաբերող թեմաներ:

2011թ. փետրվարի 23-ից մարտի-5-ը ժամանակահատվածում ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցներում իրականացվել է «Հակակոռուպցիոն տասնօրյակ» մրցույթը, որի արդյունքում հանրակրթական դպրոցների ուսուցիչները հանդես են եկել հակակոռուպցիոն բաց դասերով, իսկ 318 աշակերտներ ներկայացրել են «Կոռուպցիան և նրա կործանարար հետևանքները» խորագրով իրենց շարադրությունները, նկարներ և տեսաֆիլմեր: Մրցույթի արդյունքների ամփոփումից հետո ընտրվել են լավագույն բաց դասերի հեղինակ 39 ուսուցիչներ՝ հանրապետության տարբեր մարզերից: «Կրթությունը կոռուպցիայի կանխարգելման միջոց» ծրագիրի շրջանակներում հնգօրյա հակակոռուպցիոն դասընթացներ են իրականացվել Երևանի և ՀՀ մարզերի 19 ուսումնական հաստատություններում՝ 9 նախնական և միջին մասնագիտական, 10 բարձրագույն ուսումնական հաստատություններում, որոնցում ընդգրկվել է ավելի քան 1000 ուսանող:

Ըստ ոլորտների մշակվել ու հաստատվել են ուսումնական ձեռնարկներ, ներդրվել են վերապատրաստման ծրագրեր ու մոդուլներ: Մասնավորապես, ՀՀ Ոստիկանության 2011 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Ճանապարհային ոստիկանության թվով 36 ծառայող մասնակցել է Ճանապարհային ոստիկանների մասնագիտական վերապատրաստման դասընթացներին:

ՀՀ դատախազությունում՝ գործում է կոռուպցիայի վերաբերյալ դատախազների պարբերաբար վերապատրաստման կրթական ծրագիրը: 2011թ. 1-ին կիսամյակի ընթացքում «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից իրականացված կոռուպցիայի դեմ պայքարի աշխատանքների կազմակերպմանը վերաբերող դասընթացներին զուգահեռ, դպրոցում ներդրված համակարգչային վերապատրաստման կենտրոնում գործնական պարապմունքների միջոցով 113 դատախազներ և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 16 անձ մասնակցել են փողերի լվացման համակարգչային ծրագրի ուսուցմանը: «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ը 2011թ. մարտի 17-18-ին և մարտի 21-24-ին Բազելի կառավարման ինստիտուտի Ակտիվների վերադարձման միջազգային կենտրոնի հետ համատեղ իրավապահ մարմինների աշխատողների համար իրականացրել է սեմինար՝ նվիրված ակտիվների վերադարձման գործընթացին, կոռուպցիոն բնույթի և փողերի լվացման վերաբերյալ գործերի քննությանն ու դրանց դեմ տարվող պայքարի հարցերին:

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից հաստատվել են «Ամբողջականության հիմունքները» և «Հակակոռուպցիոն ներածություն» թեմաներով քաղաքացիական ծառայողների պարտադիր վերապատրաստման ծրագրերը:

2011թ-ին ԱՄՀ տեխնիկական օժանդակության շրջանակում Բազելի կառավարման ինստիտուտի կողմից կազմակերպվել է «Փողերի լվացում և միջոցների հայտնաբերում» թեմայով ուսուցում՝ ՖԴԿ և իրավապահ մարմինների ներկայացուցիչների համար:

Կոռուպցիայի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, փոխանակման և վերլուծության ուղղությամբ իրականացվել է կոռուպցիայի մակարդակը, գերիշխող տեսակները, բնագավառներն ու ոլորտները գնահատող ուսումնասիրություններ և հետազոտություններ: Մասնավորապես, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ – Հայաստան կազմակերպության կողմից 2011թ. հրապարակվել է Հայաստանի բնակչության շրջանում անցկացված կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի 2010թ.հետազոտությունը:

ՀՀ կառավարության աշխատակազմի պատվերով, «ՀՀ իշխանությունների գործունեության գնահատականները. տեսանելիությունը, ձեռքբերումներն ու բացթողումները» թեմայով հետազոտու-թյուններն իրականացվել են IPSC քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի կողմից: Հետազոտության արդյունքները տես՝ www.gov.am կայքում:

**Կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության աջակցություն** ոլորտում՝ Հայաստան Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի (ՀԳՄԾ) կողմից ստեղծված Հակակոռուպցիոն հանրային ընդունարանները (ՇՊԱԿ) ձևավորված են և գործում են ՀՀ բոլոր մարզերում և Երևանում: ՀՀ դատախազության և Հայաստանում գործող ՇՊԱԿ-ների ցանցի միջև 2011թ. հուլիսի 19-ին ստորագրված համագործակցության հուշագրով սահմանվում են դատախազության մարմինների ու ՇՊԱԿ-ների համագործակցության մեթոդներն ու եղանակները, մասնավորապես կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, կոռուպցիայի դեմ պայքարում ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերի և իրավունքների պաշտպանության ապահովման գործում:

Կոռուպցիոն խնդիրների և հակակոռուպցիոն մոտեցումների վերաբերյալ գիտելիքների ընդլայնման և կոռուպցիայի շուրջ հասարակական իրազեկության բարձրացման նպատակով Հայաստան Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի (ՀԳՄԾ) կողմից 2008-2011թթ. կազմակերպել է յոթ հակակոռուպցիոն համաժողով՝ ՀՀ տարբեր պետական կառույցների, ՀԿ-ների և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ: ՀԳՄԾ-ն դրամաշնորհներ է տրամադրել՝ ԶԼՄ-ներով հակակոռուպցիոն քարոզարշավների համար: Մասնավորապես, Հայաստանի հանրային հեռուստատեսությանը՝ «Հատուկ ռեպորտաժ» «Ականատես. Իրական պատմություններ» ռիելիթի շոու հեռուստաշարի համար, «Լոռի ՄԻԳ» «Լոռի» և «Ալտ» հեռուստաընկերություններին՝ հակակոռուպցիոն թոք շոուների, քարոզարշավների իրականացման համար, «Հայաստանի հանրային կապերի ասոցիացիային»՝ բարձրացնելու հասարակության, մամուլի և գործարարների իրազեկությունը՝ քաղաքացիների իրավունքների պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ:

Կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության կարողությունների զարգացման ուղղությամբ ՀՀ պետական բյուջեի մասին 21.12.2010թ. ՀՕ-176-Ն օրենքի հավելված հավելված 1-ի աղյուսակ 16-ի սահմանված դրամաշնորհների տրամադրման ծրագրերով 2011թ. համար նախատեսված «ՀՀ կառավարության գործունեության գնահատականների, կյանքի որակի և համայնքային կարիքների գնահատման հետազոտություններ» ծրագրով հատկացվել է 106,380.0 հազ.դրամ: Այլ ընթացիկ դրամաշնորհներ հոդվածով ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր է կնքվել, IPCS քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի հետ: Հետազոտության արդյունքները տես www.gov.am կայքում:

Ֆիզիկական և իրավաբանական անձ - վարչական մարմին հարաբերությունների վարչարարության բարելավման ուղղությամբ՝ մեկ պատուհանի համակարգն ու ընթացակարգերը ներդրվել են նաև ՀՀ ոստիկանության անձնագրերի ու վիզաների ծառայության, ավտոմեքենաների տեխնիկական զննության և ավտոմեքենաների հաշվառման ու համարանիշների տրամադրման գործընթացներում: Վերացվել է տրանսպորտային միջոցի հաշվառման, հաշվառումից հանելու և վերահաշվառելու դիմումներ լրացնելու, ինչպես նաև իրավաբանական անձանց համար պետական գրանցման վկայական և պատճեններ ներկայացնելու պահանջը: ՀՀ կառավարության 2006 թվականի ապրիլի 14-ի «ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 20-ի N 581-Ն և 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N 1158-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N 424-Ն որոշմամբ ճանապարհային ոստիկանության հաշվառման-քննական ստորաբաժանումները «A», «B» և «C» կարգերի ու «A1», «B1» և «C1» ենթակարգերի տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական ստանալու վարորդական քննություններն ընդունելու համար քաղաքացիներից որևէ ուսումնական կազմակերպություն ավարտելու վերաբերյալ, ինչպես նաև փաստաթղթեր չեն պահանջվում պոլիկլինիկական, հոգեբուժական և նարկոլոգիական բժշկական հաստատություններից ճանապարհային ոստիկանությանն էլեկտրոնային և թղթային կրիչների միջոցով այն ստանում է ՀՀ առողջապահության նախարարությունից:

**ՀՈՒՄԾ մոնիտորինգի ու գնահատման, հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմինների մասով** ձևավորվել է ՀՈՒՄԾ մոնիտորինգի և գնահատման ինստիտուցիոնալ համակարգը: ՀՀ պետական կառավարման 24 մարմինների ՀՈՒՄԾ 50-ից ավելի պատասխանատուներ անցել են 2 վերապատրաստման դասընթացներ: Նրանց կողմից պատրաստվել և փորձագիտական խմբի կողմից ամփոփվել են ՀՈՒՄԾ 2009թ., 2010թ. տարեկան և 2011թ. առաջին կիսամյակի մոնիտորինգային հաշվետվությունները: ՀՈՒՄԾ 2009թ.տարեկան և 2010թ. առաջին եռամսյակի ամփոփ հաշվետվություններն ընդունվել են ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կողմից՝ 2010թ. հոկտեմբերի 12-ի նիստում ( արձանագրություն N 13.7/[54783]-10):

Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման գործում Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կարողությունների զարգացման ուղղությամբ մշակվել է «Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի հունիսի 1-ի ՆՀ-100-Ն հրամանագրում փոփոխություններ և լրացումներ

կատարելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծը: Այն քննարկվել է հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի իրականացման հանձնաժողովի 2010թ. հուլիսի 21-ի ու հավանություն է արժանացել ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի 2010թ. հոկտեմբերի 12-ի նիստում (արձանագրություն N 13.7/[54783]-10):

GRECO-ի երաշխավորությունների կատարման վերաբերյալ Հայաստանի առաջընթացի զեկույցը ներկայացվել է GRECO-ի քարտուղարություն (Տես` http://www.coe.int/t/dghl/monitoring/GRECO): OECD երաշխավորությունների կատարման վերաբերյալ Հայաստանի առաջընթացի զեկույցը ներկայացվել է OECD-ի քարտուղարություն (Տես` www.oecd.org/corruption/acn):

Ապահովվել է քաղաքացիական հասարակության կողմից ՀՌԻՄԾ ազդեցության ընկալման գնահատման իրականացումը: ԱՄՆ ՄԶԳ հակակոռուպցիոն գործողությունների մոբիլիզացման ծրագրի շրջանակներում Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների միջոցով 2011թ. իրականացվել է «Կոռուպցիան Հայաստանում. Տնային տնտեսությունների 2010թ. հետազոտությունը»: Այն վերջին երեք տարիներին իրականացված համանման 3-րդ հետազոտությունն է: ՀՀ կառավարության պատվերով «ԱյՓիԷսՄի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի կողմից իրականացվում է «ՀՀ իշխանությունների գործունեության գնահատականները. տեսանելիությունը, ձեռքբերումներն ու բացթողումները սոցիոլոգիական հետազոտությունը», որի 7-րդ բաժինը նվիրված է պետական կառույցներում օրենքների խախտմանը և կոռուպցիոն դրսևորումներին:

## 3. ՀՈՒՄԾ 2011Թ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԸՍՏ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

### 3.1 Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտ

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Շարունակականորեն կատարելագործել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ՀՀ օրենսդրությունը | 1.1 ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին՝ միջազգային և ներպետական լավագույն փորձը հաշվի առնելով, մասնավորապես ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատությունների նկատմամբ կիրառվող պահանջների, քրեական հետապնդում իրականացնող մարմինների և վերահսկող մարմինների հետ փոխհարաբերությունների զարգացման միջոցով | Առաջընթացի հաշվետվության ներկայացում և հաստատում | ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի փուլի 3-րդ գնահատման հաշվետվություն | Այո | Արդյունք. Կատարված է մասնակիորեն<br>2010թ.-ին ներկայացված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի իրականացման արդյունքների հաշվետվությամբ նշված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրական բարեփոխումների փաթեթը բոլոր շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցվելուց հետո դեռևս 2010թ. ուղարկվել էր ՀՀ կառավարություն: ՀՀ կառավարության պետաիրավական կոմիտեի նախանիստում որոշում է կայացվել նշված օրենսդրական փաթեթը ներկայացնել ՀՀ Նախագահի աշխատակազմի առաջարկություններին և դիտողություններին: ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից ներկայացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա լրամշակված օրենսդրական փաթեթը 2011թ. առաջին կիսամյակին ներկայացվել է տնտեսական, մրցակցության, բյուջետային, բնապահպանության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում ազդեցության գնահատման: Նշված ոլորտների ազդեցության գնահատման եզրակացությունների ստացումից հետո օրենսդրական փաթեթը ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ հակակոռուպցիոն ոլորտում ազդեցության գնահատման: Գնահատման փուլի ավարտից հետո նախատեսվում է օրենսդրական փաթեթը կրկին ուղարկել ՀՀ կառավարություն՝ ՀՀ ազգային ժողով ներկայացնելու համար: | ՀՀ Կենտրոնական Բանկ, (ՖԴԿ),<br>ՀՀ արտաքին գործերի նախա-րարություն,<br>ՀՀ գլխավոր դա-տախազություն,<br>ՀՀ ԿԱ ոստիկանություն,<br>ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն,<br>ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե,<br>ՀՀ արդարադատության նախարարություն,<br>ՀՀ ֆինանսների նախարարություն,<br>ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե |
| | 1.2 Ապահովել քաղաքական ազդեցություն ունեցող անձանց միջազգային ռեեստրների հասանելիությունը | | Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց միջազգային ռեեստրների հասանելի հստվածը | | 2011թ. այս ռազմավարական դրույթի տեսակետից արդյունքների ստացում նախատեսված չէ: | ՀՀ Կենտրոնական Բանկ, (ՖԴԿ), |
| 2. Հզորացնել ՖԴԿ ինստիտուցիոնալ կարողությունները | 2.3 Շարունակականորեն բարձրացնել ՖԴԿ աշխատակազմի (վերլուծաբանների, մեթոդաբանների և ծրագրավորողների) մասնագիտական որակավորումը`ուսուցումների և վերապատրաստումների կազմակերպման միջոցով: | ՖԴԿ աշխատակիցների կողմից միավոր ժամանակում կատարվող աշխատանքի (արտադրողականության) և մասնագիտական գիտելիքների, ունակությունների աճ | ՓԼ/ԱՖ կասկածելի գործարքների վերլուծության տեղեկատվական-ծրագրային նոր համակարգերի առկայություն | Այո | Արդյունք. Կատարված է ամբողջությամբ<br>ՖԴԿ աշխատակիցները մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով 2011թ-ին մասնակցել են ուսուցումների և վերապատրաստվել են ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում: Մասնավորապես՝ ՖԴԿ աշխատակիցները 2011թ-ին մասնակցել են.<br>1. ԱՄՀ փորձագետների կողմից կազմակերպված «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում վերահսկողության առանձնահատկությունները» թեմայով դասընթացին.<br>2. ԱՄՆ տեխնիկական օժանդակության շրջանակներում ԱՄՆ Վաշինգտոն քաղաքում կազմակերպված «Պայքարն ապահովագրական | ՀՀ Կենտրոնական Բանկ, (ՖԴԿ), |
| | | | Արտաքին տեղեկատվական շտեմարանները ամբողջությամբ հասանելի են | - | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ՖԴԿ աշխատակիցների կողմից ներպետական և միջազգային վերապատրաստման դասընթացներին մասնակցություն | Այո | խարդախությունների դեմ» թեմայով սեմինարին.<br>3. 2011թ-ին ԱՄՀ տեխնիկական օժանդակության շրջանակում Բազելի կառավարման ինստիտուտի կողմից կազմակերպվել է «Փողերի լվացում և միջոցների հայտնաբերում» թեմայով ուսուցում՝ ՖԴԿ և իրավապահ մարմինների ներկայացուցիչների համար: | |
| | | | ՖԴԿ աշխատակազմից վերապատրաստված ներկայացուցիչների քանակական հարաբերակցությունը աշխատակիցների ընդհանուր թվին | 19/20 | | |
| 3. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում հզորացնել í»ñ³ÑëÏáÕ Ù³ñÙÇÝÝ»ñÇ կարողությունները | 3.1 Զարգացնել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ՀՀ ԿԲ-ի որպես լիազոր մարմնի, վերահսկողական գործառույթներն իրականացնելու կարողությունները՝ ուսուցումների և վերապատրաստումների կազմակերպման միջոցով: | ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության խախտումների բացահայտման և արձանագրման ոլորտում մասնագիտական գիտելիքների, ունակությունների և արտադրողականության աճ | ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլոտում գործող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումների հիման վրա կազմված արձանագրությունները, ինչպես նաև համարժեք պատասխանատվության միջոցների կիրառում | Այո | Արդյունք. Կատարված է ամբողջությամբ<br><br>Սույն հաշվետվության 2-րդ կետում նշված «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում վերահսկողության առանձնահատկությունները» թեմայով դասընթացին և «Պայքարն ապահովագրական խարդախությունների դեմ» թեմայով սեմինարին մասնակցել են նաև ԿԲ ֆինանսական վերահսկողության վարչության և ֆինանսական համակարգի կարգավորման վարչության աշխատակիցները: Բացի այդ, վերջիններս մասնակցել են Իտալիայի Կարաբինների կորպուսի կողմից կազմակերպված «Փողերի կեղծարարության դեմ» թեմայով սեմինարին: | ՀՀ Կենտրոնական Բանկ, |
| | 3.2 Զարգացնել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում վերահսկող այլ մարմինների վերահսկողական գործառույթներն իրականացնելու կարողությունները | ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության խախտումների բացահայտման և արձանագրման ոլորտում մասնագիտական գիտելիքների, ունակությունների և արտադրողականության աճ | ՀՀ ԿԲ կողմից համապատասխանության աուդիտի անցկացման քանակական դինամիկան | | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ<br><br>Սույն հաշվետվության 2-րդ կետում նշված «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում վերահսկողության առանձնահատկությունները» թեմայով դասընթացին և «Պայքարն ապահովագրական խարդախությունների դեմ» թեմայով սեմինարին մասնակցել են նաև ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցները: | ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե |
| 4. Բարձրացնել ՓԼ/ԱՖ դեպքերի բացահայտման արդյունավետությունը | 4.1 Զարգացնել ՓԼ/ԱՖ հանցագործությունների քննության հետ կապված քրեական հետապնդում իրականացնող և դատական մարմինների | ՓԼ/ԱՖ քրեական գործերի քննության համար պատասխանատու անձնաց գիտական գիտելիքների, ունակությունների և արտադրողականության աճ | ՓԼ/ԱՖ հանցագործությունների հատկանիշներով.<br>հարուցված քրեական գործերի քանակ, | 3 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ<br>2011թ. 1-ին կիսամյակի ընթացքում հարուցվել է 3 քրեական գործ, նախորդ ժամանակահատվածից՝ 2010թ.-ից փոխանցվել է 3 գործ, 2 գործի կասեցված վարույթը վերսկսվել է: Այդպիսով, 2011թ. 1-ին կիսամյակի ընթացքում նախաքննություն է կատարվել 8 քրեական գործով: Նախաքննությամբ ավարտվել 3 գործ. 1-ի վարույթը կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1- | ՀՀ դատախազություն, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ դատական |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | մասնագիտական կարողությունները | | նախաքննության փուլում գտնվող քրեական գործերի քանակ, | 8 | ին մասի 2-րդ կետի հիման վրա` մեղադրյալի քննությունից թաքնվելու պատճառաբանությամբ, իսկ 2 գործ 2 մարդու նկատմամբ (որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը) հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան` ըստ էության քննելու համար:<br>2011թ. 1-ին կիսամյակի ընթացքում դատարանի կողմից մեղադրական դատավճիռ է կայացվել 1 գործով 2 անձի նկատմամբ և պատիժ է նշանակվել ազատազրկում:<br>Ցուցիչ 5. 14.04.2008թ. ընդունվել է «Փոխըմբռնման համաձայնագիր ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի և ՀՀ դատախազության միջև», որը սահմանում է այդ ընթացակարգերը: Վերջիններիս փոփոխություններ չեն նախատեսվում: | դեպարտամենտ |
| | | | մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված քրեական գործերի քանակ | 2 | | |
| | | | մեղադրական դատավճիռների քանակ | 1 | | |
| | | | Սահմանվել են ՀՀ ԿԲ, ՖԴԿ և քրեական հետապնդում իրականացնող մարմինների միջև, համագործակցություն ապահովող ընթացակարգեր (այո/ոչ) | այո | | |

### 3.2 Հանրային ֆինանսների կառավարման ոլորտ

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 5.Բարձրացնել հանրային ֆինանսների կառավարման կարգապահությունն ու թափանցիկությունը | 5.1. Ընդլայնել ծրագրային բյուջետավորման ներդրումը | Ծրագրային բյուջետավորման պահանջներին համապատասխանող ձևաչափով մշակված ՀՀ 2012թ. պետական բյուջեի նախագծի առկայություն<br><br>Պետական մարմինների ծախսային ծրագրերի կատարման հաշվետվության կազմման և մոնիտորինգի իրականացման մեթոդական ցուցումների առկայություն | Բյուջետային գործընթացի շրջանակներում ծրագրային բյուջետավորման բարեփոխումների գործընթացում ընդգրկված պետական մարմինների թվի հարաբերությունը դրանց ընդհանուր թվին | 100 | Արդյունք 1. Իրականացված չէ:<br>ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման գործընթացն սկսվում է 2011 թվականի հուլիսի 7-ից:<br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ:<br>Բոլոր պետական կառավարման մարմինների համապատասխան մասնագետների մասնակցությամբ 2010 թվականի փետրվարին կազմակերպվել են սեմինար-խորհրդակցություններ՝ նվիրված բյուջետային ծախսային ծրագրերի արդյունքային (ոչ ֆինանսական) ցուցանիշների մոնիթորինգի համակարգի ներդրման և դրա մասին հաշվետվությունների կազմմանն առնչվող հարցերին և տրամադրվել են համապատասխան մերոդական ցուցումներ: Նաև կազմակերպվել և շարունակվում են կազմակերպվել այդ գործընթացում ներգրավված պետական մարմինների համապատասխան մասնագետների վերապատրաստման դասընթացներ, տրամադրվում է խորհրդատվություն, ընդ որում, ինչպես նախարարության ուսուցման կենտրոնում, այդպես էլ մասնագետների աշխատավայրերում: Նախորդ տարիներին ծրագրային բյուջետավորվորման ներդրման գործընթացում ընդգրկված թվով 14 գերատեսչությունների 2010 թվականի տարեկան հաշվետվություններով ներկայացված արդյունքային ցուցանիշների գծով իրականացվել է փորձնական մոնիթորինգ, որով բացահայտված խնդիրներն իրենց կարգավորումը կգտնեն 2012 թվականի բյուջետային գործընթացում:<br><br>Ցուցիչ 1. Ծրագրային բյուջետավորման ներդրման գործընթացում ընդգրկված են բյուջետային ծրագրեր իրականացնող բոլոր պետական մարմինները: | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| | | | Պետական ֆինանսների կառավարման լիազոր մարմնի կողմից սահմանված ռազմավարական պլանավորման չափորոշիչներով նախատեսված է ակնկալվող արդյունքների չափման շոշափելի, հասանելի և չափելի ցուցիչներ (այո/ոչ) | | Ցուցիչ 2. Ակնկալվող արդյունքների չափման շոշափելի, հասանելի և չափելի ցուցիչները ներկայացված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի բյուջետային ուղերձում (տես՝ ուղերձի 1-ին և 2-րդ մասերը, N 12 հավելված) և ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին>> N 1748-Ն որոշման մեջ (տես ՀՀ Պաշտոնական Տեղեկագիր , 2011 թ. N 3-ի 1-ին և 2-րդ մասերը, N 11 հավելված) | |
| | | | Պետական ֆինանսների կառավարման լիազոր մարմնի | | Ցուցիչ 3. Հանրային ֆինանսների պլանավորման համար անհրաժեշտ ընթացիկ իրավիճակը նկարագրող հենանիշերը (baseline) և թիրախները սահմանելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել և թվով 3 | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կողմից սահմանվել են հանրային ֆինանսների պլանավորման համար անհրաժեշտ ընթացիկ իրավիճակը նկարագրող հենանիշերը (baseline) և թիրախները (այո/ոչ), | | գերատեսչություններին է տրամադրվել ծրագրային բյուջետավորման ներդրման մեթոդաբանությունից բխող բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի) կազմման ուղեցույց` յուրաքանչյուրում 1-ական բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի) նախագծի կազմման համար: Փորձնական ծրագրում ընդգրկված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը և ՀՀ ԿԱ ոստիկանությունը կազմել և ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացրել նշված բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի) նախագծերը, որոնք հնարավորություն են տալիս տվյալ բյուջետային ծրագրի համար սահմանել ընթացիկ իրավիճակը նկարագրող հենանիշերը և թիրախները: | |
| | | | ֆինանսների կառավարման պետական լիազոր մարմնի կողմից տրվող մեթոդական ցուցումներում շեշտվում են բյուջետային հայտերում մոնիտորինգի պլանի առկայության և ռիսկերի ներառման պահանջը (այո/ոչ) | Այո | Ցուցիչ 4. ՀՀ 2012 թվականի բյուջետային գործընթացի շրջանակում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բոլոր գերատեսչություններին տրամադրված (ուղարկվել է 2010 թվականի դեկտեմբերի 29-ին) Մեթոդական ցուցումներում շեշտադրվել է բյուջետային ֆինանսավորման հայտերում մոնիտորինգի պլանի առկայության և ռիսկերի ներառման պահանջը | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 5.2. Բարձրացնել բյուջետային հատկացումների հաշվետվողականությունը | Պետական բյուջեի միջոցների հաշվին հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար ֆինանսական միջոցների և դրանց ծախսումների վերաբերյալ հաշվետվությունների հրապարակման պարտադիր պահանջը սահմանված է | Բովանդակային ցուցանիշեր պարունակող հաշվետվություններ տրամադրած ՊՈԱԿ-ների թվի հարաբերությունը գործող բոլոր ՊՈԱԿ-ների քանակին (որքան մոտ է մեկին այնքան ցածր է կոռուպցիոն ռիսկը) | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Կատարվել է մասնակիորեն:<br><br>Աշխատանքները նախատեսվում են իրականացնել Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Ոչ առևտրային կազմակերպությունների ֆիդուցիար վերահսկողության փորձնական դրամաշնորհային ծրագրի միջոցների հաշվին: Այդ նպատակով ՀԲ-ի սահմանած ընթացակարգերին համապատասխան կազմակերպվել է խորհրդատվական ծառայությունների գնման համար խորհրդատուի ընտրության մրցույթ, որի արդյունքում 04.08.2010թ. կնքվել է խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր: Նշված պայմանագրի շրջանակներում խորհրդատուի կողմից ներկայացվել է «ՊՈԱԿ-ների նույնականացման և խմբավորման չափորոշիչների մասին» և «ՊՈԱԿ-ների ֆիդուցիար հսկողության /մոնիտորինգի/ մոդելի թերությունների /բացերի/ և մոդելի ներդրման հետ կապված ռիսկերի վերլուծության վերաբերյալ» հաշվետվությունները, որոնք 2011թ. Ընդունվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:<br><br>Ներկայումս իրականացվում է հիշյալ հաշվետվություններով առաջարկվող մոդելի փորձարկման աշխատանքները, որի նպատակն է փորձարկել առաջարկվող մոդելը կոնկրետ ՊՈԱԿ-ներում, լիազոր մարմիններում և ՀՀ ֆինանսների նախարարությունում` պարզելու համար մոդելի կիրառման հետ կապված գործնական խնդիրները և առկա կարողությունները: Փորձարկման արդյունքներով մոդելը կբերվի վերջնական տեսքի և կմշակվեն վերջինիս ներդրման համար անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների և մոդելի ներդրման ռազմավարության վերաբերյալ հայեցակարգ, որը մինչև 2011թ. ավարտը կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը: | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| | | | Պետական բյուջեի միջոցների հաշվին հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար օրենսդրորեն սահմանվել է ֆինանսական միջոցների և դրանց ծախսումների վերաբերյալ հաշվետվությունների հրապարակման պարտադիր պահանջ (այո/ոչ) | Ոչ | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ՊՈԱԿ-ների ֆիդուցիար վերահսկողության նախագծված մեթոդաբանությունը հաստատված է (այո/ոչ) | Ոչ | | |
| | | | ՊՈԱԿ-ների համար գնման համաձայնագրերի ձևաչափերի նմուշները հաստատված են (այո/ոչ) | Ոչ | | |
| 6.Բարելավել պետական բյուջեի ծախսումների կառավարման գործառույթներն ու ընթացակարգերը | 6.1Կատարելագործել պետական բյուջեի ծախսումների կառավարման մոնիտորինգի, վերահսկողության և հաշվետվության ընթացակարգերը և ներդնել, տվյալների կառավարման ամբողջական և հուսալի համակարգ | Ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգի ծրագրային և ապարատային ապահովումն ձեռք է բերված, Ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգն առաձնին մարմիններում փորձարկված է | Ծախսերի կառավարման համակարգը կազմակերպվում է էլեկտրոնային հիմքի վրա (այո/ոչ), | Այո | Արդյունք 1.Կատարված է մասնակիորեն:<br><br>2009թ-ին մշակվել է ԿՖԿՏՀ-ի տեխնիկական առաջադրանքը, որի հիման վրա նախատեսվում է ԿՖԿՏՀ-ի ծրագրային և ապարատային ապահովման ձեռք բերում: Սակայն ֆինանսական միջոցների բացակայությամբ պայմանավորված նշված ապահովումների ձեռք բերման ուղղությամբ դեռևս միջոցներ չեն ձեռնարկվել: ՀՀ կառավարությունը բանակցություններ է վարում դոնոր միջազգային կազմա-կերպությունների հետ:<br><br>Միաժամանակ չնայած ԿՖԿՏՀ-ի ամբողջական ներդրման ուղղությամբ միջոցներ չեն ձեռնարկվել, սակայն ՀՀ կառավարության միջոցների հաշվին ձեռնարկվել են միջոցներ էլեկտրոնային եղանակով գնման գործարքների հաշվառման համակարգի ներդրման և ՀՀ ֆինանսների նախարարությունում օգտագործվող ծրագրային ապահովման մեջ փոփոխություններ կատարելու համար՝ ԾԻԳ-երի կողմից իրենց անվամբ բացված գանձապետական արտարժութային հաշիվները էլեկտրոնային ձևով առցանց կառավարելու հնարավորություն ստեղծելու նպատակով:<br><br>Գանձապետական հաշիվների էլեկտրոնային կառավարման համար ստեղծվել է Client-Treasury ծրագրային համակարգը, որը ապահովում է հիմնարկների կողմից իրենց գանձապետական հաշիվներից գործառնությունների կատարման հնարավորությունը, որը ներդրվել է ՀՀ բոլոր նախարարություններում և պետական մարմիններում: Ներկայումս աշխատանքներ են տարվում ծրագրային համակարգը ՀՀ մարզպետարաններում ներդնելու ուղղությամբ, նշվածով պայմանավորված 2011թ. ՀՀ ֆինանսների նախարարության «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ում, կազմակերպվել են ՀՀ մարզպետարանների համապատասխան մասնագետներին ծրագրային համակարգին ծանոթացնելու դասընթացներ: Այս համակարգերը հանդիսանում են ԿՖԿՏՀ բաղկացուցիչ մասերը: | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| | | | Գանձապետարանի թղթատար գործառույթները ամբողջությամբ թվայնացված են (այո/ոչ) | Այո | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Պետական բյուջեի ծախսումների կառավարման անձնակազմի պարտականություններ հստակ սահմանված են (այո/ոչ) | Այո | | |
| 7. Բարելավել հաշվապահական հաշվառումը հանրային հատվածում | 7.1.Ամբողջականացնել հանրային հատվածում հաշվապահական հաշվառման ներդրումը | Հանրային հատվածում հաշվապահական հաշվառման ընթացակարգերը ներդրված են պետական կառավարման բոլոր մարմիններում<br><br>Պետական կառավարման մարմինների հաշվապահները վերապատրաստված են | Հանրային հատվածում հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են միջազային լավագույն փորձին (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Արդյունք 2. Իրականացված են մասամբ<br>Մշակվել է «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագիծը շահագրգիռ մարմինների հետ քննարկումների արդյունքում լրամշակվել է` դրանում կատարվել են նշանակալի փոփոխություններ: Նախագծի լրամշակված տարբերակը ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:<br>Միաժամանակ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել է նաև «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը նույնպես ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:<br><br>ՀՀ վարչապետի 28.12.10թ. թիվ 1/13.2/3-11 հանձնարարականով ՀՀ ֆինանսների նախարարությանը հանձնարարվել է քննարկել հիշյալ նախագծերը միավորելու հարցը:<br><br>Այս հանգամանքով պայմանավորված ՀՀ ՖՆ-ը 18.01.11թ. թիվ 13/13-2-84 գրությամբ Համաշխարհային բանկի քննարկմանն է ներկայացրել նշված օրենքների նախագծերը` խնդրելով հայտնել նաև իր կարծիքը այդ նախագծերը միավորելու նպատակահարմարության վերաբերյալ:<br><br>Ի լրումն նշված գրության ՀՀ ՖՆ-ը 09.02.11թ. թիվ 13/13-2-282 գրությամբ ՀԲ-ի քննարկմանն է ներկայացրել նաև վերոհիշյալ օրևնքների նախագծերի միավորված տարբերակը:<br><br>Այս պահի դրությամբ ՀԲ-ից չի ստացվել նշված նախագծերի վերաբերյալ վերջինիս դիրքորոշումը<br><br>2009թ-ին մշակվել են հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը, հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման ուղեցույցը, հանրային հատվածի կազմակերպությունների համար հաշվապահական հաշվառման մոդելային քաղաքականությունը, բարեփոխումների իրականացման ռազմավարությունը, որոնք նախատեսվում է հաստատման ներկայացնել <<Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի ընդունումից հետո:<br>Ներկայումս ՀԲ-ի աջակցությամբ աշխատանքներ են տարվում Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման իրավական ակտերի ախագծերի փորձարկման և հաշվապահության ավտոմատացված տեղեկատվական համակարգի փորձարկման ուղղությամբ:<br><br>Ցուցիչ 1. Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտները արդեն մշակված են և համապատասխանում են միջազգային ստանդարտներին: Սակայն, Մոնիտորինգային ցուցիչի փաստացի արժեքը գնահատվում է <<ոչ>>, քանի որ դրանք կներդրվեն <<Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվա-պահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի ընդունումից հետո: | ՀՀ ֆինանսների նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Վերապատրաստված հանրային հատվածի հաշվապահների թվի հարաբերությունը հանրային հատվածի հաշվապահների ընդհանուր թվին | 0 | Ցուցիչ 2. Մոնիտորինգային ցուցիչի փաստացի արժեքը գնահատվում է <<0>>, քանի որ այն վերաբերվում է 2011թ-ի ակնկալվող արդյունքին: | |
| | | | Հանրային հատվածում հաշվապահական հաշվառման ընթացակարգերը կիրառող պետական կառավարման մարմինների թվի հարաբերությունը դրանց ընդհանուր թվին | 0 | Ցուցիչ 3. Մոնիտորինգային ցուցիչի փաստացի արժեքը գնահատվում է <<0>>, քանի որ այն վերաբերվում է 2011թ-ի ակնկալվող արդյունքին: | |
| | | | Հանրային հատվածում հաշվապահական հաշվառման ընթացակարգերը կիրառող տեղական ինքնակառավարման մարմինների թվի հարաբերությունը դրանց ընդհանուր թվին | 0 | Ցուցիչ 4. Մոնիտորինգային ցուցիչի փաստացի արժեքը գնահատվում է <<0>>, քանի որ այն վերաբերվում է 2012թ-ի ակնկալվող արդյունքին: | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 8. Ամբողջականացնել ներքին աուդիտի համակարգը | 8.1 Բարձրացնել ներքին աուդիտի պլանների և հաշվետվությունների որակը | Հանրային հատվածում ներքին աուդիտի պլանների և հաշվետվությունների որակի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է սահմանված չափորոշիչներին համապատասխան | Հանրային հատվածում ներքին աուդիտի չափարոշիչների և լիարժեք/մասնակի համապատասխանող աուդիտի պլանների և հաշվետվությունների թվի հարաբերությունը աուդիտի պլանների և հաշվետվությունների ընդհանուր թվին | 0 | Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն: <br> Համաձայն <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի` հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերի նկատմամբ հսկողությունն իրականացնում են կազմակերպության ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեն: Համաձայն <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի` հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվությունները ներկայացվում է ՀՀ ֆինանսների նախարարություն, որն ապահովում է ներքին աուդիտի համակարգի մասին նախորդ տարվա հաշվետվության հրապարակումն իր պաշտոնական կայքում` համաձայն <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ կետի 4-րդ ենթակետի: <br> 2012թ. I եռամսյակում կհաստատվի Ներքին աուդիտի ձեռնարկի լրամշակված տարբերակը, որտեղ կսահմանվեն հանրային հատվածում ներքին աուդիտի ծրագրերի և հաշվետվությունների որակի նկատմամբ վերահսկողության չափորոշիչները: <br> Ցուցիչ 1. Մոնիտորինգային ցուցիչի փաստացի արժեքը գնահատվում է <<0>>, քանի որ արդյունքն ակնկալվում է 2012թ. I եռամսյակում: | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| | | | Ներքին աուդիտորների մասնագիտական որակավորման չափորոշիչները համապատասխանում են միջազգային լավագույն փորձին | 0 | Ցուցիչ 2. Մոնիտորինգային ցուցիչի փաստացի արժեքը գնահատվում է <<0>>, քանի որ այն վերաբերվում է 2011-2013թթ-ի ակնկալվող արդյունքներին: | |
| | 8.2 Բարձրացնել աուդիտորների մասնագիտական կարողությունները ու անկախության աստիճանը | Իրականացվում է հանրային հատվածի ներքին աուդիտորների վերապատրաստման դասընթացի ծրագիր, Ներքին աուդիտորների մասնագիտական որակավորման չափորոշիչները սահմանված են, Հանրային հատվածում գործող ներքին աուդիտորները վերապատրաստված են | Հանրային ոլորտում ներքին աուդիտի վերապատրաստման դասընթացներին մասնակցած և որակավորում ստացած անձանց թվի հարաբերությունը դասընթացներին մասնակցած անձանց ընդհանուր թվին | 0 | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն: <br> Մշակվել են հանրային հատվածում ներքին աուդիտի և ներքին աուդիտորների վերապատրաստման ձեռնարկները, որոնք կներկայացվեն հաստատման 2012թ. I եռամսյակում: Հանրային հատվածում գործող ներքին աուդիտորների վերապատրաստման միջոցառումը նախատեսված է իրականացնել մինչև 30.12.2013թ.: <br> Արդյունք 2. Կատարված է մասնակիորեն: <br> Ներքին աուդիտորների մասնագիտական որակավորման չափորոշիչները մշակված են: Դրանց կիրառումը նախատեսվում է իրականացնել մինչև 30.12.2013թ.` համաձայն ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 11-ի նիստի N 44 արձանագրային որոշման հավելված 1-ով սահմանված ժամանակացույցի: <br> Արդյունք 3. Իրականացված չէ: <br> Համաձայն ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 11-ի նիստի N 44 արձանագրային որոշման հավելված 1-ով սահմանված ժամանակացույցի` հանրային հատվածում գործող ներքին աուդիտորների վերապատրաստման միջոցառումը նախատեսված է իրականացնել մինչև 30.12.2013թ.: <br> Ցուցիչ 1. Մոնիտորինգային ցուցիչի փաստացի արժեքը գնահատվում է <<0>>: <br> Արժեքի փոփոխությունը հնարավոր է վերապատրաստումը սկսելուց հետո: | ՀՀ ֆինանսների նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 9.Զարգացնել հանրային հատվածում արտաքին աուդիտի համակարգը | 9.1 Հզորացնել ՀՀ Վերահսկիչ պալատի ինստիտուցիոնալ և մասնագիտական կարողությունները | Միջազգային չափանիշներին և լավագույն փորձին համապատասխանող ֆինանսական, համապատասխանության և արդյունավետության,ինչպես նաև բնապահպանական աուդիտի մեթոդներն ու ընթացակարգերը ներդրված են | ՀՀ Վերահսկիչ պալատն իր իրավասությունների շրջանակներում համաչափորեն կիրառում է ֆինանսական, համապատասխանության, արդյունավետության և բնապահպանական աուդիտի տարրերը (այո/ոչ) | Այո | **Արդյունք 1.** Իրականացված է ամբողջությամբ:<br><br>**Ցուցիչ 1.** Վերահսկիչ պալատն իր իրավասության շրջանակներում համաչափորեն կիրառում է վերահսկողության՝ ֆինանսական, համապատասխանության և արդյունավետության տեսակները, բացառությամբ՝ բնապահպանական վերահսկողության տեսակի, քանի որ այն չափազանց առանձնահատուկ է և անհրաժեշտություն չկա յուրաքանչյուր վերահսկվող օբյեկտում այն կիրառել: | ՀՀ Վերահսկիչ պալատ |
| | | | ՀՀ Վերահսկիչ պալատի իրականացրած աուդիտի արդյունքների հաշվետվության վերաբերյալ պաշտոնական արձագանքների թվի հարաբերությունը իրար հաջորդող տարեկան զեկույցների ժամանակահատվածներում | Տվյալներ չկան | **Ցուցիչ 2.** 2011 թվականի համար ցուցանիշը կարող է հաշվարկվել միայն 2011թ. բոլոր ընթացիկ հաշվետվությունների Վերահսկիչ պալատի խորհրդի կողմից հաստատվելուց հետո՝ 2012թ. առաջին եռամսյակում: | |
| | | | Հանրային ֆինանսների կառավարման ոլորտում ռիսկերի գնահատման հաշվետվությունների թիվը | 0 | **Ցուցիչ 3.** 2011թ. առաջին եռամսյակում Վերահսկիչ պալատը, իր ընթացիկ տարվա գործունեության ծրագրին համաձայն, Վերահսկիչ պալատի խորհրդի որոշմամբ բացել է 25 վերահսկողության թեմաներ, որոնք դեռևս ավարտված չեն, ընթացքի մեջ են: | |
| 10. Բարելավել օրենսդիր իշխանությանը ՀՀ կառավարության հաշվետվողականությունը | 10.1 Հզորացնել ՀՀ ԱԺ հանձնաժողովների մասնագիտական կարողությունները | ՀՀ Ազգային ժողովում ՀՀ պետական բյուջեի նախագծի և պետական բյուջեի կատարման մասին ՀՀ կառավարության հաշվետվության քննարկման գործընթացին հանրային մասնակցության ընդլայնման դրույթները սահմանված են | Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կողմից ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողությունը մեծացնելու նպատակով | | Արդյունք 1. Կատարված Չէ<br>Առաջարկվում է միջոցառման կատարումը վերապահել ՀՀ ԱԺ աշխատակազմին, նկատի ունենալով, որ ԱԺ-ի բնականոն գործունեությունը ապահովում է ՀՀ ԱԺ աշխատակազմը: | ՀՀ ֆինանսների նախարարություն, Քաղաքացիական հասարակության միավորումներ (Համաձայնությամբ) |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Ազգային Ժողովի կանոնակարգ ՀՀ օրենքում կատարվել են համապատասխան փոփոխություններ (այո/ոչ) | | | |
| | | | ՀՀ Ազգային ժողովում ՀՀ պետական բյուջեի նախագծի և պետական բյուջեի կատարման մասին ՀՀ կառավարության հաշվետվության քննարկմանը մասնակցած քաղաքացիական միավորումների թիվը | | | |

### 3.3 Պետական գնումների համակարգ

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 11. Ապահովել պետական գնումների հրապարակայնությունը, թափանցիկությունը, հաշվետվողականությունը և օրինականությունը | 11.1Բարելավել գնումների գործող համակարգը և հզորացնել պետական գնումների ոլորտում լիազոր մարմինների ինստիտուցիոնալ կարողությունները | Գնումների գործընթացի մասնակիցների, այդ թվում գնումների մասնագետների համար վարքագծի և շահերի բախման կարգավորման ընթացակարգերը ներդրված են | ՊԳԳ կարգավիճակի վերանայման արդյունքում, վերջինս ուղակիորեն ներգարվված չէ նպատակային մրցույթների կազմակերպման և գնման պայմանագրերի կնքման գործում: (այո/ոչ) | այո | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ<br>2010 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունված և 2011 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած <Գնումների մասին> ՀՀ օրենքով ներդրվել են գնումների գործընթացի մասնակիցների, այդ թվում գնումների մասնագետների համար վարքագծի և շահերի բախման կարգավորման ընթացակարգերը :<br><br>Ցուցիչ 1-ը գնահատվել է «այո», քանի որ «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքով գնումների համակարգը լիովին ապակենտրոնացվել է, այսինքն բոլոր պետական մարմինները ինքնուրույն են կատարում իրենց գնումները:<br><br>Ցուցիչ 2-ը գնահատվել է «այո», քանի որ 2011 թվականին հաստատվել է ՊԳԳ-ի («Գնումների մասին ՀՀ նոր օրենսդրության համաձայն` վերափոխվել է գնումների աջակցման կենտրոնի) նոր կառուցվածքն ու հաստիքացուցակը, որի արդյունքում ՊԳԳ-ն ապահովվել է որակյալ մասնագետներով: ՊԳԳ-ն ապահովվել է նաև արդի տեղեկատվական տեխնոլոգիաներով և պատշաճ հզորության կապուղիներով:<br><br>Ցուցիչ 3-ը գնահատվել է «այո», քանի որ գնումների մասին ՀՀ նոր օրենսդրությամբ ՊԳԳ-ն վերափոխվել է գնումների աջակցման կենտրոնի, որն իրականացնելու է նաև էլ. Գնումների համակարգի սպասարկման և համակարգման գործառույթները<br><br>3- ից 6-րդ Մոնիտորինգային ցուցիչների փաստացի արժեքները գնահատվում են «ոչ» և «0», քանի որ դրանց կատարումը դեռևս չի իրականացվել:<br><br>Իրավիճակի ընդհանուր գնահատական – բավարար<br>Ռազ. Դրույթի իրականացման գնահատականը – բավարար | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| | | | ՊԳԳ-ն ապահովված է որակյալ մասնագետներով, արդի տեղեկատվական տեխնոլոգիաներով և պատշաճ հզորության կապուղիներով (այո/ոչ) | այո | | |
| | | | ՊԳԳ-ն վերափոխվել է Էլեկտրոնային գնումների սպասարկման կենտրոնի (այո/ոչ) | այո | | |
| | | | Հանրային ֆինանսների պետական կառավարման լիազոր մարմինը (ԼՄ) սահմանել է ՊԳԾ աշխատակիցների որակավորման չափորոշիչներ (այո/ոչ) | ոչ | | |
| | | | ԼՄ-ն սահմանել է գնումների մասնակգետների վարքագծի և շահերի բախման ծառայողական կանոնակարգեր (այո/ոչ) | ոչ | | |
| | | | Որակավորված գնումների մասնագետների թվի հարաբերությունը աշխատակիցների ընդհանուր թվաքանակին | 0 | | |
| | 11.2 Ներդնել էլեկտրոնային գնումների համակարգը | Էլեկտրոնային մրցույթների համակարգը պետական մարմինների կողմից շահագործվում է | Էլեկտրոնային մրցույթների համակարգի միջոցով ներկայացված մրցութային հայտերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում կայացած ոչ էլեկտրոնային մրցույթների ժամանակ ներկայացված հայտերի ընդհանուր թվաքանակին | 0 | Արդյունք 1. Կատարված է մասնակի<br>2011 թվականի փետրվարին ձեռք են բերվել էլ գնումների ներդրման համար անհրաժեշտ համապատասխան տեխնիկական միջոցներ (սարքեր և սարքավորումներ), որոնք տեղադրվել են գնումների աջակցման կենտրոնի (այսուհետ` ԳԱԿ) շենքում:<br>2011 թվականի մարտին էլեկտրոնային գնումների համակարգը ներբեռնվել է ԳԱԿ-ի սերվերին:<br>Պետական կառավարման մարմիններում նախատեսվում է համակարգը շահագործել 2011 թվականի սեպտեմբերի 1-ից, իսկ | ՀՀ ֆինանսների նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | էլեկտրոնային ձեռքբերումների համակարգի ներդրման գործողությունների ծրագիրը և ժամանակացույցը հաստատված են (այո/ոչ) | ոչ | տեղական ինքնակառավարման մարմիններում` 2012 թվականի հունիսի 1-ից։<br><br>Ցուցիչ 1. Մոնիտորինգային ցուցիչների փաստացի արժեքները գնահատվում են «0» քանի որ դրա կատարումը հնարավոր կլինի իրականացնել էլեկտրոնային մրցույթների համակարգի ներդրումից հետո։<br><br>Ցուցիչ 2. Մոնիտորինգային ցուցիչների փաստացի արժեքները գնահատվում են «ոչ» քանի որ դրա կատարումը հնարավոր կլինի իրականացնել էլեկտրոնային մրցույթների համակարգի ներդրմանը զուգահեռ։ Էլեկտրոնային մրցույթների համակարգի ներդրումից հետո։<br><br>Իրավիճակի ընդհանուր գնահատական – բավարար<br>Ռազ. Դրույթի իրականացման գնահատականը - բավարար | |
| | | | Էլեկտրոնային մրցույթների համակարգի միջոցով կատարված գնումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում ոչ էլեկտրոնային եղանակով կազմակերպված մրցույթների ընդհանուր թվաքանակին | 0 | | |
| 11.3. Բարելավել պետական գնումների ընթացակարգերի պահպանման նկատմամբ վերահսկողությունը | Մրցութային հանձնաժողովի անդամների շահերի բախման հայտարարագրման պահանջը ամրագրված է օրենսդրորեն | | Գնումների գործընթացի ժամկետների և ընթացակարգերի խախտման համար սահմանվել են անհատական պատասխանատվության ենթարկելու համարժեք սանկցիաներ (այո/ոչ) | այո | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ<br><br>Այս միջոցառման արդյունքն ապահովված է գնումների մասին ՀՀ նոր օրենսդրությամբ<br><br>Ցուցիչ 1-ին, 2-րդ և 3-րդՄոնիտորինգային ցուցիչների փաստացի արժեքները գնահատվում են «այո», քանի որ դրանք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում 2011 թվակնի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «գնումների մասին» ՀՀ նոր օրենքով։<br><br>Ցուցիչ 4. Մոնիտորինգային ցուցիչների փաստացի արժեքները գնահատվում են «ոչ», քանի որ դրանց կատարումը հնարավոր կլինի իրականացնել <Գնումների մասին> ՀՀ նոր օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության կողմից հաստատվելիք կարգերով | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| | | | Ներդրված է մրցութային հանձնաժողովի անդամների շահերի բախման հայտարարագրման ընթացակարգ (այո/ոչ) | այո | | |
| | | | ԼՄ-ի գնումների միասնական կայք-էջում հրապարակվում են ըստ պետական մարմինների կազմված գնումների պլանները | այո | | |
| | | | Մրցութային հանձնաժողովների նիստերը տեսաձայնագրվում են (այո/ոչ) | ոչ | | |
| 11.4 Բարձրացնել պետական գնումների գործընթացի հանդեպ վստահությունը | Հանրային գնումների 2010թ. հաշվետվության հրապարակում | | Հրապարակվում են պետական գնումների տարեկան հաշվետվություններ (այո/ոչ) | այո | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ<br>Լիազոր մարմնի www.gnumner.am կայքում հրապարակված են 2010 թվականի հանրային գնումների վերաբերյալ հաշվետվություններ<br><br>Ցուցիչ 3-ի փաստացի արժեքները գնահատվում են «այո», քանի որ 2011 թվակնի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «գնումների մասին» ՀՀ նոր օրենքի ամաձայն` ստեղծվել է բողոքարկման խորհուրդ, որի կազմում ընդգրկվել են ոչ միայն ՀՀ պետական մարմինների, այլ նաև համայնքների, ՀՀ կենտրոնական բանկի և մասնավոր հատվածը ներկայացնող հասարակական կազմակերպությունների | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| | | | Գնումների գործընթացի վերաբերյալ դատական կարգով քննարկված բողոքների թվի հարաբերությունը ներկայացված բողոքների ընդհանուր թվաքանակին | 0 | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Ստեղծված է գնումների բողոքարկամն անկախ համակարգ (այո/ոչ) | այո | ներկայցուցիչները: Բողոքարկման խորհրդի անդամների ցուցակը հրապարակված է www.gnumner.am կայքում:<br><br>Ցուցիչ 4-ի փաստացի արժեքները գնահատվում են «այո», քանի որ 2011 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «գնումների մասին» ՀՀ նոր օրենքով հնարավորություն է տրվում մրցութային հայտերը գնահատել նաև ոչ գնային չափորոշիչներով:<br><br>Ցուցիչ 5-ի փաստացի արժեքները գնահատվում են «այո», քանի որ 2011 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «գնումների մասին» ՀՀ օրենքով և դրա կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության 10.02.11թ. թիվ 168-Ն որոշմամբ Պետական գնումների գործակալությունը վերափոխվել է գնումների աջակցման կենտրոնի, որի հիմնական նպատակը տավիրատուներին և գնումների մասնակիցներին մեթոդական օժանդակության տրամադրումն է<br><br>Ցուցիչ 6-ի փաստացի արժեքները գնահատվում են «100%», քանի որ ներկայացված բոլոր բողոքները քննվել են գնումների բողոքարկման խորհրդի կողմից | |
| | | | Սահմանված են մրցույթային հայտերի գնահատման ոչ-գնային չափորոշիչներ (այո/ոչ) | այո | | |
| | | | Գնումների խորհրդատվական մարմինը ստեղծված է (այո/ոչ) | այո | | |
| | | | Գնումների գործընթացի վերաբերյալ գնումների բողոքարկման խորհրդի կողմից քննարկված բողոքների թվի հարաբերությունը ներկայացված բողոքների ընդհանուր թվաքանակին | 100 % | | |
| | 11.5 Ապահովել մրցակցային միջավայրը հանրային գնումների գործընթացում | Գնումների մրցակացային տեսակներն ու ընկերությունների մասնակցությունը մրցույթներին խթանող ընթացակարգերը ներդրված են | Պետական գնումների վերաբերյալ հրապարակային աուդիտների քանակը, տոկոս | 0 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ<br>2011 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «գնումների մասին» ՀՀ օրենքով և դրա կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության 10.02.11թ. թիվ 168-Ն որոշմամբ Գնումների մրցակացային տեսակներն ու ընկերությունների մասնակցությունը մրցույթներին խթանող ընթացակարգերը ներդրված են<br><br>Ցուցիչ 2-ի փաստացի արժեքները գնահատվում են «այո», քանի որ 2011 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «գնումների մասին» ՀՀ նոր օրենքով մրցույթի հայտարարությունները հրապարակվում են նաև անգլերեն և ռուսերեն լեզուներով:<br><br>Ցուցիչ 3-ից 5 տվյալների աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| | | | Համեմատաբար խոշոր արժեք ունեցող (ավելի քան 90 մլն.դրամ) մրցույթների հայտարարությունները հրապարակվում են նաև միջազգային լեզուներով և էլեկտրոնային կապուղիներով | այո | | |
| | | | Հանրային գնումների մրցութային գործընթացների ավարտի և դրանց արդյունքների հրապարակման միջև ընկած ժամանակահատվածի միջին տևողությունը | 7 օրաց. օր | | |
| | | | Հանրային գնումների մրցութային գործընթացների արդյունքների հրապարակման և հաղթող կազմակերպությունների հետ պայմանագրերի ստորագրման միջև ընկած ժամանակահատվածի միջին տևողությունը | 45-60 օրաց. օր | | |
| | | | Արտասահմանյան կազմակերպությունների մասնակցությամբ կայացած հանրային գնումների թվի հարաբերությունը նույն | 0 | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ժամանակահատվածում իրականացված գնումների ընդհանուր թվաքանակին | | | |

### 3.4 Հարկային և մաքսային համակարգեր

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 12. Բարձրացնել հարկային ծառայությունում մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը | 12.1Ներդնել հարկային ծառայության պաշտոնի նշանակման թափանցիկությունն ու օբյեկտիվությունն ապահովող ընթացակարգերը և հստակեցնել հարկային ծառայողների պաշտոնեական առաջխաղացման ընթացակարգերը | Հարկային ծառայողների աշխատանքի կատարողականի գնահատման վրա հիմնված պաշտոնեական առաջխաղացման համակարգը ներդրված է | Հարկային մարմնում պաշտոնեական առաջխաղացումների թվի հարաբերությունը իրականացված ատեստացիաների ընդհանուր թվաքանակին, | 0.5 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ<br>ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 03.03.2011 թվականի թիվ 642-Ա հրամանով հաստատվել է Հարկային և մաքսային ծառայողների պաշտոնեական առաջխաղացման կարգը, որը կանոնակարգում է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային ծառայողների տարեկան աշխատանքային ծրագրի կատարողականի և կառավարչական հմտությունների, մասնագիտական պատրաստվածության և որակավորման մակարդակի գնահատման համակարգերի հիման վրա՝ պաշտոնեական առաջխաղացման հետ կապված ընդհանուր հարաբերությունները:<br>Ցուցիչ 1. 2011թ. առաջին կիսամյակում իրականացվել է 27 պաշտոնեական առաջխաղացում և 53 հարկային ծառայողների ատեստացիա:<br>Ցուցիչ 3. 2011թ. առաջին կիսամյակում իրականացվել է հարկային ծառայողների 99 խրախուսումներ: Հարկային մարմնի ընդհանուր ծառայողների թվաքանակը 2009: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | Հարկային մարմինների աշխատողների միջին աշխատավարձի հարաբերությունը մասնավոր հատվածի ղեկավար անձնակազմի աշխատողների միջին աշխատավարձի նկատմամբ: | Տվյալներ չկան | | |
| | | | Հարկային ծառայողների խրախուսումների թվի հարաբերությունը հարկային մարմնի ընդհանուր ծառայողների թվաքանակին | 0.04 | | |
| | 12.2 Կատարելագործել հարկային ծառայողների վերապատրաստման համակարգը | 300 հարկային ծառայողներ վերապատրաստված են | Հարկային մարմնում վերապատրաստված ծառայողների թվի հարաբերությունը պաշտոնեական առաջխաղացումների ընդհանուր թվաքանակին, | 26.1 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ<br>ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի 2011թ. ուսուցման ծրագիրը հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ 02.02.2011թ. N25-Ա հրամանով,: Դասընթացները կազմակերպվում են ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս հարկային մարմնի կողմից սեփական ուժերով կամ հրավիրված դասախոսների միջոցով:<br>Տարեկան ուսուցման ծրագրին համապատասխան 2011թ. 1-ին կիսամյակում կազմակերպվել են հետևյալ ուսումնական միջոցառումները.<br>- 2011թ. հունվարին՝ «Հարկային հսկողության հրատապ հարցեր» երկօրյա սեմինար-խորհրդակցություն ք.Ծաղկաձորում՝ 67 հարկային ծառայողների համար,<br>- 2011 հունվար-փետրվարին՝ «Հարկային օրենսդրության նորություններ» մեկօրյա դասընթացների շարք քք.Սևան, Եղեգնաձոր, Կապան, Գյումրի, Վանաձոր, Իջևան և Երևան՝ ՀՏ-ների ղեկավար կազմի և ՀՎՍ աշխատակիցների համար, որոնց մասնակցել են ընդհանուր առմամբ 310 հարկային ծառայողներ,<br>- 2011թ. ապրիլին՝ «Հարկ վճարողների իրազեկման և ուսուցման կազմակերպում» երկօրյա դասընթաց ք.Երևանում (ԱՄՆ ՄԶԳ հետ համատեղ)՝ 4 հարկային ծառայողների համար,<br>- 2011թ. հունիսին՝ «Պետական բյուջեի եկամուտների վերլուծության իրականացում և արդյունքների իրացում» մեկօրյա դասընթաց ք.Ծաղկաձորում՝ 54 հարկային ծառայողների համար,<br>- 2011թ. հունիսին՝ «Անգլերեն լեզու» 4-ամսյա դասընթաց ք.Երևանում՝ 25 հարկային ծառայողների համար,<br>- 2011թ. հունիսին՝ «'Հարկատու-3 համակարգի ներդրման հարցեր» երկօրյա սեմինար-խորհրդակցություն ք.Ծաղկաձորում՝ 225 հարկային ծառայողների համար:<br>Նույն ժամանակահատվածում ապահովվել է 14 հարկային ծառայողների մասնակցությունը ՏՀԶԿ (OECD) միջազգային հարկային կենտրոններում անցկացվող 7 անվանում մեկշաբաթյա դասընթացներին (քք.Անկարա, Վիեննա), ինչպես նաև 6 հարկային ծառայողների ՀՄՆԿ (IOTA) կողմից կազմակերպվող (քք. Բրյուսել, | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | Հարկային մարմնում վերապատրաստված ծառայողների թվի հարաբերությունը հարկային ծառայողների ընդհանուր թվաքանակին, | 0.35 | | |
| | | | Հարկային ծառայողների վերապատրաստման ծրագրերում ընդգրկվել են կոռուպցիայի դեմ պայքարի միջոցների վերաբերյալ թեմաներ (այո/ոչ), | | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Բուդապեշտ, Զանդվորտ-ան-Զի, Կրակով, Հռոմ, Տալլինն) 6 թեմայով եռօրյա միջազգային ուսումնական միջոցառումներին: Ընդհանուր առմամբ` 2011թ. առաջին կիսամյակում ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից անցկացվող տարբեր ուսումնական միջոցառումներով ընդգրկվել են 685 հարկային և մաքսային ծառայողներ, իսկ միջազգային ուսումնական միջոցառումներին մասնակցել են` 20 հարկային ծառայողներ: Ցուցիչ1. 2011թ. առաջին կիսամյակում իրականացվել է 27 պաշտոնեական առաջխաղացում և 705 հարկային ծառայողների վերապատրաստում: Ցուցիչ 2. 2011թ. առաջին կիսամյակում իրականացվել է 705 հարկային ծառայողների վերապատրաստում: Հարկային ծառայողների թվաքանակը կազմել է 2009 մարդ: Ցուցիչ 3. Գույքի և եկամուտների հայտարարագրերի նկատմամբ հսկողության, դրա արդյունքների հիման վրա կոռուպցիոն դեպքերի բացահայտման, կոռուպցիայի դեմ պայքարի այլ միջոցների վերաբերյալ թեմաներ կներառվեն հարկային ծառայողների պարտադիր վերապատրաստման ուսումնական ծրագրերում համապատասխան օրենսդրական փաթեթի ընդունումից հետո: | |
| | 12.3 Սահմանել հարկային ծառա-յողների ռոտացիայի ընթացակարգեր | Հարկային ծառայողների ռոտացիայի ընթացակարգերը ներդրված են | Հարկային մարմնում ռոտացիաների թվի հարաբերությունը հարկային ծառայողների ընդհանուր թվաքանակին | 0.04 | Արդյունք 1.Չի կատարված Հարկային ծառայողների ռոտացիան իրականացվում է «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքով` ՀՀ կառավարության 03.10.2002թ. թիվ 1567-Ն որոշմամբ սահմանված կարգով: Ցուցիչ 1. 2011թ. առաջին կիսամյակում իրականացվել է հարկային ծառայողների թվով 98 ռոտացիա: Հարկային ծառայողների թվաքանակը կազմել է 2009 մարդ:: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | 12.4 Սահմանել հարկային ծառայող-ների գործունեության օրինականության նկատմամբ ներքին հետևողական և խիստ հսկողություն | Հարկային ծառայության գործունեության օրինականության նկատմամբ հսկողության ընթացակարգերը ներդրված են | Հարկային մարմնում ծառայողական քննությունների թվի հարաբերությունը պաշտոնից ազատման դեպքերի ընդհանուր թվաքանակին, | 2.3 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 30.12.2005թ- «Ծառայողական քննություն անցկացնելու մասին» թիվ 1-06/667-Ա հրամանով հաստատվել է կարգը, իսկ փոփոխությունները կատարվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 23.12.2010թ-ի թիվ 3006-Ա հրամանով: Ցուցիչ 1. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի համապատասխան հրամանների համաձայն 2011թ. ընթացքում իրականացվել է թվով 23 ծառայողական քննություն, ինչի արդյունքում 10 հարկային ծառայողներ ազատվել են պաշտոնից: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | 12.5 Ամբողջականաց-նել հարկային ծառայողի վարքագծի կանոնները և վերահսկողություն սահմանել դրանց պահպանման նկատմամբ | Հարկային ծառայողի վարքագծի կանոնների խախտման նկատմամբ պատասխանատվության նորմերը խստացված են | Հարկային մարմնում էթիկայի կանոնների խախտումների թվի հարաբերությունը կարգապահական տույժերի ընդհանուր թվաքանակին, | 0.26 | Արդյունք 1. Չի կատարված Հարկային ծառայողի վարքագծի կանոնները հաստավել են ՀՀ կառավարության 23.10.2002թ-ի թիվ 1624-Ն որոշմամբ: Ցուցիչ 1. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել է թվով 23 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որի արդյունքում թվով 88 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության: Ցուցիչ 2. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել է թվով 23 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր: Ծառայողական քննությունները իրականացվել են թվով 133 հարկային ծառայողների նկատմամբ: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | Հարկային մարմնում էթիկայի կանոնների խախտումների թվի հարաբերությունը կարգապահական վարույթների ընդհանուր թվաքանակին, | 0.17 | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 12.6 Ներդնել հարկա-յին ծառայողի շահերի բախումը կարգավորելու և շահերի բախման հայտարարագրման ինստիտուտը | Հարկային և մաքսային ծառայողների շահերի բախման հայտարարագրման ընթացակարգերը ներդված են | Հարկային մարմնում գործում է շահերի բախման դեպքերի բացահայտման հստակ ընթացակարգ, | Տվյալներ չկան | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն<br><br>ՀՀ վարչապետի մոտ 2010թ. դեկտեմբերի 28-ին կայացած Եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհրդի (ԵՎԲԱԽ) նիստի N 23.13/[57727]-11 արձանագ-րությամբ տրված հանձնարարականի՝ առաջարկվել է միջոցառումը ներառել հարկային վարչարարության ռազմավարության 2012-2014թթ. ծրագրում՝ պատասխանատու մարմին սահմանելով ՀՀ ֆինանսների նախարարությանը | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | Հարկային մարմնում շահերի բախման դեպքերի քանակի հարաբերությունը հարկային ծառայողների ընդհանուր թվաքանակին, | Տվյալներ չկան | | |
| 13. Շարունակաբար նվազեցնել հարկային ծառայողների և հարկ վճարողների միջև անմիջական շփումները | 13.1 Ընդլայնել էլեկտրոնային հարկային ծառայությունները | Հարկ վճարողների հաշվետվությունների ամբողջությամբ մշակվում են ավտոմատացված համակարգի միջով<br><br>Հարկ վճարողների նվազագույնը 90 տոկոսը հաշվետվությունները ներկայացնում է էլեկտրոնային տարբերակով | Հարկային մարմիններին ոչ առձեռն ներկայացված հաշվետվությունների թիվը, հաշվետվությունների ընդհանուր թվի նկատմամբ, տոկոս | 59.1% | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն<br>Ավտոմատացված համակարգի միջոցով մշակվում են բոլոր ստացվող հաշվետվությունները, հայտարարագրերը և այլ տեղեկությունները: 2011թ. 1-ին կիսամյակում ընդունվել և մշակվել է էլեկտրոնային եղանակով 84137 հաշվետվություններ:<br>Արդյունք 2. Կատարված է մասնակիորեն<br>Էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացնողների թիվը առ 30.06.2011թ. կազմում են 6094 հարկ վճարող, իսկ գործող (գումար վճարած) հարկ վճարողների քանակը 75081:<br>Ցուցիչ 1.<br>Ոչ առձեռն (փոստով և էլեկտրոնային եղանակով) ներկայացված հաշվետվությունների թիվը 1-ին կիսամյակում - 130985: Հաշվետվությունների ընդհանուր թիվը 1-ին կիսամյակում - 221695 :<br>Ցուցիչ 2.<br>Հարկային հաշվետվությունների փոստով կամ էլեկտրոնային փոստով ընդունումը կարգավորվում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքով և օրենքի համապատասխան հավելվածներով:<br>ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից մշակվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին օրենսդրական նախագիծ, որով նախատեսվում է 01.01.2012թ.-ից էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացումը պարտադիր է դարձնել 58,35 մլն դրամից ավել տարեկան շրջանառություն ունեցող հարկ վճարողների համար:<br>Ցուցիչ 3.<br>Հարկ վճարողների հետ շփումների թիվը հարկային մարմնում չի հաշվառվում, հետևաբար պահանջվող ցուցիչի մեծությունը հնարավոր չէ ներկայացնել: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | Ենթաօրենսդրական ակտի մակարդակով ամրագրվել է հարկային հաշվետվությունները բացառապես փոստով կամ էլեկտրոնային փոստով ընդունելու պահանջը (այո/ոչ), | այո | | |
| | | | Հարկ վճարողների հետ շփումների թվի հարաբերությունը նույն ժամանա-կահատվածում հավաքագրված հար-կային մուտքերի աճին, | | | |
| | 13.2 Հիմնել հարկ վճարողների սպասարկման տեղեկատվության ընդունման կենտրոններ | Սպասարկման կենտրոնների մատուցած ծառայություններից օգտվողների թիվն աճել է 15 տոկոսային կետով | Հիմնվել են հարկ վճարողների սպասարկման վերաբերյալ տեղեկատվության ընդունման կենտրոններ (այո/ոչ), | այո | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն<br>Ձեռնարկված քայլերի արդյունքում 2011թ առաջին կիսամյակում Արաբկիրի հարկային տեսչության և Վանաձորի տարածքային հարկային տեսչության հարկ վճարողների սպասարկման կենտրոն ներկայացվել են ավելի քան 9300 հարցադիմումներ:<br>Ցուցիչ 1.<br>ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հաստատված հարկ վճարողների սպասարկման ռազմավարության ներքո ընդունված ՀՀ հարկային համակարգում հարկ վճարողների սպասարկման կենտրոնների (այսուհետ՝ ՀՎՍ) ստեղծման ծրագրի շրջանակներում 2011թ. ընթացքում գործարկվել է Վանաձորի հարկ վճարողների սպասարկման կենտրոնը, նախատեսվում է ստեղծել սպասարկման կենտրոններ նաև մյուս մարզերում մասնավորապես՝ հանձնարարվել է ուսումնասիրել ՀՎՍ նոր կենտրոնների բացման հարցը, որի արդյունքներով առաջարկվել է 2011թ.-ին գործարկել ՀՎՍ կենտրոն Գյումրիի ՏՀՏ-ի կազմում, որտեղ | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ներկայումս իրականացվում են համապատասխան շինարարական աշխատանքներ: Միաժամանակ` Քանաքեռ-Զեյթունի ՀՏ նոր շենքի վերանորոգումից հետո նույնպես հնարավոր կլինի գործարկել ևս մեկ ՀՎՍ կենտրոն:<br>Միաժամանակ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 19.04.2011թ. №730-Ա հրամանով մի շարք հանձնարարություններ են տրվել` ՀՎՍ կենտրոնների աշխատանքների բարելավման ուղղությամբ, մասնավորապես` կենտրոնների աշխատանքի կանոնավոր դիտարկման, դրանց տեխնիկական և մեթոդաբանական աջակցության ցուցաբերման, ՀՏ-ների մյուս ստորաբաժանումների հետ աշխատանքների կազմակերպման, և անձնակազմի ուսուցման վերաբերյալ:<br>20.06.2011թ.-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ հրամանով վերադաս մարմնի Հարկ վճարողների սպասարկման և հարկման ընթացակարգերի վարչության կառուցվածքում ստեղծվել Հարկ վճարողների հեռախոսազանգերի սպասարկման կենտրոն:Ներկայումս ընթանում են հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնի տարածքի վերանորագման և անհրաժեշտ անձնակազմով ու տեխնիկայով համալրման ուղղությամբ աշխատանքները: | |
| | 13.3 Զարգացնել հարկային մարմնի կողմից ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության և ստուգումների պլանավորման ինքնագնահատման համակարգը | Ստուգման ենթակա հարկ վճարողների 80 տոկոսից ավելին ընտրվում է ռիսկային չափանիշների հիման վրա` ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի (ՌՉՍՀ) միջոցով | Հարկային մարմնի կողմից կամերալ ստուգումների թվի հարաբերությունը իրականացված ստուգումների ընդհանուր թվաքանակին, | Տվյալներ չկան | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն<br>Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգչային ծրագրի մշակման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կապալառու կազմակերպության կողմից իրականացվել են ծրագրի թեստավորման աշխատանքները և սույն թվականի փետրվար ամսին հանձնվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 14.10.09թ. N 2737-Ա հրամանով ստեղծված «Ռիսկերի կառավարման, ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրողականության համակարգի ստեղծման և ներդրման» աշխատանքային խմբին` թեստավորման նպատակով:<br>Ռիսկերի կառավարման, ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրողականության համակարգի կիրարկման համակարգչային ծրագիրը հիմնականում թեստավորվել է: Թեստավորումն իրականացրել են աշխատանքային խումբը` ԱՄՆ ՄԶԳ հարկային վարչարարության բարեփոխումներն օժանդակող տեխնիկական աջակցության ծրագրի փորձագետների հետ համատեղ: Ծրագրի թեստավորման արդյունքում հայտնաբերված թերություններն ու բացթողումները ներկայացվել են համակարգչային ծրագիրը մշակած կապալառու կազմակերպությանը` ծրագրային համապատասխան ուղղումներ կատարելու նպատակով:<br>Ներկայումս աշխատանքներ են տարվում ծրագրի փորձնական կիրառման ուղղությամբ: Մասնավորապես ծրագիրը փորձնական կիրառվել է մեկ հարկային (տարածքային) տեսչության բազայի տվյալներով և աշխատանքներ են տարվում բացահայտված թերությունների շտկման ուղղությամբ:<br>Ցուցիչ 1.<br>Հարկային մարմնի կողմից 2011թ. առաջին կիսամյակում իրականավել է թվով 11023 ստուգում (նշյալ թվի մեջ ներառվել են բյուջեի, լուծարման, ՀԴՄ, ելակետային, 28-րդ հոդվածի, ապօրինի, սոց, չգրանցված աշխատողի, ակցիզային դրոշմանիշների կիրառման, մասնակի, վերստուգման, դրամարկղային, արտարժույթի առքուվաճառքի գործառնությունների գրանցման ճշտության ստուգումները) | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | Հարկային մարմնի գործունեության հանդեպ բողոքների թվի հարաբերությունը ի օգուտ տնտեսվարող սուբյեկտների կայացված դատավճիռների նդհանուր թվաքանակին, | 0.88 | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Ցուցիչ 2.<br>Ցուցիչը որոշելիս հիմք է ընդունվել վարչական կարգով հարկային մարմնի գործունեության հանդեպ բողոքների թվի` 121, հարաբերությունը ի օգուտ տնտեսվարող սուբյեկտների կայացված վճիռների թվի` 136:<br>Ներկայացված է վարչական կարգով հարկային մարմնի գործու-նեության հանդեպ բողոքների թվի հարաբերությունը ի օգուտ տնտես-վարող սուբյեկտների կայացված վճիռների ընդհանուր թվաքանակին, քանի որ հարկային մարմնի գործողությունների բողոքարկման արդյունքում դատավճիռներ` որպես դատական ակտեր չեն կայացվում: | |
| | 13.4 Ներդնել հարկային հանցագործություններ ի քննության ընթացքում կոռուպցիայի հանցակազմը վեր հանելու և տնտեսական հանցագործություններ ի և կոռուպցիոն իրավախախտումների կապերը բացահայտելու մեթոդներ և ընթացակարգեր | Քննություն իրականացնող տարբեր մարմինների ծառայողների համատեղ ուսուցում՝ հարկային հանցագործությունների քննության ընթացքում կոռուպցիայի հանցակազմը վեր հանելու և տնտեսական հանցագործությունների և կոռուպցիոն իրավախախտումների կապերը բացահայտելու մեթոդների և ընթացակարգերի վերաբերյալ | Հարկային մարմնի քննչական ստորաբաժանման կողմից հարուցված գործերի թվի հարաբերությունը հարկային ծառայողների ընդհանուր թվաքանակին, | 0.02 | Արդյունք 1. Չի կատարվել<br>Նման համատեղ վերապատրաստում չի իրականացվել<br>Ցուցիչ 1.<br>Ցուցիչը որոշելիս հիմք է ընդունվել հարկային մարմնի քննչական ստորաբաժանման կողմից հարուցված գործերի թվի` 49 հարա-բերությունը հարկային ծառայողների ընդհանուր թվաքանակին`2009:<br>Ցուցիչ 2.<br>Ցուցիչը որոշելիս հիմք է ընդունվել վարչական կարգով հարկային մարմնի գործունեության հանդեպ բողոքների թվի` 121, հարաբերությունը ի օգուտ հարկային մարմնի կայացված վճիռների թվի` 822:<br>Ներկայացված է վարչական կարգով հարկային մարմնի գործու-նեության հանդեպ բողոքների թվի հարաբերությունը ի օգուտ հարկային մարմնի կայացված վճիռների ընդհանուր թվաքանակին, քանի որ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գանձման ուղղությամբ ներկայացված հայցերի արդյունքում դատավճիռներ` որպես դատական ակտեր չեն կայացվում: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե,<br>ՀՀ գլխավոր դատախազություն |
| | | | Հարկային մարմնի գործունեության հանդեպ բողոքների թվի հարաբերությունը ի օգուտ հարկային մարմնի կայացված դատավճիռների ընդհանուր թվաքանակին, | 0.14 | | |
| 14. Բարձրացնել հարկային մարմնի գործունեության հրապարակայնություն ը, հաշվետվողականությո ւնն ու օրինականությունը | 14.1 Սահմանել հարկային ծառայության միասնական ընթացակարգեր և ապահովել դրանց կիրարկումը | Հարկային վարչարարության ներքին ընթացակարգերի միատեսակ կիրառման վերաբերյալ հարկ վճարողների և հարկային ծառայողների ուսուցում<br><br>Հարկային ծառայողների մատուցած ծառայություններից հարկ վճարողների գոհունակության աստիճանը բարձրացել է 10 տոկոսային կետով | Սահմանվել է հարկային ծառայության ներհամակարգային միասնական ընթացակարգեր | այո | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ<br>2011թ.-ի ընթացքում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի ծառայողների ուսուցումն իրականացնելու նպատակով, ՊԵԿ կողմից մշակվել և 02.02.2011թ. №25-Ա հրամանով հաստատվել է 2011թ. ուսուցման ծրագիրը, որը ներառում է 32 անվանում նախապատրաստական, վերապատրաստման և փորձի փոխանակման դասընթացներ` հարկային և մաքսային ծառայողների տարբեր խմբերի համար: Ծրագրում ներառված բոլոր դասընթացների նպատակաուղղված են ապահովել համապատասխան ոլորտներում օրենսդրության պահանջների և ընթացակարգերի պատշաճ և միասնական կիրառումը ՀՀ ԿԱ ՊԵԿ ծառայողների կողմից:<br>Ցուցիչ 1.<br>ՀՀ ԿԱ ՊԵԿ 01.02.2011թ. թիվ 1/79 հրամանով հաստատվել են ՊԵԿ վերադաս մարմնի ստորաբաժանումների կառուցվածքը և գործառույթները: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | Գործում է հարկ վճարողների նկատմամբ հարկային ծառայության ներհամակարգային միասնական ընթացակարգերի միատեսակ կիրառ-ման նկատմամբ վերահսկողություն | | | |
| | 14.2 Հրապարակել ուղեցույցեր հարկ վճարողների համար, այդ թվում՝ դրանք տեղադրել հարկային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքում և պարբերաբար | Հարկ վճարողների համար ուղեցույցերը հրապարակված և տեղադրված են հարկային մարմնի էլեկտրոնային կայքում և պարբերաբար թարմացվում է | Հարկային մարմնում կոռուպցիոն դեպքերի բացահայտման և մեղավոր անձանց պատասխանատվության ներկայացման գործընթացների արդյունքները պարբերաբար հրապարակվում են (այո/ոչ), | այո | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ<br>2011թ.-ին տպագրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում 2009-2010թթ.-ին մշակված` 10 ոլորտային և մասնագիտական ստուգումների ուղեցույցների երկհատոր ժողովածուն, որը բաշխվել է համապատասխան ստորաբաժանումներին: Ժողովածուն հասանելի է ընթերցողներին նաև էլեկտրոնային եղանակով` ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության կայքում:<br>Ներկայումս ընթանում են ևս 3 ոլորտային ստուգումների ուղեցույցների մշակման աշխատանքներ: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | թարմացնել | | | | Ցուցիչ 1.<br>Հարկային մարմնում կոռուպցիոն դեպքերի բացահայտման և մեղավոր անձանց պատասխանատվության ներկայացման գործընթացների արդյունքները ծանուցվում են բոլոր հարկային ծառայողներին և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի համապատասխան հրամաններով հանձնարարվում է խիստ հսկողություն սահմանել աշխատանքային ողջ օրվա ընթացքում աշխատանքային կարգապահության խախտումների բացառման ուղղությամբ: | |
| | 14.3 Ամբողջականցնել հարկային մարմնում ներքին աուդիտի համակարգի ներդրումը | Հարկային մարմնի գործունեության ներքին աուդիտի և հարկային համակարգում կառուցցիայի կանխարգելման, բացահայտման և մեղավոր անձանց պատասխանատվության ներկայացման գործընթացների արդյունքները հրապարակվում են | Հարկային մարմնում ամբող-ջականացվել է ներքին աուդիտի գործառույթը (այո/ոչ) | ոչ | Արդյունք 1.Կատարված է մասնակիորեն<br>ՀՀ վարչապետի մոտ 2010թ. դեկտեմբերի 28-ին կայացած Եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհրդի (ԵՎԲԱԽ) նիստի N 23.13/[57727]-11 արձանագ-րությամբ տրված հանձնարարականի՝ առաջարկվել է միջոցառումը ներառել հարկային վարչարարության ռազմավարության 2012-2014թթ. ծրագրում:<br>Իրականացվել և իրականացվում են ընթացիկ հսկողական աշխատանքներ հարկային մարմնի գործունեության ներքին աուդիտի և հարկային համակարգում կառուցցիայի կանխարգելման, բացահայտման և մեղավոր անձանց պատասխանատվության ներկայացման ուղղությամբ, մասնավորապես 2011թ-ի առաջին կիսամյակում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի թվով 4 հարկային տեսչությունում իրականացվել են համալիր ստուգումներ, կազմվել են համապատասխան ակտեր, իրականացվել են ծառայողական քննություններ և մեղավոր անձինք ներկայացվել են պատասխանատվության: Բացահայտված սխալների, բացթողումների, թերացումների վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով իրազեկվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ ստորաբաժանումները | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | 14.4 Սահմանել հարկային ծառայության պաշտոնատար անձանց կողմից վարչական վարույթի իրականացման օրինականության նկատմամբ վերահսկողություն | Գանգատարկման ընթացակարգերի նկատմամբ հարկ վճարողների կողմից վստահությունն աճել է 20 տոկոսային կետով | Հարկ վճարողների կողմից ներկայացված բողոքների քննարկման արդյունքում ձեռնարկված միջոցառումների թվի հարաբերությունը ներկայացված բողոքների ընդհանուր թվին | 0.99 | Արդյունք 1.Չի կատարվել<br>Նման հետազոտություն չի իրականցվել, ֆինանսների բացակայության պատճառով:<br>Ցուցիչ 1.<br>Ցուցիչը որոշելիս հիմք է ընդունվել հարկ վճարողների կողմից ներկայացված բողոքների քննարկման արդյունքում ձեռնարկված միջոցառումների թվի՝ 111, հարաբերությունը ներկայացված բողոքների ընդհանուր թվին՝ 121:<br>Ցուցիչ 2.<br>Ցուցիչը որոշելիս հիմք է ընդունվել 2010 թվականի 1-ին կիսամյակի՝ գանգատարկման հանձնաժողովի կողմից հարկ վճարողների օգտին ընդունված որոշումների թվի՝ 8, հարաբերությունը 2011 թվականի 1-ին կիսամյակի՝ գանգատարկման հանձնաժողովի կողմից հարկ վճարողների օգտին ընդունված որոշումների թվին՝ 54:<br>Ցուցիչ 3.<br>ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության «թեժ գիծ» ծառայությունը գործում է դեռևս 2008թ.-ից: ՊԵԿ «թեժ գիծ» ծառայությանը կարելի է դիմել ինչպես հեռախոսային կապով (594-618), այնպես էլ՝ էլեկտրոնային փոստով (info@petekamutner.am) և ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական կայքի ինտերֆեյսից՝ «Հետադարձ կապ» բաժնում: Ծառայության գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ 28.11.2008թ. N1-06/494-Ա հրամանով: 29.05.2009թ.-ին «թեժ գծով» ստացվող հարցադիմումների և բողոքների մշակման ընթացակարգը լրամշակվել է՝ ապահովելով դրա աշխատանքի հաշվետվողականությունն ու թափանցիկությունը: Մասնավորապես՝ | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | Գանգատարկման հանձնաժողովի կողմից հարկ վճարողների օգտին ընդունված որոշումների աճ | 46 | | |
| | | | Գործում է հասարակությանն ու հարկ վճարողներին վստահություն ներշնչող «թեժ գծերը և հարկային ծառայության պաշտոնական կայքում արդյունավետ հետադարձ կապը | այո | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ստեղծվել է խնդիրների կարգավորման ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի աշխատանքային խումբ, ներդրվել է ստացված հարցադիմումների և բողոքների ամփոփման 15-օրյա պարբերականություն և ամենամսյա հաշվետվություն` ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահին և ՀՀ կառավարության աշխատակազմին:<br>2011թ. ընթացքում ՀՀ ԿԱ ՊԵԿ «թեժ գծով» ստացվել է 5900 դիմում, որից 373` բողոքներ և առաջարկություններ, իսկ մնացածը` հարցադիմումներ: Բոլոր հարցադիմումները և բողոքները ստացել են կարգով սահմանված ընթացք:<br>Նույն ժամանակաշրջանում ՀՀ կառավարության «թեժ գիծ» ծառայությունից վերադաս հարկային մարմին է վերահասցեագրվել 19 դիմում-բողոքներ, որոնց գծով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ և տեղեկացվել է ՀՀ կառավարության «թեժ գիծ» ծառայությունը:<br>20.06.2011թ.-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ հրամանով ՀՀ ԿԱ ՊԵԿ «թեժ գիծ» ծառայության հիման վրա ստեղծվում է Հարկ վճարողների հեռախոսազանգերի սպասարկման ժամանակակից կենտրոն կենտրոն:Ներկայումս ընթանում են հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնի տարածքի վերանորագման և անհրաժեշտ անձնակազմով ու տեխնիկայով համալրման ուղղությամբ աշխատանքները: | |
| | 14.5 Ներդնել հարկային մարմնի և քաղաքացիական հասարակության կառույցների միջև համագործակցության արդյունավետ ընթացակարգեր | Հարկային մարմնի և քաղաքացիական հասարակության կառույցների միջև համագործակցության հուշագրերը կնքված են | Հարկային ծառայությունում բողոքարկման համակարգի վերաբերյալ բողոքարկող հարկ վճարողների թիվը | Տվյալներ չկան | Արդյունք 1.Կատարված է ամբողջությամբ<br>Ոլորտային հանդիպումներ են տեղի ունեցել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի հետ. մասնավորապես` Պեկ ղեկավարությունը հանդիպումներ է ունեցել ՀՀ գործարարների և արդյունաբերողների միության նախաձեռնությամբ խոշոր գործարարների և բանկային համակարգի ղեկավարության հետ, որտեղ քննարկվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում իրականավող բարեփոխումների ընթացքը: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| 15. Բարձրացնել մաքսային ծառայության կառավարման արդյունավետությունն ու հաշվետվողականությունը | 15.1 Ներդնել մաքսային ծառայության համակարգում կատարողականի գնահատման համակարգ և դրա վրա հիմնված մաքսային ծառայողի պաշտոնական առաջխաղացման ընթացակարգեր և մաքսային ծառայողի պարտադիր պարբերական ռոտացիայի կարգ | Մաքսային ծառայողի պաշտոնական առաջխաղացման և ռոտացիայի ընթացակարգերը ներդրված են | Մաքսային ծառայողի աշխատանքի կատարողականի գնահատման համակարգում ներառված ծառայողների թվաքանակի հարաբերությունը մաքսային ծառայողների ընդհանուր թվաքանակին | 1 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>Բոլոր 733 մաքսային ծառայողները ընդգրկված են աշխատանքի կատարողականի գնահատման համակարգում:<br>Հիմքը` 2009 թվականի դեկտեմբերի 24-ի ՀՀ կառավարության թիվ 53 արձանագրային որոշում:<br>Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքը ընդունել է մեկ, քանի որ բոլոր մաքսային ծառայողներն ընդգրկված են մաքսային ծառայողի աշխատանքի կատարողականի գնահատման համակարգում:<br>Ցուցիչ 2. Ռոտացիայի սկզբունքով փոխատեղված մաքսային ծառայողների թիվը 42 է, իսկ ընդհանուր մաքսային ծառայողների թիվը` 733: Հետևաբար ցուցիչի արժեքը կլինի` 0.05 /42/733/: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | Ռոտացիայի սկզբունքով փոխատեղված ծառայողների թվաքանակի հարաբերությունը ծառայողների ընդհանուր թվաքանակին | 0.05 | | |
| | 15.2. Ներդնել մաքսային ծառայողի էթիկայի կանոններ և սահմանել դրանց նկատմամբ վերահսկողություն | Մաքսային ծառայողների կողմից էթիկայի կանոնների պահպանման նկատմամբ իրականացվում է վերահսկողություն | Մաքսային ծառայողների էթիկայի կանոնների խախտումների վերաբերյալ բողոքների թիվը | 0 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>ՀՀ մաքսային ծառայողի էթիկայի կանոնները հաստատվել են դեռևս ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2008 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 160-Ա հրամանով:<br>Ներքին դիտարկումների և վերահսկողության վարչության կողմից մաքսային մարմիններում պարբերաբար իրականացվել են մաքսային ծառայողների վարքագծի նկատմամբ վերահսկողական աշխատանքներ, որը կրել է կանխարգելիչ բնույթ: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքը ընդունել է 0, քանի որ մաքսային ծառայողների էթիկայի կանոնների խախտումների վերաբերյալ բողոքներ չեն եղել: | |
| | 15.3 Հրապարակել մաքսային ծառայության գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները | Մաքսային ծառայության գործունեության 2010թ տարեկան հաշվետվությունը հրապարակված է | Մաքսային ծառայության գործունեության 2010թ. տարեկան հաշվետվությունը հրապարակված է (այո/ոչ) | այո | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>Հրապարակվել է մաքսային ծառայության գործունեության 2010 թվականի տարեկան հաշվետվություն: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | 15.4.Ներդնել ռիսկերի կառավարման վրա հիմնված մաքսային հսկողության համակարգ | Ռիսկերի կառավարման վրա հիմնված մաքսային հսկողության ռիսկի չափորոշիչները վերանայված և ներդրված են | Հետբացթողումային հսկողության համար ընտրված հայտարարագրերի թվաքանակի հարաբերությունը հայտարարագրերի ընդհանուր թվաքանակին | 0.18 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ<br>Պարբերաբար վերանայվում են մաքսային հսկողության ռիսկի չափանիշները:<br>Ցուցիչ 1. Ցուցիչի հաշվարկման ժամանակ կոտորակի համարիչը ընդունել է 6100, իսկ հայտարարը 33620 արժեքները:<br>Ցուցիչ 2, Ցուցիչի արժեքը հաշվարկվել է Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն կողմից տրամադրված տվյալների հիման վրա: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | Մաքսային համակարգչային ծրագիր մուտք գործելու համար գաղտնաբառ ստացած տնտեսվարող սուբյեկտների թվաքանակի հարաբերությունը արտաքին տնեսական գործունեության մասնակիցների ընդհանուր թվին | 0.11 | | |
| | 15.5.Ընդլայնել ինքնահայտարարագրման համակարգի միջոցով մաքսային հայտարարագիր ներկայացնողների շրջանակը, ինչպես նաև մեծացնել մաքսային միջնորդի ինստիտուտի մատչելիությունը | Ինքնահայտարարագրման համակարգի միջոցով մաքսային հայտարարագիր ներկայացնողների թվաքանակն ավելացել է 15 տոկոսային կետով | Ինքնահայտարարագրման համակարգի միջոցով մաքսային հայտարարագրերի թվաքանակի հարաբերությունը ներկայացված մաքսային հայտարարագրերի ընդհանուր թվին | 100 տոկոս | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ<br>Բոլոր մաքսատներում ամբողջությամբ ներդրված է ինքնահայտարարագրման համակարգը և բոլոր տնտեսավարողները մաքսային հայտարարագրերը ներկայացվում են TWM ավտոմատ հայտարարագրման համակարգի միջոցով առանց մաքսային տեսուչի միջամտության, անմիջականորեն ԱՏԳ մասնակցի կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչի կողմից:<br>Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքն ընդունել է 1, քանի որ կոտորակի համարիչն ու հայտարարը հավասար են:<br><br>Ցուցիչ 2, Մաքսային միջնորդի լիցենզավորման պայմանը օրենքով հանվել է: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | Մաքսային միջնորդի լիցենզիա ստացած անձանց թվաքանակը | 0 | | |
| | 15.6.Ներդնել ՀՀ մաքսային սահմանով ավտոտրանսպորտայի ն միջոցներով մեկնող և ժամանող քաղաքացիների մաքսային հսկողության երկուղային համակարգ (կարմիր և կանաչ ուղիներ) | Մաքսային հսկողության երկուղային համակարգը ներդրված է սահմանային մաքսային բոլոր կետերում | Սահմանային մաքսակետերի թիվը, որոնցում գործում է մաքսային հսկողության երկուղային համակարգը | 5 | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>Ցուցիչ 1. 6 մաքսակետերից 5-ում ներդրված է մաքսային հսկողության երկուղային համակարգ:<br>Ցուցիչ 2. Ցուցիչի արժեքի համար հիմք է հանդիսացել Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն կողմից տրամադրված տվյալները: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | | Կանաչ ուղով ընտրված հայտարարագրերի թվաքանակի հարաբերությունը հայտարարագրերի ընդհանուր թվաքանակին | 0.69 | | |
| | 15.7.Սահմանել մոնիտորինգ մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի նկատմամբ | Մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի նկատմամբ մոնիտորինգ ի համակարգը ներդրված է | Մաքսային ձևակերպումների համար պահանջվող ժամանակահատվածը | 2,5-6,5 ժամ | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>Միջոցառման իրականացմանն աջակցելու նպատակով՝ 2010 թվականի մայիսի 17-21-ը Հայաստանում է գտնվել Միջազգային ֆինանսական կորպորացիայի փորձագետը, որի այցի արդյունքում պատրաստվել է համապատասխան փաստաթուղթ: Միջոցառումը ամբողջովին ավարտելու նպատակով մշակվել է TWM ծրագրում համապատասխան փոփոխության տեխնիկական առաջադրանք, որի | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | արդյունքում համակարգում կֆիքսվի բացթողնման պահը, ինչը հնարավորություն կտա սպառիչ պատկերացում ունենալ մաքսային ձևակերպումների, ինչպես նաև դրա առանձին բաղադրիչների տևողության մասին: Շվեցարական Վեբբ Ֆոնտեյն ընկերության կողմից TWM համակարգում իրականացվում է ծրագրավորման աշխատանքեր համապատասխան փոփոխությունները ներդնելու համար:<br>Ցուցիչ 1. 2,5-6,5 ժամ:<br>Ցուցիչի հաշվարկման համար ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն քարտեզագրել է ՀՀ ներմուծման մաքսային ընթացակարգերի հաջորդականությունը՝ յուրաքանչյուր գործողության համար սահմանելով միջին ժամանակահատված: Կատարված հաշվարկների արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ ոչ սակագնային կարգավորում չպահանջող ապրանքների դեպքում ներմուծման մաքսային ձևակերպումների ողջ ժամանակահատվածը տատանվում է 2,5–6,5 ժամ: | |
| | 15.8 Ներդնել պատկան մարմինների կողմից իրականացվող հսկողությունները նույն վայրում և նույն պահին իրականացնելու հնարավորություն ընձեռող Մեկ կանգառ սկզբունքը | «Մեկ կանգառ» սկզբունքը ներդրված է | «Մեկ կանգառ» սկզբունքի ներդրումից հետո մաքսային ձևակերպումների համար պահանջվող ժամանակահատվածի և սահմանային հսկողություն իրականացնող պատկան մարմիններին ներկայացվող փաստաթղթերի քանակի համեմատությունը մինչև «մեկ կանգառ» սկզբունքի ներդրումը նույն ցուցանիշների նկատմամբ | - | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>Սահմանային մաքսակետերում, որտեղ սահմանային գերատեսչությունները տեղակայված են միևնույն շենքում, արդեն իսկ գործում է <մեկ կանգառի> սկզբունքը, սակայն սահմանային կետերի գերակշիռ մասում շենքերը հատուկ նախատեսված չեն սահմանային հատուկ հսկողություն իրականացնելու համար, և սահմանային գերատեսչությունները տեղակայված են տարածքային առումով իրարից կտրված, առանձին շենքերում: Այդ մաքսակետերում <մեկ կանգառի> սկզբունքի կիրառումը հնարավոր կլինի սահմանային բոլոր գերատեսչությունների աշխատանքը հատուկ նախատեսված միևնույն շենքի տարածքում կազմակերպելուց հետո:<br>Ստեղծվել են աշխատանքային խմբեր, որոնք աշխատանքային հանդիպումներ են իրականացնում Վրաստանի և Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային ծառայությունների աշխատակիցների հետ:<br>Ցուցիչ 1. Ցուցիչը հնարավոր չէ հաշվարկել, քանի որ նրանում ներառված են երկու առանձին ցուցիչներ: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | 15.9Համապատասխան եցնել մաքսային հսկողության նպատակով ներկայացվող փաստաթղթերի ցանկը միջազգային լավագույն փորձին | | Կրճատված փաստաթղթերի թվաքանակ | 3 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի թիվ 636-Ն որոշմամբ կրճատվել է մաքսային հսկողության նպատակով ներկայացվող փաստաթղթերի թիվը, համաձայն որի մաքսային հսկողության նպատակով պահանջվող փաստաթղթերի թվաքանակը 6-ից դարձել է 3:<br>Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքի համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի թիվ 636-Ն որոշումը: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | 15.10 Սահմանել պարզեցված մաքսային ընթացակարգեր՝ Միջազգային ճանապարհային փոխադրումների կոնվենցիայի՝ (TIR) շրջանակներում ապրանքներ | | ՄՃՓ կոնվենցիայի շրջանակներում մաքսային հսկողության փաստաթղթերի և մաքսային ձևակերպումների ժամանակահատված | | Արդյունք նախատեսված չէ<br>Ցուցիչ 1. Ցուցիչը առաջարկվում է փոփոխել, քանի որ այն հնարավոր չէ հաշվել: Առաջարկվում է այն խմբագրել այսպես՝ <ՄՃՓ կոնվենցիայի շրջանակներում մաքսային ձևակերպումների ժամանակահատված>: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | փոխադրող տրանսպորտային միջոցների համար | | | | | |
| | 15.11 Սահմանել պարզեցված ընթացակարգեր՝ բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների համար | | Բարեխիղճ արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների թվաքանակի հարաբերությունը արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների ընդհանուր թվաքանակին | 0 | Արդյունք նախատեսված չէ<br>Ցուցիչ 1. Բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների համար պարզեցված ընթացակարգերի սահմանումը նախատեսված չէր 2011 թ. ընթացքում:<br>ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 14-ի թիվ 527-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մաքսային վարչարարության ռազմավարության 2009-2012 թվականների ծրագրի 31 կետով նախատեսվում է այս միջոցառումը իրականացնել մինչև 2012 թվականի 2-րդ եռամսյակը: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| 16. Ապահովել տնտեսվարող սուբյեկտների միջև մաքսային բեռի արդարացի բաշխումը և մաքսային ծառայության թափանցիկությունն ու օրինականությունը | 16.1 Ճշտակեցնել և պարզեցնել մաքսային վարչարարության օրենսդրական կարգավորումը, ներդնել թափանցիկ և պարզեցված ընթացակարգեր | Մաքսային վարչարարության օրենսդրական կարգավորման պահանջների փոփոխություններին համապատասխան ընթացակարգերը ներդրված են | Միջազգային ստանդարտներին համապատասխան օրենսդրության առկայություն | այո | Արդյունք 1. Կատարված չէ:<br>Պարբերաբար ուսումնասիրվում է միջազգային լավագույն փորձը: Գործողությունը գտնվում է ընթացքի մեջ: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | 16.2 Սահմանել մաքսային արժեքների որոշման հստակ չափորոշիչներ և ապահովել դրանց մատչելիությունը, այդ թվում՝ էլեկտրոնային կապուղիների միջոցով | | Գործարքի գնի մեթոդով որոշված գործարքների թվաքանակի հարաբերությունը գործարքների ընդհանուր թվաքանակին | 0.68 | Արդյունք նախատեսված չէ<br>Մաքսային արժեքի գնահատման ընթացակարգերը համապատասխանում են ԱՀԿ պահանջներին և տեղադրված են մաքսային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքում:<br>Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքը հաշվարկվել է Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն կողմից տրամադրված տվյալների հիման վրա: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | 16.3 Սահմանել վերահսկողություն տնտեսվարողների նկատմամբ հավասար պայմաններում հավասար մոտեցումների կիրառման նկատմամբ | | | | Արդյունք նախատեսված չէ | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | 16.4 Իրազեկել հանրությանը մաքսային վարչարարության բարեփոխումների ընթացքի վերաբերյալ | | Մաքսային մարմնում մաքսային վարչարարության բարեփոխումների ընթացքի վերաբերյալ արդյունքների հրապարակման պարբերականություն | Ամսական մեկ անգամ | Արդյունք նախատեսված չէ | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | 16.6 Ապահովել ուղիղ հաղորդակցություն մաքսային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքի և | Գանգատարկման ընթացակարգերի նկատմամբ արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների կողմից | Մաքսային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքում տեղակայված մաքսային իրավախախտումների համար կիրառված պատասխանատվության միջոցների թիվը | 1020 | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>ՊԵԿ համակարգում գործում է գանգատարկման հանձնաժողով, որի աշխատակարգը և անհատական կազմը հաստատված են 2010 թվականի ապրիլի 22-ի ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի թիվ 831-Ա հրամանով:<br>ՊԵԿ համակարգում դեռևս 2008 թվականից գործում է թեժ գիծը և պաշտոնական կայքի միջոցով հետադարձ կապի հնարավորությունը: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություն | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | թեժ հեռախոսագծի միջոցով մաքսային մարմնի ղեկավարի, քաղաքացիների և տնտեսվարողների միջև | վստահությունն աճել է 20 տոկոսային կետով | Գործում է հասարակությանն ու տնտեսվարող սուբյեկտներին վստահություն ներշնչող թեժ գիծը և մաքսային ծառայության պաշտոնական կայքում արդյունավետ հետադարձ կապը | այո | Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքի համար հիմք է հանդիսացել մաքսային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքում տեղադրված մաքսային իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների թիվը:<br>Ցուցիչ 2. Ցուցիչի համար հիմք է հանդիսացել մաքսային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքի միջոցով արդյունավետ հետադարձ կապի համակարգի առկայությունը, ինչպես նաև Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին թեժ գծով ստացվող զանգերը: | |
| | 16.7 Ներդնել տնտեսվարողներին մաքսային ընթացակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ տեխնիկական աջակցություն տրամադրելու միասնական համակարգ | Տեղեկատվության տրամադրման ինտերակտիվ համակարգը ներդրված է մաքսային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքում, | Մաքսային ընթացակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու վերաբերյալ ուղեցույցերը հրապարակված են և տեղադրված են մաքսային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքում ( այո/ոչ) | այո | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>Մաքսային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքում տեղադրված է մաքսային ընթացակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու վերաբերյալ ուղեցույցները:<br><br>Արդյունք 2. Կատարված է ամբողջությամբ,<br>Կազմակերպվել է մաքսային միջնորդների ուսուցման 1 որակավորման դասընթաց: Նախատեսվում է ևս 1 մաքսային միջնորդի ուսուցման դասընթաց կազմակերպել 2011 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| | | Մաքսային միջնորդների ուսուցման իրականացված առնվազն երկու որակավորման դասընթաց | Մաքսային միջնորդների ուսուցման իրականացված առնվազն երկու որակավորման դասընթաց ( այո/ոչ) | այո | | |

**3.5** Կրթության ոլորտ

<table>
<tr><th>Ռազմավարության դրույթներ</th><th>Միջոցառում</th><th>Ակնկալվող արդյունք 2011թ.</th><th>Մոնիտորինգային ցուցիչներ</th><th>Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը</th><th>Մեկնաբանություններ</th><th>Պատասխանատու մարմին</th></tr>
<tr><td rowspan="3">17. Ապահովել կրթության ոլորտի զարգացման քաղաքականության շրջանակներում կոռուպցիոն ռիսկերի շարունակական գնահատումն ու դրանց կանխարգելումը:</td><td rowspan="3">17.1 ՀՀ կրթության քաղաքականության մշակման գործընթացում իրականացվող վերլուծությունների շարքում ներառել կրթության յուրաքանչյուր մակարդակում առկա կոռուպցիայի ընկալման, ռիսկերի գնահատման, համակարգերի կառավարման թափանցիկության, մասնակցության, և այլ հետազոտություններ</td><td rowspan="3"></td><td>ՀՀ կրթության համակարգում ոլորտային մասնագիտացվածություն ունեցող հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվում է կրթության յուրաքանչյուր մակարդակում առկա կոռուպցիայի ընկալման, ռիսկերի բացահայտման, համակարգերի կառավարման թափանցիկության մասնակցային մոնիտորինգներ: (այո/ոչ)</td><td>Այո</td><td rowspan="3">Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն:<br><br>ՀՀ նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում ռազմավարության վերանայման գործընթաց նախատեսված է նաև ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից հաստատված <<Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների համալիր գործողությունների ծրագրով>>: Մոնիթորինգային ժամանակահատվածում վերանայվել է ՀՀ նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների ընդունելության կարգը: Կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու և կրթության մատչելիությունը ապահովելու նպատակով ընդունելության կարգում կատարվել են փոփոխություններ: ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատվել է նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2011 թվականի ընդունելության կարգը, որով հանվել է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում անվճար համակարգում ընդունելության քննությունների անցկացումը՝ բացառությամբ արվեստի ոլորտի մասնագիտական առարկաներից: 2011-2012 ուստարվանից ընդունելությունը կկատարվի դպրոցի ավարտական քննությունների արդյունքների հիման վրա:<br><br>Հաստատվել են «Ուսանողների /ունկնդիրների/ մեկ ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման>> և «Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու>> կարգերը:<br><br>Մշակվել և քննարկման է դրվել <<Նախնական(արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում ուսումնառությունը որևէ պատճառով անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգի» նախագիծը:<br><br>Արդյունք 2. Իականացված է ամբողջությամբ:<br><br>ՀՀ կրթության և գիտության նախարարությունը մի շարք ՀԿ-երի և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ նախաձեռնել է հետազոտությունների անցկացում՝ գնահատելու կրթության ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը:<br><br>ԵՊՀ ուսանողական խորհուրդը իրականացրել է ՀՀ կառավարության կողմից հաստատված հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի և ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից հաստատված՝ <<Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների համալիր գործողությունների ծրագրի>> համեմատական վերլուծություն: Միաժամանակ ուսանողական խորհրդի կողմից իրականացվել է ներքին հետազոտություն՝ իրենց բուհի շրջանակներում, կոռուպցիոն երևույթները բացահայտելու նպատակով:</td><td rowspan="3">ՀՀ կրթության և գիտության նախարարություն</td></tr>
<tr><td>Ոչ ֆորմալ վճարումները կրթության համակարգում, տոկոս՝ կրթության վրա կատարվող ծախսերի նկատմամբ (ԱՀՌԾ Սոցիալական և քաղաքացիական մեկուսացվածություն և անհավասարություն. մոնիտորինգի ցուցանիշներ e2.6 ցուցանիշ)</td><td>Տվյալները բացակայում են</td></tr>
<tr><td>Ռիսկերի գնահատման և ներդրված միջոցառումների ազդեցության ուսումնասիրման հիման վրա կրթության ոլորտում ՀՀ օրենսդրության մեջ և ընթացակարգերում կատարված փոփոխությունները (այո/ոչ)</td><td>Այո</td></tr>
</table>

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | <<Քաղաքական և սոցիոլոգիական հետազոտությունների ինստիտուտ>> ՀԿ-ն իրականացրել է <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտի ներկա իրավիճակի և Բոլոնիայի գործընթացի համատեքստում բարեփոխումների իրականացման ընթացքի վերաբերյալ>> թեմայով հետազոտությունը: Հետազոտության հիմքում կոռուպցիոն երևույթների բացահայումն է բարձրագույն կրթության ոլորտում, ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքներն ու նրանց վերաբերմունքը երևույթի նկատմամբ: Հետազոտությունն անցկացվել է հանրապետության 3 քաղաքների 23 բուհերում:<br><br>Նշված հետազոտությունները, փորձաքննության և վերլուծության հետ կապված արդյունքներն ու առաջարկությունները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարություն:<br><br>Դիմորդների գիտելիքների գնահատման մեխանիզմները և չափանիշները, ինչպես նաև ուսուցման պայմանները կանոնակարգելու ու հստակեցնելու, կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով մշակվել և հաստատվել է <<ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը>>:<br><br>ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարությունը և դրա կատարումը ապահովող միջոցառումների ժամանակացույցը: Այն հնարավորություն կընձեռի ներդնել կրթաթոշակներ, նպաստներ՝ համակցված ուսանողի առաջադիմության, կարիքավորության և տնտեսության զարգացման առաջնային ոլորտների պահանջարկի և այլ գործոններով: Միաժամանակ կընդլայնվեն ուսանողի աջակցման ծառայությունները, մասնավորապես՝ կկիրառվեն ուսանողական վարկեր, վարձավճարների զեղչման, վճարների հետաձգման մեխանիզմներ:<br><br>Քննարկման փուլում է <<Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների վերականգնման և հեռացման կարգի>> նախագիծը, որը հաստատման կներկայացվի ՀՀ բուհերի հետ համատեղ լրամշակումից հետո:<br><br>ՀՀ բուհերի քննարկմանն է ներկայացվել <<Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի>> նախագիծը:<br><br>Փոփոխություններ են կատարվել «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում՝ ՀՀ-ում պետական և ոչ պետական բուհերի մրցակցային դաշտի և միասնական քաղաքականության ստեղծման նպատակով: Այս փոփոխությունը հնարավորություն կտա հավասար պայմաններ ստեղծել բոլոր դիմորդների և ուսանողների համար:<br><br>*Ցուցիչներ*<br><br>Ցուցիչ 1. | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ՀՀ կրթության համակարգում ոլորտային մասնագիտաց-վածություն ունեցող հասարակական կազմակերպությունները մասնակցում են ՀՀ Կրթության պետական տեսչության կողմից իրականացվող հանրակրթական և նախնական (արհեստագործական) մասնագիտական ուսումնական հաստատությունների տեսչավորման և առանձին ուսումնասիրությունների գործընթացին:<br><br>Ցուցիչ 2.<br><br>Ցուցիչը չի հավաքագրվում ԱՎԾ-ի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների համակարգի կողմից:<br><br>Առաջարկվում է որպեսզի ցուցիչը հաշվարկվի ԱՎԾ-ի կողմից իրականացվող տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների շրջանակում:<br><br>Ցուցիչ 3.<br><br>Օրենսդրական փոփոխություններն ընթացքի մեջ են:<br>Կրթության ոլորտում օրենսդրական փոփոխություններն ու ռազմավարությունների վերանայման գործընթացը շարունակվելու է 2011-2012 թվականներին, որը նախատեսվում է նաև <<Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների համալիր գործողությունների ծրագրով>>: | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 18.Բարձրացնել կրթության ոլորտի կառավարման թափանցիկությունը հաշվետվողականություն ու օրինականությունը | 18.1 Բարձրացնել բարձրագույն, նախնական և միջին մասնագի-տական կրթության համակար-գում հրապարակայնությունն ու վերահսկողության արդյունավե-տությունը | ՀՀ բարձրագույն, նախանական և միջին մասնագիտական կրթական հաստատություններ ի կառավարման խորհուրդները կանոնավորապես քննության են առնում առանձին հաստատությունում կառուպցիոն ռիսկերի կանխարգելման, կոռուպցիոն դրսևորումների բացահայտման հարցերը<br>ՀՀ բուհերի նվազագույնը 75 տոկոսում ուսումնական գործընթացի կազմակերպման ուսումանսիրություն ներ<br><br>Հասարակությունը, այդ թվում՝ սոցիալական գործընկերները, իրազեկված են միջնակարգ կրթության և ուսուցման համակարգի կողմից մատուցվող ծառայությունների մասին | Բարձրագույն, նախնական և միջին մասնագիտական կրթության հաստատություն-ների կառավարման մարմնի օրակարգում պարտադիր կերպով ընդգրկվել են կառա-վարության ներկայացուցիչ-ների կողմից առանձին հաս-տատությունում կառուպցիոն ռիսկերի կանխարգելման և բացահայտման հարցերը (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է մասամբ:<br><br>ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվել է <<Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների համալիր գործողությունների ծրագիրը>>, համաձայն որի բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից նախատեսվում էր իրենց հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի մշակում: ՀՀ կրթության և գիտության նախարարի հանձնարարականի համաձայն` ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ներկայացվել են Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012թթ. միջոցառումների համալիր ծրագրերը, որոնք երաշխավորվել են բուհերի կառավարման խորհուրդների կողմից: Որոշ բուհերում դրանք դեռևս չեն հաստատվել` բուհերի կառավարման խորհուրդների նիստեր չգումարվելու պատճառով: Նախատեսվում է դրանք հաստատել առաջիկա նիստերի ժամանակ: Մի շարք բուհերում կառավարման խորհուրդների կողմից ընդունված հակակոռուպցիոն ծրագրերի վերաբերյալ հրապարակվել են կիսամյակային հաշվետվություններ:<br>Հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրերի իրականացման հաշվետվողականությունն ու թափանցիկությունը ապահովելու նպատակով ՀՀ բուհերում կառավարման խորհուրդների կողմից կանոնավորապես քննարկվելու են ծրագրի ընթացքը և կոռուպցիոն խնդիրներին վերաբերող հարցերը:<br><br>Արդյունք 2. Իրականացված է մասամբ:<br><br>ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ուսումնական գործընթացի կազմակերպման ուսումնասիրությունն ու որակի գնահատումը իրականացնում է ՀՀ կառավարության աշխատակազմում գործող <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամը: Օրենսդրորն հստակեցվել են այս կառույցի գործառույթները: Մշակվել և ընդունվել են <<ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը>>, ինչպես նաև <<ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները>>: Նշված իրավական ակտերի կիրարկումն ապահովելու նպատակով փոփոխություններ են կատարվելու համապատասխան օրենքներում:<br><br>Մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հավատարմագրման կարգի ընդունումից հետո կներդրվեն բուհերում ուսումնական գործընթացի կազմակերպման ուսումնասիրության ընթացա-կարգերը: Միաժամանակ կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման պայմաններն ու պահանջները խստացնելու նպատակով փոփոխություններ են առաջարկվել լիցենզավորման կարգերում, ինչպես նաև <<Լիցենզավորման մասին>> և <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011**թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | մասին>> ՀՀ օրենքներում:<br><br>Բարձրագույն կրթության բարեփոխումների շրջանակներում` բուհերի միավորման համար նպաստավոր պայմանների և բուհերում մասնագիտական կրթական ծրագրերի լիցենզավորման պայմանների ու պահանջների ապահովման նպատակով, 30 բարձրագույն ուսումնական հաստատությունների լիցենզիայի պարտադիր պայմանների ու պահանջների ապահովման նկատմամբ ստուգումների արդյունքում դադարեցվել է 1, կասեցվել է 2 և մասնակի կասեցվել է 2 բուհի լիցենզիա: 3 բուհ միավորվել են, ևս 7 բուհ գտնվում են միավորման գործընթացում:<br><br>Արդյունք 3. Իրականացված է մասամբ:<br><br>ՀՀ կրթության ոլորտին վերաբերող տեղեկատվությունը զետեղված է ՀՀ կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայքում` www.edu.am: Այն հնարավորություն է ընձեռում ծանոթանալ գերատեսչության կառուցվածքին և գործունեությանը, ոլորտը կարգավորող օրենսդրությանը, ինչպես նաև առաջին աղբյուրից օգտակար և հավաստի տեղեկություն ստանալ նոր փուլ թևակոխած կրթական բարեփոխումների ընթացքի վերաբերյալ: Կայքն ունի 19 բաժիններ, այդ թվում նաև` <<Հետադարձ կապ>> բաժինը, որն անմիջական հաղորդակցություն է ապահովում քաղաքացու և ոլորտի պատասխանատուների միջև: Կայքի <<Մասնագիտական կրթություն>> բաժնում տրված են մասնագիտական կրթությանն առնչվող բովանդակային փաստաթղթերը: Կայքն ունի նաև հղումներ` <<Կրթություն>> պաշտոնաթերթի, ինչպես նաև ՀՀ ԿԳՆ առանձնացված ստորաբաժանումների, այդ թվում` Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի կայքերին, որտեղ տրվում են նաև նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության արդի վիճակը, ընթացքի մեջ գտնվող ծրագրերը, բարեփոխումների ողջ դաշտը:<br>Իսկ <<Հանրային քննարկումներ>> բաժնում տրված են կրթության ոլորտին վերաբերող իրավական ակտերի նախագծերը և դրանց շուրջ իրականացվող քննարկումների արդյունքները:<br><br>Ցուցիչ 1.<br><br>ՀՀ բարձրագույն, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման մարմնի օրակարգում որևէ հարցի պարտադիր կերպով ընդգրկման պահանջը չի կարող իրականացվել իրավական տեսակետից:<br><br>ՀՀ բարձրագույն, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդներում ընդգրկված ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչները, համաձայն ուսումնական հաստատության կանոնադրության, կարող են առաջարկել` այս կամ այն հարցը ընդգրկելու օրակարգում:<br><br>Առաջարկվում է մոնիտորինգային ցուցիչում հանել` <<պարտադիր կերպով>> բառերը: | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 18.2 Բարձրացնել հանրակրթության համակարգում վերահսկողության արդյունավետությունը | Հանրակրթական ուսումնական հաստատությունների 2010թ. տեսչավորման հաշվետվությունները հրապարակված են<br><br>Կրթության պետական տեսչության կողմից ՀՀ հանրակրթական հաստատությունների կրթական գործունեության վերահսկողության ընթացակարգերը հստակեցված են | Տարանջատվել են կրթության ոլորտում վերահսկողական գործառույթներ իրականացնող և ուսումնական հաստատություններում ստուգումներ և ուսումնասիրություններ իրականացնող մարմինների լիազորությունները (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br><br>Հանրակրթական ուսումնական հաստատությունների 2010թ. տեսչավորման և ուսումնասիրությունների ու ստուգումների հաշվետվությունները հրապարակված են ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքում և կրթական պորտալում (www.edu.am, www.armedu.am), ինչպես նաև <<Կրթություն>> շաբաթաթերթում:<br><br>Արդյունք 2. Իրականացված է մասամբ:<br><br>Կրթության պետական տեսչության գործունեությունը կանոնակարգվում է <<Կրթության պետական տեսչության մասին>> և <<Ստուգումների մասին>> ՀՀ օրենքներով:<br><br>ՀՀ հանրակրթական հաստատությունների կրթական գործունեության ամբողջական և արդյունավետ վերահսկողություն ապահովելու նպատակով փոփոխություններ են նախատեսվում մի շարք օրենքներում: Փոփոխություններ են առաջարկվել նաև <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ նոր օրենսգրքում` Կրթության պետական տեսչությանը վերապահելով` ըստ կրթական մակարդակների, ուսումնական հաստատությունների նկատմամբ վարչական տույժեր կիրառելու լիազորությունը: Միաժամանակ նախատեսվում է ՀՀ մարզերի ուսումնական հաստատությունների գործունեության նկատմամբ անմիջական վերահսկողության օպերատիվությունն ապահովելու նպատակով ստեղծել Կրթության պետական տեսչության տարածքային 4 մարմիններ: Այդ օրենսդրական փաթեթը ներկայումս լրամշակման փուլում է: Նախագծերի նոր` փոփոխված տարբերակները քննարկվում են այլ շահագրգիռ գերատեսչությունների հետ: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, |
| | 18.3 Հզորացնել կրթության ոլորտի կառավարման մարմինների կարողությունները կոռուպցիայի կանխարգելման գործում | Կրթության ոլորտի կառավարման մարմինների աշխատակիցների 10 տոկոսը վերապատրաստվել է | Կրթության ոլորտի կառավարման համակարգում իրականացվում են կոռուպցիայի վերաբերյալ իրազեկման և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստման ծրագրեր (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Իրականացված է մասամբ:<br><br>ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ԱՄՆ ՄԶԳ-ի և UNESCO-ի հետ համատեղ մշակել է ՀՀ ԿԳՆ աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների կարողությունների, ինչպես նաև վերապատրաստման կարիքների գնահատման փաթեթը, որի բաղադրիչներից է կոռուպցիայի վերաբերյալ իրազեկման և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստումը: Այս համագործակցության շրջանակներում մշակվել և հաստատվել է <<ՀՀ կրթության և գիտության նախարարության հաղորդակցության 2011-2015թթ. ռազմավարությունը>>, որը նպատակաուղղված է նաև նախարարության աշխատակազմի հակակոռուպցիոն կարողությունների զարգացմանը:<br>Կրթության ոլորտի կառավարման մարմինների համար կոռուպցիայի վերաբերյալ իրազեկման և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստման ծրագրերի իրականացումը նախատեսվում է 2011 թվականի երկրորդ կիսամյակում: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Կրթության ազգային ինստիտուտ, |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 18.4 Բարձրացնել կրթական հաստատություններում կադ-րերի ընտրության, նշանակման, պաշտոնեական առաջխաղաց-ման և աշխատանքային հարա-բերությունների կարգավորման թափանցիկությունը, հրապա-րակայնությունն ու օրինակա-նությունը | Կրթական հաստատություններ ի աշխատակիցների վարքագծի միասնական կանոնները սահմանված են<br><br>Կրթության ոլորտում շահերի բախման հայտարարագրերի կիրառման կարգը սահմանված է | ՀՀ միջնակարգ և բարձրա-գույն կրթության համակար-գում սահմանվել են մանկա-վարժական կադրերի ընտ-րության մրցութային ընթացակարգ (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br><br>Մշակվել և հաստատվել են հանրակրթության ոլորտում կադրերի նշանակման գործընթացը կանոնակարգող մի շարք իրավական ակտեր: Մասնավորապես հաստատվել են <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը>>, <<Պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը>> և <<ՈՒսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման կարգը>>: Հաստատվել է նաև <<Հանրակրթական դպրոցի մանկավարժական աշխատողների անվանացանկը և դրանց նկարագիրը>>:<br><br>Բարձրագույն կրթության ոլորտում կադրերի ընտրության և նշանակման գործընթացը կանոնակարգվում է <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքով, որում ամրագրված են համապատասխան դրույթները:<br><br>Արդյունք 2. Չի իրականացված :<br><br>Առաջարկվում է արդյունք 2-ը հանել:<br><br>*Ցուցիչներ*<br><br>Ցուցիչ 1.<br><br><<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի>> համաձայն հանրակրթական դպրոցներում ուսուցչի թափուր պաշտոններն արդեն իսկ համալրվում են մրցութային կարգով՝ բացառությամբ գործուղմամբ զբաղեցվող և մինչև 3 տարի թափուր պաշտոնների:<br><br>Ցուցիչ 2.<br><br>ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների տնօրենների պաշտոնները զբաղեցվում են <<Պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի>> համաձայն: Տնօրենը ընտրվում է մրցութային կարգով, իսկ նրա պաշտոնական պիտանելիությունը որոշվում է պարտադիր վերապատրաստման և հավաստագրման քննությունների միջոցով: Ուսուցչի ատեստավորման գործընթացը կիրականացվի 2011 թվական սեպտեմբերից: Ուսուցչի ատեստավորումն իրականացվելու է 2 փուլով՝ պարզ և բարդ, շնորհվելու են տարակարգեր: Բարդ ատեստավորման արդյունքում՝ ըստ 3 տարակարգերի և որակավորման յուրաքանչյուր աստիճանի համար սահմանվում են հավելավճարներ: Ատեստավորումից առաջ ուսուցիչը անցնելու է համապատասխան վերապատրաստում:<br><br>Ցուցիչ 3.<br><br><<Հանրակրթական դպրոցի մանկավարժական աշխատողների անվանացանկը և դրանց նկարագիրը>> իրավական ակտով հստակեցվել և ամրագրվել են մանկավարժական գործունեությամբ զբաղվող մասնագետների պաշտոնեական պարտականությունները, լիազորությունները, իրավունքները, որոնց ապահովումը պարտադիր է տնօրինության համար: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն |
| | | | ՀՀ միջնակարգ և բարձրա-գույն կրթության համակար-գում սահմանվել են կադրերի ընտրության, նշանակման և պաշտոնեական առաջխա-ղացման ընթացակարգեր (այո/ոչ) | Այո | | |
| | | | Սահմանվել են կրթական հաստատությունների աշխատակիցների համար պաշտոնի նկարագրության և վարքագծի միասնական կանոններ (այո/ոչ) | Այո | | |
| | | | Սահմանվել են կրթական հաստատությունների հան-րային ծառայության ոլորտում շահերի բախման ու հայտարարագրերի կիրառ-ման կարգը (այո/ոչ)<br>Սահմանվել են ուսուցչի և դասախոսի անձնական գործի որպես հրապարակային փաստաթղթերի հրա-պարակման կարգը (այո/ոչ) | Ոչ | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Բարձրագույն կրթության ոլորտում կրթական գործընթացում ներգրավված մասնակիցներին ներկայացվող պահանջները ամրագրված են բարձրագույն մասնագիտական պետական կրթական չափորոշիչներում՝ ըստ կրթական ծրագրերի:<br>Առաջարկվում է հստակեցնել <<վարքագծի միասնական կանոններ>> արտահայտությունը:<br>Ցուցիչ 4.<br>Առաջարկվում է այս ցուցիչը հանել, քանի որ հանրային ծառայության ոլորտում շահերի բախման ու հայտարարագրերի կիրառման գործընթացը պահանջում է միասնական մոտեցում:<br>Ցուցիչ 5.<br>Առաջարկվում է այս ցուցիչը հանել, քանի որ ցուցիչներ 1,2,3-ն արդեն բավարար չափով ապահովում են անձնական գործի՝ որպես հրապարակային փաստաթղթի հրապարակայնությունը:<br>ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքի՝ www.edu.am և <<Կրթություն>> շաբաթաթերթի միջոցով ապահովվում է կադրերի նշանակման գործընթացի թափանցիկությունն ու թափուր տեղերի համալրման հրապարակայնությունը: | |
| 19. Բարձրացնել հանրակրթական դպրոցների կառավարման թափանցիկությունը, հրապարակայնությունը, հաշվետվողականություն ն ու օրինականությունը | 19.1 Ընդլայնել դպրոցի կառա-վարման գործում դպրոցի խոր-հրդի և խորհրդատվական մար-մինների դերը | Դպրոցի կառավարման և վերահսկողության գործառույթներում ծնողական, մանկավարժական և մեթոդական խորհուրդների գործուն մասնակցությունն ապահովող ընթացակարգերը ներդրված են<br><br>Ավագ դպրոցում աշակերտների, աշակերտական խորհուրդների դերը և լիազորությունները ընդլայնող դրույթները սահմանված են օրենսդրորեն | Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցում ընդգրկված դպրոցների թվի հարաբերությունը դրանց ընդհանուր թվին | 81,4% | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>Հանրակրթական դպրոցների նոր օրինակելի կանոնադրությամբ ամրագրվել են դպրոցի կառավարման և վերահսկողության գոր-ծառույթներում ծնողական և մանկավարժական խորհուրդների, ինչպես նաև մեթոդական միավորումների մասնակցությունն ապահովող դրույթները: Հանրակրթական դպրոցի նոր օրինակելի կանոնադրությունը ներդրվել է 2010 թվականից:<br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ:<br>Հանրակրթական դպրոցների նոր օրինակելի կանոնադրությամբ ամրագրվել են աշակերտական խորհուրդների լիազորությունները: Իսկ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքում ամրագրված է աշակերտական խորհրդի լիազորությունները ընդլայնող հետևյալ դրույթը՝ <<Աշակերտական խորհրդի ներկայացուցիչը, խորհրդակցական ձայնի իրավունքով, մասնակցում է խորհրդի և մանկավարժական խորհրդի այն նիստերին (կամ հարցերի քննարկմանը), որտեղ քննարկվում են աշակերտներին անմիջականորեն վերաբերող հարցեր>>: Միաժամանակ ՀՀ ԿԳ նախարարի՝ 17.05.2011թ. թիվ 571-Ն հրամանով հաստատվել է աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությունը, որով հստակեցվել են խորհրդի իրավասությունների և պատասխանատվության շրջանակները:<br>Առաջարկվում է արդյունք 2-ում <<ավագ>> բառը փոխարինել <<հանրակրթական>> բառով, քանի որ աշակերտական խորհուրդը վերաբերում է հանրակրթական դպրոցին ամբողջությամբ:<br>*Ցուցիչներ*<br>Ցուցիչ 1-ի արժեքը հաշվարկվել է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի www.ktak.am էլեկտրոնային կայքում տեղադրված տվյալներով: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն |
| | | | Կրթության կառավարման տեղեկատվական համակար-գում ընդգրկված դպրոցների թվի հարաբերությունը դրանց ընդհանուր թվին | 100% | | |
| | | | «Ծնողների համար» էլեկտրո-նային կայքով ապահովված դպրոցների թվի հարաբերու-թյունը դանց ընդհանուր թվին<br>Բացակայությունների թվի հարաբերությունը սովորող-ների ընդհանուր թվաքա-նակին | Ոչ | | |
| | | | Բացակայությունների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում ոչ ֆորմալ վճարումների ընդհանուր թվաքանակին | | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Ցուցիչ 2. Կրթության կառավարման տեղեկատվական համակար-գում ներառված են հանրակրթական բոլոր դպրոցները և այդ համակարգը վարում է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը(ԿՏԱԿ): Ցուցիչ 3. Այդպիսի պաշտոնական կայք դեռևս ձևավորված չէ: | |
| | 19.2 Խստացնել դպրոցում սահ-մանված գործառնական ընթա-ցակարգերի պահպանման նկատմամբ հսկողությունը | Դպրոցում անհարգելի բացակայություններ ի թիվը նվազել է 10 տոկոսային կետով | Դպրոցի ծառայությունների դիմաց վճարումների և դպրոցին ֆինանսական աջակցություն տրամադրելու գործարքի գումարի բնույթն ու հատկացման նպատակը գրավոր արձանագրելու պարտադիր կարգը սահմանված է (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Չի իրականացված:<br>Կրթության ոլորտում չկա մեխանիզմ այդ ցուցիչի արժեքի հաշվարկման համար:<br>Առաջարկվում է կատարել ուսումնասիրություններ` հաշվարկի համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման մեխանիզմը մշակելու և տեղեկատվությունը հավաքագրելու ու պարբերաբար թարմացնելու համար:<br>Միաժամանակ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածում ամրագրված դրույթի համաձայն խստացվել է սովորողների բացակայությունների հարցը` 120-160 ժամ դասերից բացակայած սովորողը հանձնում է քննություններ 5 առարկաներից, իսկ 160 ժամից ավելի բացակայած սովորողը` կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը:<br>*Ցուցիչներ*<br>Ցուցիչ 1<br>Հաստատվել է <<Պետական ուսումնական հաստատության և ծնողի միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը>>:<br>Պետական ուսումնական հաստատության և ծնողի միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևի միջոցով հստակեցվել են կողմերի իրավունքներն ու պարտականությունները, սահմանվել են պատասխանատվության ձևերն ու շրջանակները, ամրագրվել են ծնողի կողմից աջակցության ձևերն ու չափը, դպրոցի կողմից մատուցվող ծառայության ձևերը:<br>Ցուցիչ 2-3. Կրթության ոլորտում չկա մեխանիզմ այդ ցուցիչների արժեքի հաշվարկման համար:<br>Առաջարկվում է կատարել ուսումնասիրություններ` հաշվարկի համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման մեխանիզմը մշակելու և հավաքագրվող տեղեկատվությունը պարբերաբար լրամշակելու համար:<br>Ցուցիչ 4. Առաջարկվում է հանել, քանի որ կոռուպցիոն ռիսկերի տեսակետից ցուցիչի ինդիկատիվ մեխանիզմը հստակ չէ:<br>Ցուցիչ 5-ի արժեքը հաշվարկվել է ՀՀ ԿԳՆ Կրթության պետական տեսչության տրամադրած տվյալների հիման վրա:<br>Ցուցիչ 6-ի արժեքը դեռևս ճշտված չէ: ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից լիազոր մարմիններին է ուղարկվել հաշվետու ժամանակաշրջանում հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքում համապատասխան անձանց նկատմամբ սանկցիաներ կիրառելու վերաբերյալ առաջարկությունները: Հիշյալ առաջարկությունների կապակցությամբ դեռևս որոշումներ չեն կայացվել: Ցուցիչի | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն |
| | | | Դպրոցում անհարգելի բացակայությունների թիվը | Տվյալները բացակայում են | | |
| | | | Կրթության տեսչության կողմից քննված գործերի թվի հարաբերությունը բողոքների ընդհանուր թվաքանակին | Տվյալները բացակայում են | | |
| | | | Միջնակարգ կրթության համակարգերում կիրառված սանկցիաների թվի հարաբերությունը բողոքների ընդհանուր թվաքանակին | Տվյալները բացակայում են | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | փաստացի արժեքը կհստակեցվի 2011 թվականի 2-րդ կիսամյակում: | |
| 20.Ապահովել գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման համակարգերի թափանցիկությունն ու անկախությունը | 20.1 Ներդնել գիտելիքների գնահատման միասնական, ան-կախ համակարգ` ապահովելով նրա համադրելիությունը միջ-ազգայնորեն ընդունված գնա-հատման չափանիշներին | Գիտելիքի գնահատման համակարգի կիրառման ներքին վերահսկողության հետևողական ընթացակարգեր ներդրված են | Սահմանվել է գիտելիքի գնահատման միասնական և անկախ համակարգ (այո/ոչ) | այո | Արդյունք.1 Իրականացված է ամբողջությամբ<br>ՀՀ հանրակրթության համակարգում ներդրված է 10 բալանոց գնահատման համակարգը:<br>Թեստավորման ու գնահատման կենտրոնի 2010թ. մայիսի 5-ի թիվ 41-Ա հրամանով սահմանված են քննական կենտրոնի ղեկավարի, կենտրոնի ներկայացուցչի, միասնական քննության ընթացքի կազմակերպչի և պատասխանատու կազմակերպչի միասնական քննական կենտրոնի հերթապահի և համակարգչային օպերատորի աշխատակարգերը: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն |
| | | | Սահմանվել է գիտելիքի գնահատման համակարգի կիրառման նկատմամբ արտաքին և ներքին վերահսկողության ընթացակարգերը (այո/ոչ) | այո | | |
| | 20.2 Ապահովել միասնական և ավարտական քննությունների թափանցիկությունը | Թեստային քննությունների ընթացքում հսկիչների լիազորությունները հստակեցված են և նրանց կողմից քննությունների կանոնները խախտող սովորողների նկատմամբ կիրառվող պատժամիջոցների չափանիշներն ու ցանկը սահմանված են | Ապահովված են միասնական և ավարտական քննություն-ների ընթացակարգերի թա-փանցիկությունը (այո/ոչ) | այո | Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ<br>Ցուցիչ 1.-2. Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքով սահմանված պահանջներին համապատասխան հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև ծնողները ներգրավված են քննությունների ընթացքի նկատմամբ վերահսկողության գործընթացում: Մասնավորապես, ներկա են գտնվում թեստերի ծրարների բացմանը, մոնիտորների միջոցով հետևում են քննության գործընթացին, զլմ-ները լուսաբանում են քննական գործընթացը: Քաղաքացիական հասարակության միավորումները պատշաճ տեղեկատվություն են ստանում քննական գործընթացի վերաբերյալ:<br>Ցուցիչ 3. Պետական և ոչ-պետական հաստատություններ ընդունելիության կարգի 67 կետի 12 –րդ ենթակետով սահմանված են քննությունների կանոնները խախտող սովորողների նկատմամբ կիրառվող պատժամիջոցների չափանիշներն ու ցանկը:<br>Ցուցիչ 4. Պետական և ոչ-պետական հաստատություններ ընդունելիության կարգի 66 կետի 5 –րդ ենթակետով, ինչպես նաև կենտրոնի տնօրենի հրամանով հաստատված աշխատակարգով սահմանված են թեստային քննությունների ընթացքում կազմակերպիչների և վերահսկողների լիազորությունները: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն |
| | | | Կանոնակարգվել են քննու-թյունների ընթացքի նկատ-մամբ հասարակական կազ-մակերպությունների կողմից մասնակցային մոնիտորինգի ընթացակարգերը (այո/ոչ) | այո | | |
| | | | Սահմանվել են քննություն-ների կանոնները խախտող սովորողների նկատմամբ կիրառվող պատժամիջոցների չափանիշներն ու ցանկը (այո/ոչ) | այո | | |
| | | | Հստակեցնվել են թեստային քննությունների ընթացքում կազմակերպիչների և վերահսկողների լիազորությունները (այո/ոչ) | այո | | |

### 3.6 Առողջապահության ոլորտ

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 21. Բարձրացնել առողջապահության ոլորտում հանրային ֆինանսների կառավարման թափանցիկությունը և հաշվետվողականությունը | 21.1 Շարունակաբար հստակեցնել և առավել հասցեական դարձնել պետության կողմից ֆինանսավորվող առողջապահական ծառայությունների շրջանակը | ՀԾՓ-ն վերանայված և փոփոխված է: Որոշված են առանձին բուժօգնության տեսակների առաջնահերթությունները և դիֆերենցված են դրանց գները: | Լիազոր պետական մարմնի կողմից հստակեցվել են ՀԾՓ-ում ներառված առողջապահական ծառայությունների շրջանակը (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br>ՀԾՓ-ն վերանայված և փոփոխված է, որը արտացոլված է ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին օրենքում և «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» բուժհաստատությունների հետ կնքված պայմանագրերում:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության և ՀՀ ԱՆ ֆինանսատնտեսագիտական վարչության կողմից:<br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ<br>ՀՀ կառավարության 23.12.2010թ. թիվ 1762-Ն որոշմամբ համավճարային սկզբունքի ներդրման համար հաստատվել են «Անհետաձգելի և գինեկոլոգիական բժշկական օգնության» բյուջետային ծրագրերը: 2011 թվականի համար բժշկական ծառայությունների գների ձևավորման ժամանակ մի շարք հիվանդությունների պարագայում միջին բաժանմունքային գներից անցում է կատարվել ըստ հիվանդությունների գների ձևավորման՝ այդ թվում դիֆերենցված ըստ ծանրության աստիճանի: Այդ կապակցությամբ ՀՀ առողջապահության նախարարի 25.01.2011թ. N 79-Ա հրամանով հաստատվել են պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գները, ինչպես նաև ՀՀ ԱՆ 27.01.2011թ. N91-Ա հրամանով հաստատվել են «Անհետաձգելի և գինեկոլոգիական բժշկական օգնության» ծառայություններում կիրառվող համավճարների չափը՝ դիֆերենցված ըստ ծանրության աստիճանի և Երևան քաղաքի ու մարզերի:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության և ՀՀ ԱՆ ֆինանսատնտեսագիտական վարչության կողմից:<br>Ցուցիչ 1. Մեկնաբանությունները բերված են արդյունք 1-ի շրջանակներում:<br>Ցուցիչ 2. Հստակեցվել են պետության կողմից ֆինանսավորվող առողջապահական ծառայությունների ցանկը և ֆինանսավորման մեխանիզմները, որոնք հաստատվել են ՀՀ առողջապահության նախարարի 21.12.2010թվականի N 2079-Ա, 11.02.2011 թվականի N 161-Ա, 11.02.2011թվականի N 160-Ա, 22.04.2011թվականի N 712-Ա, 23.05.2011թվականի N 987-Ա հրամաններով:<br>Ցուցիչ 3. ՀՀ պետական բյուջեում առողջապահության նպատակային ծրագրերի հատկացումների տեսակարար կշիռը կազմել է մոտ 6,2 տոկոս, որը հաստատվել է «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, ՀՀ 2011 թվականի պետական բյուջեն ծախսային մասով կազմում է 1,001,054,275.8 ՀՀ դրամ, իսկ առողջապահական նպատակային ծրագրերի համար հատկացումները՝ 62,461,474.0 ՀՀ դրամ:<br><br>Ցուցիչ 4. Բժշկական կենտրոնների (բուրգերի) ձևավորումից հետո վերանայվել են բժշկական կենտրոններում պետպատվերի տեղադրման և ֆինանսավորման սկզբունքները: Բժշկական կենտրոնների (բուրգերի) հետ կնքվում է մեկ ընդհանուր պայմանագիր՝ հիվանդանոցային, արտահիվանդանոցային և շտապօգնության ծառայությունների մատուցման վերաբերյալ: Այդ պայմանագրերով որպես կատարող հանդես է գալիս բժշկական կենտրոնի (բուրգի) ղեկավարը: Կատարված փաստացի բուժօգնության վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են նրա կողմից, ֆինանսավորումն իրականացվում է մեկ բանկային հաշվով և ծախսերը կատարվում են մեկ աղբյուրից: 2011 թվականից ՀՀ ֆինանսների նախարարության հետ | ՀՀ առողջապահության նախարարություն |
| | | | Լիազոր մարմնի կողմից հաստատված է պետության կողմից ֆինանսավորվող, առողջապահական ծառայությունների ցանկը (այո/ոչ). | Այո | | |
| | | | ՀՀ պետական բյուջեում առողջապահության նպատակային ծրագրերի հատկացումների տեսակարար կշիռը (տոկոս). | 6,2% | | |
| | | | Փորձաշրջանով ներդրված է բժշկական կենտրոնների /բուրգերի/ ընդհանուր ֆինանսավորում / (այո/ոչ) | Այո | | |
| | | | Փորձաշրջանով ներդրված է բուժօգնության համար ընդհանուր հավաստագրի տրամադրում (այո/ոչ) | Ոչ | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | համաձայնեցված, բուժհաստատությունների հետ պայմանագրերը կնքվել են երեք տարի ժամկետով, յուրաքանչյուր տարի նոր ֆինանսական պարտավորությունների առաջացման դեպքում համաձայնագրով փոփոխվելու են միայն ծառայությունների գները և պայմանագրային ֆինանսական ծավալները հաստատող հավելվածները:<br>Ցուցիչ 5. Հավաստագրերի տրամադրման միջոցով պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման իրականացումը ներդրված է եղել միայն ծննդօգնության բնագավառում, որը գնահատվել է որպես դրական փորձ: 2011թ.-ի հունվարի 1-ից հավաստագիր ներդրվել է նաև երեխաների բժշկական օգնության ծրագրում մինչև յոթ տարեկան երեխաների համար:<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` հավաստագրի կիրառման հետագա ընդլայնում սոցիալապես անապահով և հատուկ խմբերի բուժօգնության ծրագրում | |
| 22. Բարելավել առողջապահությա ն համակարգում գնագոյացման համակարգը և վերացնել ոչ պաշտոնական վճարումների համար նպաստավոր պայմանները | 22.1 Ներդնել առողջապահության համակարգում իրատեսական գնագոյացման համակարգ | Բժշկագիտական և տնտեսագիտական չափորոշիչների երկրորդ փաթեթը սահմանված է Բժշկական օգնության ֆինանսական փոխհատուցման համավճարային համակարգը ներդրված է Առողջության ապահովագրման համակարգի ներդրման հայեցակարգը մշակված է | Բժշկատնտեսագիտական հիմնավորում ունեցող առողջապահական ծառայությունների տեսակարար կշիռը սահմանված ընդհանուր բուժօգնության ծառայությունների տեսակների մեջ:/տոկոս/ | 45% | Արդյունք 1. Իրականացված չէ<br>Բժշկատնտեսագիտական հիմնավորմամբ բժշկական ծառայությունների գների երկրորդ փաթեթի մշակումը նախատեսվում էր իրականացնել 2011 թվականի երկրորդ կիսամյակում: Փաթեթի մշակումը նախատեսվում էր իրականացնել վարկային ծրագրի շրջանակներում ՀՀ ԱՆ ԾԻԳ-ի միջոցով, որը ներկայումս կասեցվել է ՀՀ վարչապետի կողմից: Ծրագրի հետագա իրականացման մեխանիզմները քննարկման փուլում են:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության և ՀՀ ԱՆ ֆինանսատնտեսագիտական վարչության կողմից:<br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ:<br>ՀՀ կառավարության 23.12.2010թ. թիվ 1762-Ն որոշմամբ համավճարային սկզբունքը ներդրվել է «Անհետաձգելի և գինեկոլոգիական բժշկական օգնության» ծրագրերում 2011 թվականի փետրվարի 1-ից պետական պատվեր իրականացնող հանրապետության բոլոր բուժհաստատություններում:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Արդյունք 3. Իրականացված է ամբողջությամբ<br>ՀՀ կենտրոնական բանկի հետ մշակվել է Հայաստանի հանրապետությունում բժշկական ապահովագրության ներդրման հայեցակարգի նախնական տարբերակը, որը և գտնվում է քննարկման փուլում:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության և ՀՀ ԱՆ ֆինանսատնտեսագիտական վարչության կողմից:<br>Ցուցիչ 1. Համավճարի ներդրման կապակցությամբ բժշկատնտեսագիտական հիմնավորմամբ բժշկական ծառայությունների գներ հաշվարկվեցին գինեկոլոգիական բուժօգնության մասով, որը նախորդ տարվա հաշվարկված գների հետ միասին ընդհանուրի մեջ կազմում է 45%:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության և ՀՀ ԱՆ ֆինանսատնտեսագիտական վարչության կողմից:<br>Ցուցիչ 2. ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի համաձայն բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում Ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը, ֆիզիկան և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումերը, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները …: Նման պայմաններում | ՀՀ առողջապահության նախարարություն |
| | | | Պետական լիազոր մարմնի կողմից հաստատված վճարովի բժշկական օգնու-թյան և ծառայությունների ժամանակավոր գնա-ցուցակներով աշխատող բուժհաստատությունների թվաքանակը ընդհանուր բուժհաստատությունների թվի մեջ /տոկոս/ | Տվյալները բացակայում են | | |
| | | | ՀԾՓ-ում ընդգրկված առողջապահական ծա-ռայությունների համար կատարված պետական հատկացումների տեսա-կարար կշիռը փաստացի և իրական ծախսերի նկատմամբ/տոկոս/ | 70-100 % | | |
| | | | Ոչ ֆորմալ վճարումները առողջապահական հա-մակարգում առողջապա-հության վրա կատարվող ծախսերի նկատմամբ /տոկոս/ | Տվյալները բացակայում են | | |
| | | | Համավճարի ծավալի | Մարզեր` 30-50%,<br>ք. Երևան` 50-100%, | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | հարաբերությունը բժշկական օգնության համար անհրաժեշտ իրական ծախսերին /տոկոս/ | | որևէ մեխանիզմ չկա պարտավորեցնել մասնավոր բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին աշխատել պետական լիազոր մարմնի կողմից հաստատված վճարովի բժշկական օգնության և ծառայու-թյունների ժամանակավոր գնացուցակներով: Վճարովի բժշկական ծառայությունների բոլոր գնացուցակները և դրանցում կատարվող փոփոխությունները հաստատվում են բուժհաստատությունների իրավասու մարմինները /ընդհանուր ժողով, տնօրենների խորհուր և այլն/ կողմից, և այդ գնացուցակները կարող են լինել ինչպես ժամանակավոր այնպես էլ մշտական:<br>Ցուցիչ 2-ի հետ կապված իրավական հակասությունը կարող է լուծվել, այն բանից հետո, երբ կիստակեցվի, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների գործունեությանը պետության թույլատրելի միջամտության աստիճանը:<br>Ցուցիչ 3. Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տնտեսագիտական հիմնավորված գների և գործող գների տարբերությունը կազմում է միջինում 75 -100 տոկոս: Ցուցիչի արժեքը հաշվարկվել է բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների միջինացված անհրաժեշտ ծախսերի և պետական բյուջեով հատկացված միջոցների տարբերության հիման վրա:<br>Տվյալ ցուցիչը չի վերաբերում մանկական, մանկական ինֆեկցիոն, վերակենդանացման ծառայություններին և շտապօգնության ծառայությանը, որտեղ 2011 թվականին իրականացվել են պետական էական ներդրումներ և ծառայությունների գները մոտեցվել են փաստացի ծախսերին:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Ցուցիչ 4. Ոչ ֆորմալ վճարումները իրենց չափով և ծավալներով տարաբնույթ են` ինչպես տարածքային առումով` Երևան քաղաք և մարզեր, այնպես էլ բուժօգնության կազմակերպման տարբեր ձևերի դեպքում` հիվանդանոցային, արտահիվանդանոցային, վիրաբուժական, կոնսերվատիվ և այլն: Ըստ պաշտոնապես հասանելի հետազոտությունների /2008թ./ փորձագիտական գնահատականների ոչ ֆորմալ վճարումները առողջապահական ընդհանուր ծախսերի մեջ կազմում են շուրջ 10 տոկոս, իսկ տնային տնտեսությունների կողմից կատարված ծախսերի կառուցվածքում` 19.3 տոկոս: Հաջորդ պաշտոնական հետազոտությունները նախատեսվում է իրականացնել 2011-2012թթ ընթացքում 2010 թվականի համար ՀՀ առողջապահության ազգային հաշիվների զեկույցի նախապատրաստման շրջանակներում:<br>Ցուցիչ 5. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման համավճարային եղանակի կիրառումը սկսվել է 2011 թվականի փետրվարի 1-ից: Համավճարի չափի հարաբերությունը բժշկական օգնության համար անհրաժեշտ իրական ծախսերին տատանվում է կապված դեպքի ծախսատարությունից, քանի որ պետության կողմից իրականացվող փոխհատուցման գինը պահպանվում է նույն մակարդակում և ծախսերի տարբերությունը վճարվում է համավճարի տեսքով ազգաբնակչության կողմից: ՀՀ մարզերում համավճարի չափը ընդհանուր գնի մեջ կազմում է միջինում 30-50%-ը, Երևան քաղաքում` 50-100%, այդ թվում` համավճարի տոկոսաչափերի ստորին սահմանները համապատասխանում են ոչ վիրահատական ծառայություններին, իսկ վերին սահմանները`վիրահատական ծառայություններին:<br>Իրավիճակը ` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ`չկան | |
| | 22.2 Ներդնել պետական բժշկական հաստատու- | Պետական բժշկական հաստատություններու | Վճարովի բժշկական օգ- | Ոչ | Արդյունք 1. Իրականացված չէ<br>ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի համաձայն բացառապես Հայաստանի | ՀՀ առողջապահության |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | թյուններում իրականաց-վող վճարովի բժշկական օգնության և ծառայու-թյունների գնագոյացման համակարգ | մ գործող վճարովի բժշկական օգնության և ծառայությունների ժամանակավոր գնացուցակները հաստատված են | նության և ծառայություն-ների սակագների պե-տական կարգավորման մեխանիզմներն ամրագրված են օրենսդրորեն (այո/ոչ) | | Հանրապետության օրենքներով են սահմանվում Ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը, ֆիզիկան և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումերը, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները …: Նման պայմաններում որևէ մեխանիզմ չկա պարտավորեցնել մասնավոր բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությտններին աշխատել պետական լիազոր մարմնի կողմից հաստատված վճարովի բժշկական օգնության և ծառայությունների ժամանակավոր գնացուցակներով: Վճարովի բժշկական ծառայությունների բոլոր գնացուցակները և դրանցում կատարվող փոփոխությունները հաստատվում են բուժհաստատությունների իրավասու մարմինները /ընդհանուր ժողով, տնօրենների խորհուր և այլն/ կողմից, և այդ գնացուցակները կարող են լինել ինչպես ժամանակավոր այնպես էլ մշտական:<br>Ցուցիչ 1. Հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի համաձայն բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում Ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը, ֆիզիկան և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումերը, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, վճարովի բժշկական օգնության և ծառայությունների սակագների պետական կարգավորման մեխանիզմները պետք է ամրագրվեն օրենքով: Նշված մեխանիզմների՝ օրենսդրորեն ամրագրման հարցերը դեռևս քննարկման ընթացքում են: | նախարարություն |
| | 22.3 Խստացնել պետա-կան բուժհաստատու-թյունների վերահսկո-ղությունը ծախսային առաջնահերթությունների պահպանման նկատմամբ | Պետական բժշկական հաստատությունները ներկայցրել են ծախսերի կատարման տարեկան հաշվետվությունները Մշակված և սահմանված են պետական բժշկական հաստատությունների բուժաշխատողների վարձատրության և խրախուսման ընթացակարգերը: Բժշկական հաստատությունների ընդհանուր ծախսերում դեղորայքային ծախսը կազմում է նվազագույնը 15 տոկոս | Ծախսային առաջնահեր-թությունները չպահպա-նած բուժհաստատու-թյունների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ /տոկոս/ | 5% | Արդյունք 1. Իրականացված չէ<br>Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների և այլ նորմատիվային ակտերին համապատասխան, բուժհաստատությունները տարեկան հաշվետվությունները ներկայացնում են հիմնադիրներին տարեկան ծախսերի կտրվածքով, իսկ ՀՀ ԱՆ տեղեկատվության կարգով ներկայացնում են պայմանագրին կից 0007 ձևը:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br><br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ<br>Պետական պատվեր իրականացնող հիվանդանոցային բուժօգնության բնագավառում բուժանձնակազմի վարձատրության գործընթացը կանոնա-կարգելու նպատակով մշակված և ՀՀ առողջապահության նախարարի 31.01.2011թ. N100-Ա և 25.02.2011թ.-ի N314-Ա հրամաններով հաստատված է բուժանձնակազմի վարձատրման կարգ:<br>Առողջության առաջնային պահպանման օղակում ըստ կատարողականի (խրախուսական) ֆինանսավորման և վարձատրության կարգը մշակված է և հաստատված ՀՀ առողջապահության նախարարի 10.05.2011թ. N859-Ա հրամանով:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br><br>Արդյունք 3. Իրականացված է ամբողջությամբ<br>ՀՀ ԱՆ ներկայացվող հաշվետվությունների և ուսումնասիրությունների համաձայն պետական պատվեր իրականացնող բժշկական հաստատությունների ընդհանուր ծախսերում դեղորայքային ծախսը, առանց մարդասիրական օգնության, կազմում է շուրջ 20%:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից: | ՀՀ առողջապահության նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Ցուցիչ 1. Ըստ ՀՀ ԱՆ պետական առողջապահական գործակալություն ներկայացվող հաշվետվական 0007 ձևերի ամփոփ տեղեկատվության, 2011թվականի առաջին կիսամյակի արդյունքներով ծախսային առաջնահերթություն /աշխատավարձ, սոցվճարներ, հարկային պարտավորություններ/ չպահպանած հիմնարկների թվաքանակը չի գերազանցում 5- %-ը:<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան | |
| 23.Կրճատել ստվերային դրամաշրջանառության ծավալները, բարձրացնել առողջապահական ծառայությունների պետական պատվերի թափանցիկությունը, հասցեականությունը և հաշվետվողականությունը, բարձրացնել բուժհաստատությունների գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը | 23.1 Ապահովել առողջապահական ծառայությունների պետական պատվերի պայմանագրային ծավալների հիմնավորվածությունը, խստացնել պետական պատվերի պայմանագրերի կնքման գործընթացի նկատմամբ վերահսկողությունը և կանխել պետական պատվերի հնարավոր հավելագրումներն ու բուժհաստատությունների վնասաբեր գործունեությունը | Պետական պատվերի պայմանագրերի կնքումը կատարված է 2010թ. կատարողականների և դրանց ծավալների հնարավոր մեծացման միտումների վերլուծականների հիման վրա 2009թ.Բժշկական հաստատություններում պետական պատվերի հիմքերի անհամապատասխանությունը կատարողականի մեջ չի գերազանցում 2 տոկոսի չափը. Բժշկական հաստատություններում ապահովված է նվազագույնը 11 տոկոս շահութաբերության մակարդակ | Բուժհաստատություններում ներդրվել է բժշկական, վիճակագրական և ֆինանսական տվյալների հաշվառման էլեկտրոնային միասնական համակարգ (այո/ոչ | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br>Պետական պատվերի պայմանագրային գումարները հաշվարկված են ՀՀ կառավարության 04.03.2004թ. 318-Ն որոշմամբ սահմանված կարգով: Պայմանագրային գումարները հաշվարկվում են` հիմք ընդունելով նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, որի ժամանակ պայմանագրային գումարներից ավել կատարված և չֆինանսավորված ծավալները, որպես պայմանագրային գումարի հաշվարկման հիմք չեն ընդունվում:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության և ՀՀ ԱՆ ֆինանսատնտեսագիտական վարչության կողմից:<br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ<br>2009 թվականին բժշկական հաստատություններում պետական պատվերի հիմքերի անհամապատասխանությունը կատարողականի մեջ չի գերազանցում 3 տոկոսի չափը: Փաստացի ցուցանիշների համաձայն այն կազմում է մինչև 1 տոկոս: 2011թ. առաջին կիսամյակում բժշկական հաստատություններում պետական պատվերի հիմքերի անհամապատասխանությունը կատարողականի մեջ կազմել է շուրջ 0.18 տոկոս:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br><br>Արդյունք 3. Իրականացված չէ<br>Սույն արդյունքի շրջանակներում հնարավոր կլինի հաշվարկել միայն պետական մասնակցությամբ բուժհաստատությունների շահութաբերության մակարդակը: Միաժամանակ, շահութաբերության հետ կապված տեղեկատվությունը ձևավորվում է տարեկան հաշվապահական հաշվեկշիռների ամփոփումից հետո:<br>Ցուցիչ 1. 2011 թվականի սկզբից գործել է ՄԻԴԱՍ 3 էլեկտրոնային լրամշակված տեղեկատվական համակարգը, որը ավելի ամբողջական տվյալներ է պարունակում: Միաժամանակ փորձ է արվել ներդրված համակարգի միջոցով ապահովել բժշկական, վիճակագրական և ֆինանսական տվյալների հաշվառման համակարգի միասնականությունը: Ներդրված է նաև ՄԻԴԱՍ-ինֆո տեղեկատվական համակարգը, որը հնարավորություն է տալիս կառավարման բոլոր մակարդակներում դիտարկել ՄԻԴԱՍ համակարգի միջոցով հավաքագրված տվյալների ամփոփ հաշվետվությունները:<br>Ցուցիչ 2. Փաստացի կատարողականի շեղումը պայմանագրային ծավալներից 2011թ.-ի մեկ կիսամյակի կտրվածքով ինֆորմատիվ չէ և նպատակահարմար է դիտարկել տարեկան կտրվածքով:<br>Ցուցիչ 3. Ցուցիչի արժեքը հնարավոր չէ հաշվել: Մանսավորապես, ցուցիչի արժեքը հանրավոր կլինի հաշվարկել միայն պետական մասնակցությամբ և պետական պատվեր իրականացնող բուժհաստատությունների շահութաբերության մակարդակը, իսկ մասնավոր բժշկական հաստատությունների շահութաբերության մակարդակը հնարավոր չէ հաշվել, քանի որ դրա համար անհաժեշտ ելակետային տվյլները ՀՀ առողջապահության նախարարություն չեն ներկայացվում: Միաժամանակ նշված տեղեկությունները «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի իմաստով կարող են | ՀՀ առողջապահության նախարարություն |
| | | | Փաստացի կատարողականի շեղման աստիճանը պայմանագրային ծավալներից (տոկոս) | Տվյալները բացակայում են | | |
| | | | Բուժհաստատությունների շահութաբերության մակարդակը իրացման ծավալների նկատմամբ(տոկոս) | Տվյալները բացակայում են | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | համարվել հարկային գաղտնիք:<br>Առաջարկվում է ցուցիչը վերասահմանել այնպես, որ այն վերաբերի միայն պետական մասնակցությամբ բուժհաստատություններին: Միաժամանակ ցուցիչի ձևակերպումից անհրաժեշտ է հանել «իրացման ծավալների նկատմամբ» բառերը:<br>Իրավիճակը ` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան | |
| | 23.2 Հստակեցնել անհետաձգելի բժշկական միջամտություն պահանջող վիճակների և հիվանդությունների ցանկը բացառելով ցանկի երկակիությունը և տարընթերցման հնարավորությունները. | Անհետաձգելի բժշկական միջամտություն պահանջող վիճակների և հիվանդությունների ցանկը վերանայված և հստակեցված է | Անհետաձգելի բժշկական միջամտություն պահանջող վիճակների և հիվանդությունների ցանկը հստակեցված է (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br>Անհետաձգելի բժշկական միջամտություն պահանջող վիճակների և հիվանդությունների ցանկը վերանայված և հստակեցված է` հաստատած է ՀՀ առողջապահության նախարարի 11.02.2011թ. N 161-Ա հրամանով:<br>Ցուցիչ 1. Մեկնաբանությունները բերված են ակնկալվող արդյունքի շրջանակներում: | ՀՀ առողջապահության նախարարություն |
| | 23.3 ՀՀ առողջապահության համակարգում ստեղծել տվյալների միասնական համակարգ | Բուժհաստատությունների 25 տոկոսում ներդրված է բժշկական, վիճակագրական և ֆինանսական տվյալների հաշվառման էլեկտրոնային միասնական համակարգ<br>Բուժհաստատությունների 30 տոկոսի պաշտոնական կայքերում տեղադրված է հաստատված ցանկով պարտադիր տեղեկատվություն | Ստեղծվել է ՀՀ առողջապահության համակարգում տվյալների միասնական բազա (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br>2011 թվականի սկզբից պետական պատվեր իրականացնող բժշկական բոլոր բուժհաստատություններում գործում է ՄԻԴԱՍ 3 էլեկտրոնային տեղեկատվական համակարգը, որը ավելի ամբողջական տվյալներ է պարունակում: Միաժամանակ փորձ է արվել ներդրված համակարգի միջոցով ապահովել բժշկական, վիճակագրական և ֆինանսական տվյալների հաշվառման համակարգի միասնականությունը: Ներդրված է նաև ՄԻԴԱՍ-ինֆո տեղեկատվական համակարգը, որը հնարավորություն է տալիս կառավարման բոլոր մակարդակներում դիտարկել ՄԻԴԱՍ համակարգի միջոցով հավաքագրված տվյալների ամփոփ հաշվետվությունները:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Արդյունք 2. Իրականացված է մասամբ<br>Մի շարք բուժհաստատությունների պաշտոնական ինտերնետային կայքեր համապատասխանեցվել են ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 1529-Ա հրամանի պահանջներին: Միևնույն ժամանակ, պաշտոնական ինտերնետային կայքեր չունեցող բժշկական հաստատություններն ստեղծել են նոր ինտերնետային կայքեր` ապահովելով ՀՀ առողջապահության նախարարի նշված հրամանի պահանջները:<br>Ցուցիչ 1. Առողջապահության համակարգում տվյալների միասնական բազան գործում է ՄԻԴԱՍ 3 էլեկտրոնային ծրագրի ձևով, որը հիմնականում ամբողջությամբ է ապահովում է պետական պատվերի շրջանակներում բժշկական, վիճակագրական և ֆինանսական տվյալների հավաքագրման միասնականությունը: ԱԱՊ մասով այն իրականացվում է ամբողջությամբ, իսկ հիվանդանոցային մասով իրականացվում է միայն պետպատվերի և համավճարի կիրառման շրջանակներում:<br>Ցուցիչ 2. Տվյալները ամփոփման փուլում են:<br>Իրավիճակը ` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան | ՀՀ առողջապահության նախարարություն, |
| | | | Պարտադիր տեղեկա-տվություն պարունակող բուժհաստատություններ ի պաշտոնական կայքերի թվի հարաբերությունը գործող բուժհաստատու-թյունների ընդհանուր թվաքանակին(տոկոս) | Տվյալները բացակայում են | | |
| 24. Ապահովել հիվանդների իրավունքների լիարժեք | 24.1 Լիարժեք կերպով կարգավորել հիվանդների և բուժաշխատողների իրավունքներն ու | Իրականացված են պետական պատվերով հիվանդանոցային բուժում ստացող | Հիվանդների և բուժաշխատողների իրավունքներն ու պարտականություններն | Այո | Արդյունք 1. Իրականացված է մասամբ<br>ՀՀ առողջապահության նախարարի 2011 թվականի ապրիլի 22-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման | ՀՀ առողջապահության |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| իրականացումը | պարտականությունները | հիվանդին իրենց իրավունքների և բուժօգնության ծավալների վերաբերյալ իրազեկման կոնկրետ ծրագրեր. | ամրագրվել են օրնսդրորեն (այո/ոչ) | | չափորոշիչը հաստատելու մասին» թիվ 712-Ա հրամանով հաստատված չափորոշչի «բ» բաժնի 9-րդ կետով նախատեսված է, որ պետական պատվերի շրջանակներում հիվանդանոցային բուժօգնություն իրականացնող հաստատությունը հիվանդի ստացիոնար ընդունվելու ժամանակ հիվանդին/հարազատներին ապահովում է տեղեկատվությամբ անվճար բուժօգնության հիվանդի իրավունքների մասին: Իսկ իրազեկման փաստը վավերացվում է բժշկական փաստաթղթերում հիվանդի կամ ծնողի/հարազատի ստորագրությամբ:<br>ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մանկաբարձակագինեկոլոգիական բուժօգնության կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» թիվ 2075-Ա հրամանի համաձայն ծննդօգնության պետական հավաստագրի հետ միասին բուժհաստատության կողմից հղի կնոջը տրամադրվում է մանրամասն տեղեկատվություն անվճար բուժօգնություն ստանալու իր իրավունքների, ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված չափորոշիչներով սահմանված ծավալների և ծննդօգնության պետական հավաստագրի շրջանառության ընթացակարգի վերաբերյալ:<br>ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի «Երեխայի առողջության պետական հավաստագրի ներդրման գործընթացը ապահովելու մասին» թիվ 2093-Ա հրամանով սահմանվել է ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպության կողմից համապատասխան տեղեկատություն տրամադրելու պարտականությունը, ինչպես նաև տրամադրվող տեղեկատվական թերթիկի բովանդակությունը:<br>Կարևորվում է նաև, որ ՀՀ կառավարության 2010 թվականի հունիս 17-ի թիվ 23 արձանագրային որոշմամբ հավանության են արժանացել բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման օրինակելի պայմանները՝ օրինակելի պայմանգրի ձևով, որի ներդրմամբ ապահովվել է բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ ստացողների իրազեկումը՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավունքների պարտականությունների վերաբերյալ: Համապատասխան պայմանագիր է կնքվում նաև համավճարային կարգով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման համար: Միաժամանակ քննարկումներ են ընթանում բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ ստացող անձանց հասցեական իրազեկման վերաբերյալ:<br><br>Ցուցիչ 1. 1996 թվականի մարտի 4-ին ընդունված «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով արդեն իսկ ամրագրված են հիվանդների և բուժաշխատողների իրավունքներն ու պարտականությունները, սակայն «Առողջապահության մասին» ՀՀ օրենքի նախագծով, որը քննարկվել է պետական շահագրգիռ մարմինների հետ, ավելի հանգամանալից են կարգավորված նշված հարցերը:<br>Ցուցիչ 2. Հավաստագրերի տրամադրման միջոցով պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման իրականացումը ներդրված է միայն ծննդօգնության բնագավառում, որը գնահատվել է որպես դրական փորձ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներդրման արդյունավետությունը զգալի չափով կապված է բյուջետային էական ներդրումների հետ, 2010 թվականին հավաստագրի նոր մեխանիզմ չի ներդրվել, սակայն 2010 թվականի երրորդ եռամսյակից սկսվել են նախապատրաստական աշխատանքները երեխաների բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման ոլորտում հավաստագրերի տրամադրման ուղղությամբ: Նախապատրաստական աշխատանքներն ամբողջ ծավալով | |
| | | | Ներդրվել են ընդհանուր բուժօգնության պետական հավաստագրեր (այո/ոչ) | Ոչ | | |
| | | | Պետական պատվերով հիվանդանոցային բուժում ստացող հիվանդների իրավունքների և բուժօգնության ծավալների մասին տեղեկատվությունը մատչելի և հասնելի է ընդունարանից (այո/ոչ) | Այո | | |
| | | | Սահմանվել են բժշկական օգնության և ծառայությունների որակի գնահատման և վերահսկման չափորոշիչներ (այո/ոչ) | Ոչ | | |
| | | | Բուժաշխատողների իրավունքների խախտման հետ կապված բողոքների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում պետական լիազոր մարմնի կողմից ստացված ու քննարկված բողոքների ընդհանուր թվաքանակին(տոկոս) | Տվյալները բացակայում են | | |
| | | | Հիվանդների իրավունքների խախտման հետ կապված բողոքների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում պետական լիազոր մարմնի կողմից ստացված ու քննարկված բողոքների ընդհանուր թվաքանակին(տոկոս) | Տվյալները բացակայում են | | |
| | | | Անհրաժեշտ ծավալով և տեխնոլոգիաների պահպանմամբ իրականացված բուժօգնության դեպքերի թիվը ընդհանուր դեպքերի նկատմամբ/տոկոս/ | Տվյալները բացակայում են | | |
| | | | Բժշկական արդյունավետության գործակից/բուժման ստանդարտ արդյունքների | Տվյալները բացակայում են | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | հասցված հիվանդության դեպքերի հարաբերությունն է ընդհանուր հիվանդության դեպքերին(տոկոս) | | իրականացված են, և երեխաների բժշկական օգնության ծրագրում 2011 թվականի հունվարի 1-ից սկսվել է հավաստարգերի տրամադրումը:<br>Ցուցիչ 3. ՀՀ առողջապահության նախարարի 2011 թվականի ապրիլի 22-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման չափորոշիչը հաստատելու մասին» թիվ 712-Ա հրամանով հաստատված չափորոշչի «բ» բաժնի 9-րդ կետով նախատեսված է, որ պետական պատվերի շրջանակներում հիվանդանոցային բուժօգնություն իրականացնող հաստատությունը հիվանդի ստացիոնար ընդունվելու ժամանակ հիվանդին/հարազատներին ապահովում է տեղեկատվությամբ անվճար բուժօգնության հիվանդի իրավունքների մասին: Իսկ իրազեկման փաստը վավերացվում է բժշկական փաստաթղթերում հիվանդի կամ ծնողի/հարազատի ստորագրությամբ:<br>Ցուցիչ 4. 2011 թվականի ընթացքում բժշկական օգնության և ծառայությունների որակի գնահատման և վերահսկման չափորոշիչներից ՀՀ առողջապահության նախարարի 2011 թվականի հունիսի 8-ի թիվ 1111-Ա հրամանով հաստատվել է «Արյունաբանական ոլորտի բժշկական ծառայությունների որակական և տեխնիկական չափորոշիչները հաստատելու մասին»: Միևնույն ժամանակ մշակման և քննարկման փուլում են գտնվում բժշկական օգնության և ծառայությունների որակի գնահատման և վերահսկման այլ չափորոշիչներ:<br>Ցուցիչ 5. Տվյալները ամփոփման փուլում են:<br>Ցուցիչ 6. Տվյալները ամփոփման փուլում են:<br>Ցուցիչներ 7-ի, 8-ի և 10-ի արժեքները հնարավոր է հաշվարկել միայն ԱԱՊ բնագավառում, որտեղ ներդրված են համապատասխան ստանդարտները: ՄԻԴԱՍ 3 էլեկտրոնային տեղեկատվական համակարգի տվյալների հիման վրա ցուցիչի արժեքը կարող է հաշվարկվել տարեկան կտրվածքով: Այլ բժշկական ստանդարտների և չափորոշիչների, որոնք հնարավորություն կտան հաշվարկել պահանջվող գործակիցները, ներդրման մասով մեկնաբանությունները բերված են ցուցիչ 4-ի մեկնաբանություններում:<br>Ցուցիչ 9. Բժշկական օգնության և սպասարկման ծառայություններից օգտվողների գոհունակության մակարդակը մատուցված ծառայություններից գնահատվել է 2009 թվականին իրականացված հետազոտությամբ, որն արտացոլվել է «Հայաստանի առողջապահության համակարգի գործունեության գնահատում 2009» զեկույցում: Մասնավորապես գնահատումն իրականացվել է «հարգանք», «հաղորդակցություն», «գաղտնիություն» և «ավտոմատություն» կատեգորիաներով: Մանսավորապես,<br>«Հարգանք» կատեգորիայի շրջանակներում հետազոտությունը ցույցն է տվել, որ Հայաստանում բուժծառայություններից օգտվողների 93%-ը գտնում են, որ բուժաշխատողները հարգալից են եղել իրենց հանդեպ, ֆիզիկական զննումները կատարել են առանձնացված պայմաններում: Նշված ցուցանիշը 2007 թվականին կազմել է 87%:<br>«Հաղորդակցություն» կատեգորիայի շրջանաներում հետազոտությունը ցույցն է տվել, որ Հայաստանում բուժծառայություններից օգտվողների 80%-ը գտնում են, որ բժիշկները բացատրել են իրավիճակը, ախտորոշումն ու բուժման ընթացքը, հնարավորություն ընձեռել իրենց հարցեր տալ և քննարկել հիվին վերաբերող խնդիրներ: Նշված ցուցանիշը 2007 թվականին կազմել է 61%:<br>«Գաղտնիություն» կատեգորիայի շրջանաներում հետազոտությունը ցույցն է տվել, որ Հայաստանում բուժծառայություններից օգտվողների 78%-ը գտնում են, որ իրենք համոզված են եղել, որ հիվանդության պատմությունը պահվել է գաղտնի, հնարավորություն են ունեցել զրուցել բժշկի հետ գաղտնի` առանց այլ անձանց մասնակցության: Նշված ցուցանիշը 2007 թվականին կազմել է 48%:<br>«Ավտոմատություն» կատեգորիայի շրջանաներում հետազոտությունը ցույցն է տվել, որ Հայաստանում բուժծառայություններից օգտվողների 98%-ը գտնում են, | |
| | | | Սոցիալական արդյունավետության գործակից/ըստ հարցումների բուժման արդյունքներից բավարարված պացիենտների թվի հարաբերությունն է ընդհանուր հիվանդության դեպքերի թվաքանակին(տոկոս) | Տվյալները բացակայում են | | |
| | | | Որակի գործակից/Մասնագիտական պահանջների և տեխնոլոգիաների պահպանմամբ բուժում ստացած հիվանդության դեպքերի թվի հարաբերությունն է հիվանդության ընդհանուր դեպքերի թվաքանակին(տոկոս) | Տվյալները բացակայում են | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | որ բժիշկը հասկանալի կերպով բացատրել է բուժման հնարավոր տեսակները, հաշվի է առել հիվանդի կարծիքը բուժօգնության տեսակների ընտրության հարցում: Նշված ցուցանիշը 2007 թվականին կազմել է 96%:<br>Ցուցիչ 10. Առաջարկվում է ցուցիչ 10-ը հանել, քանի որ այն նույնությամբ կրկնում է ցուցիչ 7-ին:<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան | |
| 25. Ապահովել առողջապահության ոլորտում կադրերի մրցույթային ընտրությունը և բուժաշխատողներ ի զբաղեցրած պաշտոններին նրանց համապատասխանությունը | 25.1 Մշակել և ներդնել պետական ու համայնքային բժշկական հաստատություններում բուժանձնակազմի թափուր հաստիքների ընտրության մրցութային համակարգ | Պետական բժշկական հաստատություններում հաստիքացուցակների հաստատման գործընթացի նկատմամբ վերահսկողության ընթացակարգերը սահմանված են | Սահմանվել է բժշկական հաստատություններում բուժանձնակազմի թափուր հաստիքների ընտրության մրցութային կարգ (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված չէ<br>Պետական բժշկական հաստատություններում հաստիքացուցակների հաստատման գործընթացի նկատմամբ վերահսկողության ընթացակարգերը քննարկման փուլում են:<br>Ցուցիչ 1. ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N 22 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Հարյուր տոկոս` պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերությունների բժշկական անձնակազմի ըներության (նշանակման) մրցութային հանձնաժողովի ձևավորման, մրցույթի անցկացման օրինակելի կարգը և այդ ընտրության (նշանակման) հիման վրա բուժաշխատողի հետ կնքվող աշխատանքային պայմանագրի օրինակելի ձևը»<br>Ցուցիչ 2. Առաջարկվում է ցուցիչում «բժշկական հաստատություններում» բառերից առաջ ավելացնել «պետական մասնակցությամբ» բառերը, քանի որ բժշկական հաստատություններում բուժանձնակազմի օպտիմալ թվաքանակի չափորոշիչները կարող են վերաբերել միայն պետական մասնակցությամբ բուժհաստատություններին, իսկ մասնավոր բուժհաստատությունների բուժանձնակազմի օպտիմալ թվաքանակի սահմանման նպատակահարմարության հարցը լրացուցիչ քննարկման կարիք ունի`հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 83,5 հոդվածի պահանջները:<br>Ցուցիչ 3. Պետական բուժաշխատողների նվազագույն աշխատավարձի միասնական դրույքաչափեր սահմանված են ԱԱՊ համակարգի բուժաշխատողների համար` պայմանավորված սպասարկվող բնակչության թվաքանակով: Միաժամակ, միասնական դրույքաչափեր են սահմանված ծննդօգնության և երեխաների բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման պետական հավաստագրերի հիման վրա պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բուժաշխատողների համար:<br>Ցուցիչ 4. Հաշվի առնելով, որ համապատասխան ընթացակարգերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից 2011 թվականի հունիսի 10-ին, դրանք դեռևս ներդրման փուլում են:<br>Ցուցիչ 5. Ըստ «Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք 2010»-ի աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը 2009 թվականին կազմել է 96.019 ՀՀ դրամ /էջ 89/: Տտեղեկագրքի «Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ տնտեսության հատվածների 2009» բաժնի առողջապահության և սոցիալական ծառայությունների մատուցման բնագավառում միջին ամսական անվանական աշխատավարձը կազմում է 71.672 ՀՀ դրամ /էջ 92/:<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան | ՀՀ առողջապահության |
| | | | Սահմանվել է բժշկական հաստատություններում բուժանձնակազմի օպտիմալ թվաքանակի չափորոշիչները (այո/ոչ) | Ոչ | | |
| | | | Սահմանվել են պետական բուժաշխատողների նվազագույն աշխատավարձի միասնական դրույքաչափեր (այո/ոչ) | Ոչ | | |
| | | | Մրցույթային կարգով ընդունված բուժաշխատողների թվաքանակը ընդամենը ընդունվածների նկատմամբ/տոկոս/ | Տվյալները բացակայում են | | |
| | | | Պետական բուժաշխատողների միջին աշխատավարձի հարաբերակցությունը հանրապետական միջինի նկատմամբ ( տոկոս) | Տվյալները բացակայում են | | |
| 26. Կրճատել դեղերի ստվերային շրջանառությունը | 26.1 Օրենսդրորեն կարգավորված է դեղաշրջանառության | Դեղագործական գործունեության լիցենզավորման | Ստեղծվել է դեղաշրջանառության վերահսկման, այդ թվում | Այո | Արդյունք 1. Իրականացված է մասամբ<br>Դեղագործական գործունեության լիցենզավորման համակարգի կատարելագործման հարցերը քննարկման փուլում են: Միաժամանակ ՀՀ | ՀՀ առողջապահության նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| և բարձրացնել դեղաշրջանառության ոլորտի մասնագիտական հսկողության արդյունավետությունը | ոլորտի պետական հսկողությունը | համակարգը կատարելագործված է Դեղերի որակին և հիվանդի առողջությանը սպառնացող մասնագիտական խախտումների համար սահմանված է վարչական և քրեական պատասխանատվություն: | մոնիտորինգի և տվյալների հավաքագրման ու վերլուծության, մասնագիտացված կառույց (այո/ոչ) | | առողջապահության նախարարության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով վարչական պատասխանատվություն է նախատեսվում դեղատոմսով բաց թողնվող դեղերի բաց թողնման կարգը խախտելու և դեղատոմսերի դուրս գրման կարգը խախտելու համար:<br>Ցուցիչ 1. ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 1278-Ն որոշմամաբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2002թ. օգոստոսի 15-ի թիվ 1300-Ն որոշմամբ հաստատված ՀՀ առողջապահության նախարարության աշխատակզմի կառուցվածքում, որի արդյունքում ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղագործական գործունեության կազմակերպման, դեղերով և տեխնոլոգիաներով ապահովման բաժինը վերանվանվել է դեղորայքային քաղաքականության բաժին, որի գործարութների մեջ է մտնում նաև դեղաշրջանառության նկատմամբ վերահսկողության իրականացումը,այդ վերահսկողության քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների մշակումը և ներկայացումը: Միաժամանակ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի «Դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնները Հայաստանի Հանրապետությունում ներդնելու և դեղերի շրջանառության ոլորտում բարեփոխումներ իրականացնելու ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 734-Ն որոշման համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 02.05.2011թ. N 1069-Ա հրամանով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կազմում ստեղծվել է «Պատշաճ արտադրական գործունեության և պատշաճ բաշխման գործունեության (այսուհետ` ՊԱԳ/ՊԲԳ)» փորձագիտական բաժին: Միաժամանակ դեռևս քննարկումներ են ընթանում դեղաշրջանառության վերահսկման, այդ թվում մոնիտորինգի և տվյալների հավաքագրման ու վերլուծության մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ:<br>Ցուցիչ 2. ՀՀ քրեական օրենսգրքի 280-րդ հոդվածով արդեն իսկ պատասխանատվություն է նախատեսված առանց գրանցման կամ հատուկ թույլտվության (լիցենզիա) մասնավոր բժշկական կամ դեղագործական գործունեությամբ զբաղվելու, ինչպես նաևն կեղծ դեղեր պատրաստելու կամ իրացնելու համար: Միևնույն ժամանակ քննարկումներ են ընթանում նշված հոդվածի կատարելագործման ուղղությամբ:<br>Ցուցիչ 3. Ցուցիչի արժեքը հաշվարկվել է ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ առողջապահության նախարարության կողմից դեղատնային կրպակներում իրականացված ստուգումների ընթացքում հայտնաբերված խախտումների արդյունքում նշանակված վարչական տույժերի հիման վրա: Մասնավորապես, ստուգվող դեղատնային կրպակներում բացի չգրանցված դեղերից որոնց համար ևս կիրառվել են պատասխանատվության միջոցներ, հայտնաբերվել են նաև պիտանիության ժամկետն անցած դեղեր: Դեղատների կամ դեղատնային կրպակների կողմից առևտրի համար նախատեսված սրահներում պիտանիության ժամկետն անցած դեղեր պահելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում չգրանցված դեղեր ներմուծելու կամ արտադրելու կամ պահպանելու կամ բաշխելու կամ իրացնելու կամ կիրառելու համար պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 47.3 հոդվածի 3-րդ 5-րդ մասերով: Նշված իրավախախտման համար պատասխանատության միջոցներ կիրառելու իրավասությամբ օժտված են ՀՀ առողջապահության նախարարության մարմինները:<br>Բացի այդ, հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի թիվ 594-Ա որոշման 1-ին կետով սահմանվել է, որ 2009 թվականի հունիսի 1-ից «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և | |
| | | | Դեղերի որակի ստանդարտներին չհամապատասխանող և կեղծված դեղերի արտադրությունը և տարածումը քրեականացվել է (այո/ոչ) | Այո | | |
| | | | դեղերի որակին և հիվանդի առողջությանը սպառնացող մասնագիտական խախտումների համար կիրառված վարչական տույժեր (Յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածի համար`բացարձակ թիվ) | 19 | | |
| | | | դեղերի ստվերային շրջանառության մակարդակը/տոկոս/ | 20% | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված պետական մարմինները, բացառությամբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի, 2008 թվականի արդյունքներով մինչև 70 մլն դրամ շրջանառություն /ներառյալ ԱԱՀ-ն/ ունեցած ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների մոտ ստուգումներ չեն կարող իրականացվել, խախտումներ հայտնաբերելու նպատակով ՀՀ ԱՆ կողմից դեղատներում և դեղատնային կրպակներում համապատասխան ստուգումներ իրականացվել են բացառապես ՀՀ վարչապետի հանձնարարությամբ:<br>Ցուցիչ 4. Ցուցիչի արժեքը հաշվարկվել է ՀՀ աառողջապահության կողմից 2011թ, առաջին կիսամյակում կատարված դիտարկումների և ստացված տեղեկատվության հիման վրա<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան | |
| 27. Ապահովել դեղորայքի պետական գնումների և բաշխման կենտրոնացված գործընթացի թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը | 27.1 Հստակեցնել դեղերի գնումների գործընթացի կարգավորումը | Դեղերի կենտրոնացված գնումների մրցույթում հաղթող կազմակերպությունների կողմից դեղերի մատակարարման պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ իրականացվող վերահսկողության ընթացակարգերը ներդրված են | Առողջապահության ոլորտի պետական բյուջեի հատկացումներում դեղերի պետական գնման համար նախատեսվող ֆինանսական միջոցների տեսակարար կշիռը (տոկոս) | 5.9% | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br>Դեղերի կենտրոնացված գնումների մրցույթում հաղթող կազմակերպությունների կողմից դեղերի մատակարարման պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 168-Ն որոշման հիման վրա: Միաժամանակ ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան ստորաբաժանումների կողմից պարբերաբար իրականացվում են մատակարար կազմակերպությունների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման դիտարկումներ և կետանցներ թույլ տված կազմակերպությունների նկատմամբ կիրառվում են ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով նախատեսված համապատասխան տույժեր և տուգանքներ:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության բաժնի կողմից:<br>Ցուցիչ 1. Դեղերի պետական գնման համար նախատեսվող ֆինանսական միջոցների տեսակարար կշիռը առողջապահության ոլորտին պետական բյուջեի հատկացումներում 2011 թվականին կազմել է`<br>62.461.474.0 ՀՀ դրամ` առողջապահության ոլորտին պետական բյուջեի հատկացումները, 3.687.525.1 ՀՀ դրամ` դեղագործական ապրանքների համար նախատեսված միջոցները:<br>Այսպիսով` առողջապահության ոլորտի պետական բյուջեի հատկացումներում դեղերի պետական գնման համար նախատեսվող ֆինանսական միջոցների տեսակարար կշիռը կազմում է 5,9 տոկոս:<br>Տվյալները հաշվարկվել են «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի հիման վրա:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության աժնի կողմից:<br>Ցուցիչ 2. Տվյալները հաշվարկվել են դիսպանսեր հսկողության վերցված հիվանդների համար կենտրոնացված կարգով «հատուկ նշանակության» դեղորայքի ծավալների և իրական անհրաժեշտ ծավալների համեմատության հիման վրա<br>Ցուցիչ 3. Կատարողական ակտեր (պայմանագրային պարտավորությունների կատարման վերաբերյալ փաստաթղթեր, հանձնման-ընդունման արձանագրություններ) կազմվել են այն կազմակերպությունների հետ, որոնք պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով մատակարարել են նախատեսված ապրանքները: Այն կազմակերպությունների նկատմամբ, որոնք թույլ են տվել ապրանքների մատակարարման կետանց, կիրառվում են կայմանագրով նախատեսված տույժեր և հարկադրանքի այլ միջոցներ: | ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, Պետական գնումների գործակալություն |
| | | | Դիսպանսեր հսկողության վերցված հիվանդների համար կենտրոնացված կարգով <հատուկ նշանակության>դեղորայքի ծավալների և իրական անհրաժեշտ ծավալների հարաբերակցությունը/տոկոս/ | 30% | | |
| | | | Դեղերի կենտրոնացված պետական գնումների մրցույթում հաղթած կազմակերպությունների կողմից ներկայացվել են կատարողական ակտեր(այո/ոչ) | Այո | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան | |
| 28.Ապահովել ամբուլատոր պոլիկլինիկական հաստատություններում անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրման գործընթացի թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը | 28.1 Հստակեցնել Հիմնական դեղերի ցանկում ընդգրկված դեղերի համար պետության կողմից փոխհատուցման համակարգի կարգավորումը և ներդնել համապատասխան ընթացակարգեր | Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի հատկացման կարգը հստակեցված է | Սահմանվել են հիմնական դեղերի ցանկի պարտադիր վերանայման պարբերականությունը (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Իրականացված չէ<br>Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի հատկացման կարգի հստակեցման աշխատանքները գտնվում են քննարկման փուլում, քանի որ անհրաժեշտ փոփոխությունները պայմանավորված են լրացուցիչ ֆինանսական հատկացումներով:<br>Ցուցիչ 1. Հաշվի առնելով, որ ՀՀ պետական բյուջեից ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններին` հիմնական դեղերի ցանկում ընդգրկված դեղերի ձեռք բերման համար նախատեսված գումարների ավելացում տեղի չի ունեցել, իսկ հիմնական դեղերի ցանկի վերանայումը կարող էր առաջացնել լրացուցիչ ծախսեր պետական բյուջեի համար, չափորոշիչների մշակման գործընթացը դե ևս ընթացքի մեջ է:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության բաժնի կողմից:<br>Ցուցիչ 2. Տվյալները ամփոփման փուլում են:<br>Ցուցիչ 3. Դեղորայքի բաշխման հետ կապված բոլոր դիմում բողոքներում նշված փաստական հանգամանքները պարզելու և խախտումները վերացնելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացվել են համապատասխան ուսումնասիրություններ, տրվել անհրաժեշտ հանձնարարականներ և միջոցներ ձեռնարկվել անձանց խախտված իրավունքների վերականգնման ուղղությամբ:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության աժնի կողմից:<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան | ՀՀ առողջապահության նախարարություն, |
| | | | Ամբուլատոր պոլիկլինիկաներում անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունք ունեցող անձանց մերժման դեպքերի թիվը ընդհանուր դեպքերի նկատմամբ/տոկոս/ | Տվյալները բացակայում են | | |
| | | | Դեղորայքի բաշխման հետ կապված դիմում բողոքներին արձագանքման մակարդակը (տոկոս) | 100% | | |
| 29.Ապահովել մարդասիրական օգնության շրջանակներում դեղերի ստացման, պահպանման և բաշխման թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը | 29.1 Հստակեցնել մարդասիրական խողովակներով ներկրվող դեղերի ստացման, պահպանման և բաշխման ընթացակարգերը և ապահովել դրանց թափանցիկությունը | Մարդասիրական օգնության շրջանակներում դեղաշրջանառության վերաբերյալ տեղեկատվական հոսքերի կարգավորման և այդ դեղերի վերաբաշխումը համակարգող ընթացակարգերը ներդրված են | Մարդասիրական օգնության շրջանակներում ստացված դեղատեսակների համապատասխանության աստիճանը պետության կողմից հաստատված հիմնական դեղերի ցանկին (տոկոս) | 40% | Արդյունք 1. Իրականացված է մասամբ<br>Մարդասիրական օգնության շրջանակներում դեղերի ստացման, պահպանման և բաշխման նկատմամբ վերահսկողության ընթացակարգերը կարգավորված են ՀՀ կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 14-ի «Մարդասիրական օգնության կարգով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության անունով ստացվող դեղերի և բժշկական նշանակության ապրանքների պատվերի ձևավորման, ստացման, հաշվառման և բաշխման գործընթացը կանոնակարգելու մասին» թիվ 1432-Ն որոշմամբ: Մշակվել և շրջանառության մեջ է դրվել համապատասխան գործընթացները կարգավորող կարգը հաստատելու վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարի հրամանի նախագիծ:<br>Ցուցիչ 1. 2011 թվականի առաջին կիսամյակի ընթացքում մարդասիրական օգնության շրջանակներում ստացված դեղերի ընդհանուր քանակը համաեատելով ՀՀ առողջապահության նախարարի 16.05.2007թ. թիվ 854-Ն հրամանով հաստատված ՀՀ հիմնական դեղերի ցանկի հետ:<br>Տվյալները հաշվարկվել են ՀՀ ԱՆ շխատակազմի դեղորայքային քաղաքականության բաժնի կողմից:<br>Ցուցիչ 2. Ցուցիչի արժեքը հաշվարկվել է 2011 թվականի առաջին կիսամյակի ընթացքում նը մարդասիրական խողովակով կիրառություն չգտած և դուրս գրման ենթակա դեղորայք չի ստացվել:<br>Տվյալները հաշվարկվել են ՀՀ ԱՆ շխատակազմի դեղորայքային քաղաքականության բաժնի կողմից:<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար | ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով |
| | | | Կիրառություն չգտած և դուրս գրման ենթակա դեղորայքի տոկոսը ընդամենը մարդասիրական խողովակով ստացված դեղորայքի ծավալում (տոկոս) | 0% | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Առաջարկություններ` չկան | |
| 30. Ապահովել ներհիվանդանոցային դեղաշրջանառության թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը | 30.1 Վերանայել բուժհաստատություններում ներհիվանդանոցային դեղաշրջանառությունը կարգավորող ընթացակարգերը: | Հիվանդանոցային բուժհաստատություններում ծախսային առաջնահերթությունների պահպանման նկատմամբ վերահսկողության ընթացակարգերը ներդրված են | Վճարովի սկզբունքով իրականացվող բուժօգնության գնի մեջ պարտադիր կերպով ներառված են դեղորայքային ծախսերը (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Իրականացված է մասամբ<br>Հիվանդանոցային բուժհաստատություններում ծախսային առաջնահերթությունների պահպանման նկատմամբ վերահսկողությանն իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով` այդ հաստատությունների հետ կնքված պայմանագրերի հիման վրա: Միաժամանակ ընթացակարգերի կատարելագործման ուղղությամբ դեռևս ընթանում են քննարկումներ:<br>Հարկ է նկատել, որ ցուցիչը վերաբերում է ոչ միայն պետական այլ նաև մասնավոր բուժհաստատություններին:Սույն արդյունքի շրջանակներում տվյալներ կարող են ներկայացվել միայն պետական մասնակցությամբ բուժհաստատությունների վերաբերյալ, որոնցում հիմնականում պահպանվում են ՀՀ կառավարության կողմից սահմանված առաջնահերթությունները: Առաջնահերթ վճարվում են աշխատավարձերը, կատարվում են հարկային պարտավորությունները, դեղորայքային և այլ ծախսերը: Դեռևս կան վնասով աշխատող առանձին բուժհաստատություններ, որոնց մոտ խախտվում են վերը նշված առաջնահերթությունները: Նախարարությունը ձեռնարկում է միջոցներ (ամենամսյա մոնիտորինգ) վնասով աշխատող հիմնարկների կրճատման ուղղությամբ:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Ցուցիչ 1. Բժշկական օգնություն և սպասարկում իրակացնող կազմակերպություններին առաջարկվել է վճարովի սկզբունքով իրականացվող բուժօգնության գնի մեջ պարտադիր կերպով ներառել դեղորայքային ծախսերը, այժմ իրականացվում են դիտարկումներ` պարզելու համար արդյոք տրված հանձնարարականը կատարվել է: Միաժամանակ կարևորվում է այն հանգամանքը, որ նշված առաջարկի կատարումը պարտադիր բնույթ կրել չի կարող, քանի որ ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի համաձայն` բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները:<br>Ցուցիչ 2. Տվյալները ամփոփման փուլում են:<br>Ցուցիչ 3. Ցուցիչի արժեքը հաշվարկվել է հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում գործող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններից ոչ մեկում դեխաթերապևտիկ կաբինետներ չեն գործում:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակզմի դեղորայքային քաղաքականության բաժնի կողմից:<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան | ՀՀ առողջապահության նախարարություն |
| | | | Հիվանդներին նշանակված և վերջիններիս կողմից ձեռք բերված դեղորայքի ծավալների հարաբերակցությունը(տոկոս) | Տվյալները բացակայում են | | |
| | | | Բժշկական հաստատությունների (որտեղ գործում են դեղաթերապեվտիկ կաբինետներ)տեսակարար կշիռը բուժհաստատությունների ընդհանուր թվաքանակում (տոկոս) | 0% | | |
| 31.Ապահովել դեղերի ոչնչացման գործընթացի օրինականությունը | 31.1 Սահմանել ԱՀԿ-ի երաշխավորություններին համապատասխան ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի դեղերի անվտանգ ոչնչացման կարգ | | Ընդունվել է ՀՀ «Դեղերի մասին օրենքից բխող ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի դեղերի պարտադիր ոչնչացման կարգը (այո/ոչ) | Ոչ | Արդյունք սահմանված չէ<br>Ցուցիչ 1. ՀՀ բնապահպանության նախարարության հետ համատեղ մշակվել է «Օգտագործման համար ոչ պիտանի դեղերի ոչնչացման կարգ», որի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունը տվել է է բացասական կարծիք:<br>Իրավիճակի քննարկման համար ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանի 25.08.2008թ, թիվ 05-2577 հանձնարարականի հիման վրա կազմակերպվել է քննարկում ՀՀ արդարադատության, բնապահպանության և առողջապահության նախարարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկումների արդյունքում որոշվել է, որ ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 14-ի թիվ 03-Ն հրամանով հաստատված «Բժշկական թափոնների | ՀՀ Բնապահպանության նախարարություն<br>ՀՀ Առողջապահության նախարարություն |
| | | | Բուժհաստատություններում կուտակված ժամկետանց և օգտագործման համար ոչ | 0.01% | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | պիտանի դեղորայքի արժեքային հարաբերությունը առկա դեղորայքի պաշարների արժեքին (տոկոս) | | գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» թիվ 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը կարգավորում են նաև օգտագործման համար ոչ պիտանի դեղերի ոչնչացման ընթացակարգերը:<br>Առաջարկվում է քննարկել ցուցիչը վերասահմանելու կամ հանելու հարցը:<br>Ցուցիչ 2. Ցուցիչի արժեքը հաշվարկվել է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից տրամադրված տվյալների հիման վրա:<br>Տվյալները հաշվարկվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության բաժնի կողմից:<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան | |
| 32.Ապահովել շտապ բժշկական օգնության ծրագրի պատշաճ ֆինանսավորումը | 32.1 Առողջապահության բյուջեյով նախատեսել պատշաճ ֆինանսավորում պետական պատվերով շտապ բժշկական օգնության կանչերի համար: | Առողջապահության բյուջեով հատկացվող գումարները շտապ բժշկական օգնության ծառայության կազմակերպման համար ավելացվել են 50 տոկոսով | Պետական պատվերով իրականացվող շտապ բժշկական օգնության կանչերի համար սահմանված գները բարձրացվել են հիսուն տոկոսով(այո/ոչ) | Այո | Արդյունք 1 Իրականացված է ամբողջությամբ<br>2011 թվականի ՀՀ պետական բյուջեում Շտապօգնության ծառայության բարեփոխումների շրջանակներում ծրագիրի բյուջեն ավելացվել է 1.530. 9 հազ. Դրամով կամ աճը 2010թ. համեմատ կազմել է 105%:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Ցուցիչ 1. Շտապօգնության ծառայության գների բարձրացումը 2011 թվականին իրականացվել է լրացուցիչ միջոցների տրամադրման արդյունքում, աճը միջինում կազմում է 80 տոկոս: Պետական պատվերով իրականացվող շտապ բժշկական օգնության կանչերի համար սահմանված գները տատանվում են 5500-ից /ֆելդշերական կանչեր/ մինչև 7700 /բժշկական կանչեր/ ՀՀ դրամի սահմաններում: 2011թ.-ից կիրառվում է նաև դիֆերենցված գին 13150 դրամ, փոքր` մինչև 20000 ազգաբնակչություն ունեցող բնակավայրերի շտապօգնության համար:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Իրավիճակը ` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան | ՀՀ առողջապա-հության նախարարություն,<br><br>Երևանի քաղաքապետարան , ՀՀ մարզպետարաններ |
| 33. Բարձրացնել շտապ բժշկական օգնության համակարգի արդյունավետությունը, թափանցիկությունն ու հաշվետվողականությունը | 33.1 Սահմանել շտապ բժշկական օգնության պետական պատվերի կատարողականի նկատմամբ խիստ վերահսկողություն | Շտապօգնության վճարովի գործունեությունը կարգավորող ընթացակարգերը ներդված են | Շտապ բժշկական օգնության ծրագրով նախատեսված բյուջետային ֆինանսավորման ծավալները ՀՀ պետական բյուջեի առողջապահական ծրագրերի ընդհանուր կազմում (տոկոս) | 4.8% | Արդյունք 1. Իրականացված է մասամբ<br>Շտապօգնության վճարովի գործունեությունը կարգավորող ընթացակարգերը քննարկման և մշակման փուլում են:<br>Ցուցիչ 1. Շտապ բժշկական օգնության ծրագրով նախատեսված բյուջետային ֆինանսավորման ծավալները ՀՀ 2011թ. պետական բյուջեի առողջապահական ծրագրերում կազմում է շուրջ 3.0 մլրդ ՀՀ դրամ, ինչը կազմում է ՀՀ պետական բյուջեի առողջապահական ծրագրերի ընդհանուր ծախսերի (62.5 մլրդ ՀՀ դրամ) 4.8 տոկոսը:<br>Ցուցիչ 2. Էլեկտրոնային տեղեկատվական ՄԻԴԱՍ 3 համակարգում շտապօգնության չարդարացված կանչերի ցուցանիշ չի արտացոլվում, առկա է միայն «կեղծ կանչեր» ցուցանիշը, որը համաձայն հաստատված կարգի չպետք է գերազանցի ընդհանուր կանչերի 2 տոկոսը և 2011թ.-ի առաջին կիսամյակում ընդհանուր կանչերի մեջ կազմել է 0,5 տոկոս:<br>Ցուցիչ 3. Շտապօգնության ծառայություն ունեցող պետական մասնակցությամբ բուժհաստատությունները մասնակցում են շտապօգնության պետական պատվերի տեղադրման գործընթացին, ներկայացնում են հայտ և պատվերը տեղադրվում է նպատակային ձևով, մեկ աղբյուրից գնման ընթացակարգով: Շտապօգնության ծառայություն ունեցող մասնավոր բժշկական բուժհաստատությունները այդ ծառայության գծով պետական պատվերի հայտ չեն ներկայացրել:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից: | ՀՀ առողջապահության նախարարություն, Երևանի քաղաքապետարան , ՀՀ մարզպետարաններ |
| | | | Շտապօգնության չարդարացված կանչերի թիվը ընդամենը կանչերի նկատմամբ (տոկոս) | 0.5% | | |
| | | | Շտապօգնության ծառայություն ունեցող բժշկական հաստատությունները մասնակցում են շտապօգնության պետական պատվերի մրցույթներին (այո/ոչ) | Այո | | |

<table>
<tr><th>Ռազմավարության դրույթներ</th><th>Միջոցառում</th><th>Ակնկալվող արդյունք 2011</th><th>Մոնիտորինգի ցուցիչներ</th><th>Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը</th><th>Մեկնաբանություններ</th><th>Պատասխանատու մարմին</th></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td>Իրավիճակը ` բավարար<br>Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան</td><td></td></tr>
<tr><td rowspan="4">34. Բարձրացնել ամբուլատոր-պոլիկլինիկական բժշակական հաստատությունների գործունեության թափանցիկությունը, հաշվետվողականությունը և օրինականությունը</td><td rowspan="4">34.1 Ապահովել ամբուլատոր – պոլիկլինիկական բուժհաստատության գործունեության արդյունավետությունը</td><td rowspan="4">Առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ)մակարդակում բուժօգնության որակի կառավարման և բարելավման մեթոդները ներդրված են<br><br>Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական ծառայությունների կատարողականի գնահատման հիման վրա ընտանեկան բժշկի և նեղ մասնագետների վարձատրության և խրախուսման մեթոդներն ու ընթացակարգերը ներդրված են</td><td>ԱԱՊ համակարգում ներդրվել են ապացուցողական բժշկության վրա հիմնված կլինիկական ուղեցույցեր և չափորոշիչներ (այո/ոչ)</td><td>Այո</td><td rowspan="4">Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br><br>ԱԱՊ որակի ապահովման գործնական միջոցների փաթեթը վերանայված է, (հաստատվել է 2010 թվականի նոյեմբերի 16 -ի N 1850-Ա հրամանով) Առողջության առաջնային պահպանման ոլորտում բուժօգնության որակի ապահովման գործնական միջոցները փոքր (3-ից պակաս բժիշկ ունեցող) առաջնային բուժօգնության հաստատությունների համար:<br>Սահմանվել է ԱԱՊ որակի համակարգողների հետագա կարգավիճակը և նրանց շարունակական գործունեության ֆինանսավորման պայմանները սահմանվել են ՀՀ ԱՆ 27.12.2010թ . N2131 –Ա հրամանով:<br><br>Արդյունք 2. Իրականացված է ամբողջությամբ<br>ՀՀ առողջապահության նախարարի 2011 թվականի մայիսի 10-ի թիվ 859-Ա հրամանով հաստատվել է Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական ծառայությունների կատարողականի գնահատման հիման վրա ԱԱՊ ծառայություններ իրականացնողների ֆինանսավորման և վարձատրության կարգը:<br>Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական ծառայությունների կատարողականի գնահատման հիման վրա ընտանեկան բժիշկների, թերապևտների և մանկաբույժների և նրանց բուժքույրերի խրախուսական վարձատրության մեթոդներն ու ընթացակարգերը ներդրված են:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Ցուցիչ 1.<br>09.12.2010 թվականի 1993 –Ա հրամանով 2011 թվականի համար հաստատվել և ներդրվել են ապացուցողական բժշկության վրա հիմնված կլինիկական ուղեցույցեր և չափորոշիչներ/<br>ԱԱՊ բժիշկների համար`<br>- Չափահաս անձանց սննդակարգի,<br>- Գերճնշմամբ հիվանդների վարման,<br>- Կրծքավանդակի ցավի գանգատներով /սրտամկանի ինֆարկտ/ հիվանդների վարման,<br>- Երկրորդ տիպի շաքարային դիաբետով հիվանդների վարման,<br>- ԱԱՊ բժշկի կողմից ինսուլտի կանխարգելման և վաղ ախտորոշման ուղեցույց,<br>- ԱԱՊ բժշկի կողմից թոքի քաղցկեղի վաղ հայտնաբերման ուղեցույց,<br>- Կանխարգելիչ այցի կազմակերպման ուղեցույց,<br>- Կրծքագեղձի քաղցկեղի վաղ հայտնաբերման ուղեցույց,<br><br>Շտապօգնության ծառայության համար /այդ թվում շտապօգնության ծառայություն իրականացնող ԱԱՊ բժիշկների համար/ ՀՀ առողջապահության նախարարի 17.03.2011թ. թիվ 427-Ա հրամանով հաստատվել են հետևյալ ուղեցույցներն ու չափորոշիչները`<br>- Շտապ օգնության բժիշկների գործունեությունը առավել հաճախ հանդիպող ակնաբանական ախտահարումներ և ախտանիշներ.<br>- Զարկերակային գերճնշում` հիպերտոնիկ տագնապ,<br>- Շտապ Օգնության բժշկի կողմից կրծքավանդակի ցավի գանգատներով հիվանդների վարման ընթացակարգ,<br>- Ցնցումների նախահիվանդանոցային անհետաձգելի բուժօգնություն,<br>- Տենդային /ֆեբրիլ/ ցնցումներ,<br>- Անհետաձգելի բուժօգնության կազմակերպումը օձի և կարիճի խայթոցի</td><td rowspan="4">ՀՀ առողջապահության նախարարություն</td></tr>
<tr><td>ԱԱՊ համակարգում ընտանեկան բժշկի և նեղ մասնագետների աշխատավարձն ու խրախուսման ֆինանսավորումը իրականացվում է մատուցած ծառայությունների որակի և բուժման արդյունքի գնահատման հիման վրա (այո/ոչ)</td><td>Այո</td></tr>
<tr><td>Պոլիկլինիկաներից, ստացիոնար բժշկական օգնություն ստանալու համար, հիվանդների ուղեգրվման դեպքերի հարաբերակցությունը ընդհանուր դեպքերի նկատմամբ (տոկոս)</td><td>18%</td></tr>
<tr><td>ԱԱՊ համակարգում նիրաժեշտ ծավալով և համապատասխան տեխնոլոգիաների պահպանմամբ իրականացված բուժօգնության դեպքերի հարաբերությունը ամբուլատոր պոլիկլինիկական ծառայությունների ընդհանուր դեպքերի թվին (տոկոս)</td><td>Տվյալները բացակայում են</td></tr>
</table>

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | դեպքում,<br>- Ինսուլտ,<br>- Շտապօգնության միջոցով հիվանդի տեղափոխումը,<br>- Վնասվածքներով տուժածների նախահիվանդանոցային բուժօգնության,<br>- Անհետաձգելի բուժօգնությունը սուր թունավորումների ժամանակ,<br>- Անհետաձգելի բուժօգնությունը որովայնի ցավի համախտանիշի դեպքում,<br>- Անհետաձգելի բուժօգնությունը սուր՝ալերգիկ ռեակցիաների ժամանակ<br>- Դիաբետիկ կոմայի ժամանակ անհետաձգելի բուժօգնության ուղեցույցը<br>- Բազմակի տրավմաների ժամանակ անհետաձգելի բուժօգնությունը<br>- Վերակենդանացման միջոցառումները/հանկարծամահության, շնչառության և սրտի կանգի դեպքում/:<br><br>Ցուցիչ 2. 2010 թվականի հունվարից ներդրվել է ընտանեկան բժշկի, տեղամասային թերապևտի, մանկաբույժի աշխատանքի ֆինանսավորման և վարձատրման խրախուսական մեթոդը, ըստ որի համաձայն ՀՀ ԱՆ կողմից հաստատված ցուցանիշների տարվա ընթացքում ներկայացվել են մատուցված ծառայությունները բնութագրող հաշվետվություններ՝ ելնելով սահմանված կլինիկական ուղեցույցերի և չափորոշիչների պահանջներից: Աշխատանքների փաստացի գնահատումը կատարվել է 2011թ. առաջին կիսամյակի ընթացքում, 2010թ.-ի տարեկան արդյունքները ամփոփելուց հետո: Նշված հարցը կանոնակարգված է ՀՀ առողջապահության նախարարի 30.11.2009թ. թիվ 1845-Ա, ՀՀ առողջապահության նախարարի 10.05.2011թ. N859-Ա հրամաններով:<br>Անհրաժեշտ է հստակեցնել Ցուցիչ 2-ի պահանջը և պոլիկլինիկայի ուղեգրումների թիվը դիտարկել ոչ թե ընդհանուր դեպքերի նկատմամբ, այլ այն ծրագրերում, որտեղ հիմնականում պարտադիր է պոլիկլինիկայի բժիշկի ուղեգիրը: Մասնավորապես ուղեգիր պարտադիր չէ անհետաձգելի դեպքերում, ինֆեկցիոն դեպքերում, շտապօգնության ծառայությամբ հոսպիտալացված դեպքերում և այլն: Այս պայմաններում ցուցիչ միշտ կլինի ցածր թվերի վրա:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Ցուցիչ 3. ՀՀ տարածքում գործող պոլիկլինիկական հաստատություններից ստացիոնար բժշկական օգնություն ստանալու համար հիվանդների ուղեգրման դեպքերի թվի հարաբերակցությունը ստացիոնար ընդհանուր դեպքերի թվի նկատմամբ կազմում է 18% 2011թ.-ի հինգ ամիսների արդյունքներով:<br>Առաջարկվում է Ցուցիչ 3-ը դիտարկել սոցիալապես անապահով և հատուկ խմբերի բուժօգնության ծրագրում և երեխաների բուժօգնության ծրագրում, երկու դեպքում էլ հստակեցնելով այն դեպքերը, երբ ուղեգրի անհրաժեշտություն չկա կամ այն տեխնիկապես հնարավոր չի վերցնել /օր.՝ շաբաթ կամ կիրակի օրը կամ աշխատաժամից դուրս և այլն/:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից:<br>Ցուցիչ 4. Տվյալները հնարավոր է ամփոփել միայն տարեկան կտրվածքով:<br>Իրավիճակը ՝ բավարար<br>Առաջընթացը՝ բավարար<br>Առաջարկություններ՝չկան | |
| 35. Բարձրացնել հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության գործունեության թափանցիկություն | 35.1 Բարձրացնել հիգիենիկ և հակահամաճարակային ոլորտում վերահսկողության արդյունավետությունը | Հանրային առողջության անվտանգության բնագավառում գործունեություն իրականացնող | Հանրային առողջության անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքը ընդունվել է: | Ոչ | Արդյունք 1. Իրականացված է մասամբ<br>Հանրային առողջության անվտանգության բնագավառում գործունեություն իրականացնող սուբյեկտներում աշխատողների առողջական վիճակի պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննության պատշաճ մակարդակով կատարման նկատմամբ իրականացվող վերահսկողության թափանցիկությունն ապահովող ընթացակարգերը մշակման փուլում են: | ՀՀ առողջապահության նախարարություն |
| | | | Հանրային առողջության անվտանգության | Ոչ | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011 | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| ը, հաշվետվողականությունը | | սուբյեկտներում աշխատողների առողջական վիճակի պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննության պատշաճ մակարդակով կատարման նկատմամբ իրականացվող վերահսկողության թափանցիկությունն ապահովող ընթացակարգերը մշակված են « ՀՀ հանրային առողջության անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքից բխող բնակչության առողջության անվտանգության ապահովման պահանջների իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը սահմանված են | ապահովման մասին ՀՀ օրենքի պահանջների կիրարկումն ապահովող ընթացակարգերը սահմանված են (այո/ոչ): | | Արդյունք 2. Իրականացված չէ<br>«ՀՀ հանրային առողջության անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքից բխող բնակչության առողջության անվտանգության ապահովման պահանջների իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը կարող են սահմանվել միայն օրենքի ընդունումից հետո:<br>Ցուցիչ 1. Ցուցիչը կստանա իր արժեքը միայն Արդյունքի 2-ի իրականացունից հետո:<br>Ցուցիչ 2. Ցուցիչի արժեքը հնարավոր կլինի հաշվարկել «ՀՀ հանրային առողջության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո:<br>Ցուցիչ 3. Չնայած համակարգում կիրառվող հաշվետվության նոր ձևերի և հաշվառման ձևաթղթերի հիմնական մասի մշակումը և ներդրումը կարող է իրականացվել «ՀՀ հանրային առողջության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո, այնուամենանիվ հաշվետվության որոշ նոր ձևեր և հաշվառման ձևաթղթեր գտնվում են մշակման փուլում:<br>Ցուցիչ 4. Նորմատիվ իրավական ակտերի մշակման գործընթացը շարունակական բնույթ է կրում է, յուրաքանչյուր տարի սանիտարական օրենսդրության դաշտը համալրվում է համապատասխան նորմատիվ փաստաթղթերով, և հնարավոր չէ սպառիչ կերպով սահմանել մշակման ենթակա բոլոր նորմատիվ իրավական ակտերի ցանկը:<br>Առաջարկվում է ցուցիչը վերասահմանել այնպես, որ հնարավոր լինի այն գնահատել:<br>Ցուցիչ 5. Ցուցիչի արժեքը հնարավոր չէ հստակ հաշվել, քանի որ պարզ չէ, թե որ ստանդարտներին համապատասխանության տեսանկյունից պետք է խմբավորել իրականացված հետազոտությունները: Միաժամանակ, հարկ է նշել, որ իրականացված լաբորատոր հետազոտությունների ընդհանուր թվաքանակում ժամանակակից տեխնոլոգիաների և միջազգային հեղինակավոր կառույցների երաշխավորությունների կիրառմամբ իրականացված լաբորատոր հետազոտությունները կազմում են մատ 40 տոկոս:<br>Ցուցիչ 6. Ցուցիչի արժեքը ներկայումս հնարավոր չէ գնահատել, քանկի որ ի կատարումն ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի 594-Ն որոշման՝ 2010 թվականին 2008 թվականի արդյունքներով մինչև 70 մլն դրամ շրջանառություն (ներառյալ ավելացված արժեքի հարկը) ունեցած ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների մոտ տեսչությունը ստուգումներ չի իրականացնում: Այդ պատճառով ՀՀ կառավարության սահմանված կարգով պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննությունների ենթակա անձանց վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարությունը ամփոփ և ճշտված տեղեկատվություն չունի: Վերոգրյալ հարցի լուծում կարող էր դիտարկվել այդ տեղեկատվության ստացումը տնտեսավարող սուբյեկտներից՝ գրավոր հարցման միջոցով: ՙՀարկային ծառայության մասին՚ ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն տնտեսվարող սուբյեկտների աշխատողների թիվը համարվում է հարկային գաղտնիք , որպիսի տեղեկություններ տնտեսավարող սոըբյեկտներից պահանջելն անընդունելի է՝ համաձայն ՀՀ վարչապետի 2010 թվականի ապրիլի 22-ի թիվ 02/23.4/4524-10 հանձնարարականի<br>Ներկայումս մշակվել է պարբերական բժշկական զննություն անցած աշխատողների նոր ցանկ և իրականացվում են բժշկական զննության ենթակա քանակակազմի վերաբերյալ տվյալների հավաքագրման մեխանիզմի մշակման աշխատանքներ:<br>Տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կողմից:<br>Իրավիճակը՝ բավարար | |
| | | | Մշակված և ներդրված են համակարգում կիրառվող հաշվետվության նոր ձևերը և հաշվառման ձևաթղթերը: | Ոչ | | |
| | | | Սահմանված կարգով հաստատված նորմատիվ իրավական փաստաթղթերի տեսակարար կշիռը մշակման ենթակա նորմատիվ իրավական փաստաթղթերի ընդհանուր թվաքանակում /տոկոս/: | Տվյալները բացակայում են | | |
| | | | Ստանդարտացված լաբորատոր հետազոտությունների տեսակարար կշիռը լաբորատոր հետազոտությունների ընդհանուր թվաքանակում /տոկոս/: | Տվյալները բացակայում են | | |
| | | | Պարբերական բժշկական զննություն անցած աշխատողների մասնաբաժինը ենթակա քանակակազմի մեջ /տոկոս/ | Տվյալները բացակայում են | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011** | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Առաջընթացը` բավարար<br>Առաջարկություններ` չկան | |

### 3.7 Դատական համակարգ

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 36. Ընդլայնել վեճերի լուծման այլընտրանքային միջոցների կիրառումը | 36.1 Հստակեցնել ընտանեկան, աշխատանքային վեճերով արբիտրաժի կիրառման օրենսդրական շրջանակները | Ընտանեկան և աշխատանքային վեճերի հարցերով արբիտրների ու դատավորների վերապատրաստման դասընթացներ | Արբիտրաժային ընթացակարգով լուծված գործերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում դատական գործերի ընդհանուր թվաքանակին | Տվյալներ չկան | Արդյունք 1. Կատարված չէ:<br>Գտնում ենք, որ ընտանեկան, աշխատանքային վեճերով արբիտրաժի ինստիտուտի ներդրման հետ կապված օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը չկա, քանի որ ելնելով ընտանեկան և աշխատանքային վեճերի առանձնահատկություններից (ալիմենտային պարտավորություններ. ամուսնական պայմանագրից բխող վեճեր, երեխաների դաստիրակության հետ կապված վեճեր, ծնողական պարտականություններից բխող վեճեր, կոլեկտիվ պայմանագրի հետ կապված վեճեր և այլն) դրանք կարող են քննության առնվել և լուծվել միայն դատական կարգով: Հետևաբար, ընտանեկան և աշխատանքային վեճերի հարցերով արբիտրների ու դատավորների վերապատրաստման դասընթացներ չեն իրականացվում:<br><br>Ցուցիչ 1. Ցուցիչի հաշվարկի համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման մեխանիզմներ չկան: Այդպիսի մեխանիզմի ստեղծումն իրատեսական չէ, քանի որ արբիտրաժային վեճերի քանակի հաշվառում իրականացնել հնարավոր չէ:<br><br>Ցուցիչ 2. Ցուցիչի հաշվարկը հնարավոր չէ, քանի որ այն հիմնված է Ցուցիչ 1-ի վրա:<br><br>Առաջարկվում է միջոցառումների ցանկից հանել 36-րդ կետը: | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ դատական դեպարտամենտ |
| | | | Արբիտրաժային կարգով վեճերի լուծման աճ | Տվյալներ չկան | | |
| 37.Բարելավել դատավորի գործունեության նյութական երաշխիքները՝ միաժամանակ խստացնելով դատական իշխանություն իրականացնելիս թույլ տված խախտումների համար պատասխանատվությունը | 37.1 Միջոցներ ձեռնարկել ընդհանուր իրավասության դատարանների դատավորների աշխատավարձի դրույքաչափի բարձրացման ուղղությամբ | Ներդնել դատավորների աշխատավարձի վերահաշվարկման և դատավորի աշխատավարձի համարժեք չափ ապահովելու հնարավորություն տվող համակարգ | Դատական համակարգում աշխատողների միջին աշխատավարձ, տոկոս՝ մասնավոր իրավաբանական ընկերություններում աշխատողների միջին աշխատավարձի նկատմամբ (ԱՀՌԾ Սոցիալական և քաղաքացիական մեկուսացվածություն և անհավասարություն. մոնիտորինգի ցուցանիշներ e1.2 ցուցանիշ) | Տվյալներ չկան: | Արդյունք 1. Կատարված չէ:<br>Ընդհանուր իրավասության դատարանների դատավորների աշխատավարձի դրույքաչափի բարձրացում հնարավոր է նախատեսել Հանրապետությունում մյուս բոլոր մարմիններում աշխատավարձի բարձրացմանն հետ զուգահեռ:<br><br>Ցուցիչ 1. Մասնավոր իրավաբանական ընկերություններում աշխատողների միջին աշխատավարձի վերաբերյալ տվյալները չեն հավաքագրվում պետական մարմինների կողմից: | ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ դատական դեպարտամենտ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 37.3 Խստացնել արդարադատության իրականացմանը խոչընդոտելու նպատակով դատարանի գործունեության ցանկացած ձևով միջամտելու համար քրեական պատասխանատվությունը | Դատական իշխանության նկատմամբ հասարակական վստահության գնահատական | Մշակվել է ՀՀ քրեական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ ի նախագիծ՝ դատավորի կողմից կաշառք ստանալու, շահադիտական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատական ակտ կայացնելու, արդարադատության իրականացմանը ցանկացած ձևով միջամտելու համար (այո/ոչ) | այո | Արդյունք 1: Կատարվել է մասնակի:<br>Ռõëá õÙÝ³ ëÇñí »É¿ ÙÇç³ ½³ ÛÇÝ÷ áñÓÁ, որի հիման վրա մշակվել են «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքների ն³ խ· ծերը: Վերոգրյալ նախգծերը ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվել են 2010 թվականի դեկտեմբերի 22-ին (ՀՕ-9, ՀՕ-10):<br>Ինչ վերաբերվում է 2011թ. համար նշված միջոցառման արդյունքին «դատական իշխանության նկատմամբ հասարակական վստահության գնահատական», ապա հստակ ձևակերպված չեն դրան հասնելու մեխանիզմներն ու գնահատման չափարոշիչները:<br><br>Ցուցիչ 1-ի արժեքը պայմանավորված է նրանով, որ համապատասխան իրավական ակտերն արդեն ընդունված են:<br><br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ դատական դեպարտամենտ |
| 38. Ապահովել դատավորների շահերի բախման, եկամուտների և գույքի հայտարարագրման թափանցիկությունը և վերահսկելիությունը | 38.1 Բարձրացնել ԴՆԽ էթիկայի հանձնաժողովի դերը դատավորների ֆինանսական միջոցների թափանցիկության ապահովման գործում, այդ թվում՝ սահմանել քաղաքացիների և ֆիզիկական անձանց հաղորդումների հիման վրա էթիկայի հանձնաժողովի կողմից դատավորների ֆինանսական թափանցիկության հարցեր քննարկելու կարգն ու սահմանել համապատասխան ընթացակարգեր | Դատավորների շահերի բախման համակարգի ներդրում և համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախագծեր | Դատավորների գույքի և եկամուտների, ինչպես նաև շահերի հայտարարագրման հետ կապված ԴՆԽ էթիկայի հանձնաժողովի կողմից քննարկված դեպքերի քանակական հարաբերությունը նույն ժամանակահատվածում ԴՆԽ էթիկայի հանձնաժողովի կողմից քննարկված գործերի ընդհանուր թվին | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն:<br><br>՝Հանրային ծառայության մասին՝ ՀՀ օրենքը կարգավորում է դատավորների շահերի բախման ինստիտուտը: | ՀՀ դատական դեպարտամենտ ՀՀ արդարադատության նախարարություն |
| 39. Բարելավել դատավորների թեկնածուների | 39.1Միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխան | ՀՀ Դատական դպրոցում ուսուցման, այդ թվում՝ դատարաններում | Միջազգային փորձն ուսումնասիրվել է | Այո | Արդյունք 1. Իրականացվել է մասնակի:<br><ՀՀ արդարադատության ակադեմիայի մասին » ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է երկարացնել թեկնածությունների ուսուցման ժամկետը՝ 6 ամսվա | ՀՀ արդարադատության |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| նախնական ուսուցման և դատավորների վերապատրաստման գործընթացը | երկարաձգել ՀՀ Դատական դպրոցում ուսուցման, այդ թվում` դատարաններում փորձաշրջան անցնելու ժամկետը: | փորձաշրջան անցնելու ժամկետը երկարաձգվել է | և մշակվել է ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ ի նախագիծ (այո/ոչ) | | ժամկետի փոխարեն սահմանելով 1 տարի ժամկետ դեռևս չի ընդունվել, այն գտնվում է լրամշակման փուլում:<br>Ցուցիչ 1-ի արժեքի հիմքը` միջազգային փորձի հիման վրա կատարվել են համապատասխան ուսումնասիրություններ և մշակվել համապատասխան փոփոխությունների նախագիծ: | նախարարություն ՀՀ դատական դեպարտամենտ |
| | 39.2 Օրենսդրորեն կարգավորել դատավորի թեկնածու հանդիսացող դատախազների, փաստաբանների և քննիչների դատական դպրոցում անհատական վերապատրաստման դասընթացի նվազագույն տևողությունը և սահմանվել են դասընթացին ներկայացվող պահանջները | ՀՀ Դատական դպրոցում վերապատրաստման հաստատված դասընթաց, վերանայված պահանջներ | Դատավորի թեկնածու հանդիսացող դատախազների, փաստաբանների և քննիչների անհատական վերապատրաստման դասընթացի նվազագույն տևողությունը և պահանջները կարգավորված են (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Կատարվել է մասնակի:<br><ՀՀ արդարադատության ակադեմիայի մասին » ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է երկարացնել թեկնածությունների վերապատրաստման ժամկետը, դեռևս չի ընդունվել, այն գտնվում է լրամշակման փուլում:<br><br>Ցուցիչ 1-ի արժեքի հիմքը` միջազգային փորձի հիման վրա կատարվել են համապատասխան ուսումնասիրություններ և մշակվել համապատասխան փոփոխությունների նախագիծ: Ցուցիչ 1-ի արժեքի հիմքը այն է, որ նշված իրավական ակտերը դեռևս ընդունված չեն : | ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ դատական դեպարտամենտ ՀՀ դատական դպրոց |
| | 39.3 ՀՀ ԴՆԽ կողմից հաստատվող վերապատրաստման ուղենիշների շարքում ներառել կոռուպցիայի կանխարգելմանը և դրա դեմ պայքարին, ինչպես նաև դատավորի վարքագծի կանոններին վերաբերող ուղղություններ | Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի, ինչպես նաև դատավորի վարքագծի կանոններին վերաբերող թեմայով իրականացված վերապատրաստման դասընթացներ | Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի, ինչպես նաև դատավորի վարքագծի կանոնները թեմայով վերապատրաստված դատավորների թիվը դատավորների ընդհանուր թվաքանակում | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն:<br><br>ՀՀ Դատարանների նախագահների խորհրդի ուսումնական հարցերի հանձնաժողովի 2010թ. Հոկտեմբերի 15-ի որոշմամբ հաստատվել են Դատավորների, դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց 2011թ. վերապատրաստման հիմնական ուղենիշները, որի հիման վրա, և ղեկավարվելով ՀՀ դատական օրենսգրքի 178-րդ հոդվածով, ՀՀ դատական դպրոցի կառավարման խորհուրդը հաստատել է Դատավորների, դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց 2011թ. վերապատրաստման ծրագիրը: Ծրագրում ներառվել են կոռուպցիայի կանխարգելմանը և դրա դեմ պայքարին, ինչպես նաև դատավորի վարքագծի կանոններին վերաբերող ուղղություններ, որոնք ներառում են նաև միջազգային փորձը:<br><br>Ցուցիչ 1. Համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 193-րդ հոդվածի` դատավորները յուրաքանչյուր տարի պետք է անցնեն պարտադիր վերապատրաստում` ոչ պակաս, քան տարեկան 80 և ոչ ավելի, քան 120 ակադեմիական ժամ ընդհանուր տևողությամբ:<br>Դատավորների ընդհանուր քանակն է` 220:<br>2011թ. առաջին կիսամյակի ընթացքում 71 դատավորներ վերապատրաստվել են դատավորի վարքագծի կանոնները թեմայով: ՀՀ ԴՆԽ վերոնշյալ որոշմամբ սահմանված մյուս թեմաներով վերապատրաստումը բոլոր դատավորների համար նախատեսվում է իրականացնել 2011 թվականի երկրորդ կիսամյակում:<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար | ՀՀ դատական դեպարտամենտ, ՀՀ դատական դպրոց |

### 3.8 Քրեակատարողական ծառայություն

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 40. Կատարելագործել քրեակատարողական ծառայության գործառույթների իրականացման նկատմամբ հասարակական և գերատեսչական վերահսկողության մեխանիզմները | 40.2 Հասարակական դիտորդների խմբի հաշվետվությունները և դրանց վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարի մեկնաբանությունները հրապարակել ՀՀ արդարադատության պաշտոնական կայքում | Դիտորդական խմբի հաշվետվություն Քրեակատարողական ծառայության հասարակական դիտորդների խմբի հաշվետվությունները և դրանց վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարի մեկնաբանությունները հասանելի են ՀՀ արդարադատության պաշտոնական կայքի միջոցով | Դիտորդական խմբի հաշվետվություն<br>Հասարակական դիտորդների խմբի հաշվետվություններ ը և դրա վերաբերյալ նախարարության մեկնաբանություննե րը տեղադրված են ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>Համաձայն ՀՀ արդարադատության նախարարի 2009 թվականի փետրվարի 5-ի 20-Ն հրամանի «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողության իրականացման կարգը և հասարակական դիտորդների խմբի կազմը սահմանելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի հրամանի 13-րդ կետում կատարվել է լրացում, որով նախատեսվել է 2005 թվականի նոյեմբերի 18-ի թիվ ՔՀ-66-Ն հրաման դիտորդների խմբի հաշվետվությունները և դրանց վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարի մեկնաբանությունները հրապարակել ՀՀ արդարադատության պաշտոնական կայքում:<br>Հասարակական դիտորդների կողմից համապատասխան հաշվետվություններ ներկայացնելու դեպքում, դրանք ՀՀ արդարադատության նախարարության մեկնաբանությունների հետ մեկտեղ կտեղադրվեն ՀՀ արդարադատության նախարարության ինտերնետային կայքում:<br>Ցուցիչ 1-ի  հիմքը այն է, որ հասարակական դիտորդների հաշվետվությունները տեղադրված են ՀՀ ԱՆ ինտերնետային կայքում: | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | 40.3 Հստակեցնել ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողության վարչության գործառույթները և սահմանել գերատեսչական վերահսկողության ընթացակարգեր | | ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողության վարչության կողմից իրականացրած գերատեսչական ստուգումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատված ում մասնակցային մոնիտորինգի արդյունքների հրապարակումների ընդհանուր թվաքանակին | 100% | Արդյունք նախատեսված չէ | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | 40.4 Ներդնել քրեակատարողական ծառայության գործունեության արդյունավետությունը գնահատելու համար չափորոշիչներ | Քրեակատարողական ծառայության՝ ըստ բնագավառների կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգերի արդյունավետությունը գնահատված է | Մասնակցային մոնիտորինգի հաճախականության հարաբերությունը նույն ժամանակահատված ում քրեակատարողակա ն ծառայության հասարակական դիտորդների խմբի հրապարակված հաշվետվություններ | 100% | Արդյունք 1. Կատարված է մասնակի:<br>ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի 14-ի 431-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության կանոնադրությունը:<br><br>Ցուցիչ 1-ի արժեքը տրամադրվել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության կողմից:<br><br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | ՀՀ արդարադատության նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ի ընդհանուր թվաքանակին | | | |
| 42.Խրախուսել որակյալ կադրերի ներգրավվածությունը քրեակատարողական ծառայությունում | 42.2 Ներդնել քրեակատարողական ծառայության պաշտոն զբաղեցնելու որակավորման օբյեկտիվ չափանիշներ | | Քրեակատարողական ծառայության պաշտոնի անձնագրերը ներդրվել են (այո/ոչ) | Ոչ | Արդյունք նախատեսված չէ | ՌԴ արդարադատության նախարարություն |
| | 42.3 Վերանայել և կատարելագործել քրեակատարողական ծառայողների վերապատրաստման ծրագրերը | Քրեակատարողական ծառայողների վերապատրաստման դասընթացներ կատարելագործված ծրագրերով` ըստ սահմանված ժամանակացույցի | | | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>ՀՀ ԱՆ իրավաբանական ինստիտուտում քրեակատարողական ծառայողների վերապատրաստումներն անց են կացվում ըստ ՀՀ արդարադատության նախարարի 2010թ. դեկտեմբերի 17-ի թիվ 239-Ա հաստատված հրամանով: | ՌԴ արդարադատության նախարարություն, |
| 43.Բացառել քրեակատարողական ծառայություն իրականացնելիս քրեակատարողական ծառայողի և պատիժ կրող անձանց սերտաճման հնարավորությունները | 43.1 Սահմանել քրեակատարողական ծառայողին այլ պաշտոնի փոխադրելու իմպերատիվ դեպքեր | | Օրենսդրորեն սահմանվել են քրեակատարողական ծառայողին այլ պաշտոնի փոխադրելու իմպերատիվ դեպքերը (այո/ոչ) | այո | Արդյունք նախատեսված չէ | ՌԴ արդարադատության նախարարություն |

### 3.9 Իրավաբանական անձանց պետական գրանցում

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 44.Պարզեցնել իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացը | 44.1 Հաստատել առնտրային իրավաբանական անձանց պետական գրանցման համար պահանջվող փաստաթղթերի նմուշային ձևեր և ապահովել դրանց մատչելիությունը ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքի միջոցով | ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքի միջոցով առնտրային իրավաբանական անձանց պետական գրանցման համար պահանջվող փաստաթղթերի նմուշային ձևերը ստանալու և լրացնելու համակարգի փորձարկում | Պետական ռեգիստրի գործակալության կողմից մատուցվող ծառայություններից էլեկտրոնային եղանակներով օգտվողների թիվը | 490 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>Պահանջվող փաստաթղթերի նմուշային ձևերը հաստատվել է ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2011 թ. թիվ 29 հրամանով և տեղադրվել է պետ. ռեգիստրի ինտերնետային կայքում :<br><br>Ցուցիչի 1-ի արժեքը տրվել է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի գործակալության կողմից: 2011. հունվարից-հուլիս ընկած ժամանակահատվածում կատարվել է իրավաբանական անձանց 490 էլ. գրանցում: | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | 44.2 Ներդնել իրավաբանական անձանց պետական գրացման ժամանակ նրանց քրեական անցյալի վերաբերյալ տեղեկությունների ստուգման մեխանիզմ | Իրավաբանական անձանց պետական գրանցման ժամանակ նրանց քրեական անցյալի վերաբերյալ տեղեկությունների հայտարարագրման համակարգի ներդումն ապահովող տեխնիկական աշխատանքների կազմակերպում | ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված առանձին հանցագործություններ ի համար դատվածություն ունենալու հիմքով գրանցման մերժումների հարաբերությունը գրանցված իրավաբանական անձանց թվին: | 0/1360 | Արդյունք 1. Կատարվել է մասնակի:<br><Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին> ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին> ՀՀ օրենքը 2010թ. մայիսի 20-ին ընդունվել է ՀՀ ԱԺ կողմից: Այն պետական գրանցման մերժման հիմք է նախատեսում նաև նոր գրանցվող (ստեղծվող) առևտրային կազմակերպության հիմնադրի, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի կամ անհատ ձեռնարկատիրոջ` օրենքով սահմանված կարգով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու դատապարտված լինելը` պատժի կատարման ժամկետում:<br>Օրենքը ուժի մեջ է մտնել 01.01.2011թ.-ից:<br>ՀՀ ոստիկանության պետի տեղակալի գլխավորությամբ ստեղծվել է պետական մարմինների միասնական տեղեկատվական բազայի ստեղծման աշխատանքային խումբ: Համապատասխան բազայի ստեղծմամբ հնարավոր կլինի ռեգիստրի կողմից համապատասխան տեղեկատվության ստուգումը առցանց եղանակով:<br>Ցուցիչ 1-ի արժեքը տրվել է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի գործակալության կողմից: 2011. հունվարից-հուլիս ընկած ժամանակահատվածում վերը նշված հիմքով իրավ. անձանց գրանցման մերժումներ չեն եղել:<br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ ԿԱ ոստիկանություն |
| 45. Ներդնել «մեկ պատուհանի սկզբունքը իրավաբանական անձանց պետական գրանցման ոլորտում | 45.2 Սահմանել պետական գրանցման համար այլ պետական մարմիններից պահանջվող փաստաթղթերը իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության միջոցով ստանալու կարգ | ՀՎՀՀ ստացման առցանց համակարգի ներդրում և փորձարկում | ՀՎՀՀ առցանց ստացման դեպքերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց ընդհանուր թվաքանակին: | 660/1360<br><br>2009/4746 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>Իրավաբանական անձանց գրանցման մեկ պատուհանի համակարգը, ներառյալ` ՀՎՀՀ ստացման առցանց համակարգը ներդրված է և գործում է 2011թ. Ապրիլի 1-ից:<br><br>660 իրավաբանական անձ և 2009 անհատ ձեռնարկատեր առցանց ստացել են ՀՎՀՀ սկբնական գրանցման ընթացքում:<br><br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | ՀՀ արդարադատության նախարարություն,<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,<br>ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 45.3 Կրճատել իրավաբանական անձանց պարտավորությունների բացակայությունը հավաստող տեղեկանքների տրամադրման և լուծարման գրանցման ժամկետները | Իրավաբանական անձանց լուծարման համար հարկային մարմինների համապատասխան տարածքային ստորաբաժանումներից պահանջվող փաստաթղթերի ստացման համար ավտոմատացված համակարգերի ներդրում և փորձարկում | Իրավաբանական անձի լուծարման ժամանակահատվածի հարաբերությունը պարտավորությունների բացակայությունը հավաստող տեղեկանքների տրամադրման ժամանակահատվածին | 20 օր | Արդյունք 1. Կատարվել է մասնակի: ՀՀ կառավարություն է ներկայացվել <Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> ՀՀ օրենքի նախագիծը, ըստ որի պետական գրանցող մարմնի հարցմանը հարկային մարմինները պարտավոր են պատասխանել 20 օրվա ընթացքում նախկին 30 օրվա փոխարեն: Փաթեթը քննարկվել է ՀՀ կառավարության 16.09.2010թվականի նիստում , արժանացել է հավանության և ուղարկվել է ՀՀ ազգային ժողով: Փաթեթը քննարկվել է ԱԺ-ում և 21.12.2010թ.- ին ընդունվել է ԱԺ-ի կողմից: Սակայն, դեռևս տեղեկանքը ՊԵԿ-ից ստացվում է թղթային եղանակով:<br><br>Ցուցիչ 1-ի արդունքի հիմքն այն է, որ պարտավորությունների բացակայությունը հավաստող տեղեկանքների տրամադրման պահից մինչև լուծարման գրանցումն ընկած առավելագույն ժամանակահատվածը 20 օր է: | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե |
| 46.Բարելավել պետական լիազոր մարմնի շրջանակներում իրականացվող գերատեսչական վերահսկողության մեխանիզմները | 46.1 Վերանայել պետական ռեգիստրի գործակալության մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության մեթոդները և սահմանել դրանց արդյունքների ամփոփման ընթացակարգեր | Պետական ռեգիստրի գործակալության ծառայողների խրախուսման գործուն մեխանիզմների ներդրում | Պետական ռեգիստրի գործակալության ծառայողների նկատմամբ կիրառված կարգապահական պատասխանատվության միջոցների թվի հարաբերությունը ծառայողների ընդհանուր թվաքանակին | 0/129 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ: Կատարվել են համապատասխան ուսումնասիրություններ, որի արդյունքում մշակվել է <ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին> ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասնին> ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որը հաստատվել է ՀՀ կառավարության 05.18.2010թ. թիվ 1043-Ն որոշմամբ:<br><br>Ցուցիչ 1. Տվյալները տրամադրվել են ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի կողմից: Աշխատողների թիվը կազմել է 129:<br><br>Ցուցիչ 2. Տվյալները տրամադրվել են ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի կողմից: Առաջին եռամսյակում աշխատողների թիվը կազմել է 129, իսկ խրախուսանք տրվել1 ծառայողի:<br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | | | Պետական ռեգիստրի գործակալության ծառայողների նկատմամբ կիրառված խրախուսման դեպքերի թվի հարաբերությունը ծառայողների ընդհանուր թվաքանակին | 1/129 | | |

**3.10 Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն**

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011թ.** | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 47. Բարձրացնել հարկադիր կատարողների կողմից պարտապանի գույքը հայտնաբերելու կարողությունը | 47.1 Բարելավվել պարտապանի գույքի հայտնաբերման հարցում հարկադիր կատարման ծառայության կարողությունները | Պարտապանին պատկանող գույքը հայտաբերելու նպատակով համապատասխան մարմինների միջև համագործակցության մեխանիզմները մշակված են | Հարկադիր կատարողների կողմից պարտապանի գույքը չհայտնաբերելու դեպքերի հարաբերությունը ԴԱՀԿ վարույթի շրջանակներում գույքի հայտնաբերման դեպքերին | 86.9% | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>Կատարվել է պարտապանի գույքը հայտնաբերելուն ուղղված մեխանիզմների միջազգային փորձի ուսումնասիրություն: Դրանց հիման վրա ներդրվել է պարտապանի գույքի հայտնաբերմանն ուղղված հարցումների էլեկտրոնային համակարգ: 01.07.2011 թվականի դրությամբ համակարգին միացված են 19 առևտրային բանկեր, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն: Բացի այդ 2011թ. 3-րդ եռամսյակին համակարգին կմիանա ևս 1 առևտրային բանկ, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության վարչությունը, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն:<br>Ցուցիչ 1-ի արժեքը տրամադրվել է ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից: 12417 գործից գույք հայտնաբերվել է 10980-ի դեպքում:<br>Ցուցիչ 2-ի արժեքը տրամադրվել է ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից: Ներկայումս գույքի հայտնաբերմանը պահանջվում է 2 օր նախկինում 15 օրվա փոխարեն:<br>Իրավիճակը գնահատվում է բավարար | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | | | Պարտապանի գույքը հայտնաբերելու համար պահանջված միջին ժամկետը նախորդ տարվա համեմատությամբ | 2օր | | |
| 48. Բարելավել ՀՀ արդարադատության նախարարության շրջանակներում իրականացվող վերահսկողության մեխանիզմները | 48.1 Վերանայել դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության նկատմամբ վերահսկողության մեթոդները և սահմանել դրանց արդյունքների ամփոփման ընթացակարգեր | Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ծառայողների նկատմամբ կարգապահական վարույթի նախապատրաստման և վարույթ հարուցելու մշակված միասնական կարգ | Հաստատվել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի վերահսկողության վարչության կանոնադրությունը (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Կատարված է մասնակի:<br>«ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության կանոնադրությունը հաստատված է ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի 14-ի 431-Ն որոշմամբ:<br>ԴԱՀԿ ծառայողների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման միասնական կարգը մշակման փուլում է:<br><br>Ցուցիչ 1-ի արժեքի հիմքը այն է, որ համապատասխան կանոնադրությունը հաստատված է:<br><br>Ցուցիչ 2-ի արժեքի հիմքը այն է, որ համապատասխան ամփոփման համակարգը դեռևս ներդրված չէ:<br><br>Ցուցիչ 3-ի արժեքը տրամադրվել է ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից: ԴԱՀԿ 393 ծառայողից 9-ի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ:<br><br>Ցուցիչ 4-ի արժեքը տրամադրվել է ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից: ԴԱՀԿ | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | | | Սահմանվել է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության արդյունքների ամփոփման ընթացակարգ (այո/ոչ) | Այո | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Սահմանվել է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ծառայողների նկատմամբ կարգապահական վարույթի նյութեր նախապատրաստելու և վարույթ հարուցելու միասնական կարգ(այո/ոչ) | Ոչ | 393 ծառայողներից 235-ի նկատմամբ կիրառվել է խրախուսանքի միջոց:<br><br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | |
| | | | Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ծառայողների նկատմամբ կիրառված կարգապահական պատասխանատվության միջոցների թվի հարաբերությունը ծառայողների ընդհանուր թվաքանակի | 2.3% | | |
| | | | Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ծառայողների նկատմամբ կիրառված խրախուսման դեպքերի թվի հարաբերությունը ծառայողների ընդհանուր թվաքանակին | 60% | | |

**3.11 ՀՀ ոստիկանություն**

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 49. Կատարելագործել ճանապարհային երթևեկության կանոններն ու դրանց խախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմերը | 49.1 Հանել առկա իրավական կարգավորումների անհստակությունները և տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տվող նորմերը | Միասնականացված են Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքում և ՃԵԿ-ի` ճանապարհային երթևեկության կանոններ սահմանող նորմերը | Վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ճանապարհային ոստիկանության կողմից կազմված և լուծվող հարցի նկարագրությունը չներառող ակտերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում կազմված ակտերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան բարձր են կոռուպցիոն ռիսկերը) | | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>49.1 ենթակետի 2011 թ. «Ակնկալվող արդյունք»-ը ՀՀ կառավարության 02.06.2011թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի թրվ 1272-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 748-Ն որոշումով վերախմբագրվել է հետևյալ նոր բովանդակությամբ` «Վարչական իրավախախտումների վերաբերյալ հայաստանի Հանրապետության օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին օրինագծի ներկայացում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով և ճանապարհային երթևեկության կանոնները սահմանող այլ իրավական ակտերով սահմանված նորմերի միասնականցում»:<br>Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծ, որը 23.06.2011թ. նոր լրամշակված տարբերակով թիվ 35/816 գրությամբ ուղարկվել է ՀՀ կառավարություն:<br>Ցուցիչներ 1-ի և 2-ի սահմանումները անհրաժեշտ է փոփոխել համապատասխանեցնելով նոր խմբագրված «Ակնկալվող արդյունք»-ին:<br>Հիմնական եզրակացություն<br>Իրավիճակը`բավարար<br>Առաջընթացը` բավարար | ՀՀ ԿԱ Ոստիկանություն |
| | | | Ճանապարհային ոստիկանության մարմինների կողմից կայացվող և համապատասխան ապացույցներով չապահովված վարչական ակտերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում կազմված ակտերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան բարձր են կոռուպցիոն ռիսկերը) | | | |
| | 49.2 Հանել պատասխանատվության տեսակների և պատժաչափերի ընտրության հարցում հայեցողության դրսևորման վտանգները և ճանապարհային կանոների խախտման համար նախապայմաններ ստեղծող այլ խոչընդոտները | Ճանապարհային երթևեկության կանոնների վերաբերյալ իրավական ակտերի վերանայման արդյունքում նվազագույնի կհասցվեն ճանապարհային ոստիկանի կողմից վարչական ներգործության միջոցների կիրառման հարցում հայեցողության դրսևորման հնարավորությունները | Ճանապարհային ոստիկանության մարմինների դեմ ուղղված և բավարարված դատական հայցերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում ճանապարհային ոստիկանության կողմից կիրարկված վարչական տույժերի ընդհանուր թվաքանակին: | Տվյալներ չկան | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>49.2 ենթակետի 2011 թ. «Ակնկալվող արդյունք»-ը ՀՀ կառավարության 02.06.2011թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 1272-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 748-Ն որոշումով վերախմբագրվել է հետևյալ նոր բովանդակությամբ` «Ճանապարհային երթևեկության կանոնների վերաբերյալ իրավական ակտերի վերանայման արդյունքում նվազագույնի կհասցվեն ճանապարհային ոստիկանի կողմից վարչական ներգործության միջոցների կիրառման հարցում հայեցողության դրսևորման հնարավորությունները»:<br>Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծ, որը 23.06.2011թ. նոր լրամշակված տարբերակով թիվ 35/816 գրությամբ ուղարկվել է ՀՀ կառավարություն | ՀՀ ԿԱ ՀՀ Ոստիկանություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Ցուցիչի սահմանումը անհրաժեշտ է փոփոխել համապատասխանեցնելով նոր խմբագրված «Ակնկալվող արդյունք»-ին<br>Հիմնական եզրակացություն<br>Իրավիճակը՝բավարար<br>Առաջընթացը՝ բավարար | |
| 50. Բարձրացնել ճանապարհային ոստիկանության գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը | 50.1 Սահմանել ոստիկանության նյութական խրախուսման և տեխնիկական զարգացման արտաբյուջետային ֆոնդի ձևավորման և միջոցների ծախսման թափանցիկությունն ապահովող ընթացակարգեր | Ճանապարհային երթևեկությունը կարգավորող օրենսդրության և ոստիկանության նյութական խրախուսման և տեխնիկական զարգացման արտաբյուջետային ֆոնդի միջոցների ձևավորման և ծախսման վերաբերյալ քաղաքացիների իրազեկման ծրագիր Իրազեկման ծրագրի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերն ընդունված են | Սահմանվել են ոստիկանության նյութական խրախուսման և տեխնիկական զարգացման արտաբյուջետային ֆոնդի ձևավորման և միջոցների ծախսման թափանցիկությունն ապահովող ընթացակարգեր (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>2010թ.-ից ոստիկանության ճանապարհային ոստիկանության նյութական խրախուսման և տեխնիկական զարգացման արտաբյուջետային ֆոնդի ձևավորման և միջոցների ծախսման թափանցիկությունն ապահովելու նպատակով նոր ընթացակարգեր մշակելու անհրաժեշտություն չկա, քանի որ այն հաստատվում է ՀՀ կառավարության որոշումով և հրապարակվում ՀՀ պաշտոնական տեղեկագրում:<br>ՀՀ կառավարության 14.04.2011թ. << ՀՀ կառավարությանն առնթեր ՀՀ ոստիկանության արտաբյուջետային հաշվի միջոցների ծախսման 2011 թվականի նախահաշիվները հաստատելու, ՀՀ 2011 թվականի պետական բյուջեում և ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 1748-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> թիվ 380-Ն որոշում:<br>Ցուցիչ 1. ՀՀ կառավարության 14.04.2011թ. թիվ 380-Ն որոշում:<br>Հիմնական եզրակացություն<br>Իրավիճակը՝բավարար<br>Առաջընթացը՝ բավարար | ՀՀ ԿԱ ՀՀ Ոստիկանություն |
| | 50.2 Սահմանել ճանապարհային պատահարների, գրանցված վարչական իրավախախտումների վերաբերյալ վիճակագրության մատչելիությունն ապահովող ընթացակարգեր | Ճանապարհատրանսպորտային պատահարների գրանցման և դրանց վերաբերյալ վիճակագրության վարման կարգը և դրա հիման վրա ճանապարհային ոստիկանության գործունեության արդյունավետության գնահատման համակարգը ներդրված են Քաղաքացիական հասարակության կողմից իրականացվող մասնակցային մոնիտորինգի հրապարակված հաշվետվություն | Վթարայնության համեմատական մակարդակը հանրապետությունում (իրար հաջորդող ժամանակահատվածներում տոկոսային հարաբերակցությունը) | 110.8 % | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>Ճանապարհատրանսպաորտային պատահարների գրանցման և դրանց վերաբերյալ վիճակագրության վարման մատչելիությունն ապահովելու նպատակով Ճանապարհային ոստիկանությունում մշակվել և ներդրվել է համապատասխան համակարգչայի ծրագիր:<br>Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքը հաշվարկվել է ՀՀ ոստիկանության ՃՈ հաշվառումներով:<br>2010թ. – ին հանրապետությունում գրանցվել է 816 ճանապարհատրանսպորտային պատահար՝ 117 զոհ, 1106 վիրավոր,<br>2011թ – ին՝ 904 ճանապարհատրանսպորտային պատահար՝117 զոհ, 1316 վիրավոր:<br>Հիմնական եզրակացություն<br>Իրավիճակը՝բավարար<br>Առաջընթացը՝ բավարար | ՀՀ ԿԱ ՀՀ Ոստիկանություն, ՀՀ Քաղաքացիական հասարակության միավորներ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 52. Բարձրացնել բնակչության պետական ռեգիստրի գործունեության արդյունավետությունը | 52.1 Կատարելագործել բնակչության պետական ռեգիստրի համակարգը | Արդյունքներն ըստ ՀՀ միգրացիայի համակարգի և ՀՀ-ում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի համակարգի ներդրման հայեցակարգով նախատեսված միջոցառումների ծրագրից բխող գործողությունների իրականացման ժամանակացույցի | Պետական ռեգիստրի համակարգում տվյալների անճշտությունների հետ կապված դիմումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում տվյալների բանկի վերանայումների ու թարմացումների ընդհանուր թվաքանակին | 0.0281 | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br><br>ՀՀ վարչապետի 18 հունիսի 2009 թվականի <<Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի համակարգի ներդրման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին>> թիվ 501-Ա որոշմամբ հաստատված հավելվածի ժամկետները փոփոխվել են ՀՀ վարչապետի 08.06.2010թ. << Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի 18 հունիսի թիվ 501-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 414-Ա որոշումով: Ցուցիչ 1. Հաշվարկված է ՀՀ ոստիկանության ԱՎՎ բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական պահոցի և տվյալանենի բանկի տվյալներով: Անճշտությունների վերաբերյալ դիմումների քանակը 2011թ. առաջին կիսամյակում եղել է 879, իսկ ընդհանուր վերանայումների քանակը`31245:<br><br>Հիմնական եզրակացություն<br>Իրավիճակը`բավարար<br>Առաջընթացը` բավարար | ՀՀ ԿԱ ՀՀ Ոստիկանություն |
| | 52.2 Կանոնակարգել բնակչության պետական ռեգիստրի տվյալների օգտագործումը հանրային ծառայություններ մատուցելիս | Արդյունքներն ըստ ՀՀ միգրացիայի համակարգի և ՀՀ-ում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի համակարգի ներդրման հայեցակարգով նախատեսված միջոցառումների ծրագրից բխող գործողությունների իրականացման ժամանակացույցի | Պետական ռեգիստրի համակարգում տվյալների անճշտությունների հետ կապված դիմումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում տվյալների բանկի վերանայումների ու թարմացումների ընդհանուր թվաքանակին | | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br><br>Սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերի հասցեականությունը և ոլորտի տեղեկատվական համակարգերում ներառված տեղեկատվության հավաստիությունն ապահովելու նպատակով 26.05.2011թ. ընդունվել է ՀՀ կառվարության «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից տվյալներ տրամադրելու կարգը հաստատելու մասին» թիվ 713-Ն որոշումը:<br><br>2011թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ ոստիկանության ԱՎ վարչության բնակչության պետական ռեգիստրի բաժանմունքի կողմից ստացված զեկուցագրերի հիման վրա ԲՊՌ-ի տեղեկատվական պահոցում կատարվել են անճշտությունների հետ կապված 879 ուղղումներ: Միաժամանակ բնակչության պետական ռեգիստր է մուտքագրվել 445996 սիձանց վերաբերյալ տվյալներ և 139487 սիձանց վերաբերյալ տվյալներ դուրս է գրվել համակարգից:<br><br>ՀՀ ոստիկանության ԱՎՎ ԱՀՏՍ բաժանմունքի կողմից դեռևս շարունակվում է համայնքների սխալ հասցեավորված քաղաքացիների հասցեների ճշգրտման աշխատանքները, որի արդյունքում 24.12.1010թ. մինչև 01.07.2011թ. ՀՀ ոստիկանության ԱՎ վարչության անձնագրային ծառայությունների կողմից ուղղվել է զեկուցագրերով ներկայացված 31245 քաղաքացու հասցե:<br><br>Միաժամանակ էլեկտրոնային կրիչով ներկայացվել են համայնքների նոր հասցեավորման մոտ 85000 տվյալներ, որոնք լրացուցիչ ստուգումներից հետո մուտքագրվել են պահոց:<br><br>Հիմնական եզրակացություն<br>Իրավիճակը`բավարար<br>Առաջընթացը` բավարար | ՀՀ ԿԱ ՀՀ Ոստիկանություն |
| | 52.3 Սահմանել բնակչության պետական ռեգիստրում առկա հասցեով անձին | Արդյունքներն ըստ ՀՀ միգրացիայի համակարգի և ՀՀ-ում կենսաչափական կողմնորոշիչներ | Պետական ռեգիստրի համակարգում տվյալների անճշտությունների հետ կապված դիմումների թվի հարաբերությունը նույն | | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br><br>ՀՀ վարչապետի 18 հունիսի 2009 թվականի <<Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի համակարգի ներդրման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին>> թիվ 501-Ա որոշմամբ | ՀՀ ԿԱ ՀՀ Ոստիկանություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | ուղարկված ծանուցագրերը պատշաճ հասցեով ուղարկված համարելու վերաբերյալ նորմեր, այդ թվում՝ անձի փաստացի բնակության վայրը տարբերվելու դեպքում | պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի համակարգի ներդրման հայեցակարգով նախատեսված միջոցառումների ծրագրից բխող գործողությունների իրականացման ժամանակացույցի | ժամանակահատվածում տվյալների բանկի վերանայումների ու թարմացումների ընդհանուր թվաքանակին | | հաստատված հավելվածի ժամկետները փոփոխվել են ՀՀ վարչապետի 08.06.2010թ. << Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի 18 հունիսի թիվ 501-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 414-Ա որոշումով։<br><br>Հիմնական եզրակացություն<br>Իրավիճակը՝բավարար<br>Առաջընթացը՝ բավարար | |
| 53. Ներդնել անհատական տվյալների անձեռնամխելիությունը ապահովող համապատասխան իրավական նորմեր | 53.1 Սահմանել իրավական հետևանքներ՝ բնակչության ռեգիստրին համապատասխան տվյալներ չհաղորդելու, առանց նույնացման քարտի բնակվելու, բնակչության ռեգիստրին պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված տվյալները չտրամադրելու կամ դրանք թերի տրամադրելու համար | Արդյունքներն ըստ ՀՀ միգրացիայի համակարգի և ՀՀ-ում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի համակարգի ներդրման հայեցակարգով նախատեսված միջոցառումների ծրագրից բխող գործողությունների իրականացման ժամանակացույցի | Բնակչության ռեգիստրին համապատասխան տվյալներ չհաղորդելու, առանց նույնացման քարտի բնակվելու, բնակչության ռեգիստրին պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված տվյալները չտրամադրելու կամ դրանք թերի տրամադրելու համար կիրառված վարչական սանկցիաների թիվը | | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն։<br><br>ՀՀ վարչապետի 18 հունիսի 2009 թվականի <<Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի համակարգի ներդրման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին>> թիվ 501-Ա որոշմամբ հաստատված հավելվածի ժամկետները փոփոխվել են ՀՀ վարչապետի 08.06.2010թ. << Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի 18 հունիսի թիվ 501-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 414-Ա որոշումով<br><br>Հիմնական եզրակացություն<br><br>Իրավիճակը՝բավարար<br><br>Առաջընթացը՝ բավարար | ՀՀ ԿԱ ՀՀ Ոստիկանություն, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն |
| 54. Ապահովել ոստիկանության գործունեության օրինականությունը, բարձրացնել պատասխանատվությունը | 54.1 Ապահովել վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ իրավաչափ և օրենքի պահանջներին համապատասխանող վարչական ակտերի կայացումը | իրավաչափ վարչական ակտի կառուցվածքի և պարտադիր պահանջների պարզաբանմանն ուղղված Ճանապարհային ոստիկանների մասնագիտական վերապատրաստման դասընթացները մշակված են Ճանապարհային ոստիկանների մասնագիտական վերապատրաստման դասընթացներ | Ապահովվել է վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ իրավաչափ և օրենքի պահանջներին համապատասխանող վարչական ակտերի կայացումը (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն։<br><br>ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության ծառայողների վերապատրաստման դասընթացները համաձայն ՀՀ ոստիկանության պետի 24.02.2011թ. թիվ 308-Ա հրամանի կազմակերպվում և անց է կացվում ՀՀ ոստիկանության կրթահամալիրում։<br><br>2011 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Ճանապարհային ոստիկանության թվով 36 ծառայող մասնակցել է վերը նշված դասընթացներին։<br><br>Հիմնական եզրակացություն<br><br>Իրավիճակը՝բավարար<br><br>Առաջընթացը՝ բավարար | ՀՀ ԿԱ Ոստիկանություն |
| | 54.2 Կատարելագործել ոստիկանության ծառայողների գործողությունների | Ոստիկանության ծառայողների գործողությունների բողոքարկման | Ոստիկանությունում իրականացված ծառայողական | 0,994 | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն։<br><br>Ցուցիչ 1. 2010թ. քաղաքացիների դիմում-բողոքների միասնական հաշվառումն իրականացվել է ՀՀ ոստիկանության պետի 17.08.2010թ. | ՀՀ ԿԱ ՀՀ Ոստիկանություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | բողոքարկման ընթացակարգերի մատչելիությունը | պարզեցված ընթացակարգերը ներդրված են, դրանց մատչելիությունը, նվազ ժամանակատարությունը, իրավունքերի պաշտպանության պատշաճ երաշխիքների առկայությունն | քննությունների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում ոստիկանության ծառայողների գործողությունների բողոքարկման ընդհանուր թվաքանակի | | << ՀՀ ոստիկանության համակարգում ստացված դիմումների, բողոքների հաշվառման եւ դրանց արդյունքների վերաբերյալ միասնական հաշվետվություն ներկայացնելու կարգը սահմանելու մասին>> թիվ 1747-Ա հրամանով սահմանված կարգի համապատասխան, համաձայն որի ոստիկանության ծառայողների գործողությունների բողոքարկման ընդհանուր թվաքանակը 2011թ. առջին կիսամյակում կազմել է 550, իսկ ծառայողական քննությունների թիվը` 547 :<br><br>Հիմնական եզրակացություն<br><br>Իրավիճակը`բավարար<br><br>Առաջընթացը` բավարար | |
| 55. Ապահովել ոստիկանության մարմինների աշխատանքի և քաղաքացիների սպասարկման պատշաճ որակը | 55.1 Կրճատել ոստիկանության միջանկյալ օղակների և ծառայող-քաղաքացի շփման բարդությունները | Արդյունքներն ըստ ծրագրի | Ոստիկանության կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայություններից էլեկտրոնային և այլ համարժեք եղանակներով օգտվողների թիվը | 42600 | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br><br>ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության, ինչպես նաեւ տարբեր ԶԼՄ-ների , մամլո ասուլիսների միջոցով պարբերաբար տրամադրվում են ոլորտային տեղեկություններ:<br><br>2011թ-ին ՀՀ ոստիկանության եւ տարբեր ստորաբաժանումների ղեկավարության մասնակցությամբ կազմակերպվել է 8 մամուլի ասուլիս:<br><br>Վարորդական վկայական ստանալու քննություններ ընդունելու և վկայական տալու կարգը հնարավորինս պարզացնելու նպատակով 2011 թվականի ապրիլի 14-ին ընդունվել է ՀՀ կառավարության <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 20-ի N 581-Ն և 2008թվականի սեպտեմբերի 18-ի N 1158-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> N 424-Ն որոշումը:<br><br>ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 21-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1400-Ն, 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1854-Ն և 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> N 618-Ն և ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N 1158-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին>> N 495-Ն որոշումներով հնարավորինս պարզեցվել են տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման, պետական հաշվառման, հաշվառման համարանիշների և հաշվառման վկայագրերի հատկացման, ինչպես նաև վարորդական վկայականների տրման, փոխանակման և կորած վարորդական վկայականների փոխարեն նորը հատկացնելու ընթացկարգերը:<br><br>2011թ. նոյեմբերի 1-ից ուժի մեջ կմտնի նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 716-Ն որոշումը, որի համաձայն տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման, պետական հաշվառման, հաշվառման համարանիշների և հաշվառման վկայագրերի հատկացման գործընթացները ներկայիս «մեկ պատուհան» սկզբունքի փոխարեն կիրականացվեն «հոսքագիծ» սկզբունքով և կվերանա գրավոր դիմում ներկայացնելու անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն կտա էականորեն | ՀՀ ԿԱ ՀՀ Ոստիկանություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | կրճատել այդ գործընթացների իրականացման ժամանակը և զերծ մնալ գոյացած հերթերից:<br><br>«Հայաստանի Հանրապետության սահմանային անվտանգության և պետական սահմանի համալիր կառավարման ապահովմանն ուղղված 2011-2015 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 21-ի 482-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների ծրագրի 27-րդ կետով շրջանառության մեջ է դրվել «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը, ըստ որի արտոնյալ պայմաններ են ստեղծվում առանց մուտքի վիզայի ՀՀ մուտք գործող օտարերկրացիների համար` նախատեսելով ՀՀ տարածքում մնալու առավելագույնը 180-օրյա ժամկետ: Բացի այդ, արտոնություն է սահմանվում «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասում նշված պետությունների ազգությամբ հայ քաղաքացիների համար` նախատեսելով առանց հրավերի մուտքի վիզայի տրամադրումը ՀՀ սահմանային անցման կետերում, վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո անվավեր փաստաթղթերով օտարերկրացիների` ՀՀ-ից ելքին վերաբերող դրույթներ սահմանել, հստակեցնել ժամանակավոր կացության կարգավիճակի տրամադրման հիմքերը, ինչպես նաև վերացնել գործող օրենքում տեղ գտած բացերն ու հակասությունները, օրենքի որոշ հոդվածների ոչ հստակ ձևակերպումները, նվազեցնել կոռուպցիոն հնարավոր ռիսկերն օտարերկրացիների մասնակցությամբ ծագող հարաբերություններում:<br><br>Ներկայումս ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության սահմանային անցակետերում գործում է «մեկ պատուհան» կամ «մեկ կանգառ» սկզբունքը: «Մեղրի» սահմանային անցակետում կատարված մի շարք բարեփոխումների արդյունքում աշխատանքային պայմանները դարձել են բարենպաստ: Հնարավորություն է ստեղծվել ավելի հարմարավետ պայմաններում սպասարկել օտարերկրյա քաղաքացիներին, տեխնիկական հագեցվածությունը գտնվում է բավարար մակարդակի վրա:<br><br>«Բագրատաշեն» սահմանային անցակետին տրամադրվել է նոր հարմարավետ սենյակ, որտեղ կառուցվել է ծածկ, և օտարերկրացիների սպասարկումը կատարվում է անհամեմատ բարվոք պայմաններում: Նոր հարմարավետ սենյակը տեխնիկապես հագեցած է և ունի աշխատանքային բավարար պայմաններ, ավելացվել է մեկ աշխատատեղ:<br><br>Հաշվի առնելով անձնագրային և վիզաների վարչության վարչական շենք այցելող օտաերկրացիների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիների առաջարկությունները, նախապատրաստվել և մինչև սույն թվականի հուլիսի 10-ը կտեղադրվի «ԱՐԱՐԱՏ ԲԱՆԿԻ» բանկոմատ, որը հնարավորություն կտա քաղաքացիներին բանկոմատի միջոցով իրականացնել ոչ կանխիկ գործարքներ, ինչպես նաև կանխիկացնել գումարներ բոլոր տեսակի պլաստիկ բանկային քարտերով:<br>«Հարավային կովկասում սահմանների համալիր կառավարում» ծրագրի շրջանակներում ՀՀ-ում գործող ՄԱԿ-ի գրասենյակի կողմից «Այրում» սահմանակետում կատարվել է համապատասխան տեխնիկական վերազինում, ինչպես նաև «Հարավ Կովկասյան երկաթուղիներ» ՓԲ ընկերության կողմից տրամադրվել է նոր վերանորոգված աշխատասենյակ: ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բոլոր սահմանային անցակետերում նույն | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ծրագրի շրջանակներում փակցվել են եռալեզու (հայերեն, ռուսերեն և անգլերեն) վահանակներ, որտեղ մանրամասն նշված է վարչական իրավախախտումների, տուգանքի չափերի, ՀՀ մուտքի վիզաներ ստանալու համար գործող սակագները, ինչպես նաև արտոնագրերի ժամկետների, դրանց համար գանձվող տուրքերի չափերը:<br><br>«Գյումրիի» և «Վանաձորի» անձնագրային բաժանմունքներում տեղադրվել են անձնագրային ծառայությունների մատուցման համար նախատեսված պետական տուրքերը, վարչական տուգանքները և այլ վճարներն ընդունող էլեկտրոնային վճարային տերմինալներ, ինչի շնորհիվ զգալիորեն արագացել է քաղաքացիների սպասարկումը:<br><br>2011թ. հունիս ամսին սկսվել են Աշտարակի անձնագրային բաժանմունքի կապիտալ վերանորոգման աշխատանքները, ինչը պայմանավորված է աշխատասենյակների, ինչպես նաև քաղաքացիների սպասարկման և կոմունալ հարմարությունների անմխիթար վիճակով:<br>Հատուկ պաշտպանվածություն պահանջող պետական նշանակության փաստաթղթերի տպագրություն, զենքերի շրջանառության և կնիքների պատվիրման ոլորտներում ՀՀ 2011 թվականի մարտի 18-ի N 271-Ն որոշմամբ ուժը կորցրած են ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի «Պետական կնիքների, դրոշմակնիքների կամ արտադրության կարգը կամ լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 909-Ն և 2004 թվականի ապրիլի 8-ի «Հատուկ պաշտպանություն պահանջող պետական նշանակության փաստաթղթերի տպագրության գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 547-Ն որոշումները: Հատուկ պաշտպանություն պահանջող պետական նշանակության փաստաթղթերի տպագրության գործունեության համար այսուհետ չի պահանջվի լեցենզիա:<br><br>Մշակվել և սահմանված կարգով ընթացք է տրվել «Զենքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ինչը ավելի է պարզեցնում ոստիկան-քաղաքացի փոխհարաբերությունները` ի օգուտ քաղաքացու:<br><br>ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության պաշտոնական ինտերնետային կայքէջը` <<passportvisa.am>> 2010 թ-ին գործարկվել է, սակայն գտնվում է վերակազմավորման վիճակում և ավարտին կհասցվի 2011թ-ի ավարտին:<br><br>Սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերի հասցեականությունը և ոլորտի տեղեկատվական համակարգերում ներառված տեղեկատվության հավաստիությունն ապահովելու նպատակով 26.05.2011թ. ընդունվել է ՀՀ կառվարության «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից տվյալներ տրամադրելու կարգը հաստատելու մասին» թիվ 713-Ն որոշումը:<br><br>Ցուցիչ 1. Լրատվական վարչության տվյալներով ՀՀ ոստիկանության <<police.am>> և ՀՀ ոստիկանության ԱՎՎ <<passportvisa.am>> կայք էջեից օգտվողների թիվը 2011թ. առաջին կիսամյակի ընթացքում կազմում է մոտ 139324 մուտք:<br><br>Ցուցիչ 2. Առաջարկում ենք ցուցիչը վերախմբագրել ոստիկանության մասով: | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Հիմնական եզրակացություն<br>Իրավիճակը`բավարար<br>Առաջընթացը` բավարար | |
| | 55.2 Ներդնել քաղաքացիական հասարակության և ոստիկանության մարմինների միջև փոխգործակցության և քաղաքացիական հասարակության մասնակցության ընթացակարգեր | Ոստիկանության մարմինների ու քաղաքացիական հասարակության մասնագիտացված կազմակերպություններ ի միջև կնքվել են փոխգործակցության հուշագրեր | Ոստիկանության մարմինների ու քաղաքացիական հասարակության մասնագիտացված կազմակերպությունների միջև կնքվել են փոխգործակցության հուշագրեր (այո/ոչ)<br><br>Հանրային ծառայությունների մատուցման ոլորտում ժամկետների խախտման հետ կապված բողոքների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալներին, | | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>Չնայած համագործակցության ոլորտները ձևականորեն սահմանված չեն, սակայն համագործակցությունը իրականացվում է անչափահասների հիմնահարցերի լուծման, ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերի նկատմամբ հասարակական վերահսկողության, Ճանապարհային ոստիկանության, կանանց իրավունքների պաշտպանության ոլորտներում:<br>Մասնավորապես`<br>1. << World Vision>> միջազգային ոչ կառավարական կազմակերպություն,<br>2. << Priject Harmony>> միջազգային ոչ կառավարական կազմակերպություն,<br>3. << Երեխաների աջակցության կենտրոն>> ԱՄՆ-ի ՀՕՖ-ի հայաստանյան մասնաճյուղ,<br>4. << People in Need>> չեխական ընկերության հայաստանյան մասնաճյուղ,<br>5. <<Վարորդ-ուտիան>> ՀԿ,<br>6. <<Աքիլես>> ՀԿ,<br>7. <<Ճանապարհային Անվտանգության Ազգային Խորհուրդ>> ՀԿ<br>8. << ՀՀ ավտոմոբիլային ֆեդերացիա>> ՀԿ<br>9. << Կանանց իրավունքների կենտրոն>> հասարակական կազմակերպությունը<br>10. 21.04.2010թ. <<Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշըն ինկ.>> կազմակերպության հայաստանյան գրասենյակի միջև փոխըմբռնման հուշագիր /շարունակվում է/<br>11. Միգրացիայի միջազգային կազմակերպություն<br>12. Միավորված ազգերի զարգացման ծրագիր<br>13. 14.04.2011թ. ընդունվել է ՄՏԾՀ անդամ պետությունների ՆԳ նախարարների Կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելմանն ուղղված տարածաշրանային ջանքերի առաջընթացի մասին համատեղ հայտարարություն:<br>Հիմնական եզրակացություն<br>Իրավիճակը`բավարար<br>Առաջընթացը` բավարար | ՀՀ ԿԱ ՀՀ Ոստիկանություն |
| | 55.3 Խթանել ոստիկանության կողմից հանրային իրազեկման բարձրացումը, | Համագործակցության հուշագրեր հասարակական կազմակերպություններ ի հետ` անվճար | Ոստիկանության գործունեության վերաբերյալ հանրային իրազեկմանը նվիրված հեռուստառադիոեթերի | | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>Հանրային իրազեկման նպատակով ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության , ինչպես նաեւ տարբեր ԶԼՄ-ների , մամլո ասուլիսների միջոցով պարբերաբար տրամադրվում են ոլորտային տեղեկություններ: 2011թ-ին ՀՀ | ՀՀ ԿԱ ՀՀ Ոստիկանություն Հասարակական կազմակերպություններ ( համաձայնությամբ) |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | քաղաքացիների իրավունքների և պարտականություններ ի, վարչարարական գործընթացների պատշաճ լուսաբանումը | խորհրդատվականն ծառայությունների մատուցման, գործող ընթացակարգերի պարզաբանման, ոստիկանության գործունեության առավել խոցելի ոլորտներում, քաղաքացիների կարիքների բացահայտման ու գնահատման համար | ժամաքանակի հարաբերությունը պետական մարմինների գործունեությանը լուսաբանանը նվիրված հեռուստառաղիոեթերի ընդհանուր ժամաքանակին | | ոստիկանության եւ տարբեր ստորաբաժանումների ղեկավարության մասնակցությամբ կազմակերպվել է 8 մամուլի ասուլիս, որոնք լուսաբանվել են ՀՀ ոստիկանության ինտերնետային նոր կայք էջում:<br><br>ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության պաշտոնական ինտերնետային կայքէջը` <<passportvisa.am>> 2010 թ-ին գործարկվել է, սակայն գտնվում է վերակազմավորման վիճակում և ավարտին կհասցվի 2011թ-ի ավարտին:<br><br>Ոստիկանության վերաբերյալ «02» հաղորդաշարը 2011թ. առաջին կիսամյակում Հանրային << Հ 1>> հեռուստաալիքով եթեր է հեարձավել 25 անգամ 497րոպե 49 վայրկյան տևողությամբ, «02» ռադիոհաղորդումը` 25 անգամ` 250 րոպե տևողությամբ:<br><br>2011թ. ապրիլի 4-ից «Արմենիա» հեռուստաընկերությամբ հեռարձակվում է նոր «Հերթապահ մաս» հաղորդաշարը, որը եթեր է տրվել 62 անգամ` 248 րոպե տևողությամբ: Նույն ժամանակահատվածում եթեր է հեռարձակվել կաշառակերությն վերաբերյալ 4 տեսանյութ:<br><br>ՀՀ ոստիկանության հասարակության հետ կապի և լրատվության վարչության նախաձեռնությամբ ստեղծվել է <<Ուղիղ կապ>>, որի ընթացքում հեռախոսազանգերի միջոցով քաղաքացիներին հետաքրքրող հարցերին պատասխանում են ոստիկանության ծառայությունների պատասխանատուները: 2011թ. առաջին կիսամյակի ընթացքում կազմակերպվել է նմանօրինակ 4 <<Ողիղ կպ>>:<br><br>Հասարակություն և ոստիկանություն կապն ամրապնդելու և բնակչությանն իրազեկելու նպատակով ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների տարածքային մարմինների կողմից նախապես կազմված պլան-ժամանակացույցի համաձայն համայնքներում և սպասարկման տեղամասերում 2011թ. առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել է 1899 հանդիպումներ ազգաբնակչության հետ:<br><br>Անընդհատ կատարելագործվում է ՀՀ ոստիկանության ինտերնետային <<police.am>> կայք-էջը: 2011թ. առաջին կիսամյակում կայքում տեղադրվել է 1789 տեղեկատվություն:<br><br>Պետական այլ մարմինների վերաբերյալ հեռուստահաղորդումների ընդհանուր քանակը <<Հ1>>-ում չի ֆիքսվել:<br><br>Ցուցիչ 1 Ցուցիչի հաշվարկի համար անհրաժեշտ տվյալների հավաքագրումը բավական թանկարժեք է և աշխատատար:<br><br>Հիմնական եզրակացություն<br><br>Իրավիճակը`բավարար<br><br>Առաջընթացը` բավարար | |

### 3.12 Քաղաքական կոռուպցիա

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 56.Կատարելագործել օրենսդիր իշխանության թափանցիկությունը, հրապարակայնությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունն ապահովող օրենսդրությունը | 56.1 Սահմանել պատգամավորների վարքագծի կանոնները | Վարքագծի կանոնների խախտման համար ներգործության միջոցները սահմանված են,<br><br>ՀՀ ԱԺ կանոնակարգ օրենքով սահմանված են ԱԺ էթիկայի ժամանակավոր հանձնաժողովի լիազորությունները | «ԱԺ կանոնակարգ» ՀՀ օրենքով կարգավորվել են ՀՀ ԱԺ-ում վարքագծի կանոններին առնչվող հարաբերությունները (այո/ոչ) | Տվյալներ չկան | Արդյունք 1. Կատարված չէ:<br>Քաղաքական որոշման համաձայն ՀՀ Ազգային ժողովի հետ կապված օրենքների նախագծերը պետք է մշակվեն ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կամ ԱԺ պատգամավորների կողմից:<br><br>Ցուցից 1-6 կետերի վերաբերյալ տեղեկություններ ՀՀ ԱԺ կողմից չեն ստացվել: | ՀՀ արդարադատությ ան նախարարությու |
| | | | Սահմանվել են ՀՀ ԱԺ պատգամավորի պահվածքի (վարքագծի) հիմնական սկզբունքներն ամրագրող վարքականոն (այո/ոչ) | Տվյալներ չկան | | |
| | | | ՀՀ ԱԺ պատգամավորի վարքականոնով կարգավորվում են ԱԺ և նրա մշտական հանձնաժողովների նիստերում պատգամավորի պահվածքի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների, օտարերկրյա պետությունններում և օտարերկրյա անձանց հետ փոխհարաբերություններ ում պատգամավորի վարվելակերպի կանոնները (այո/ոչ) | Տվյալներ չկան | | |
| | | | Պատգամավորների վարքագծի հետ կապված լսումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում ԱԺ լսումների ընդհանուր թվաքանակին | Տվյալներ չկան | | |
| | | | ՀՀ ԱԺ պատգամավորի նեգատիվ վարքագծի հետ կապված բողոքների ու ԶԼՄ-ներում տեղ գտած հարապարակումների | Տվյալներ չկան | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ամբողջական թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում պատգամավորների վարքագծի հետ կապված ՀՀ ԱԺ կայացած լսումների ընդհանուր թվաքանակին | | | |
| | | | ԱԺ կայացած քվեար-կություններից բացա-կայող պատգամավոր-ների թվի հարաբերու-թյունը ԱԺ պատգա-մավորների ընդհանուր թվաքանակին | Տվյալներ չկան | | |
| | 56.2 Կատարելագործել պատգամավորների շահերի հայտարարագրման մեխանիզմները | Շահերի բախման դեպքում պատգամավորի վարքագծի կանոններն օրենսդրորեն ամրագրված են | Պատգամավորների վարքագծի կանոններում սահմանվել են պատգամավորների կողմից շահերի հայտա-րարագրման կարգը և պայմանները (այո/ոչ) | Տեղեկություններ չկան | Արդյուք 1. Կատարված չէ:<br>Քաղաքական որոշման համաձայն ՀՀ Ազգային ժողովի հետ կապված օրենքների նախագծերը պետք է մշակվեն ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կամ ԱԺ պատգամավորների կողմից:<br><br>Ցուցիչ 1-4-ի վերաբերյալ ՀՀ ԱԺ կողմից տեղեկություններ չեն ստացվել: | ՀՀ<br>արդարադատութ<br>ան<br>նախարարությու |
| | | | ՀՀ ԱԺ պատգամավորի վարքականոնով կարգավորվում են շահերի բախման դեպքում պատգամավորի վարվելակերպը, պատգամավորի՝ իր լիազորությունները այլ անձանց պատվերով կամ ի շահ այլ անձանց կատարելու անթույլատրելիությունը, այլ անձանց կողմից, իրենց ընտանեկան, սոցիալական, պաշտոնական կամ այլ դիրքից ելնելով, պատգամավորի որոշման վրա ազդեցության բացառումն ամրագրող վարվելակերպի կանոնները (այո/ոչ) | Տեղեկություններ չկան | | |
| | | | «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով սահմանվել է պատգամավորի կողմից շահերի բախման | Տեղեկություններ չկան | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | պարագայում պարտադիր ինքանբացարկ հայտնելու մասին դրույթը (այո/ոչ) | | | |
| | | | ԱԺ-ում օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալուց, ինչպես նաև ԱԺ-ի ի և նրա հանձնաժողովների նիստերում հարցի քննարկումից (այդ թվում՝ քվեարկությունից) առաջ պատգամավորի կողմից հայտարարագրի ներկա-յացման դեպքերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում ԱԺ կայացած քվեարկու-թյունների ընդհանուր թվաքանակին | Տեղեկություններ չկան | | |
| | 56.3 Ապահովել պատգամավորի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի սահմանադրական դրույթների կատարումը | ՀՀ ԱԺ պատգամավորի կատարած գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքի իրականացման և դրա դիմաց վճարումը կատարելու կարգը սահմանված է<br>Իր կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության կամ ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդվածով նախատեսված այլ պայմանների խախտման դեպքում պատգամավորի կողմից ՀՀ ԱԺ իրավասու հանձնաժողովին անհապաղ տեղեկացնելու կարգը սահմանված է | «Ազգային ժողովի կա-նոնակարգ» ՀՀ օրենքով սահմանվել է տնտե-սական ընկերության պատգամավորների մասնակցության արգելվող և թույլատրվող ձևերը (այո/ոչ) | Տեղեկություններ չկան | Արդյունք 1. Կատարված չէ:<br>Քաղաքական որոշման համաձայն ՀՀ Ազգային ժողովի հետ կապված օրենքների նախագծերը պետք է մշակվեն ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կամ ԱԺ պատգամավորների կողմից:<br><br>Արդյունք 2. Կատարվել է մասնակիորեն: | ՀՀ արդարադատությ ան նախարարությու |
| | | | «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով սահմանվել է ԱԺ պատգամավորի կատարած գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքի իրականացման և դրա դիմաց վճարումը կատարելու կարգը (այո/ոչ) | Տեղեկություններ չկան | Քաղաքական որոշման համաձայն ՀՀ Ազգային ժողովի հետ կապված օրենքների նախագծերը պետք է մշակվեն ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կամ ԱԺ պատգամավորների կողմից:<br><br>Ցուցիչ 1-4-ի վերաբերյալ ՀՀ ԱԺ կողմից տեղեկություններ չեն ստացվել: | |
| | | | ՀՀ ԱԺ պատգամավորի կողմից Սահմանադրու-թյան 65-րդ հոդվածով նախատեսված և այլ պայմանների խախտման դեպքերի շուրջ իրավասու հանձնաժողովի կողմից կազմակերպված լսումների թվի | Տեղեկություններ չկան | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | հարաբերությունը նույն ժամանակահատվածում ԱԺ իրականացված լսումների ընդհանուր թվաքանակին | | | |
| | | | Սահմանադրության 65-րդ հոդվածով սահմանված պայմանների խախտման փաստի հայտնաբերման կամ այդ փաստի քննության առթիվ Ազգային ժողովի իրավասու հանձնաժողովի կողմից նախաձեռնած ԱԺ քննարկումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում ԱԺ իրականացված քննարկումների ընդհանուր թվաքանակին | Տեղեկությունն եր չկան | | |
| | 56.4 Ամբողջականցնել պատգամավորի կողմից նվերներ ստանալու արգելքին վերաբերվող նորմերը | Արգելված նվերը վերադարձնելու կամ պետությանը հանձնելու կարգը սահմանված է | Պատգամավորի կողմից նվերներ ստանալու արգելքի կարգավորման հիմքում դրված է պաշտոնատար անձանց կողմից նվերներ ստանալու արգելքի օրենսդրական կարգավորման դատավորի վարքագծի կանոններում ամրագրված դրույթները | Տեղեկությունն եր չկան | Արդույք 1. Կատարված չէ:<br>Քաղաքական որոշման համաձայն ՀՀ Ազգային ժողովի հետ կապված օրենքների նախագծերը պետք է մշակվեն ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կամ ԱԺ պատգամավորների կողմից:<br><br>Արդույք 2. Կատարվել է մասնակի:<br>Քաղաքական որոշման համաձայն ՀՀ Ազգային ժողովի հետ կապված օրենքների նախագծերը պետք է մշակվեն ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կամ ԱԺ պատգամավորների կողմից:<br><br>Ցուցիչ 1-6-ի վերաբերյալ ՀՀ ԱԺ կողմից տեղեկություններ չեն ստացվել:<br><br>Քանի որ 56-րդ կետով նախատեսված միջոցառումները կատարվում է ԱԺ կողմից, առաջարկվում է նշված կետից որպես պատասխանատու մարմին հանել ՀՀ արդարադատության նախարարությանը: | ՀՀ արդարադատությ ան նախարարությու |
| | | | Պատգամավորի կողմից ի պաշտոնե որևէ մեկից նվեր ընդունելու կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տալու, ինչպես նաև իր հետ բնակվող ընտանիքի անդամներին այդպիսի գործողություններից զերծ պահելու դրույթները և նվերներ ստանալու արգելքի չգործելու բացառությունները սահմանված են | Տեղեկությունն եր չկան | | |
| | | | Թույլատրելի համարվող նվերների այն | Տեղեկությունն եր չկան | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | առավելագույն արժեքը, որի գերազանցման մասին պատգամավորը պարտավոր է հայտնելի պատգամավորների վարքագծի կանոնների պահպանումը վերահսկող հանձաժողովին սահմանված է | | | |
| | | | Նվերը վերադարձնելու կամ պետությանը հանձնելու կարգը սահմանված է | Տեղեկություններ չկան | | |
| | | | Անհամարժեք ցածր գնով վաճառված գույքը կամ մատուցված ծառայությունը, փոխառությունը, ուրիշի գույքի անհատույց օգտագործումը ընդգրկող նվեր հասկացությունը սահմանված է | Տեղեկություններ չկան | | |
| | | | ՀՀ ԱԺ պատգամավորի կողմից նվերների ստացման դեպքերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում պատգամավորների վարքկանոնի հետ կապված ՀՀ ԱԺ կայացած լսումների ընդհանուր թվաքանակին | Տեղեկություններ չկան | | |
| 57. Կատարելագործել պատգամավորների անձեռնմխելիության համակարգը | 57.1 Սահմանել քաղաքական նկատառումներով պատգամավորների հետապնդումը բացառող պատգամավորական անձեռնմխելիության համակարգ | Պատգամավորական անձեռնմխելիությունը չարաշահողներին հայտնաբերելու, նրանց վերաբերյալ հասարակությանը պատշաճ կարգով տեղեկացնելու և նրանց նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու կանոնները սահմանված են | «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով սահմանվել է պատգամավորի կողմից որն է իրավահարաբերությունում իր անձեռնամխելիությանը հղում կատարելու անթույլատրելիության մասին դրույթը (այո/ոչ) | Տեղեկություններ չկան | Արդյուք 1. Կատարված չէ:<br>Քաղաքական որոշման համաձայն ՀՀ Ազգային ժողովի հետ կապված օրենքների նախագծերը պետք է մշակվեն ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կամ ԱԺ պատգամավորների կողմից:<br><br>Ցուցիչ 1-3-ի վերաբերյալ ՀՀ ԱԺ կողմից տեղեկություններ չեն ստացվել:<br><br>Քանի որ 57-րդ կետով նախատեսված միջոցառումները կատարվում է ԱԺ կողմից, | ՀՀ արդարադատությ ան նախարարությու |
| | | | Պատգամավորի անձեռնամխելիության վերանայմանը և/կամ վերացմանը նվիրված նախաձեռնությունների | Տեղեկություններ չկան | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատո ւ մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | թվի հարաբերությունը պատգամավորների ընդհանուր թվաքանակին | | առաջարկվում է նշված կետից որպես պատասխանատու մարմին հանել ՀՀ արդարադատության նախարարությանը: | |
| | | | ՀՀ ԱԺ պատգամավորի անձեռնամխելիության չարաշահումների հետ կապված բողոքների ու ԶԼՄ-ներում տեղ գտած հարապարակումների ամբողջական թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում պատգամավորների վարքագծի հետ կապված ՀՀ ԱԺ կայացած լսումների ընդհանուր թվաքանակին | Տեղեկություններ չկան | | |
| 58. Ապահովել օրենսդիր մարմնի աշխատանքներին քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների արդյունավետ մասնակցությունը | 58.1 Ընդլայնել ԱԺ հանձնաժողովների գործունեությանը քաղաքացիական հասարակության արդյունավետ մասնակցության հնարավորությունները | | Քաղաքացիական նախաձեռնությամբ հարցադրումների շուրջ կայացած լսումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում ԱԺ կայացած լսումների ընդհանուր թվաքնակին | Տեղեկություններ չկան | Արդյուք 1. Կատարված չէ:<br>Քաղաքական որոշման համաձայն ՀՀ Ազգային ժողովի հետ կապված օրենքների նախագծերը պետք է մշակվեն ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կամ ԱԺ պատգամավորների կողմից:<br><br>Ցուցիչ 1-2-ի վերաբերյալ ՀՀ ԱԺ կողմից տեղեկություններ չեն ստացվել: | ՀՀ արդարադատությ ան նախարարությու |
| | | | Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների լիարժեք մասնա-կցությամբ կայացած լսումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում ԱԺ կայացած լսումների ընդհանուր թվաքնակին | Տեղեկություններ չկան | | |
| | 58.2 Ընդլայնել խորհրդարանական լսումներին քաղաքացիների արդյունավետ մասնակցության հնարավորությունները | Քաղաքացիական նախաձեռնությամբ իրականացվող լսումներին կազմակերպող կողմի ներկայացուցիչների լիարժեք մասնակցությունը լսումներին ապահովող դրույթը սահմանված է | | | Արդյուք 1. Կատարված չէ:<br>Քաղաքական որոշման համաձայն ՀՀ Ազգային ժողովի հետ կապված օրենքների նախագծերը պետք է մշակվեն ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կամ ԱԺ պատգամավորների կողմից:<br><br>Քանի որ 58-րդ կետով նախատեսված միջոցառումները կատարվում է ԱԺ կողմից, առաջարկվում է նշված կետից որպես պատասխանատու մարմին հանել ՀՀ արդարադատության նախարարությանը: | ՀՀ արդարադատությ ան նախարարությու |

**3.13** Ընտրական համակարգ

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 59. Բացառել քաղաքական գործընթացներում ընտրական հանձնաժողովների անդամների ներգրավումը | 59.1 Բացառել ընտրական հանձնաժողովների անդամներին ակտիվ մասնակցությունը քաղաքական գործընթացներին ընտրություններին նախորդող վերջին մեկ տարվա ընթացքում | 1. ՀՀ Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների ձևավորման կարգը վերանայված է, հանձնաժողովների անդամներին ներկայացվող պահանջները սահմանված են օրենքով | 1. Ընտրական հանձնաժողովի անդամ նշանակված հանրային ծառայողների թիվը | 7 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br><br>Ազգային ժողովի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից մշակված Ընտրական օրենսգրքի նոր նախագիծն ընդունվել է ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2011 թվականի մայիսի 26-ին /ՀՕ-164-Ն/, որում նախատեսվել է ընտրական հանձնաժողովների ձևավորման նոր կարգ, ըստ որի կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները ձևավորվելու են մասնագիտական սկզբունքով, իսկ տեղամասային ընտրական հանձնաժողովները` խառը:<br><br>Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքը ՀՀ Նախագահի 2011թ. հուլիսի 13-ի` ԿԸՀ անդամներ նշանակելու մասին հրամանագրով<br><br>Ցուցիչ 2. Ցուցիչի արժեքը ՀՀ Նախագահի 2011թ. հուլիսի 13-ի` ԿԸՀ անդամներ նշանակելու մասին հրամանագրով<br><br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| | | | 2. Ընտրական հանձնաժողովի անդամ նշանակված հանրային ծառայողների թվի հարաբերությունը հանձնաժողովների անդամների ընդհանուր թվին | 100% | | |
| 60. Բարելավել ընտրական հանձնաժողովներին ուղղված դիմումների և բողոքների քննարկման գործընթացը | 60.1 Երաշխավորել անձանց սահմանադրական իրավունքների դատական արդյունավետ պաշտպանությունը ընտրությունների արդյունքներով պայմանավորված գործընթացներում | 1. Ընտրական հանձնաժողովների պատասխանատվությունը խստացնող դրույթները սահմանված են :<br>2. Ընտրական հանձնաժողովներում դիմումների և բողոքների քննարկման կարգը հստակեցված է` դրանում ներառելով ընտրական իրավահարաբերությունների համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին՝ ՀՀ օրենքի կիրառելի դրույթները, որպես պարտադիր պայման նախատեսելով բոլոր դիմում-բողոքների քննարկումը հանձաժողովի նիստում | 1. Կատարվել են ընտրական բողոքների քննարկման կարգի վերաբերյալ 2007թ. ԱԺ ընտրությունների կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանի առաջարկությունները (այո/ոչ) | այո | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br><br>Ընտրական հանձնաժողովներում դիմումների (բողոքների) ընթացակարգային քննարկման և դրա արդյունքում պատճառաբանված որոշումներ կայացնելու նպատակով ՀՀ ընտրական օրենսգրքում ամրագվեց մի դրույթ, որի համաձայն. <<Ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում:>>:<br><br>Հիմք` ՀՀ ընտրական օրենսգիրքի 45-րդ հոդվածի 1-ին մաս:<br><br>Արդյունք 2. Կատարված է ամբողջությամբ:<br><br>Ընտրական հանձնաժողովներում դիմումների (բողոքների) քննարկման կարգը հստակեցված է: Այստեղ կիրառվելու են <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի դրույթները` հաշվի առնելով ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված առանձնահատկությունները և ժամկետները:<br><br>Հիմք` ՀՀ ընտրական օրենսգիրքի 45-րդ և 47-րդ հոդվածներ:<br><br>Ցուցիչ 1. Տե'ս սույն կետի վերջին պարբերությունը<br><br>2-5-րդ ցուցիչների փաստացի արժեքները առարկայական տեսք կստանան առաջիկա խորհրդարանական ընտրությունների ժամանակ:<br><br>ՀՀ ընտրական օրենսգրքում կատարված վերը նշված փոփոխությունները ծանրակշիռ նախադրյալներ կստեղծեն ընտրական հանձնաժողովների | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| | | | 2. Ընտրական հանձնաժողովերում քննարկված դիմում-բողոքների թվի հարաբերությունը դիմում-բողոքների ընդհանուր թվին | Տվյալները բացակայում են: | | |
| | | | 3. Ընտրական հանձնաժողովներում դիմումների և բողոքների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած քննարկումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում կայացած դիմումբողոքների քննարկումների ընդհանուր թվաքանակին | Տվյալները բացակայում են: | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 4. Ընտրական հանձնաժողովների որոշումները դատական կարգով վիճարկելու դեպերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում հանձնաժողովների կողմից ստացված դիմումների և բողոքների ընդհանուր թվաքանակին | Տվյալները բացակայում են: | պատասխանատվության բարձրացման, անհրաժեշտության դեպքում` այդ հանձնաժողովների որոշումների դատական վիճարկման, իսկ ընտրությունների արդյունքներով պայամանավորված գործընթացներում` նաև անձանց սահմանադրական իրավունքների դատական արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու ուղղությամբ: | |
| | | | 5. Ընտրությունների արդյունքներով պայմանավորված գործընթացներում անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության դեպքերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում կայացած ու ընտրությունների հետ կապված դատական պրոցեսների ընդհանուր թվաքանակին | Տվյալները բացակայում են: | | |
| 61. Ընդլայնել ընտրական գործընթացների վերահսկողությանը քաղաքացիական հասարակության մասնակցությունը | 61.1 Ներդնել ընտրական գործընթացների վերահսկողությանը քաղաքացիական հասարակության մասնակցության արդյունավետությունն ապահովող մեխանիզմներ | 1.Քաղաքացիների իրազեկությունը ընտրական հանձնաժողովների լիազորությունների վերաբերյալ բարելավվել է ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում և Ընտրատարածքային հանձնաժողովներում ներդրված է «թեժ-գիծ»<br><br>2.Ընտրական գործընթացներում դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություննե րի, ՋԼՄ-ների ներկայացուցիչների հետ ԿԸՀ-ի կողմից ՀՀ | 1. Թեժ գծի միջոցով ընտրական հանձնաժողովների ստացած ահազանգերի թիվը | Տվյալները բացակայում են: | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br><br>Ընտրական գործընթացի վերաբերյալ քաղաքացիների իրազեկությունը բարելավելու նպատակով առաջիկա խորհրդարանական ընտրություններին ընդառաջ կենտրոնական ընտրական հանձնաժողովում կսահմանվի թեժ գիծ, որը կսպասարկի հանրապետության ողջ տարածքը: Ընտրական օրենսգրքի միատեսակ կիրառումն ապահովելու նպատակով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին հասցեագրված ահազանգերը տվյալ հանձնաժողովում գործող քաղաքացիական ծառայողը <<Ընտրություններ ավտոմատացված համակարգ>>-ի միջոցով կփոխանցի կենտրոնական ընտրական հանձնաժողովի թեժ գիծ, որից հետո կենտրոնական ընտրական հանձնաժողովը յուրաքանչյուր ահազանգի կապակցությամ կձեռնարկի համապատասխան օպերատիվ միջոցներ կամ կտա համապատասխան պարզաբանում:<br><br>Արդյունք 2. Կատարված է ամբողջությամբ:<br><br>ՀՀ ընտրական օրենսգրքով պետությունը պարտավորություն է ստանձնել պետական բյուջեի միջոցների հաշվին, անվճար Հայաստանի Հանրապետությունում գրանցված և ընտրական գործընթացներում դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների դիտորդների համար կազմակերպել ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ կամ դիտորդական առաքելություն իրականացնելու վկայական ստանալու համար | ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով. քաղաքացիական հասարակության միավորումներ (Համաձայնությամբ) |
| | | | 2. Թեժ գծի միջոցով ընտրական հանձնաժողովների ստացած ահազանգերի վերաբերյալ ձեռնարկված օպերատիվ միջոցների թվի հարաբերությունը ահազանգերի ընդհանուր թվին | Տվյալները բացակայում են: | | |
| | | | 3. Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների համար կազմակերպված դասընթացների թիվը | Տվյալները բացակայում են: | | |
| | | | 4. Դիտորդական առաքելության | Տվյալները բացակայում են: | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | ընտրական օրենսդրության վերաբերյալ մշակված ուսումնական ծրագրեր և իրականացված դասընթացներ | արդյունքներով հրապարակումների և մոնիտորինգի զեկույցների թվի հարաբերությունը դիտորդական առաքելություն իրականացրած կազմակերպությունների ու ԶԼՄ-ների ընդհանուր թվաքանակին | | ստուգարք:<br><br>Հիմք՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդված, 1-ին մաս, 1-ին կետ, 2-րդ պարբերություն:<br><br>1-ին, 2-րդ և 4-րդ ցուցիչների փաստացի արժեքները առարկայական տեսք կստանան առաջիկա խորհրդարանական ընտրությունների ժամանակ:<br><br>Ցուցիչ 3. Առաջին դասընթացը տեղի կունենա սույն թվականի սեպտեմբեր ամսին, քանի որ մինչև սույն թվականի հունիսի 26-ը ընտրական օրենսգիրքը Հայաստանի Հանրապետությունում գրանցված և ընտրական գործընթացներում դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների դիտորդների համար դասընթացներ կազմակերպելու հնարավորություն չէր տալիս: Ընդորում դասընթացների թիվը պայմանավորված կլինի դիմումների թվով:<br><br>Առաջարկություն՝ Քանի որ ընտրական գործընթացների վերաբերյալ ԶԼՄ-ների հրապարակումները ԿԸՀ-ի կողմից չեն հաշվառվում, ուստի առաջարկվում է ծրագրի 61-րդ կետի 4-րդ մոնիտորինգային ցուցիչը շարադրել հետևյալ կերպ. <<Դիտորդական առաքելության արդյունքների վերաբերյալ զեկույցների թվի հարաբերությունը դիտորդական առաքելություն իրականացրած կազմակերպությունների ընդհանուր թվաքանակին>>:<br><br>Վերը նշված փոփոխությունները կնպաստեն ընտրական հանձնաժողովների լիազորությունների վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև կզարգացնեն Հայաստանի Հանրապետությունում գրանցված և ընտրական գործընթացներում դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների դիտորդների գիտելիքները ընտրական գործընթացների վերաբերյալ, ինչն էլ իր հերթին կապահովի վերջիններիս կողմից ներկայացվող զեկույցների արժանահավատությանը: | |
| 62.Շարունակաբար կատարելագործել ընտրացուցակների վարման գործընթացը | 62.1 Բարձրացնել բնակչության պետական ռեգիստրի կազմման որակը և շարունակել տեղական ռեգիստրների ներդրման աշխատանքները | Ընտրացուցակները վերանայված են | Բնակչության տեղական ռեգիստրները ներդրվել են ՀՀ ողջ տարածքում (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Կատարված է մասնակի:<br>Ընտրողներին քվեարկության օրվա, քվեարկության տեղի և ժամանկի մասին ծանուցելու նպատակով ձևավորվող տեղեկատվության տրամադրման և ինտերնետ տեղեկատվական համակարգում ընտրողների ցուցակների տեղադրման համր ԵրՄՄԳՀ ինստիտուտից ստացվել է աշխատանքների բովանդակությունը, գնահատականը և գնահաշվարկը:Կազմվել է տեխնիկական առաջադրանքև ներկայացվել ՀՀ կառավարության համաշխարհային բանկ պետական հատվածի արդիականացման ծրագրերի իրականացման գրասենյակ՝ ֆինանսավորումը ապհովելու նպատակով: Հայտարարվել է մրցույթ, որին մասինակցելու համար հայտ ներկայացնելու ժամկետ է սահմանվել 15.07.2011թ.-ը:<br>Ցուցիչ 1. ՀՀ ոստիկանության ԱՎՎ տարածքային բաժանմունքներում ներդրվել են բնակչության տեղական ռեգիստրներ:<br>Ցուցիչ 2. Ցուցիչի արժեքի հաշվարկը իմաստավորված է նախընտրական շրջաններում: | ՀՀ ԿԱ Ոստիկանություն |
| | | | Ընտրացուցակներում տեղ գտած անճշտությունների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում ընտրացուցակների վերանայման ընդհանուր թվաքանակին | | | |
| | | | Ընտրացուցակներում տեղ գտած անճշտությունների վերաբերյալ բողոքների և դիմումների թվի հարաբերությունը նույն | Տվյալներ չկան | | |

<table>
<tr><th>Ռազմավարության դրույթներ</th><th>Միջոցառում</th><th>Ակնկալվող արդյունք 2011թ.</th><th>Մոնիտորինգի ցուցիչներ</th><th>Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը</th><th>Մեկնաբանություններ</th><th>Պատասխանատու մարմին</th></tr>
<tr><td></td><td></td><td></td><td>ժամանակահատվածում ընտրացուցակների վերանայման արդյունքներով իրականացված ճշգրտումների ընդհանուր թվաքանակին</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="3">63.Հստակ տարանջատել պաշտոնատար անձանց քաղաքական ընթացիկ գործունեությունը նախընտրական քարոզչությունից</td><td rowspan="3">63.1 Ապահովել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց քաղաքական գործունեության տարանջատումը նախընտրական քարոզչության գործընթացներից</td><td rowspan="3">1. Նախընտրական քարոզչության նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող գույքը նրանց կողմից անհատույց կամ արտոնյալ պայմաններով օգտագործելը արգելող դրույթները հստակեցված են:<br>2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող գույքի օգտագործումը բոլոր թեկնածուների համար հավասար հիմունքներով ապահովող կարգը սահմանված է:<br>3.Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում քաղաքական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքային պարտականությունների կատարումից ազատելու կարգը սահմանված է:</td><td>1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող գույքը նրանց կողմից անհատույց կամ արտոնյալ պայմաններով նախընտրական քարոզչության նպատակով օգտագործելու դրույթների խախտման վերաբերյալ բողոքների հարաբերությունը ընտրական գործընթացների վերաբերյալ դիմում-բողոքների ընդհանուր թվին</td><td>Տվյալները բացակայում են:</td><td rowspan="3">Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br><br>Քաղաքական, հայեցողական պաշտոններ զբաղեցնող, պետական, կամ համանքային ծառայող հանդիսացող թեկնածուներին արգելվում է նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված տարածքների, տրանսպորտային և կապի միջոցների, նյութական ու մարդկային ռեսուրսների օգտագործումը, բացառությամբ <<Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող միջոցառումների:<br>Նախընտրական քարոզչության նպատակով պետական սեփականությունն այս թեկնածուների կողմից օգտագործվում է, այլ թեկնածուների հետ հավասար պայմաններով :<br><br>Հիմք՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մաս 2-րդ կետ:<br><br>Արդյունք 2. կատարված է ամբողջությամբ:<br><br>ՀՀ ընտրական օրենսգրքում ամրագրվել է բոլոր թեկնածուների կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող գույքը հավասար հիմունքներով օգտագործելու հանարավորություն:<br><br>Հիմք՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդված, 2-րդ մաս:<br><br>Արդյունք 3. Կատարված է մասնակիորեն:<br><br>Ըստ ՀՀ ընտրական օրենսգրքի Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի պատգամավորի թեկանածուները, բացառությամբ քաղաքական պաշտոն զբաղեցնողների, որպես թեկնածու գրանցվելուց հետո՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը, (ԱԺ-ի դեպքում մինչև նախընտրական քարոզչության ավարտը) ազատվում են իրենց աշխատանքային պարտականությունները կատարելուց:<br><br>Հիմք՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ մաս և 107-րդ հոդված 2-րդ մաս:<br><br>Ցուցիչ 1. Կլրացվի առաջիկա համապետական ընտրությունների ժամանակ:<br><br>Ցուցիչ 2. Տե'ս <<Արդյունք 1>>-ը:<br><br>Ցուցիչ 3. Տե'ս <<Արդյունք 2>>-ը:</td><td rowspan="3">ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով</td></tr>
<tr><td>2. Օրենսդրորեն ամրագրվել է նախընտրական քարոզչության նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող գույքի օգտագործումը բոլոր թեկնածուների համար հավասար հիմունքներով նախատեսելու դրույթը (այո/ոչ)</td><td>այո</td></tr>
<tr><td>3. Օրենսդրորեն սահմանվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ ընտրողների հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ</td><td>այո</td></tr>
</table>

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կազմակերպելու նպատակով թեկնածուներին դահլիճներ և այլ շինություններ տրամադրելու պարտականություն | | Ցուցիչ 4. ՀՀ ընտրական օրենսգիրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն. <<Արգելվում է քարոզչական պաստառներ փակցնելը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած շենքերի, հասարակական սննդի, առևտրի օբյեկտների և հասարակական տրանսպորտի վրա կամ ներսում` անկախ սեփականության ձևից:>>:<br><br>Ցուցիչ 5. Հիմնավորում: Որպես թեկնածու գրանցվելուց հետո աշխատանքային պարտականությունների կատարումից ազատվելու սահմանափակումը քաղաքական պաշտոն զբաղեցնող թեկնածուների վրա չի տարածվում, քանի որ հակառակ դեպքում հնարավոր է, որ երկիրը որոշակի ժամանակահատվածով չունենա Ազգային ժողով, կառավարություն և Հանրապետության Նախագահ: Ի դեպ այդպիսի նախադեպ չկա նաև միջազգային պրակտիկայում:<br><br>Վերը նշված փոփոխությունները հնարավորություն կտան տարանջատել պաշտոնատար անձանց ընթացիկ գործունեությունը նախընտրական քարոզչությունից և թեկնածուների համար կապահովեն ոչ խտրական պայմաններ: | |
| | | | 4. Օրենսդրորեն արգելվել է նախընտրական քարոզչական նյութերի փակցնումը հանրային սեփականություն հանդիսացող վայրերում (այո/ոչ) | այո | | |
| | | | 5. Օրենսդրորեն սահմանվել է նախընտրական քարոզչության ժամանակահատվածում քաղաքական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքային պարտականությունների կատարումից ազատելու կարգը (այո/ոչ) | Սահմանվել է մասանկիորեն: | | |
| 64. Խստացնել ընտրակաշառք երևույթի դեմ պայքարը | 64.1 Ապահովել ընտրակաշառք երևույթի դեմ պայքարի կանխարգելումը, հայտնաբերումն ու հանրությանը դրա վերաբերյալ իրազեկումը | 1.Ընտրակաշառք բաժանողներն ու վերցնողները հայտնաբերվել և պատասխանատվությ ան են ենթարկվել:<br>2. Ընտրողների իրավագիտակցության բարձրացմանն ուղղված հանրամատչելի ուսուցողական ծրագրեր | 1. «Բարեգործության մասին» ՀՀ օրենքում և ընտրական օրենսգրքում կատարված է փոփոխություն, ըստ որի բարեգործական ծրագրերի իրականացումը նախընտրական քարոզչությունը սկսելու օրվանից մինչև քվեարկության օրը ներառյալ արգելվում է` բացառությամբ սահմանված դեպքերի (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>ՀՀ ԱԺ կողմից ընդունված նոր ընտրական օրենսգրքով կարգավորվել են համապատասխան հարաբերությունները:<br>Մասնավորապես վերոգրյալ օրենսգրքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն. «Նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ: Այն բարեգործական կազմակերպությունները, որոնց անվանումները կարող են նմանեցվել (ասոցացվել) կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների անվանումներին, թեկնածուների անուններին, նախընտրական քարոզչության ժամանակ բարեգործություն չեն կարող իրականացնել այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, որոնց մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները կամ նրանց առաջադրած թեկնածուները»:<br><br>Արդյունք 2. Կատարված է ամբողջությամբ:<br><br>Ընտրողների իրավագիտակցության բարձրացման նպատակով յուրաքանչյուր համապետական ընտրության ժամանակ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պատվերով նկարահանվում և գրեթե բոլոր | ՀՀ արդարադատության նախարարություն,<br><br>ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով,<br><br>ՀՀ ԿԱ ոստիկանություն |
| | | | 2. Օրենսդրորեն սահմանվել է նախընտրական քարոզչության հետ միաժամանակ բարեգործություն իրականացնելու համար վարչական պատասխանատվություն | Այո | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | (այո/ոչ) | | հեռուստաընկերություններով հեռարձակվում են հանրամատչելի ուսուցողական տեսահոլովակներ ընտրողի ընտրական իրավունքի իրականացման և դրա պաշտպանության վերբերյալ:<br>Բացի այդ յուրաքանչյուր համապետական ընտրության ժամանակ կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակում է ուսումնական ձեռնարկ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների, վստահված անձանց և դիտորդների համար, ինչպես նաև հանձնաժողովի անդամների և անդամության թեկնածու հանդիսացող ընտրողների համար կազմակերպում է ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ:<br><br>Հիմք` ՀՀ ընտրական օրենսգրքի 39-րդ հոդված 3-րդ մաս և 49-րդ հոդված, 1-ին մասի 15-րդ կետ:<br><br>Ցուցիչ 1. 2009 թվականի համար նախատեսված <<նախընտրական քարոզչության հետ միաժամանակ բարեգործություն իրականացնելն արգելող դրույթը և դրա խախտման համար վարչական պատասխանատվությունը սահմանված են>> ակնկալվող արդյունքը ամբողջությամբ կատարվել է 2011թվականին: Մասնավորապես ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 7-րդ մասը ամրագրում է. <<Այն բարեգործական կազմակերպությունները, որոնց անվանումները կարող են նմանեցվել (ասոցացվել) կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների անվանումներին, թեկնածուների անուններին, նախընտրական քարոզչության ժամանակ բարեգործություն չեն կարող իրականացնել այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, որոնց մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները կամ նրանց առաջադրած թեկնածուները:>><br><br>Ցուցիչ 2. 2009 թվականի համար նախատեսված <<նախընտրական քարոզչության հետ միաժամանակ բարեգործություն իրականացնելն արգելող դրույթը և դրա խախտման համար վարչական պատասխանատվությունը սահմանված են>> ակնկալվող արդյունքը ամբողջությամբ կատարվել է 2011թվականին: Մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում բարեգործության հետ միաժամանակ նախընտրական քարոզչություն իրականացնելու համար պատասխանատվություն է նախատեսվել նվազագույն աշխատավարձի հազարապատիկից երկուսուկեսհազարապատիկի չափով: /ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 40.10-րդ հոդված:/<br><br>Ցուցիչ 3. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը նման տվյալներ չի տիրապետում:<br><br>Ցուցիչ 4. Կլրացվի առաջիկա համապետական ընտրությունների ժամանակ:<br><br>Ցուցիչ 5. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը նման տվյալներ չի տիրապետում:<br><br>Այս բաժնում կատարված փոփոխությունները կնպաստեն ընտրողների իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը և կապահովեն կողմնակի ազդեցություններից զերծ միջավայրում ընտրողի ազատ կամարտահայտության արդյունքի ձևավորումը: | |
| | | | 3. Ընտրողներին կաշառելու. այդ թվում` նախընտրական քարոզչության ժամանակահատվածում քաղաքացիներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ ծառայություններ տալու, մատուցելու, խոստանալու ինչպես նաև կուսակցությունների կողմից որևէ ձևով ընտրողներին ֆինանսական և/կամ նյութական օժանդակություն ցուցաբերելու մասին հայտնելու արդյունքում բացահայտված հանցագործությունների հարաբերությունը հայտնելու արդյունքում չբացահայտված դեպքերին | Տեղեկություններ չկան | | |
| | | | 4. Ընտրություններին մասնակցած քաղաքացիների թվի հարաբերությունը ընտրացուցակներով նախատեսված ընտրողների ընդհանուր թվաքանակին | Տեղկություններ չկան | | |
| | | | 5. ՀՀ կառավարությունը դրամաշնորհներ է տրամադրում ընտրողների իրավագիտակցության բարձրացմանն ուղղված հանրամատչելի ուսուցողական ծրագրերի կազմակերպման նպատակով (այո/ոչ) | Տեղեկություններ չկան | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 65.Բարձրացնել կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությունը և ֆինանսական գործունեության վերահսկողությունը | 65.1 Կուսակցությունների ֆինանսավորման մեխանիզմները համապատասխանեցնել ՀՀ ընտրական օրենսգրքով՝ նախընտրական հիմնադրամների ձևավորման համար սահմանված մեխանիզմներին | | «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կուսակցությունների ֆինանսավորման ընթացակարգերը համապատասխանեցվել են ՀՀ ընտրական օրենսգրքում սահմանված նորմերին (այո/ոչ) | Ոչ | Արդյունքներ չեն նախատեսվել:<br><br>Կատարվել են ուսումնասիրություններ, աշխատանքներ են տարվում կուսակցությունների ֆինանսավորման ընթացակարգերը ՀՀ ընտրական օրենսգրքում սահմանված նորմերին համապատասխանեցնելու և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև ՀՀ համայնքների բաժնեմասով տնտեսական կազմակերպությունների կողմից կուսակցություններին նվիրատվությունների կատարումը արգելվելու վերաբերյալ նախագծերի մշակման ուղղությամբ:<br>Մշակվել է համապատասխան նախագիծ, որի համաձայն չի թույլատրվում նվիրատվություններ՝<br>1) բարեգործական կամ կրոնական կազմակերպություններից, ինչպես նաև դրանց մասնակցությամբ կազմակերպություններից.<br>2) պետական և համայնքային բյուջեներից և/կամ արտաբյուջետային միջոցներից, բացառությամբ սույն Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն կատարվող ֆինանսավորման.<br>3) պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններից և պետական ու համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպություններից.<br>4) նվիրատվության կատարման Օրվանից մինչև վեց ամիս առաջ գրանցված իրավաբանական անձանցից.<br><br>Ցուցիչներ 1. 2, արժեքն այն է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի հետ համատեղ մշակվել են համապատասխան իրավական ակտերի նախագծեր, որոնք, սակայն դեռևս չեն ընդունվել: | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | | | «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքով արգելվել է քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև ՀՀ համայնքների բաժնեմասով տնտեսական կազմակերպությունների կողմից կուսակցություններին նվիրատվությունների կատարումը (այո/ոչ) | Ոչ | | |
| | 65.2 Ներդնել կուսակցությունների ֆինանսական գործունեության աուդիտի ինստիտուտը | Պարտադիր աուդիտի անցկացման համար անհրաժեշտ գումարները ներառված են պետության կողմից կուսակցությանը տրամադրվող ֆինանսական աջակցության ծավալներում | ՀՀ օրենսդրությամբ ամրագրվել է յուրաքանչյուր համապետական ընտրություններից հետո բոլոր կուսակցությունների կամավոր աուդիտի անցկացման մասին դրույթներ (այո/ոչ) | ոչ | Արդյունք 1. Կատարվել է մասնակիորեն:<br>ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> ՀՀ օրենքի նախագիծը, որը համաձայնեցվել է բոլոր շահագրգիռ գերատեսչությունների հետ:<br><br>Ցուցիչներ 1, 2 արժեքի հիմքն այն է, որ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> ՀՀ օրենքը դեռևս չի ընդունվել:<br><br>Ցուցիչներ 3,4,5,6.7 Տեղեկություններ չեն ստացվել.<br><br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ Վերահսկիչ պալատ |
| | | | Կուսակցությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի չափորոշիչներով սահմանվել է պարտադիր աուդիտի անցկացման համար անհրաժեշտ գումարները պետության կողմից կուսակցություններին տրամադրվող ֆինանսական աջակցության ծավալներում ներառելու դրույթը (այո/ոչ) | ոչ | | |
| | | | Կուսակցությունների | Տեղեկություններ չկան | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011թ.** | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կողմից ներկայացված հայտարարագրերի թվի հարաբերությունը առկա կուսակցությունների ընդհանուր թվաքանակին | | | |
| | | | Կուսակցությունների կողմից ներկայացված և օրենսդրական խախտումներ պարունակող ֆինանսական հայտարարագրերի թվի հարաբերությունը առկա կուսակցությունների ընդհանուր թվաքանակին | Տեղեկություններ չկան | | |
| | | | Կուսակցությունների կողմից ներկայացված հայտարարագրերի արդյունքներով իրավասու մարմինների կողմից իրականացված գործողությունների թվի հարաբերությունը կուսակցությունների կողմից ներկայացված հայտարարագրերի ընդհանուր թվաքանակին | Տեղեկություններ չկան | | |
| | | | Իրավասու մարմինների կողմից գնահատված նախընտրական քարոզարշավներում ծախսված ֆինանսական միջոցների աճով պայմանավորված գումարի հարաբերությունը նախընտրական քարոզարշավում օրենսդրորեն թույլատրված գումարի չափին | Տեղեկություններ չկան | | |
| | | | Ներկայացված հայտարարագրերի թվի հարաբերությունը ընտրություններին մասնակցած և օրենսդրորեն հայտարարագրեր ներկայացնելու պարտավորություն | Տեղեկություններ չկան | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ունեցող կուսակցությունների ընդհանուր թվաքանակին | | | |
| 66. Վերացնել բոլոր մակարդակների ընտրական հանձնաժողովի անդամների, ՀՀ ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում գրանցված թեկնածուների անձեռնամխելիությունը | 66.1 Սահմանափակել ընտրական գործընթացի մասնակիցների անձեռնամխելիության մակարդակը | ՀՀ ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում գրանցված թեկնածուների անձեռնամխելիության վերացման օրենսդրական փոփոխությունների նախագիծ | Բոլոր մակարդակների ընտրական հանձնաժողովի անդամների անձեռնամխելիությունը վերացմած է(այո/ոչ) | Այո | Արդյունք. 1 Կատարվել է ամբողջությամբ:<br>ՀՀ ընտրական նոր օրենսգրքում նախատեսված չէ հանձնաժողովի անդամների և ընտրությունների ընթացքում գրանցված թեկնածուների անձեռնամխելիության հետ կապված որևէ դրույթ:<br><br>Ցուցիչներ 1, 2 արժեքի հիմքն այն է, որ ՀՀ ընտրական օրենսգիրքը ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է 2011թ. մայիսի 26-ին (ՀՕ-164-Ն):<br><br>Իրավիճակը գնահատվում է դրական: | ՀՀ արդարադատության նախարարություն, |
| | | | ՀՀ ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում գրանցված թեկնածուների անձեռնամխելիությունը վերացված է(այո/ոչ) | Այո | | |

**3.14** Տեղական ինքնակառավարում

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 70. Բարձրացնել համայնքի ֆինանսական անկախությունը և համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի կառավարման արդյունավետությունը | 70.6 Ապահովել գույքահարկի և հողի հարկի հաշվառման և գանձման տեղեկատվական ավտոմատացված համակարգերի արդյունավետ շահագործումը | Գույքահարկի և հողի հարկի տվյալների շտեմարաններում անճշտությունների վերացում, գույքահարկի և հողի հարկի հաշվառման և գանձման տեղեկատվական ավտոմատացված համակարգերի կատարելագործում և արդյունավետ շահագործում | Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների հավաքագրման մակարդակի աճ, (տոկոս) | Տվյալներ չկան | Արդյունք 1.Իրականացված է մասնակիորեն<br>2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ հողի հարկ վճարողներին հաշվառող մարմին դեռևս չհանդիսացող թվով 47 համայնքները ՀՀ կառավարության 13.02.2003թ. «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N192-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան, 2010թ. տարեվերջին ստանձնել են հողի հարկ վճարող ֆիզիկական անձանց և կազմակերպություններին հաշվառող մարմնի գործառույթները:<br>Հողի հարկ վճարող ֆիզիկական անձանց և կազմակերպություններին հաշվառող մարմնի գործառույթները ստանձնող բոլոր համայնքների համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների համար մինչև տեղեկատվական համակարգերի փոխանցումը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվել են գույքահարկի և հողի հարկի հաշվարկման ու վճարման հարցերը կարգավորող օրենսդրության սեմինարներ:<br>2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության բոլոր տեղական ինքնակառավարման մարմինները հանդիսանում են հողի հարկ վճարողների հաշվառման գործառույթներ իրականացնող տեղական ինքնակառավարման մարմիններ:<br>Գույքահարկի և հողի հարկի հաշվառման տեղեկատվական ավտոմատացված համակարգերի շահագործման արդյունավետության բարձրացման, մասնավորապես լիազոր մարմինների կողմից հաշվառող մարմիններին համապատասխան տեղեկությունների ներկայացման, հաշվառման և դրանց արժանահավատության բարձրացման խնդիրների լուծման նպատակով 2011թ. հունիսի 10-ին ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում կայացել է խորհրդակցություն՝ շահագրգիռ մարմինների (ՀՀ ԿԱ ՊԵԿ, ՀՀ ԿԱ ոստիկանության, ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ, ՀՀ մարզպետարանների, համայնքների) ներկայացուցիչների մասնակցությամբ:<br>Խորհրդակցության ընթացքում քննարկվել են առկա խնդիրները և ներկայացվել են դրանց լուծման նպատակով համապատասխան մարմինների կողմից իրականացման ենթակա գործողությունները: | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ՀՀ համայնքներ |
| | | | Բյուջետային ծախսերի չափը համայնքի բնակչության մեկ շնչի հաշվով (դրամ) | Տվյալներ չկան | | |
| | 70.7 Բարձրացնել համայնքի տարածքում գործունեության թույլտվությունների տրամադրման և դրանց դիմաց տեղական տուրքերի և վճարների գծով գանձումների ապահովման գործընթացի արդյունավետության մակարդակը | Տեղական տուրքերի և վճարների գծով գանձումների արդյունավետ մակարդակ | Տեղական տուրքերի և վճարների գանձման ավտոմատացման համակարգ կիրառող համայնքների թիվը ընդհանուրի մեջ (տոկոս) | 19,45% | Արդյունք 1. Իրականացված է մասամբ:<br>178 համայնքներում ներդրված է տեղական տուրքերի և վճարների կառավարման համակարգ:<br>Ցուցիչ 1. 915 համայնքներից 178-ում ներդրված է համակարգը: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն Հասարակական կազմակերպություննե ր (համաձայնությամբ |
| | 70.8 Ներդնել համայնքի սեփականություն համարվող գույքի արդյունավետ կառավարման միասնական տեղեկատվական համակարգեր ու գույքի կառավարման պլաններ | Ներդրված համայնքի սեփականություն համարվող գույքի արդյունավետ կառավարման միասնական տեղեկատվական համակարգեր ու գույքի կառավարման պլաններ | Համայնքների սեփական եկամուտների տեսակարար կշիռը բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ (տոկոս) | 29,4% | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>Մշակվել է համայնքի սեփականություն համարվող գույքի կառավարման պլանների մշակման վերաբերյալ ուղեցույց և այն տրամադրվել է բոլոր համայնքներին<br>Ցուցիչ 1. ՏԿՆ տեղեկատվական համակարգի տվյալներ: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն Հասարակական կազմակերպություննե ր (համաձայնությամբ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| | 70.10 Սահմանել համայնքային գնումների գործընթացի կազմակերպման ընթացակարգեր` ուղղված գործընթացի թափացիկության ու հրապարակայնության բարձրացմանը | Էլեկտրոնային գնումների հայեցակարգի մշակումից հետո այնտեղ ամրագրված սկզբունքների և մեխանիզմների կիրառում ՀՀ համայնքներում համայնքային գնումների ավելի թափանցիկ ու հրապարակային գործընթաց, ապահովելու արդյունքում համայնքի բյուջեի ծախսերի արդյունավետություն ու խնայողություն | Համայնքների գնումների գործընթացի կազմակերպման վերաբերյալ բողոքների թիվը, ընդհանուր բողոքների մեջ (տոկոս) | Տվյալներ չկան | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն<br><br>Էլեկտրոնային մրցույթների համակարգի ներդրման նպատակով 2010թ. Կազմակերպված միջազգային մրցույթի արդյունքում ընտրվել է խորհրդատու, որի հետ հունիս ամսին կնքվել է պայմանագիր: Համակարգի շահագործումը նախատեսվում է սկսել 2011թ-ից: | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| 72. Բարձրացնել ՏԻՄ-երի գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը | 72.1 Ներդնել բնակչությանը ՏԻՄ-երի գործունեության մասին պարբերաբար իրազեկելու ընթացակարգեր | Համայնքի դերի բարձրացում` բնակչության իրազեկվածության, մասնակցության պատրաստակամության բավարար մակարդակ | Բնակչության գիտակցության և իրազեկության մակարդակը համայնքի դերի և գործունեության մասին (համայնքային հարցման տվյալներ) | Տվյալներ չկան | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>ՀՀ ՏԿ նախարարության մասնագետների կողմից ՀՀ մարզխորհուրդների նիստերում և համայնքներում կազմակերպվում են խորհրդակցություններ, որտեղ քննարկվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանն առնչվող խնդիրներ և դրանց վերաբերյալ տրվում պարզաբանումներ ։ Բացի այդ, ՀՀ մարզպետարանների կողմից համայնքներում հրավիրվել են բնակիչների ընդհանուր ժողովներ, ՀԿ-ների կողմից կազմակերպվել են համայնքների բյուջեների և դրանցում փոփոխություններ կատարելու նախագծերի հրապարակային քննարկումներ:<br>Ցուցիչ 1, Ցուցիչ հաշվարկի համար անհրաժեշտ է իրականացնել համապատասխան զանգվածային հարցում: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն |
| | 72.2 Սահմանել համայնքի բյուջեի նախագծի և բյուջեի կատարման վերաբերյալ տեղեկատվության պարտադիր հրապարակման և հանրային քննարկումների կազմակերպման հստակ ընթացակարգեր | Սահմանված ընթացակարգերի հետևողական կիրառում, համայնքի բյուջեի և դրա կատարման հաշվետվությունների թափանցիկության և հրապարակայնության էական բարձրացում | Համայնքի բյուջեի նախագծի և բյուջեի կատարման վերաբերյալ տեղեկատվության հրապարակումների և/կամ կազմակերպված հանրային քննարկումների թիվը | 908 | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>ՀՀ համայնքների 2010թ. բյուջեների կատարման և 2011թ. բյուջեների կազմման գործընթացների թապանցիկության և հրապարակայնության վերաբերյալ ՀՀ մարզպետներին տրվել են հստակ հանձնարարականներ, որոնք քննարկվել են մարզխորհուրդների նիստերում, տեղերում ցուցաբերվել է խորհրդատվական օժանդակություն: Գործընթացի իրականացումը պարբերաբար ուսումնասիրվում է:<br>Ցուցիչ 1. Համաձայն ՀՀ մարզպետարանների զեկույցների`<br>համայնքային բյուջեների եռամսյակային և տարեկան հաշվետվությունները, հաստատված բյուջեն և նրանում կատարվող փոփոխությունները հրապարակվել են թվով 908 համայնքների ցուցատախտակներին փակցնելու և և այլ միջոցներով: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն |
| | 72.4 ՏԻՄ-երում քաղաքացիների ընդունելության կազմակերպման գործընթացի կատարելագործում | Համայնքի ղեկավարի և ավագանու գործունեության թափանցիկության բարձրացում, ՏԻՄ-երի հանրային կապերի ուժեղացում | ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայությունների վերաբերյալ բնակչության բողոքների և դիմումների թիվը | Տվյալներ չկան | Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն.<br><br>Ցուցիչ 1, 2010 թվականի 1-ին եռամսյակում ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայությունների վերաբերյալ բնակչության բողոքներ և դիմումներ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն չեն ներկայացվել: Առաջարկվում է հստակեցնել ցուցիչը` բողոքների հասցեականության առումով: Հարկ է նշել, որ առ 01.04.2011թ.` համայնքների ղեկավարների ընդունելություններին մասնակցել է թվով 37771, իսկ ավագանու ընդունելություններին` 8060 քաղաքացի ։ | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ համայնքներ |
| | 72.5 Կատարելագործել համայնքի սեփականություն | Համայնքի սեփականություն | Համայնքի | Տվյալներ չկան | Արդյունք 1.Կատարված է մասնակիորեն | ՀՀ տարածքային կառավարման |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | համարվող գույքի հրապարակային սակարկությունների կառուցակարգերը և ընթացակարգերը | համարվող գույքի հրապարակային սակարկությունների թափանցիկության ու հրապարակայնության աստիճանական բարձրացում | սեփականություն համարվող գույքի օտարման և/կամ օգտագործման տրամադրման հետ կապված բողոքների ու դիմումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում գույքի օտարման և/կամ օգտագործման տրամադրման վերաբերյալ կայացված որոշումների ընդհանուր թվին | | Գնահատելի է տարեկան կտրվածքով:<br><br>Ցուցիչ 1. Համայնքի սեփականություն համարվող գույքի օտարման և/կամ օգտագործման տրամադրման հետ կապված բողոքներ ու դիմումներ ՀՀ ՏԿ նախարարություն չեն ներկայացվել: | նախարարություն<br>ՀՀ համայնքներ |
| | 72.6 Բարձրացնել ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայություններում բնակչության իրազեկության և ներգրավվածության մակարդակը | ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայություններում բնակչության իրազեկության և ներգրավվածության մակարդակի աստիճանական բարձրացում` օգտագործելով հանրային կապերի մատչելի ձևերը (ԶԼՄ-եր, հեռուստատեսություն, հանդիպումներ, սոցիոլոգիական հարցումներ և այլն) | Տեղական ինքնակառավարման բնագավառում պետական քաղաքականության լուսաբանմանը նվիրված հեռուստաեթերի ժամաքանակի հարաբերությունը բնակչությանը ՏԻՄ-երի գործունեության մասին իրազեկմանը նվիրված ընդհանուր եթերաժամին | | Արդյունք 1.Կատարված է մասնակիորեն<br>Գնահատելի է տարեկան կտրվածքով:<br><br>Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքի հաշվարկը կապված է մեծ ֆինանսական ծախսերի հետ:<br>Առաջարկվում է ցուցիչը վերասահմանել` «Տեղական ինքնակառավարման բնագավա-ռում պետական քաղաքականության լուսաբանմանը նվիրված հեռուստաեթերի ժամա-քանակը»: Իրատեսական է ցուցիչի հաշվարկը ԶԼՄ-ների որևէ ասոցիացիայի կողմից:<br>Հարկ է նշել նաև, որ Համայնքի սեփականություն համարվող գույքի արդյունավետ կառավարման միասնական տեղեկատվական համակարգեր ներդրված են թվով 230 համայնքներում: Մի շարք քաղաքային համայնքներում բացվել են քաղաքացիների սպասարկման գրասենյակներ, աշխատանքները շարունակվում են | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ համայնքներ |
| | | | Համայնքի ղեկավարի և ավագանու կողմից կազմակերպված ընդունելություններին մասնակցած քաղաքացիների թիվը, ըստ համայնքների | 45831 | Ցուցիչ 2. Համայնքի ղեկավարի և ավագանու կողմից կազմակերպված ընդունելություններին մասնակցած քաղաքացիների թիվը` ըստ համայնքների, հնարավոր չէ ներկայացնել մեկ տողով: | |
| 73. Բարձրացնել ՏԻՄ-երի գործունեության հաշվետվողականությունը | 73.3 Հստակեցնել համայնքում ներքին վերահսկողության ընթացակարգերը | Ներքին աուդիտների անցկացման արդյունավետության բարձրացում, ՏԻՄ-երի պատասխանատվության և հաշվետվողականության բարձրացում | Ներքին վերահսկողության ընթացակարգեր ներդրած համայնքների թիվը | Տվյալներ չկան | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>ՀԲ-ի աջակցությամբ 2011-2012թթ. Ժամանակահատվածում իրականացվելու են պիլոտային աշխատանքներ հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի համակարգի բարելավման նպատակով: Արդյունքների վերլուծության հիման վրա կլրամշակվի ներքին աուդիտի օրենսդրությունը, ինչը կբարձրացնի նշված համակարգի արդյունավետությունը: | ՀՀ ֆինանսների նախարարություն,<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն |
| | 73.4 Օրենսդրորեն սահմանել համայնքի քառամյա զարգացման ծրագրի | Համայնքի քառամյա զարգացման ծրագրի կատարման վերաբերյալ | Համայնքի քառամյա զարգացման ծրագրի կատարման | Տվյալներ չկան | Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն:<br>2011թ. առաջին կիսամյակի ընթացքում տարվել են աշխատանքներ` համայնքի քառամյա զարգացման ծրագրի կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի հաշվետվությունը կազմելու, ավագանու քննարկմանն ու հաստատմանը ներկայացնելու և հրապարակելու դրույթներ, ընդունել և ներդնել համապատասխան ընթացակարգեր | համայնքի ղեկավարի հաշվետվողականությա ն ներդրում, համապատասխան ընթացակարգերի կիրառում | վերաբերյալ համայնքնի ղեկավարի կողմից հաշվետվությունները ավագանու քննարկմանն ու հաստատմանը ներկայացրած և հրապարակած համայնքների տեսակարար կշիռը ընդհանուր համայնքների թվում, տոկոս | | հաշվետվությունը կազմելու, ավագանու քննարկմանն ու հաստատմանը ներկայացնելու ընթացակարգերի սահմանման, համայնքի քառամյա զարգացման ծրագրի հրապարակման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման ուղղությամբ:<br><br>Ցուցիչ 1. Գնահատելի է տարեկան կտրվածքով: | ՀՀ համայնքներ |
| | 73.5 Սահմանել համայնքային ծառայություններ մատուցող կազմակերպությունների աշխատանքների կատարման հստակ ցուցանիշներ և համայնքներում ներդնել մոնիտորինգի և գնահատման համակարգեր ու ընթացակարգեր | Համայնքային ծառայությունների մատուցման մոնիտորինգի և գնահատման ներդրված համակարգեր ու ընթացակարգեր | Համայնքներում ներդրվել են համայնքային ծառայություններ մատուցող կազմակերպություննե րի աշխատանքների մոնիտորինգի և գնահատման համակարգեր և ընթացակարգեր (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի նիստի թիվ 38 արձանագրությամբ հավանության արժանացած ՀՀ մարզերի զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման հայեցակարգը, համաձայն որի մշակվեց և ՀՀ կառավարության կողմից հաստատվել են 10 մարզերի մարզային զարգացման ծրագրերը: Ծրագրերի հիմնական նպատակներից է նաև համայնքային ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների որակը և մատչելիությունը, որոնց նկատմամբ մարզպետարանների կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով հսկողություն իրականացնելու համար մշակվել և ներդրվել են մոնիտորինգի և գնահատման համակարգեր:<br>Հիմքը` ՀՀ կառավարության 07.05.2009թ. N 505-Ն, 26.06.2009թ. N 782-Ն, 01.12.2009թ. N 1330-Ն, 25.02.2010թ. N271-Ն, 16.03.2010թ. N 353-Ն, 29.04.2010թ. N 560-Ն, 06.05.2009թ. N 609-Ն, 22.07.2010թ. N 1060-Ն, 30.08.2010թ. N 1756-Ն որոշումներ: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>Ըստ ՏԻՄ-երի լիազորությունների ոլորտների` պաշտոնական լիազոր մարմիններ<br>Հասարակական կազմակերպություննե ր (համաձայնությամբ) |
| | 73.6 Հստակեցնել ՀՀ համայնքների սեփականություն համարվող գույքի պարտադիր պետական գրանցման պայմաններն ու ընթացակարգերը | ՀՀ համայնքների սեփականություն համարվող գույքի պարտադիր պետական գրանցման հետևողական ապահովում և ավարտ | Համայնքի սեփականություն համարվող գույքը ամբողջությամբ պետական գրանցում կատարած համայնքների թվի հարաբերությունը ՀՀ բոլոր համայնքների թվին (տոկոս) | | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն<br>Գնահատելի է տարեկան կտրվածքով:<br><br>Շարունակվում է իրավունքի պետական գրանցում չունեցող համայնքային սեփականություն համարվող վարչական շենքերի և շինությունների գրանցման գործընթացը<br><br>Ցուցիչ 1. Գնահատելի է տարեկան կտրվածքով: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն |
| 74. Բարձրացնել համայնքի և համատիրության միջև գործակցության արդյունավետությունը, թափանցիկությունն ու հաշվետվողականություն նը | 74.1 Հստակեցնել համայնքի կողմից համատիրությանն օժանդակության ձևերը, համատիրությունների վերաբերյալ նոր հայեցակարգային մոտեցումներ | Մշակել համատիրությունների վերաբերյալ նոր հայեցակարգային մոտեցումներ<br>Համայնքի կողմից համատիրությանն օժանդակության օրինական և հստակ ձևեր, համայնքի և համատիրության միջև համագործակցության թափանցիկություն և հաշվետվողականությու | ՏԻՄ-երի կողմից համատիրությանը պատվիրակած լիազորությունների իրականացման ծախսերի հարաբերությունը համայնքի բյուջեի ընդհանուր ծախսերին (տոկոս) | | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն<br>Համայնքի և համատիրությունների միջև գործակցության արդյունավետության, թափանցիկության ու հաշվետվողականության բարձրացման խնդիրները ներառվել են ՀՀ վարչապետի 2010 թվականի օգոստոսի 17-ի N 649-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից մշակված ՀՀ բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման և շահագործման ոլորտի բարեփոխումների 5-ամյա ծրագրի նախագծում, որը ներկայումս գտնվում է քննարկումների փուլում: | ՀՀ քաղաքաշինության նախարարություն,<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ համայնքներ, համատիրություններ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | ն | | | | |
| | 74.2 Հստակեցնել և կարգավորել համայնք-համատիրություն-բնակիչ փոխհարաբերությունները, սահմանել դրանց օրինականության նկատմամբ պետական վերահսկողություն | Համայնքի և համատիրությունների փոխհարաբերությունների օրինականության նկատմամբ պետական վերահսկողության կարգավորում<br>Համայնք-համատիրություն-բնակիչ հստակ փոխհարաբերություններ, նրանց պատասխանատվությունների շրջանակների հստակ տարանջատում | | | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն<br>Համայնքի և համատիրությունների միջև գործակցության արդյունավետության, թափանցիկության ու հաշվետվողականության բարձրացման խնդիրները ներառվել են ՀՀ վարչապետի 2010 թվականի օգոստոսի 17-ի N 649-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից մշակված ՀՀ բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման և շահագործման ոլորտի բարեփոխումների 5-ամյա ծրագրի նախագծում, որը ներկայումս գտնվում է քննարկումների փուլում: | ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>ՀՀ համայնքներ, համատիրություններ |
| 75. Բարձրացնել ՔԿԱԳ ծառայությունների գործունեության արդյունավետությունը | 75.1 Ներդնել ՔԿԱԳ ծառայությունների համագործակցված աշխատանքն ապահովող միասնական ժամանակակից տեխնիկական համակարգ և ավտոմատացնել ՔԿԱԳ ծառայության գործառույթները | ՔԿԱԳ ծառայության ավտոմատացված գործառույթներ | Օրենսդրորեն սահմանվել է ՔԿԱԳ ծառայությունների դիմաց կոնկրետ համայնքի բնակչից գանձվող պետական տուրքի հաշվին ՀՀ գյուղական համայնքների բյուջեների եկամտային մասերի աճ | | Արդյունք1. Իրականացված է մասնակիորեն:<br>ՔԿԱԳ ծառայություններն իրականացվում են ավտոմատացված համակարգի միջոցով:<br><br>Ցուցիչ 1. Առաջարկվում է ցուցիչը հանել, քանի որ այն չի բնութագրում կոռուպցիոն որևէ իրավիճակ:<br><br>Ցուցիչ 2. Մշակման փուլում է «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոնի ինֆորմացիայի փոխանակման համակարգին ՔԿԱԳ տարածքային մարմինների միացումն ապահովող համակարգը, որը հնարավորություն կտա ՔԿԱԳ մարմինների on-line ռեժիմով իրականացնել անհրաժեշտ տեղեկատվության փոխանակում:<br><br>Աշխատանքներն իրականացվում են ՀՀ արդարադատության նախարարության միջոցով | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն,<br>ՀՀ արդարադատության նախարարություն,<br>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) |
| | | | Իրական ժամանակում (on-line) ռեսուրսով օժտված, ինտերնետային կայք ունեցող ՔԿԱԳ ծառայությունների թվի հարաբերությունը ՔԿԱԳ ծառայությունների ընդհանուր թվին (տոկոս) | | | |
| 76. Զարգացնել ՏԻՄ-երի կարողությունները և ամբողջականացնել համայնքային ծառայության համակարգը | 76.1 Հետևողականորեն զարգացնել համայնքային ծառայության համակարգը | Համայնքային ծառայողների ուսուցման և վերապատրաստման ծրագրերի շարունակական կատարելագործում, կազմակերպում և իրականացում | Համայնքային ծառայության թափուր պաշտոնների համալրման նոր ընթացակարգերով հայտարարված մրցույթների թիվը | 531 | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն<br>Գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան ընտրվել է համայնքային ծառայողների վերապատրաստում անցկացնող կազմակերպություն, որի միջոցով ընթանում է համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացը:<br><br>Ցուցիչ 1. ՏԿՆ տեղեկատվական համակարգի տվյալներ:<br><br>Ցուցիչ 2. 2011 թվականին ՀՀ ՏԿ նախարարությունը վերապատրաստման դրամաշնորհային ծրագրեր չի իրականացրել: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) |
| | | | ՏԻՄ-երի և համայնքային ծառայողների ուսուցման և վերապատրաստման | Տվյալներ չկան | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
| --- | --- | --- | --- | --- | --- | --- |
| | | | դրամաշնորհային ծրագրերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում անցկացված ուսուցման և վերապատրաստման ծրագրերի ընդհանուր թվին (տոկոս) | | | |
| | 76.3 Համայնքներում մշակել և ներդնել քաղաքացիական հասարակության հետ արդյունավետ համագործակցության, իրազեկման ու մասնակցության ընթացակարգեր, խթանել սոցիալական գործընկերությանն ուղղված ՏԻՄ-երի գործունեությունն ու լիազորությունները պատվիրակելու պրակտիկան | ՏԻՄ-երի և համայնքների մասնավոր սեկտորի, ՀԿ-ների և այլ շահագրգիռ կազմակերպություններ ի միջև համագործակցության մասին կնքված հուշագրեր և/կամ պայմանագրեր: Սոցիալական գործընկերությանն ուղղված ՏԻՄ-երի գործունեության ու լիազորությունները պատվիրակելու պրակտիկայի արմատավորում ու խթանում: | ՏԻՄ-երի և համայնքների մասնավոր սեկտորի, ՀԿ-ների և այլ շահագրգիռ կազմակերպությունների միջև համագործակցության մասին կնքված հուշագրերի և/կամ պայմանագրերի թիվը | | Արդյունք 1. Իրականացված չէ:<br>Նման տեղեկատվության տրամադրումը չի ընդգրկված ՏԻՄ-երի կողմից պարտադիր ներկայացվող տեղեկատվության ցանկում:<br>Ցուցիչ 1, Ցուցիչի արժեքը հաշվարկել հնարավոր չէ՝ Արդյունք 1-ում նշված պատճառով:<br>Ցուցիչ 2, Ցուցիչի արժեքը հաշվարկել հնարավոր չէ՝ Արդյունք 1-ում նշված պատճառով:<br>Առաջարկվում է լրամշակել ակնկալվող արդյունքների և համապատասխան ցուցիչների սահմանումները: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) |
| | | | Սոցիալական գործընկերությանն ուղղված ՏԻՄ-երի կողմից պատվիրակված լիազորությունների թիվը | | | |

**3.15 Մասնավոր հատված**

<table>
<tr><th>Ռազմավարության դրույթներ</th><th>Միջոցառում</th><th>Ակնկալվող արդյունք 2011թ.</th><th>Մոնիտորինգային ցուցիչներ</th><th>Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը</th><th>Մեկնաբանություններ</th><th>Պատասխանատու մարմին</th></tr>
<tr><td rowspan="4">78. Ուժեղացնել մասնավոր հատվածում կոռուպցիայի առաջարկի կանխարգելումը</td><td rowspan="4">78.1 Ամբողջականացնել հաշվապահական հաշվառման և աուդիտի միջազգային չափորոշիչների ներդրումը</td><td rowspan="4">Աուդիտի միջազգային ստանդարտները (IFRS) հաստատված են<br><br>Աուդիտորների որակավորման և մասնագիտական վերապատրաստման համակարգը համապատասխանում է սահմանված չափորոշիչներին</td><td>Աուդիտի միջազգային ստանդարտները կիրառող աուդիտի ծառայություններ մատուցող տնտեսվարողների թվի հարաբերությունը դրանց ընդհանուր թվին</td><td>1</td><td rowspan="4">Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն<br><br>Ներկայումս ավարտման փուլում է աուդիտի միջազգային ստանդարտների թարգմանության վերաբերյալ Հաշվապահների միջազգային դաշնությունից պաշտոնական թույլտվություն ստանալու բանակցային գործընթացը: Աշխատանքներ են տարվում Հաշվապահների միջազգային դաշնությունից ստացված` ստանդարտները թարգմանելու վերաբերյալ համաձայնագրի և դրան կից փաստաթղթերի ստորագրման գործընթացը կազմակերպելու ուղղությամբ:<br><br>Բացի այդ նախատեսվում է Աուդիտի միջազգային ստանդարտների (ISA) ընդունումը և հրապարակումը ՀՀ կառավարության որոշմամբ:<br><br>Արդյունք 2. Կատարված է մասնակիորեն:<br><br>Աուդիտորների որակավորման քննությունների ծրագրի և հարցաշարի լրամշակման աշխատանքները ընթացքի մեջ են, դրանք մշակվում են հաշվի առնելով Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (IFRS) ու Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի դրույթները:<br><br>Աուդիտորների որակավորման քննությունների ծրագիրը և հարցաշարը նախատեսվում է լրամշակել նաև Աուդիտի միջազգային ստանդարտները ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվելուց և գործողության մեջ դրվելուց հետո` հաշվի առնելով վերը նշված նոր ստանդարտների պահանջները:<br><br>Ցուցիչ 1. ՀՀ տարածքում 01.06.2011թ. դրությամբ լիցենզավորված են թվով 40 աուդիտորական կազմակերպություն և թվով 5 անհատ աուդիտոր: Հայաստանի Հանրապետությունում գործող աուդիտ իրականացնող անձինք գործունեություն են իրականացնում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 21-ի N 509-Ն որոշմամբ հաստատված աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխանող աուդիտի ստանդարտների համաձայն:<br><br>Ցուցիչ 2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2011 թվականի հունվարի 1-ից բոլոր կազմակերպություններն առաջնորդվելու են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով, ինչպես նաև այն հանգամանքը, որ ՀՀ ֆինանսների նախարարությունում առկա չէ տեղեկատվություն այն մասին, որ այդ կազմակերպությունների որոշ մասը չի կիրառում նշված ստանդարտները, հետևաբար տվյալ ցուցիչի արժեքը հավասար կլինի 1-ի:<br><br>Ցուցիչ 3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված նախնական տեղեկությունների համաձայն ֆինանսական հաշվետվությունները հրապարակելու պահանջ ունի շուրջ 470 կազմակերպություն:<br><br>Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով` 2011 թ հունիսի 1-ի դրությամբ պետռեգիստրում գրանցված են 63.6 հազ. իրավաբանական անձ եւ 87 հազ. անհատ ձեռնարկատեր: Ըստ ՊԵԿ-ի, այն ընկերությունները եւ անհատ ձեռնարկատերերը, որոնք 2008 թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված են պետռեգիստրում, բայց փաստացի չեն գործում, կհանվեն պետական հաշվառումից:<br><br>Խոսք է գնում մոտ 40 հազ. տնտեսվարող սուբյեկտների մասին, որոնք հարկային հաշվարկներ եւ հաշվետվություններ չեն ներկայացնում արդեն տարիներ շարունակ:</td><td rowspan="4">ՀՀ ֆինանսների նախարարություն<br><br>ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե<br><br>Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա (Համաձայնությամբ)</td></tr>
<tr><td>Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները կիրառող խոշոր տնտեսվարող սուբյեկտների թվի հարաբերությունը դրանց ընդհանուր թվին</td><td>1</td></tr>
<tr><td>Ֆինանսական հաշվետվությունները և ֆինանսական տեղեկատվություն հրապարակող տնտեսվարող սուբյեկտների թվի հարաբերությունը տնտեսվարող սուբյեկտների ընդհանուր թվին</td><td>0.0042</td></tr>
<tr><td>Հարկային, մաքսային և վիճակագրական ծառայություններին ոչ առձեռն ներկայացված հաշվետվությունների թիվը, տոկոս` հաշվետվությունների ընդհանուր թվի նկատմամբ (ԱՀՌԾ Սոցիալական և քաղաքացիական մեկուսացվածություն և անհավասարություն. մոնիտորինգի ցուցանիշներ e5.2- e5.4 ցուցանջշեր)</td><td>Տվյալներ չկան</td></tr>
</table>

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Այսպիսով տնտեսավարող սուբյեկտների թիվը 2011 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմում է շուրջ 110.6 հազ.:<br><br>Ցուցիչի արժեքը կկազմի 0.0042<br>Ցուցիչ 4. Առաջարկվում է ցուցիչը տեղափոխել 13 ռազմավարական դրույթի ցուցիչների կազմը: | |
| | 78.2 Ապահովել մրցակցության հավասար պայմաններ | Ըստ հաստատված ռազմավարության | Մրցակցության հավասար պայմանների ապահովման նպատակով ՀՀ Տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում այդ վարույթների իրականացման արդյունքում տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվածպատասխանատվության միջոցների թվին | 01.01.2011-01.03.2011 ընկած ժամանակահատվածում ՀՀ ՏՄՊՊՀ նախաձեռնությամբ հարուցվել է 32 վարչական վարույթ, որոնց արդյունքում կիրառվել է 30 պատասխանատվության միջոց: | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ<br>Համաձայն «2010-2011 թվականի ռազմավարության ծրագրի» (Ծրագիր) միջոցառումների կատարման ժամանակացույցի 2011 թվականի ապրիլի 12-ին ընդունվել է ՀՀ ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը՝ միջազգային կառույցների, մասնավորապես Համաշխարհային բանկի (WB) և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) փորձագետների հետ:<br>Ծրագրում նախանշված հինգ հիմնական ուղղությունների (օրենսդրական բարեփոխումների իրականացում, ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում, Հանձնաժողովի ինստիտուցիոնալ կարողությունների բարձրացում, միջազգային համագործակցության ընդլայնում, քարոզչության եւ իրազեկվածության բարձրացում) առումով 2011 թվականի առաջին կիսամյակում իրականացվել են հետևյալ միջոցառումները.<br>1. Օրենսդրական բարեփոխումներ.<br>– Մշակվել են 6 նոր իրավական ակտեր.<br>▪ «Ապրանքային շուկայի սահմանների որոշման կարգը հաստատելու մասին» (թիվ 190-Ն),<br>▪ «Հայտարարագրման ենթակա համակենտրոնացումների մասնակցի (մասնակիցների) ակտիվների և հասույթ(ներ)ի արժեքը (չափը) սահմանելու, տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման հայտարարագրման կարգի և հայտարարագրի ձևի մասին» (թիվ 191-Ն),<br>▪ «Հսկիչ գնումների արդյունքում ձեռք բերված ապրանքների տնօրինման կարգը հաստատելու մասին» (թիվ 192-Ն),<br>▪ «Հսկիչ գնումների արդյունքների և դիտանցումների արդյունքների վերաբերյալ արձանագրությունների ձևերը հաստատելու մասին» (թիվ 193-Ն),<br>▪ «Տնտեսվարող սուբյեկտի մենաշնորհի կամ գերիշխող դիրքի, այդ թվում՝ շուկայական իշխանության որոշման կարգը և չափանիշները սահմանելու մասին» (թիվ 194-Ն) և<br>▪ «Մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից տեղեկատվություն ներկայացնելու կարգի մասին» (թիվ 195-Ն):<br>– Մշակվել է պետական գնումների գործընթացում հակամրցակցակային համաձայնությունների կանխարգելման ու բացահայտման վերաբերյալ ուղեցույց:<br>– «Մրցակցային և պետական օժանդակության օրենսդրության կիրարկման հզորացումը Հայաստանում›› ԵՄ թվինինգ ծրագրի շրջանակում մշակվել է Հանձնաժողովի ինստիտուցիոնալ կառուցվածքի ուսումնասիրություն՝ մրցակցության և պետական օժանդակության վերահսկման առումով, ինչպես նաև Հանձնաժողովի տեղեկատվական համակարգի հայեցակարգի նախագծերը:<br>2. Ռեսուրսների բարելավում.<br>– Տեխնիկական հագեցվածության ապահովման արդյունքում Հանձնաժողովը բանակցությունների արդյունքում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից ստացել է աջակցություն՝ տեխնիկական սարքավորումների տեսքով, սակայն այն դեռևս բավար չէ Հանձնաժողովի տեխնիկական հագեցվածության պատշաճ ապահովման խնդիրը բավարարելու համար:<br>3. Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում. | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | – Կազմակերպվել են 3 տարբեր միջոցառումներ՝ միջազգային փորձագետնների ներգրավմամբ՝ քննարկելու Հանձնաժողովի ուսումնասիրության ներքո գտնվող վարույթներ և իրական գործեր: Մանսավորապես, հեռահաղորդակցության և էներգետիկայի ոլորտում, ինչպես նաև բեռների փոխադրման, դեղեր և պանիր ապրանքային շուկաներում իրականացվող վարույթների վերաբերյալ:<br>– Փորձի փոխանակման նապատակով կազմակերպվել են ուսումնական այցեր և Հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցել են միջազգային համաժողովներին՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետությունում մրցակցության բնագավառի վերջին զարգացումները:<br>– Կազմակերպվել են առանձին նպատակային խմբերի (ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ ֆինանսների, ՀՀ տարածքային կառավարման նախարարություններ, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, Փոքր և միջին բիզնեսի զարգացման գործակալություն) և շահառուների հետ մի շարք սեմինարներ՝ փոխգործակցության կապերի ընդլայման նպատակով:<br>4. Միջազգային համագործակցության ընդլայնում.<br>– Կազմակերպվել է Հանձնաժողովի 10-ամյակին նվիրված միջազգային համաժողով, որի ընթացքում ներկայացվել է 2010 թվականին ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման հարցերով համաժողովի կողմից կազմված «Հայաստանի օրինակով մրցակցության օրենքի և քաղաքականության վերաբերյալ կամավոր փորձագիտական գնահատման զեկույցի» արդյունքները: Համաժողովի ընթացքում ներկայացվեց Հայաստանում տնտեսական մրցակցության պաշտպանության անցած ուղին, առկա խնդիրները, ձեռքբերումները և հետագա քայլերը, ինչպես նաև՝ այլ երկրների համանման մարմինների փորձը և միջազգային փորձագետների գնահատականները:<br>5. Քարոզչության և իրազեկվածության բարձրացում.<br>– «Մրցակցային և պետական օժանդակության օրենսդրության կիրարկման հզորացումը Հայաստանում» ԵՄ թվինինգ ծրագրի շրջանակում կազմակերպվել է պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և լրագրողների շրջանում կազմակրպվել է վերապատրաստման դասընթացներ, կլոր սեղանի ձևաչափով քննարկումներ:<br>– Մրցակցության մշակույթի ձևավորման գործընթացի խթանման նպատակով ստեղծվել է հասարակական խորհուրդ: Խորհուրդն ունի 12 անդամներ, որոնց թվում են գործարարներ, հասրակական կազմակերպությունների, պետական մարմինների ներկայացուցիչներ և քաղաքական գործիչներ: Խորհրդի հիմնական խնդիրն է հանրության և գործարար շրջանակներին հուզող մրցակացային խնդիրները ներկայացնել Հանձնաժողովին: | |
| 79. Ապահովել մասնավոր կազմակերպություննե րի աշխատանքում բարեխղճությունը | 79.1 Աջակցել Առևտրի միջազգային պալատի (ԱՄՊ) կողմից ընդունված կոռուպցիայի դեմ պայքարի կանոնակարգերի և էթիկայի կանոնների ճանաչմանն ու տեղայնացմանը | ԱՄՊ կողմից ընդունված կոռուպցիայի դեմ պայքարի կանոնակարգերից և էթիկայի կանոններից բխող չափորոշիչները և ընթացակարգերը սահմանված են | ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատը տեղայնացրել է Առևտրի միջազգային պալատի (ԱՄՊ) կողմից ընդունված կոռուպցիայի դեմ պայքարի կանոնակարգերն և էթիկայի կանոնները (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Կատարված է մասամբ<br>2010 թվականին Առևտրի միջազգային պալատի հետ համագործակցության արդյունքում ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի կողմից գործարար համայնքի համար մշակվել և հրատարակվել է «Գործարար էթիկայի կանոնակարգ–հակակոռուպցիոն ուղեցույցը», որը ներկայացվել է ինչպես գործարար համայնքին, այնպես էլ պետական հատվածին:<br>Ցուցիչ 1. «Գործարար էթիկայի կանոնակարգ–հակակոռուպցիոն ուղեցույցը», ներառում է Առևտրի միջազգային պալատի (ԱՄՊ) կողմից ընդունված կոռուպցիայի դեմ պայքարի կանոնակարգերն և էթիկայի կանոնները | ՀՀ էկոնոմիկայի նախարարությո ւն<br>ՀՀ առևտրաարդյու նաբերական պալատ (Համաձայնությ ամբ) |
| | | | ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատը սահմանել է մասնավոր կազմակերպությունների համար օրինակելի (մոդելային) էթիկայի վարքականոն (այո/ոչ) | Այո | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատի կողմից բարեխիղճ առևտրային պրակտիկայի խրախուսման դեպքերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում պալատի կողմից կիրառված պարսավանքի և խրախուսման դեպքերի ընդհանուր թվաքանակին | Տվյալները բացակայում են | Ցուցիչ 2. «Գործարար էթիկայի կանոնակարգ–հակակոռուպցիոն ուղեցույցը», ներառում է մասնավոր կազմակերպությունների համար օրինակելի (մոդելային) էթիկայի վարքականոնները | |
| | | | Վարքագծի կանոնակարգերի և շահերի բախման կանխարգելման կանոններ սահմանած մասնավոր կազմակերպությունների թվի հարաբերությունը մասնավոր սեկտորում գործող կազմակերպությունների ընդհանուր թվաքանակին | Տվյալները բացակայում են | | |
| 80. Խրախուսել առևտրային կազմակերպությունների և պետության միջև համագործակցությունը | 80.1 Խթանել պայմանագրային հարաբերություններում բարեխիղճ առևտրային պրակտիկայի կիրառումը | Պետություն-մասնավոր համագործակցության ներքո իրականացվող ծրագրեում ընդգրկել բացառապես «բարեխիղճ» որակվածներին | ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատը կազմում և հրապարակում է բարեխիղճ առևտրային կենսափորձ ունեցող ձեռնարկությունների ռեյտինգավորման ցանկը (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Կատարված է մասամբ<br>ՀՀ ԱԱՊ կողմից վարվում է «Վստահելի գործընկերներ» գրանցամատյանը, ինչպես նաև պարբերաբար իրականացվում է «Մերկուրի մրցանակաբաշխությունը»:<br>ՀՀ կառավարություն է ներկայացվել «Պետություն-մասնավոր գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը: Օրենքի նպատակն է ստեղծել բարենպաստ իրավական դաշտ ՊՄԳ-ների համար` պետության-մասնավոր համագործակցությունը որակական ավելի բարձր փուլ տեղափոխելու, բարձրացնելու այդ համագործակցության արդյունավետությունը և օգտագործելու Հայաստանում ՊՄԳ-ների ամբողջ ներուժը: | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն |
| | 80.2 Ներդնել ձեռնարկությունների ռեյտինգավորման համակարգեր` ինքնակարգավորման սկզբունքի շրջանակներում | Մշակել և ներդնել մեխանիզմներ բարձր ռեյտինգով ձեռնարկություններին խրախուսելու համար | | | Արդյունք 1. Կատարված է մասամբ<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի միջև տեղի ունեցած բանակցությունների արդյունքում ձևավորվել է ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի վեբ-կայքը, որը սկսել է գործել 2009թ. հունվարից: Կայքում ներառված է «Դեղին էջեր» բաժինը, որտեղ կազմակերպությունների համար հնարավորություն է ընձեռված տեղադրել իրենց կազմակերպության վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը (ներկայացված են շուրջ 3 տասնյակ կազմակերպություն): | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ<br>ՀՀ ԿԱ Պետական Եկամուտների Կոմիտե |
| | 80.4 Պետական պաշտոնյա և գործարար հարաբերություններում ներդնել էլեկտրոնային կառավարման համակարգեր | Ջեռներեցության աջակցության ինստիտուցիոնալ կառույցների կարողությունների զարգացում | Պետական պաշտոնյա և գործարար հարաբերություններում մատուցվող ընդհանուր ծառայություններում էլեկտրոնային կառավարման համակարգերով իրականացվող ծառայությունների տեսակարար կշիռը, տոկոս | Տվյալները բացակայում են | Արդունք 1. Կատարված է մասամբ<br>2011թ ապրիլի 1-ից գործում է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության ինտերնետային կայքը (www.e-register.am) որի միջոցով իրականացվում է ընկերությունների գրանցում և անհատ ձեռնարկատերերի հաշվառում, ֆիրմային անվանումների փորձաքննության անցկացում և ՀՎՀՀ-ի տրամադրում:<br><br>Ցուցիչ 1. Հնարավոր չէ ներկայում հաշվարկել քանի որ, պետության կողմից մատուցվող ծառայությունների ընդհանուր թիվը սահմանված չէ | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 81. Արմատավորել ձեռնարկությունների կորպորատիվ կառավարման սկզբունքները | 81.1Օրենսդրորեն տարանջատել և հստակեցնել բաժնետերերի՝սեփականատեր-գործադիր տնօրեն փոխհարաբերությունները | Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ներդրման արդյունքների գնահատում | Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը կիրառող կազմակերպությունների թիվը կազմակերպությունների ընդհանուր թվում, տոկոս | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Կատարված է մասամբ<br><br>ՀՀ կառավարության 23.06. 2011 թվականի N 881–Ն որոշմամբ («50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ ընկերությունների ցանկին և Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ընդունման ժամանակացույցին հավանության տալու մասին») հաստատվել է «Պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց ցանկը և Հայաստանի Հանրապետության Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ընդունման» ժամանակացույցը: Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ներդրման արդյունքների գնահատում կիրականացվի համապատասխան հաստատված ժամանակացույցի: | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն |
| | 81.2 Խթանել ձեռնարկությունների գործունեության հրապարակայնությունը | Ձեռնարկությունների գործունեության հրապարակայնության մեխանիզմների ներդրում | | | Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն:<br>Հղում՝ <Հաշվապահական հաշվառման մասին> ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն խոշոր կազմակերպությունները մինչև հաշվետու տարվան հաջորդող հուլիսի 1-ը պարտավոր են հրապարակել ֆինանսական հաշվետվությունները: | ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն |
| 82. Զարգացնել ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատի, ինչպես նաև խոշոր գործարարների շահերը ներկայացնող այլ կազմակերպությունների կարողությունները | 82.1 Զարգացնել համագործակցությունը առևտրի միջազգային պալատի հետ | Համագործակցության ուղղությունների տարեկան ծրագրի ընդունում տարեսկզբին և արդյունքների ամփոփում՝ տարեվերջին | ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատի ու առևտրի միջազգային պալատի միջև կնքվել է փոխգործակցության պայմանագիր և/կամ ընդլայնվել է առկա համագործակցության ծավալները (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Կատարված չէ<br><br>2011թ առաջին եռամսյակի արդյունքներով դեռևս ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատի ու առևտրի միջազգային պալատի միջև փոխգործակցության պայմանագիր չի կնքվել: | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,<br>ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ,<br>ՀՀ Զարգացման Հայկական Գործակալություն ՀՀ Գործարարների և արդյունաբերողների միություն,<br>(Համաձայնությամբ) |
| | 82.2 Իրականացնել մասնավոր հատվածում կոռուպցիայի առաջարկի կրճատման, լավագույն միջազգային փորձի փոխանակում | Գործարարների շահերը ներկայացնող խոշոր կազմակերպությունների հետ համագործակցության հուշագրերի և համաձայնագրերի կնքում | կնքված համագործակցության հուշագրերի և համաձայնագրերի քանակ | 1 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ<br>2011 թվականի մայիսի 6-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը, Զարգացման հայկական գործակալությունը և Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությունը ստորագրեցին «Տեղեկատվության և ռեսուրսների փոխանակման ուղղությամբ համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիր: Հուշագիրը նպատակ ունի ստորագրող կողմերի միջև ընդլայնել տեղեկատվության և ռեսուրսների փոխանակմանն ուղղված համագործակցության շրջանակները և գործարար միջավայրի բարելավման և նորարարությունների ներդրման միջոցով զարգացնել պետական-մասնավոր հատվածների համագործակցությունը՝ հիմք ընդունելով հավասարության և փոխադարձ շահերի պաշտպանության սկզբունքները: | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,<br>ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ, ՀՀ Գործարարների և արդյունաբերողների միություն,<br>(Համաձայնությամբ) |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 82.3Կազմակերպել կորպորատիվ կառավարման ուսումնական և վերապատրաստման դասընթացներ | Ուսումնական հաստատության(ների) հետ համատեղ պարբերական դասընթացների կազմակերպման ծրագրի իրականացում | Կորպորատիվ կառավարման ուսումնական և վերապատրաստման դասընթացներ անցած պետական մասնակցությամբ և մասնավոր ընկերությունների աշխատակիցների և ներկայացուցիչների թվի հարաբերությունը նույն ընկերությունում զբաղված աշխատակիցների ընդհանուր թվաքանակի | | Արդյունք 1. Կատարված է մասամբ<br>23.06. 2011 թվականի  N 881–Ն ՀՀ կառավարության որոշմամբ («50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ ընկերությունների ցանկին և Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ընդունման ժամանակացույցին հավանության տալու մասին») հաստատվել է «Պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց ցանկը և Հայաստանի Հանրապետության Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ընդունման» ժամանակացույցը: Վերոնշյալ ժամանակացույցի շրջանակներում կդիտարկվի ուսումնական հաստատությեւնների հետ համատեղ պարբերական դասընթացների կազմակերպման խնդիրը: | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,<br>ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ, ՀՀ Գործարարների և արդյունաբերողների միություն (Համաձայնությամբ) |

### 3.16 Բարեխղճությունը հանրային ծառայությունում

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 83. Ամբողջականացնել հանրային ծառայության բոլոր տեսակների օրենսդրական կարգավորումը | 83.1 Ներառել պետական առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունները հանրային ծառայության շրջանակներում | Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքը գործողության մեջ է դրված | ՀՀ հանրային ծառայությունների մասին նոր ռազմավարության նախագիծը հաստատվել է <Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ քննարկմանը (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>Հիմք`<br>ՀՀ ԱԺ կողմից 19.05.2011թ. ընդունվել է <Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքը, որն ուժի մեջ կմտնի 2012 թվականի հունվարի 1-ից:<br><br>Ցուցիչ 1<br><Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքն ընդունվել է:<br>Ցուցիչ 2<br>Համապատասխան դրույթները ներառված են <Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքում:<br><br>**Հիմնական եզրակացություն**<br>Իրավիճակը` լավ:<br>Առաջընթացը` լավ:<br>Առաջարկներ`<br>1. մոնիթորինգային ցուցիչը վերախմբագրել` հանելով <ՀՀ հանրային ծառայությունների մասին նոր ռազմավարության նախագիծ> ձևակերպումը,<br>2. պետական առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունները հանրային ծառայության շրջանակներում ներառելու հարցին հնարավոր է անրադառնալ <Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքի կիրառման փուլում: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողով, |
| | 83.2 Սահմանել հանրային ծառայողների իրավունքների ու պարտականությունների, հավաքագրման, առաջխաղացման և պաշտոնաթողության, վարքագծի և շահերի բախման կանոնակարգման միասնական սկզբունքները | | Հանրային ծառայության մասին Օրենքի նախագիծը ներառում է համապատասխան դրույթները (այո/ոչ) | Այո | | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողով, |
| 84. Ներդնել հանրային ծառայությունների որակի գնահատման և վերահսկողության մեխանզիմները | 84.1 Սահմանել միջազգային չափանիշներին համապատասխան հանրային ծառայությունների որակի չափորոշիչներ և ընթացակարգեր, այդ թվում` գործարքների և գործառնությունների ժամկետներ, գործառնական ծախքերի, ծառայությունների որակի վերաբերյալ քաղաքացիների ընկալման և բավարարվածության նվազագույն ցուցանիշներ | Ծառայությունների որակի հաստատված չափորոշիչներ ըստ ծառայության տեսակների | Նախքան ՀՀ «Հանրային ծառայության մասին» օրենքի ընդունումը պետական առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների քանակի հարաբերությունը օրենքի ընդունումից հետո մատուցվող ծառայությունների թվին | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն<br>ՀՀ կառավարությունը 2010թ. ընթացքում ուսումնասիրվել է 6 նախարարությունների (ՀՀ մշակույթի, առողջապահության, կրթության և գիտության, գյուղատնտեսության, տրասպորտի և կապի) և կառավարության աշխատակազմի կողմից ատուցվող ծառայությունների գործող ընթացակարգերը, դրանց համապատասխանությունը սահմանված օրենսդրությանը, միջազգային չափանիշներին: Մասնավորպես, մշակութային արժեքների ներմուծման ու ատահանման, հուշարձանների պահպանության և վերականգնման, գյուղտեխնիկայի տեխնիկական զննության, վարորդական իրավունքների տրամադրման, հանրակրթության բարձրագույն մասնագիտական ու հետբուհական կրթության ծառայությունների, միջպետական ու ներպետական ուղևորափոխադրումների մասով պարզեցվել են ծառայությունների մատուցման ընթացակարգերը, հստակեցվել են ծառայությունների մատուցման ժամկետները և պատասխանատուները:<br>Ցուցիչ 1.Տվյալները բացակայում են: Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքը չի ներառում Պետական ոչ-առևտրային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունները<br>Ցուցիչ 2. Տվյալները բացակայում են, քանի որ նման տեղեկատվություն ամփոփող միասնական մարմին չկա:<br>Ցուցիչ 3.Պետական ոչ-առևտրային կազմակերպությունների հաշվետվությունների կազմման և կատարողականի գնահատման | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն և համապատասխան շահագրգիռ նախարարություններ և պետական այլ մարմիններ |
| | | | Քաղաքացիների կողմից հանրային ծառայությունների վերաբերյալ ներկայացված բողոքների թվի հարաբերությունը, նույն ժամանակահատվածում, պետական լիազոր մարմնի կողմից պատասխանատվության ենթարկված պետական առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների | Տվյալները բացակայում են | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | թվաքանակին | | կարգերը սահմանվել են ՀՀ կառավարության դեռևս 2006թ. –ի 163-Ն որոշմամբ:<br>Առաջարկություն: Սույն ռազմավարական դրույթի պատասխանատու ճանաչել ՀՀ կառավարության աշխատակազմին և ՀՀ ֆինանսների նախարարությանը: | |
| | | | ՀՀ կառավարության կողմից սահմանվել են պետական առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հաշվետվությունների կազմման և կատարողականների գնահատման կարգ/ ուղեցույց | Ոչ | | |
| 85. Ներդնել միասնական հանրային ծառայության արդյունավետ կառավարման ինստիտուտը | 85.1 Սահմանել միասնական հանրային ծառայության ոլորտում լիազոր մարմնի խնդիրները և գործառույթները, լիազորությունները, հաշվետվողականությունը և ընթացակարգերը | ՀՀ հանրային ծառայության ղեկավարման և քաղաքականության մշակման ու իրականացման միասնական լիազոր մարմնի ստեղծման մասին իրավական ակտերն ընդունվել են | Ստեղծվել է ՀՀ հանրային ծառայության ղեկավարման և քաղաքականության մշակման ու իրականացման միասնական լիազոր մարմին (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Իրականացված չէ:<br>«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը նման կառույց չի նախատեսել:<br>Ցուցիչ 1.<br><Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքը չի նախատեսում ստեղծել հանրային ծառայության ոլորտում ղեկավարման միասնական լիազոր մարմին:<br><br>Օրենքով որևէ այլ միասնական լիազոր մարմնի ստեղծումը կհանգեցնի նույն ոլորտում գործող երկու և ավելի լիազոր մարմինների` առանձին ոլորտում գործող լիազոր մարմնի և հանրային ծառայությունների լիազոր մարմնի գոյության, ինչը կառաջացնի գործառույթների կրկնություն և կոլիզիոն իրավիճակներ:<br><br>**Հիմնական եզրակացություն**<br>Իրավիճակը` անբավարար<br>Առաջընթացը` անբավարար: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողով, |
| 86. Նվազեցնել քաղաքական պաշտոնյաների դերը մասնագիտական անձնակազմի ձևավորման, միանձյա հայեցողական որոշումների կայացման գործում | 86.1 Միասնականացնել պետական ծառայություն մրցույթային հիմունքներով աշխատանքի ընդունման ընթացակարգերը | Պետական ծառայության ղեկավարման լիազոր մարմնի կողմից սահմանվել են մրցույթի շեմը հաղթահարած պաշտոնի հավակնորդներից մեկի ընտրության և նշանակման հստակ չափորոշիչներ | Կուսակցական պատկանելիություն ունեցող պետական ծառայողների թվաքանակի հարաբերությունը պետական ծառայողների ընդհանուր թվին (որքան մոտ է զրոին այնքան ցածր է քաղաքական կոնյուկտուրայի ազդեցության մակարդակը) | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Իրականացված է մասամբ:<br>Արդյունքը գնահատվել է քաղաքացիական ծառայության համակարգի համար: Ներդրվել է մրցույթի հարցազրույցի փուլի գնահատման բալային համակարգ, ինչպես նաև մրցույթի արդյունքում հաղթող թեկնածուների ընտրության կոլեգիալ կարգ, համաձայն որի հաղթող կարող են ճանաչվել առավելագույնը երեք տոկոսներ հավաքած մասնակիցները, և նրանցից մեկը նշանակվում է պաշտոնում: Վերջինս ընտրության համար չափոփոշիչներ սահմանված չեն:<br><br>Արդյունք 2. Իրականացված է մասամբ:<br><Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքի համաձայն, պաշտոնների համալրման հետ կապված հարաբերությունները սահմանվում են ծառայության առանձին տեսակները կարգավորող օրենսդրությամբ:<br>Համաձայն <Քաղաքացիական ծառայության մասին> ՀՀ օրենքի, աշխատակազմի ղեկավարը իրավասու է նշանակումներ կատարել կրտսեր, առաջատար խմբերի ինչպես նաև գլխավոր պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, իսկ ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության աշխատակազմերում` նաև գլխավոր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբի պաշտոններում:<br>Ցուցիչ 1. Հնարավոր չէ հաշվարկել ցուցիչը` քանի որ ծառայողների | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ պետական կառավարման հաակարգի բարեփոխումների հանձնաժողով, |
| | 86.2 Համապատասխան մարմնի աշխատակազմի ղեկավարին ճանաչել թափուր պաշտոնների համալրման պատասխանատու | Համապատասխան մարմնի աշխատակազմի ղեկավարները գործնականում ամբողջությամբ իրականացնում են թափուր պաշտոնների | Աշխատակազմի ղեկավարի կողմից նշանակվող պետական ծառայության պաշտոնների թվի հարաբերակցությունը ընդամենը պաշտոնների թվին | 0.93 /93%/ | | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ, |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | համալրման գործընթացը | | | կուսակցական պատկանելիության վերաբերյալ տեղեկություն չի հավաքագրվում:<br>Առաջարկվում է մշակել ցուցիչի հավաքագրման մեխանիզմը;<br>Ցուցիչ 2. Ցուցիչի արժեքը հաշվարկված է քաղաքացիական ծառայության համակարգի համար. աշխատակազմի ղեկավարի կողմից նշանակվող պաշտոնների թիվը` 7203, իսկ քաղաքացիական ծառայության պաշտոնների ընդհանուր թիվը` 7755: (այդ թվում` աշխատակազմերի ղեկավարների պաշտոնները): /Ներկայացված թվերը փոփոխական են/:<br><br>**Հիմնական եզրակացություն**<br>Իրավիճակը` լավ<br>Առաջընթացը` բավարար: | ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողով, |
| 87. Կրճատել հանրային ծառայողների թափուր պաշտոնների համալրման ընթացակարգերում առկա կոռուպցիոն ռիսկերը | 87.1 Պատվիրակել հանրային ծառայողների թափուր պաշտոնների համալրման, թեստավորման և գիտելիքների գնահատման փուլի կազմակերպչական աշխատանքները | պետական և համայնքային ծառայության լիազոր մարմինների համապատասխան օրենսդրական ակտերում փոփոխություններ | Պետական ծառայությունում, նոր ընթացակարգերի վրա խարսխված, պաշտոնեական առաջխաղացման դեպքերի թվի հարաբերությունը պետական ծառայողների ամբողջ թվաքանակին | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Իրականացված է մասամբ:<br>Քաղաքացիական ծառայության առաջատար խմբի թափուր պաշտոնների մրցույթներն անց են կացվում համապատասխան մարմիններում: <Քաղաքացիական ծառայության մասին> ՀՀ օրենքով ներդրվել է քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու կարգ, ինչպես նաև նոր ընթացակարգերի վրա հիմնված մրցույթների անցկացման կարգ, որոնք սահմանվել են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից:<br>Հիմք` <Քաղաքացիական ծառայության մասին> ՀՀ օրենք, ՀՀ ՔԾԽՈ 23.05.2002 N 11, 13.06.2002 N 17-Ն, 12.10.2010 N 818-Ն:<br><br>Ցուցիչ 1.Ցուցիչը հնարավոր է հաշվարկել համալրման գործընթացները նոր ընթացակարգերով կազմակերպելուց որոշ ժամանակահատված հետո, համապատասխան տվյալների վերլուծության արդյունքում:<br>Թափուր պաշտոնների մրցույթները նոր ընթացակարգերով կազմակերվում են 2010 թվականի դեկտեմբերից, իսկ կրտսեր պաշտոններ զբաղեցնելու համար առաջին թեստավորումը` 2011 թվականի հունվարից:<br>2011 թվականի առաջին կիսամյակի արդյունքները քաղծառայության կրտսեր պաշտոնների համալրման մասով`տրվել է 640 կրտսեր պաշտոնի հավաստագիր, 103 քաղաքացի նշանակվել է կրտսեր թափուր պաշտոններում:<br>Ցուցիչ 2. Նոր ընթացակարգերի (մրցույթի հարցազրույցի փուլի բալային գնահատման և կրտսեր թափուր պաշտոնների համալրման) կիրառման ընթացքում քաղաքացիները բողոքներ չեն ներկայացրել:<br><br>Առաջարկվում է վերախմբագրել ցուցիչը հետևյալ կերպ. <Լիազոր մարմնի կողմից համալրման գործընթացի հետ կապված դիտարկված բողոքների թվի հարաբերությունը ստացված բողոքների ընդհանուր թվին>:<br>Անհրաժեշտ է հստակեցնել նաև <պետական լիազոր մարմին> հասկացությունը: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, ՀՀ կառավարության աշխատակազմ, Պետական ծառայության ղեկավարման լիազոր մարմիններ, |
| | | | Պետական ծառայության ղեկավարման լիազոր մարմնի կողմից դիտարկված բողոքների թվի հարաբերությունը ստացված բողոքների ընդհանուր թվաքանակին | | | |
| | 87.2 Ճանաչել համապատասխան գիտական և ուսումնական հաստատությունների կողմից այդ բնագավառում տրված որակավորման վկայականները | Պետական և համայնքային ծառայության լիազոր մարմինների համապատասխան օրենսդրական ակտերում | Հանրային ծառայության մասին օրենքի նախագիծը ներառում է այս դրույթը (այո/ոչ) | Ոչ | Արդյունք1. Իրականացված է մասամբ:<br><Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքը չի կարգավորում որակավորման վկայականների ճանաչման հետ կապված հարաբերությունները:<br>Գիտական և ուսումնական հաստատությունների կողմից այդ բնագավառում տրված որակավորման վկայականները | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, Պետական ծառայության |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | փոփոխություններ | | | ծառայությունները կարգավորող օրենսդրությամբ ճանաչվում են որպես բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթեր:<br><br>Ցուցիչ 1.Որակավորման վկայականների ճանաչման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են կրթության մասին ՀՀ օրենսդրությամբ:<br>Առաջարկվում է հստակեցնել 87.2 միջոցառման <համապատասխան գիտական և ուսումնական հաստատություն> հասկացությունը, ինչպես նաև վերանայել միջոցառման պատասխանատու մարմինը: | ղեկավարման լիազոր մարմիններ, |
| | 87.3 Ապակենտրոնացնել հանրային ծառայողների թափուր պաշտոնների թեկնածուների ընտրության հարցազրույցների փուլի աշխատանքները համապատասխան պետական կառավարման մարմիններ | Համապատասխան պետական և համայնքային լիազոր մարմիններն իրականացնում են թափուր պաշտոնների թեկնածուների ընտրության հարցազրույցների փուլի աշխատանքները ամբողջությամբ | Հանրային ծառայության մասին օրենքը ներառում է հանրային ծառայողների թափուր պաշտոնների թեկնածուների ընտրության հարցազրույցների փուլի աշխատանքներրի ապակենտրոնացման դրույթները (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Իրականացված է մասամբ:<br><Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքի համաձայն, թափուր պաշտոնների համալրման հետ կապված հարաբերությունները սահմանվում են ծառայության առանձին տեսակները կարգավորող օրենսդրությամբ: Քաղաքացիական ծառայության համակարգում առաջատար խմբի պաշտոնների մրցույթները, ներառյալ հարցազրույցի փուլը անց է կացվում համապատասխան մարմիններում:<br><Քաղաքացիական ծառայության> մասին ՀՀ օրենքի փոփոխությունից հետո ՀՀ ՔԾԽ կողմից սահմանվել է կրտսեր պաշտոնների համալրման նոր ընթացակարգ: ՀՀ ՔԾԽ կողմից առնվազն երեք ամիսը մեկ անգամ անց է կացվում թեստավորում, որի արդյունքում հավաստագիր ստացած քաղաքացիները կրտսեր թափուր պաշտոնի զբաղեցման համար դիմում են ներկայացնում համապատասխան աշխատակազմերի ղեկավարնե-րին: Աշխատակազմի ղեկավարը, իր հայեցողությամբ, կարող է անցկացնել հարցազրույց դիմած մասնակիցների հետ:<br><br>Հիմք`<Քաղաքացիական ծառայության մասին> ՀՀ օրենք, <Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենք:<br>Ցուցիչ 1.Վերախմբագրել ցուցիչը` հաշվի առնելով հանրային ծառայության և առանձին տեսակները կարգավորող օրենսդրությունը: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողով, |
| | 87.4 Ներդնել հանրային ծառայողների թափուր պաշտոնների թեկնածուների ընտրության հարցազրույցների գնահատման բալային համակարգ և մրցույթում հաղթող թեկնածուի ընտրության կոլեգիալ կարգ | Սահմանվել են հանրային ծառայության մրցութային, ատեստավորման, հարցազրույցների փուլի գնահատման բալային համակարգի համապատասխան օրենսդրական փոփոխությունները | Հանրային ծառայության մասին օրենքի նախագիծը ներառում է այս դրույթը (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Իրականացված է մասամբ<br>Արդյունքը կարելի է գնահատել քաղաքացիական ծառայության համակարգի համար: Ներդրվել է մրցույթի հարցազրույցների գնահատման բալային համակարգ, ինչպես նաև մրցույթի արդյունքում հաղթող թեկնածուների ընտրության կոլեգիալ կարգ:<br>Համաձայն մրցույթների անցկացման նոր կարգի, փոփոխվել է հարցազրույցի փուլի հարցերի կազմման, գնահատման և հաղթողների որոշման մեխանիզմները: Հարցազրույցի փուլում առնվազն 75 տոկոս արդյունք ստանալու դեպքում մասնակիցները կհամարվեն հարցազրույցի փուլը հաղթահարած, իսկ թեստավորման և հարցազրույցի փուլերի արդյունքում երեք առավելագույն տոկոսներ ստացած մասնակիցները հանձնաժողովի կողմից կճանաչվեն մրցույթի հաղթողներ:<br><Քաղաքացիական ծառայության> մասին ՀՀ օրենքի փոփոխությունից հետո ՀՀ ՔԾԽ կողմից սահմանվել է կրտսեր պաշտոնների համալրման նոր ընթացակարգ, համաձայն որի հավաստագիր ստացած և համապատասխան թափուր պաշտոնի համար դիմում ներկայացված քացաքացիներից մեկը աշխատակազմի ղեկավարի կողմից նշանակվում է պաշտոնում:<br>Հիմք` <Քաղաքացիական ծառայության մասին> ՀՀ օրենք:<br><Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքը չի նախատեսում | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողով,<br>ՀՀ հանրային ծառայության լիազոր մարմին |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | նման դրույթ:<br>Ցուցիչ 1.<Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքի համաձայն թափուր պաշտոնների համալրման հետ կապված հարաբերությունները սահմանվում են հանրային ծառայության առանձին տեսակները կարգավորող օրենսդրությամբ:<br>**Հիմնական եզրակացություն**<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար: | |
| 88. Բարձրացնել հանրային ծառայողների հաշվետվողականության մակարդակը | 88.1 Ներդնել ծառայողների ըստ աշխատանքային ծրագրերի կատարողականի արդյունքների գնահատման վրա հիմնված վարձատրության, խրախուսման և պաշտոնեական առաջխաղացման փոխկապակցված համակարգ | Ծառայողների ըստ աշխատանքային ծրագրերի կատարողականի արդյունքների գնահատման վրա հիմնված վարձատրության, խրախուսման և պաշտոնեական առաջխաղացման փոխկապակցված համակարգը ներդրված է բոլոր պետական կառավարման մարմիններում | Հանրային ծառայությունում, ըստ աշխատանքային ծրագրերի կատարողականի արդյունքներով վարձատրության և պաշտոնական առաջխաղացման դեպքերի թվի հարաբերությունը պետական ծառայողների ամբողջ թվաքանակին | Տվյալները բացակայում են | Արդյունք 1.Կատարված է ամբողջությամբ<br>ՀՀ պետական բոլոր մարմինների աշխատակազմերում, այդ թվում ՀՀ մարզպետարաններում ներդրված է տարեկան աշխատանքային ծրագրերի համակարգը: ՀՀ կառավարությանն առընթեր մարմիններից միայն ՊԵԿ-ը ունի:<br>Հիմք` ՀՀ կառավարության արձանագրային որոշում թիվ 53. 2009թ. դեկտեմբերի 24:<br><br>Արդյունք 2. Կատարված է ամբողջությամբ<br>Պետական ծառայությունում քաղաքացիական ծառայողների համար ամբողջությամբ կիրառվում է հաշվետվությունների կազմման և կատարողականների գնահատման կարգն ու ուղեցույցը:<br>Հիմք ՀՀ կառավարության արձանագրային որոշում թիվ 53. 2009թ. դեկտեմբերի 24:<br><br>Արդյունք 3. Կատարված է ամբողջությամբ<br>քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից, որով սահմանվում են կատարողականի արդյունքների գնահատման վրա հիմնված վարձատրության և խրախուսման մեխանիզմները:<br>Դրա հիման վրա 2011թ. Առաջին կիսամյակի արդյունքներով պետական կառավարման մարմինները իրականացնում են կատարողականի արդյունքների հիման վրա խրախուսում:<br>Հիմք` քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին ՀՀ օրենք հոդված 13:<br>**Հիմնական եզրակացություն**<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` լավ | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողով, ՀԲ պետական հատվածի արդիականացման ծրագիր |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 89. Ամբողջականացնել պետական և համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագրերը | 89.1 Պետական և համայնքային ծառայողների պարտադիր վերապատրաստման ծրագրերում ընդգրկել պետական ծառայողների գործունեության սահմանափակումների, վարքագծի կանոնների և շահերի բախման կարգավորման, արդյունավետ հաղորդակցության, ծառայությունների մատուցման, տեղեկատվության ազատության, կոռուպցիայի կանխարգելման միջոցների և համանման այլ թեմաներով դասընթացներ | Պետական և համայնքային ծառայության լիազոր մարմինների առնվազն կեսի կողմից հաստատված է վերապատրաստման թեմատիկ պլանները | Պետական ծառայության ղեկավարման լիազոր մարմնի/մարմինների կողմից հաստատված պարտադիր վերապատրաստման թեմատիկ պլաններում ներառվել են՝ պետական ծառայողների գործունեության սահմանափակումների, վարքագծի կանոնների և շահերի բախման կարգավորման, արդյունավետ հաղորդակցության, ծառայությունների մատուցման ու տեղեկատության ազատության վերաբերյալ թեմաներ (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է մասամբ: <br>ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից հաստատվել են <Ամբողջականության հիմունքները>, <Հակակոռուպցիոն ներածություն> թեմաներով պարտադիր վերապատրաստման ծրագրեր, որոնցով առ այսօր վերապատրաստվել է 325 քաղծառայող: <br><br>Ցուցիչ 1. <br>ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի որոշումներ՝ 30.11.2009 թ. N 937-Ա, 21.06.2010 N 847-Ա, 23.06.201թ N 499-Ա, 28.10.2010 N8477-Ա: <br><br>**Հիմնական եզրակացություն** <br>Իրավիճակը՝ բավարար <br>Առաջընթացը՝ բավարար: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, ՀՀ պետական կառավարման շահագրգիռ այլ մարմիններ |
| 90. Կրճատել պետական և համայնքային ծառայության գործառույթներով պայմանավորված կոռուպցիոն ռիսկերը | 90.1 Ներդնել պետական և համայնքային ծառայության գործառույթներով պայմանավորված կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման, բացահայտման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ վերապատրաստման առանձին դասընթացների, կրթական ծրագրերի կազմակերպման, պետական և համայնքային ծառայության ընթացակարգերը մանրամասն նկարագրող ուղեցույցներ | վերապատրաստման առանձին դասընթացների, կրթական ծրագրերն նկարագրող ուղեցույցերով կազմակերպվող պետական և համայնքային վերապատրաստման դասընթացներ | Կոռուպցիայի հիմնախնդիրն ու հակակոռուպցիոն քաղաքականությունը լուսաբանող թեմաներով վերապատրաստում իրականացնող ուսումնական հաստատությունների թվի հարաբերությունը պետական ծառայության ղեկավարման լիազոր մարմնի/մարմինների կողմից վերապատրաստման իրավունք ստացած ուսումնական հաստատությունների ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան արդյունավետ է իրականացվել տվյալ միջոցառումը) | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Իրականացված է մասամբ: <br>Արդյունքը կարելի է գնահատել քաղաքացիական ծառայության համակարգի համար: ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից հաստատվել են <Ամբողջականության հիմունքները>, <Հակակոռուպցիոն ներածություն> թեմաներով պարտադիր վերապատրաստման ծրագրերը: <br>Ցուցիչ 1. Ցուցիչը հնարավոր չէ հաշվարկել տվյալների բացակայության պատճառով: <br>**Հիմնական եզրակացություն** <br>Իրավիճակը՝ բավարար <br>Առաջընթացը՝ բավարար: | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, այլ պետական կառավարման մարմիններ |
| 91. Բարձրացնել հանրային ծառայության համակարգում վարձատրության մակարդակի մրցունակությունը | 91.1 Սահմանել պետական և համայնքային ծառայողների վարձատրության միջնաժամկետ և երկարաժամկետ քաղաքականությունը | Արդյունքները ըստ հաստատված ծրագրային դրույթների | Մեծացել են հանրային ծառայողների հավելավճարների ու պարգևավճարների չափերը (այո/ոչ) | ոչ | Արդյունք 1. Իրականացված է մասամբ <br>ՀՀ կառավարության 2008թ. հուլիսի 24-ի թիվ 878-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2008-2012թթ. գործունեության միջոցառումների ծրագրի 4.2.1 կետի 6.1 ենթակետի և ՀՀ կառավարության 2009թ. միջոցառումների ծրագրի 129-րդ կետի համաձայն դեռևս 2009թ. հունիսի 3-րդ տասնօրյակում ՀՀ կառավարություն է ներկայացվել Հանրային ծառայողների վարձատրության ռազմավարության նախագիծը (նշենք, որ ՀՀ կառավարության 2008-2012թթ. ծրագրում որպես նպատակ սահմանված է պետական կառավարման համակարգի կադրային ներուժի | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ ֆինանսների , նախարարություններ, ՀՀ քաղաքացիական |
| | | | Հանրային ծառայողների միջին աշխատավարձի հարաբերությունը մասնավոր հատվածի միջինի նկատմամբ/ համապատասխանություն | 0,59 | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | հետևողական ամրապնդումը, և դրա ձեռքբերման համար աշխատանքի որակի և աշխատավարձի մակարդակի մրցունակության ապահովումը մասնավոր հատվածի հետ):<br>Վերը նշված նախագիծը քննարկվել է Մշտապես գործող նախարարական սոցիալական կոմիտեի 2009թ. դեկտեմբերի 3-ի նիստում և վերադարձվել է՝ ՄԺԾԾ մակրոցուցանիշների առաջիկա 3 տարիների կանխատեսումների մշակման ժամանակ անդրադառնալու պայմանով:<br>Մշտապես գործող նախարարական սոցիալական կոմիտեի 2010թ. հունվարի 14-ի նիստի N14.2/28560-10 արձանագրության 3-րդ կետի 2-րդ ենթակետով (ՀՀ վարչապետի 2010 թվականի մարտի 21-ի 02/14.2/4488-10 հանձնարարականով ժամկետը երկարաձգվել է) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին, ՀՀ ֆինանսների նախարարին հանձնարարվել էր եռամսյա ժամկետում ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի հետ համատեղ քննարկել հանրային ծառայողների վարձատրության հիմնախնդիրները և, հաշվի առնելով միջազգային փորձը, ՀՀ կառավարություն ներկայացնել համապատասխան առաջարկություն:<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի հետ համատեղ մշակված հանրային ծառայողների վարձատրության համակարգում առկա հիմնախնդիրների լուծմանը ուղված առաջարկությունները 2010թ. մայիսի 5-ին ներկայացվել են ՀՀ կառավարություն:<br>Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2010թ. հուլիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության 2011-2013 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» թիվ 859-Ն որոշմամբ և 2011թ. հուլիսի 7-ի ՀՀ կառավարության նիստում հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության 2012-2014 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով հանրային ծառայողների աշխատավարձի բարձրացում չի նախատեսվել:<br><br>Ցուցիչ 1. 2010 թվականին Հանրային ծառայության ոլորտներում հավելավճարների և պարգևավճարների չափերը մնացել են անփոփոխ, ինչը պայմանավորված է համաշխարհայի ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով ՀՀ տնտեսությունում առաջացած ֆինանսական դժվարություններով:<br><br>Ցուցիչ 2. Բերված են Քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի մեծության և վարձատրության համակարգի վերաբերյալ 2010 թվականի զեկույցի (հաստատված է ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 7-ի նիստի թիվ 39 արձանագրային որոշման, 9-րդ կետով) տվյալները: Համաձայն զեկույցի պետական ծառայողների միջին աշխատավարձը կազմել է 115261 դրամ, իսկ ոչ պետական հատվածի միջին աշխատավարձը` 195142 դրամ: Զեկույցը պատրաստվել է համաձայն «Քաղաքացիական ծառայության վարձատրության մասին» ՀՀ օրնքի 14-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2002թ. դեկտեմբերի 5-ի թիվ 1932-Ն որոշման և ՀՀ կառավարության 2003թ. ապրիլի 23-ի թիվ 572-Ն որոշման:<br>2011 թվականի տվյալները կլինեն 2011 թվականի 3-րդ եռամսյակում:<br>Նշենք, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է 2011թ. մայիսի 26-ին (օրենքով սահմանվել է հանրային | ծառայության խորհուրդ, շահագրգիռ պետական կառավարման այլ մարմիններ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ծառայողների շրջանակը), որը ուժի մեջ կմտնի 2012թ. հունվարի 1-ից: ՀՀ օրենսդրությամբ հանրային ծառայողների միջին աշխատավարձի հաշվարկման պահանջ և մեխանիզմներ սահմանելուց հետո ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կհաշվարկվի հանրային ծառայողների միջին աշխատավարձը: | |
| 92. Ներդնել խրախուսման և պատասխանատվության համարժեք մեխանիզմներ հանրային ծառայությունների առավել մեծ կոռուպցիոն ռիսկեր պարունակող բնագավառներում | 92.1 Սահմանմանել դատական, դատախազական, հարկային, մաքսային, ոստիկանության, ազգային անվտանգության ծառայությունների, քաղաքական և հայեցողական առանձին պաշտոնների համար վարձատրության, նյութական և բարոյական խրախուսման առավել նպաստավոր պայմաններ և դրանց համարժեք վերահսկողության մեխանիզմներ ու պատասխանատվության առավել խիստ միջոցներ | Արդյունքները ըստ հաստատված ծրագրային դրույթների,<br><br>Պետական տարբեր ծառայությունները կարգավորող օրենսդրություններում կատարվել են նյութական պատժամիջոցները խստացնող փոփոխություններ | Դրույթը ներառված է հանրային ծառայության վարձատրության ռազմավարությունում և ծրագրում (այո/ոչ) | այո | Արդյունք 1. Իրականացված է մասամբ<br>ՀՀ կառավարության 2009թ. միջոցառումների ծրագրի 129-րդ կետի համաձայն 2009թ. հունիսի 3-րդ տասնօրյակում ՀՀ կառավարություն է ներկայացվել Հանրային ծառայողների վարձատրության ռազմավարության նախագիծը: Որից հետո մշտապես գործող նախարարական սոցիալական կոմիտեի 2010թ. հունվարի 14-ի նիստի N14.2/28560-10 արձանագրության 3-րդ կետի 2-րդ ենթակետով (ՀՀ վարչապետի 2010 թվականի մարտի 21-ի 02/14.2/4488-10 հանձնարարականով ժամկետը երկարաձգվել է) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին, ՀՀ ֆինանսների նախարարին հանձնարարվել էր եռամսյա ժամկետում ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի հետ համատեղ քննարկել Հանրային ծառայողների վարձատրության հիմնախնդիրները և, հաշվի առնելով միջազգային փորձը, ՀՀ կառավարություն ներկայացնել համապատասխան առաջարկություն:<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի հետ համատեղ մշակված Հանրային ծառայողների վարձատրության համակարգում առկա հիմնախնդիրների լուծմանը ուղված առաջարկությունները 2010թ. մայիսի 5-ին ներկայացվել են ՀՀ կառավարություն:<br>Ցուցիչ 1. Դրույթը ներառված է Հանրային ծառայողների վարձատրության ռազմավարության և միջոցառումների ծրագրի նախագծում, որով նախատեսվում է ներդնել հանրային ծառայողների վարձատրության միասնական համակարգ, ինչպես նաև արդիականացնել հանրային ծառայողների լրացուցիչ աշխատավարձի՝ հավելումների և հավելավճարների հաշվարկման և տրամադրման կարգերը, սոցիալական երաշխիքների համակարգը: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ ֆինանսների, նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, ՀՀ Ոստիկանություն, ՀՀ ազգային անվտագության ծառայություն, ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ պետական կառավարման այլ մարմիններ |
| | 92.2 Միջնաժամկետ հատվածում կիրառել վարձատրության և խրախուսման արտաբյուջետային ֆոնդեր | Արդյունքները ըստ հաստատված ծրագրային դրույթների | Դրույթը ներառված է հանրային ծառայության վարձատրության ռազմավարությունում և ծրագրում (այո/ոչ) | ոչ | Արդյունք 2. Իրականացված չէ,<br>արտաբյուջետային ֆոնդերի կիրառմամբ հանրային ծառայողների վարձատրության համակարգում առկա խնդիրների լուծումը չի բխում հանրային ծառայողների վարձատրության ռազմավարության նախագծով նախատեսված մոտեցումներից, քանի որ արտաբյուջետային ֆոնդերի կիրառումը կիրառելի չէ բոլոր ծառայությունների համար. Հանրային ծառայողների վարձատրության ռազմավարության և միջոցառումների ծրագրի նախագծով նախատեսվում է ներդնել հանրային ծառայողների վարձատրության միասնական համակարգ, ինչպես նաև արդիականացնել հանրային ծառայողների լրացուցիչ աշխատավարձի և սոցիալական երաշխիքների համակարգը: Ներկայում հանրային որոշ ծառայություններում առկա են արտաբյուջետային ֆոնդեր, որի միջոցները ուղղվում են ծառայողների խրախուսմանը: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Առաջարկվում է խմբագրել միջոցառումը:<br><br>Առաջարկվում է խմբագրել մոնիտորինգի ցուցիչը:<br><br>Հիմնական եզրակացություն. քանի որ ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի 91 և 92 կետերը պետք է բխեն միևնույն նորմատիվ իրավական ակտից, այն է՝ Հանրային ծառայողների վարձատրության ռազմավարություն, (որը դեռևս չի հաստատվել՝ պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով ՀՀ տնտեսությունում առաջացած ֆինանսական դժվարություններով), հետևաբար առաջարկվում է վերանայել վերոնշյալ կետերով նախատեսված միջոցառումները և դրանց իրականացման ժամկետները:<br>Իրավիճակը. անբավարար:<br>Առաջընթացը. անբավարար:<br>Առաջարկներ. վերանայել ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի 91 և 92 կետերով նախատեսված միջոցառումները և դրանց իրականացման ժամկետները՝ դրանք համապատասխանեցնելով երկրի ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակին: | |
| 93. Ամբողջականացնել և օպտիմալացնել հանրային ծառայողների վարքագծի և շահերի բախման կարգավորումը | 93.1 Սահմանել քաղաքական, հայեցողական և հանրային այլ ծառայողների վարքագծի և շահերի բախման կանոնակարգման միասնական սկզբունքները և կանոնները, վարքագծի կոնկրետ կանոնների խախտումների համար պատասխանատվություն | Արդյունքներն ըստ Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման վերաբերյալ ռազմավարության և ծրագրի<br><br>Հանրային ծառայության բոլոր մակարդակներում ներդրվել է շահերի հայտարարագրման ընթացակարգեր | Պետական ծառայությունում, նոր ընթացակարգերի վրա խարսխված, պաշտոնանկության դեպքերի թվի հարաբերությունը պետական ծառայողների ամբողջական թվաքանակին | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br><Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքով սահմանվել է հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման վերաբերյալ դրույթները:<br>Պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրման ընթացակարգերը նույնպես սահմանված են <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենքով:<br>Ցուցիչ 1<br>Ցուցիչը հնարավոր կլինի հաշվել օրենքի կիրառումից հետո: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ,<br>անկախ փորձագետներ |
| | | | Վարքագծի և շահերի բախման կանոնակարգերը խախտելու համար կիրառված սանկցիաների թվի հարաբերությունը կոռուպցիոն մեղադրանքներ պարունակող հայցադիմումների ընդհանուր թվաքանակին | | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 93.2 Պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրման գործող համակարգը ներառել շահերի հայտարարագրման միասնական համակարգում | Պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգի պատասխանատու լիազոր մարմին է ճանաչված էթիկայի կանոնների և շահերի բախման հարցերով մասնագիտացված պետական լիազոր մարմինը | Պետական պաշտոնյաների հայտարարագրված փաստացի աշխատավարձի և եկամուտների հարաբերությունը (որքան մոտ է մեկին այնքան նվազ է կոռուպցիոն ռիսկի հավանականությունը) | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>« Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով բարձրաստիճան պաշտոնատար աձանց գույքի ու եկամուտների հայտարարագրման համակարգի համար պատասխանատու լիազոր մարմին է ճանաչվել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը: 2012թ. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների համար ստեղծվելու են էթիկայի առանձին հանձնաժողովներ:<br><br>Էթիկայի հանձնաժողովների ձեւավորման, գործունեության, էթիկայի կանոնների խախտման առնչությամբ վարույթ իրականացնելու կարգը կսահմանվի համապատասխան օրենքներով:<br><br>Բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման հայտարարագրման դրույթը ներառված է <Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքում: Բարձրաստիճան պաշտոնատար անձինք օրենքով նախատեսված կարգով բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով են ներկայացնում գույքի, եկամուտների հայտարարագրեր:<br><br>Ցուցիչ1. Անհրաժեշտ է վերախմբագրել ցուցիչը: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ,<br>անկախ փորձագետներ |
| | 93.3 Ներդնել վարքագծի և շահերի բախման կանոնակարգման առավել խիստ կանոններ և ընթացակարգեր հանրային ծառայությունների առավել մեծ կոռուպցիոն ռիսկեր պարունակող բնագավառներում, այդ թվում՝ դատական, դատախազական, հարկային, մաքսային, ոստիկանության, ազգային անվտանգության ծառայությունների, քաղաքական և հայեցողական առանձին պաշտոնների համար | Համապատասխան փոփոխություններ են կատարված օրենսդրական մյուս փաստաթղթերում | | | Արդյունք 1. Իրականացված է մասամբ:<br>Հանրային ծառայողների էթիկայի կանոնները և շահերի բախման կանոնակարգումները սահմանված են <Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքով: Նույն օրենքով սահմանված է այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու ժամկետը:<br><br>Առաջարկվում է ռազմավարական դրույթի միջոցառումներն առանձնացնել ըստ ծառայության տեսակների՝ համապատասխանաբար նրանց ճանաչելով որպես պատասխանատու մարմիններ: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ,<br>անկախ փորձագետներ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 93.5 Խստացնել նվերների ստացման և տրամադրման կանոններն ու սահմանափակումները | Նվերների ստացման և տրամադրման կանոններն ու սահմանափակումների վերաբերյալ օրենսդրական նախագծերը մշակված են | Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարությունում և ծրագրում (այո/ոչ) | Այո | Արդյունք1. Իրականացված է ամբողջությամբ:<br>Նվերների ստացման և տրամադրման կանոններն ու սահմանափակումները սահմանված են:<br>Հիմք` <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենք:<br><br>Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքի հաշվարկման հիմքում ընկած է <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենքում նվերների ստացման և տրամադրման կանոնների ու սահմանափակումների նախատեսման պայմանը:<br>Առաջարկվում է միջոցառման մեջ <խստացնել> բառը փոխարինել <սահմանել> բառով: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, անկախ փորձագետներ |
| | 93.6 Ներդնել հանրային ծառայողների այլ գործունեությամբ զբաղվելը բացառող կարգ | Հանրային ծառայողների այլ գործունեությամբ զբաղվելը բացառող օրենսդրական նախագծերը մշակված են | Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարությունում և ծրագրում (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>Սահմանված են հանրային ծառայողների նկատմամբ կիրառվող սահմանափակումները, այդ թվում` այլ գործունեությամբ զբաղվելը բացառող շրջանակները:<br>Հիմք` <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենք:<br><br>Ցուցիչ 1. Դրույթը ներառված է <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենքում: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, անկախ փորձագետներ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 93.7 Խրախուսել հանրային ծառայողների վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախումների վերաբերյալ տեղեկություններ հայտնողներին և ներդնել նրանց պաշտպանության համակարգեր | Ընդունվել է տեղեկություն հայտնողների և նրանց պաշտպանության մասին ՀՀ օրենքը | Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարությունում և ծրագրում (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>Դրույթը ներառված է <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենքում:<br>Հանրային ծառայողը պետք է իրավասու պաշտոնատար անձանց տեղեկացնի այլ ծառայողների կողմից կատարած իրավախախտումների և հանրային ծառայությանն առնչվող ցանկացած անօրինական, այդ թվում` կոռուպցիոն գործողությունների մասին:<br>Իրավասու մարմինները պետք է երաշխավորվեն հանրային ծառայողի անվտանգությունը:<br>Հիմք` <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենք:<br><br>Ցուցիչ 1. Տեղեկացման և հանրային ծառայողի անվտանգության երաշխավորման կարգը սահմանվելու է ՀՀ կառավարության կողմից:<br>Հիմք` <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենք: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ,<br>անկախ փորձագետներ |
| | 93.8 Ներդնել քաղաքական, հայեցողական և ղեկավար և բարձրագույն խմբի, գլխավոր և առաջատար խմբերի պաշտոնների, կոռուպցիոն մեծ ռիսկեր պարունակող ծառայությունների և գործառույթներ իրականացնող պաշտոնների, և որոշումների կայացման գործընթացներում չընդգրկված հանրային ծառայողների նկատմամբ հայտարարագրման տարբերակված համակարգ | Շահերի բախման հայատարարագրման համակարգը ձևավորված է և գործում է պետական կառավարման մարմիններում | Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարությունում և ծրագրում (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է մասամբ:<br><Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենքով նախատեսված է բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց փոխկապակցված անձանց շահերի հայտարարագրման կարգը: Նույն օրենքի համաձայն հանրային ծառայողների հայտարարագրման հետ կապված հարցերը կանոնակարգվելու են համապատասխան ծառայությունների մասին օրենքներով:<br>Մինչև <Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը, եկամուտների հայտարարագրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում էին <Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին> ՀՀ օրենքով, որն ուժը կկորցնի 2012 հունվարի 1-ից:<br><br>Ցուցիչ 1. Հայտարարագրման համակարգը տարբերակված է:<br>**Հիմնական եզրակացություն**<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար:<br>Առաջարկներ` վերախմբագրել < Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարություն>, <Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին օրենքի նախագիծ> ձևակերպումները:<br>Առաջարկվում է նշել 93.4. միջոցառումը /բացակայում է/ կամ` փոխել համարակալումը: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ,<br>անկախ փորձագետներ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 94. Ներդնել հանրային ծառայողների վարքագծի կանոնների և շահերի հայտարարագրման համակարգի արդյունավետ կառավարման ապակենտրոնացված ինստիտուցիոնալ մոդել | 94.1 Սահմանել հանրային ծառայողների վարքագծի կանոնների և շահերի հայտարարագրման համակարգի կառավարման կենտրոնական լիազոր մարմնի խնդիրները և գործառույթները, լիազորությունները, հաշվետվողականությունը և ընթացակարգերը | Հանրային ծառայողների վարքագծի կանոնների և շահերի հայտարարագրման համակարգի կառավարման կենտրոնական լիազոր մարմնի ստեղծման մասին օրենսդրական նախագծեր | Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարությունում և ծրագրում (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ:<br>Բարձրաստիճան պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների համար ստեղծվելու են էթիկայի առանձին հանձնաժողովներ:<br>Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը իրականացնելու է շահերի հայտարարագրերի վերլուծությունը, հրապարակելու է շահերի բախման բացահայտված դեպքերը եւ դրանց կապակցությամբ ձեռնարկված միջոցառումները, ինչպես նաև համացանցում վարելու է շահերի բախման հայտարարագրերի ռեեստր:<br>Հիմք՝ <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենք:<br><br>Ցուցիչ 1. Դրույթը ներառված է <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենքում: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ,<br>անկախ փորձագետներ |
| | 94.2 Յուրաքանչյուր պետական մարմնում ստեղծել էթիկայի հանձնաժողով | Էթիկայի հանձնաժողովներ են ստեղծված պետական կառավարման և քաղաքային համայնքային բոլոր մարմիններում | Էթիկայի հանձնաժողովներ ստեղծած պետական կառավարչական հիմնարկների թվի հարաբերությունը ՀՀ պետական կառավարչական հիմնարկների ընդհանուր թվաքանակին | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Իրականացված է մասամբ:<br>Հանրային ծառայության մարմիններում գործելու են հանրային ծառայողի էթիկայի հարցերով հանձնաժողովներ:<br>Հիմք՝ <Հանրային ծառայության մասին> ՀՀ օրենք:<br><br>Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքը հնարավոր կլինի հաշվարկել պետական մարմիններում էթիկայի հանձնաժողովներ ստեղծելուց հետո: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ, |
| | 94.3 Աշխատակազմի ղեկավարին ճանաչել տվյալ մարմնում վարքագծի կանոնների ներդրման, շահերի հայտարարագրման ռեեստրի ստեղծման ու վարման, ընթացակարգերի պահպանման նկատմամբ վերահսկողության, էթիկայի և շահերի բախման հարցերով հաշվետվության պատրաստման պատասխանատու պաշտոնյա | Պետական կառավարման մարմինների և քաղաքային համայնքների ղեկավարների աշխտակազմի ղեկավարներն իրականացնում են Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին օրենքով սահմանված գործառույթներն | Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարությունում և ծրագրում (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1. Իրականացված է մասամբ:<br>Էթիկայի հարցերով հանձնաժողովների ձևավորման, գործունեության, էթիկայի կանոնների խախտման առնչությամբ վարույթ իրականացնելու կարգը և աշխատակազմի ղեկավարի հետ կապված հարցերը սահմանվելու են հանրային ծառայության առանձին ոլորտները կարգավորող օրենքներով:<br>Հիմք՝ <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենք:<br><br>Ցուցիչ 1. Ցուցիչի արժեքը հնարավոր կլինի ստանալ հանրային ծառայողի էթիկայի կանոնները եւ շահերի բախման կանոնակարգումները սահմանող ՀՀ համապատասխան առանձին իրավական ակտերի ընդունման արդյունքում:<br>**Հիմնական եզրակացություն**<br>Իրավիճակը՝ բավարար<br>Առաջընթացը՝ բավարար:<br>Առաջարկներ՝ վերախմբագրել < Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարություն> ձևակերպումը: | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ,<br>անկախ փորձագետներ |
| 95. Հզորացնել պետական և համայնքային մարմիններում հանրային ծառայողների վարքագծի կանոնների և շահերի հայտարարագրման | 95.1 Ներդնել շահերի հայտարարագրման, վարքագծի կանոնների և էթիկայի նորմերի ու դրանց ընթացակարգերի, խախտումների, դեպքերի ու | Շահերի հայտարարագրման, վարքագծի կանոնների և էթիկայի նորմերի ու դրանց ընթացակարգերի, խախտումների, դեպքերի | Դրույթը ներառված է Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարությունում և ծրագրում (այո/ոչ) | Ոչ | Արդյունք 1 Իրականացված է մասամբ:<br>Նշված հարաբերությունները կարգավորվում են <Հանային ծառայության մասին> ՀՀ օրենքով: Համապատասխան ուղեցույցներ հնարավոր կլինի մշակել օրենքի կիրառումից հետո:<br><br>Ցուցիչ1. Ցուցիչ 2. Հարցին հնարավոր է անդրադառնալ օրենքի | Պետական և համայնքային մարմիններում հանրային ծառայողների վարքագծի |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| հարցերով պատասխանատուների կարողությունները | փաստերի մասին տեղեկացման, բացահայտման և կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ գործնական ուղեցույցներ | ու փաստերի մասին տեղեկացման, բացահայտման և կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ գործնականում կիրառվող ուղեցույցեր | Պետական և համայնքային մարմիններում հանրային ծառայողների վարքագծի կանոնների և շահերի հայտարարագրման ընթացակարգերի, խախտումների, դեպքերի ու փաստերի մասին տեղեկացման, բացահայտման և կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ հրատարակված ուղեցույցերի տպաքանակի հարաբերությունը հանրային ծառայողների ընդհանուր թվաքանակին | Տվյալները բացակայում են | կիրառման փուլում: | կանոնների և շահերի հայտարարագրման հարցերով պետական լիազոր մարմին, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, Անկախ փորձագետներ |
| | 95.2 Կազմակերպել պետական և համայնքային մարմիններում հանրային ծառայողների վարքագծի կանոնների և շահերի հայտարարագրման հարցերով պատասխանատուների ուսուցումը ըստ ներդված ուղեցույցների | Հանրային ծառայողների վարքականոնների և շահերի հայտարարագրման հարցերով պատասխանատու պաշտոնյաների պարբերաբար իրականացված վերապատրաստման դասընթացներ | Հանրային ծառայողների վարքականոնների և շահերի հայտարարագրման հարցերով պատասխանատու պաշտոնյաների վերապատրաստման դասընթացների մշակված մոդուլներ (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է մասամբ:<br>Արդյունքը կարելի է գնահատել քաղաքացիական ծառայության համակարգի համար: ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից հաստատվել են <Ամբողջականության հիմունքները>, <Հակակոռուպցիոն ներածություն> թեմաներով պարտադիր վերապատրաստման ծրագրեր:<br>Օրենքի կիրառումից հետո կմշակի վերապատրաստման նոր ծրագրեր:<br><br>Ցուցիչ 1. ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 30.11.2009 թ. N 937-Ա, 21.06.2010 N 847-Ա, 23.06.201թ N 499-Ա, 28.10.2010 N8477-Ա որոշումներով համապատասխան որոշումներ:<br><br>Հիմնական եզրակացություն<br>Իրավիճակը` բավարար<br>Առաջընթացը` բավարար: | Պետական և համայնքային մարմիններում հանրային ծառայողների վարքագծի կանոնների և շահերի հայտարարագրման հարցերով լիազոր մարմին, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, այլ շահագրգիռ պետական մարմիններ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 96. Ապահովել հանրային ծառայողների շահերի հայտարարագրման թափանցիկությունն ու հրապարակայնությունը | 96.1 Ներդնել քաղաքական, հայեցողական և պետական ծառայության ղեկավար ու քաղաքացիական ծառայության բարձրագույն խմբի ծառայողների շահերի հայտարարագրերը, այդ թվում՝ գույքի և եկամուտների հայտարարագրերը, համապատասխան մարմինների ինտերնետային կայքերում տեղակայելու ընթացակարգեր և սահմանել վերահսկողություն՝ դրանց պահպանման նկատմամբ | Քաղաքական, հայեցողական, պետական և համայնքային ծառայության ղեկավար ու բարձրագույն խմբի ծառայողների շահերի հայտարարագրերը տեղադրված են համապատասխան մարմինների ինտերնետային կայքերում և ապահովված է դրանց պահպանման նկատմամբ վերահսկողություն | Քաղաքացիների և ԶԼՄ-ների կողմից շահերի հայտարարագրերի վերաբերյալ հայցադիմումների թվաքանակի հարաբերությունը շահերի հայտարարագրման և վարքականոնի ընթացակարգերի խախտման պատճառաբանությամբ կիրառված պատժամիջոցների ընդհանուր թվաքանակին | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Կատարված չէ<br>Հարցին  հնարավոր է անդրադառնալ օրենքի կիրառման փուլում՝2012թ.-ին:<br>Հիմք՝ <Հանրային ծառայության մասին > ՀՀ օրենք: | ՀՀ պետական կառավարման բոլոր մարմիններ |
| | 96.2 Ներդնել պաշտոնյաների շահերի հայտարարգրերի վերաբերյալ քաղաքացիների հարցադրումներին կամ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին հրապարակայնորեն արձագանքելու ընթացակարգեր և սահմանել վերահսկողություն՝ դրանց պահպանման նկատմամբ | Պետական և համայնքային ծառայության ղեկավարման լիազոր մարմնի/մարմինների կողմից հաստատվել է ԶԼՄ-ներում պետական և համայնքային մարմինների և պաշտոնյաների հասցեին նեգատիվ հրապարակումների պարտադիր արձագանքման ընթացակարգ | Պաշտոնյաների շահերի հայտարարգրերի վերաբերյալ քաղաքացիների հարցադրումներին կամ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին հրապարակայնորեն արձագանքելու և դրանց պահպանման նկատմամբ վերահսկողություն սահմանելու վերաբերյալ օրենսդրական ակտերի մշակված նախագծեր (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն:<br>Նշված հարաբերությունները կարգավորվել են <Հանրային ծառայության մասին> օրենքով:<br><br>Ցուցիչ 2. Ցուցիչը հնարավոր կլինի հաշվարկել օրենքի կիրառումից հետո:<br><br>**Հիմնական եզրակացություն**<br>Իրավիճակը՝ լավ:<br>Առաջընթացը՝ լավ: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, անկախ փորձագետներ |

**3.17 Հրապարակային հաշվետվություն**

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 97. Ապահովել պետական կառավարման մարմինների գործունեության վերաբերյալ հաշվետվությունների հրապարակայնության սկզբունքի իրականացումը | 97.1 Ներդնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ծրագրերը և հաշվետվությունները կանոնավոր և պարբերաբար՝ առնվազն տարին մեկ անգամ հրապարակման, հանրային վերահսկողության մեխանիզմների կիրառման հստակ ընթացկարգեր և սահմանել վերահսկողություն՝ դրանց պահպանման նկատմամբ | ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների 80 տոկոսի գործունեության հաշվետվությունները հրապարակային են | Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկություններն ու մարմինների տարեկան եւ ընթացիկ գործունեության մասին հաշվետվությունները հրապարակվում են (յուրաքանչյուր պետական կառավարչական հիմնարկի համար նշելով հրապարակման տեղն ու տպաքանակը) (այո/ոչ) | Այո | Արդյունք 1-2. Կատարված է ամբողջությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության, նախարարությունների և առընթեր մարմինների կայքերում տեղադրվել են 2011թ. նախարարության գործունեության կիսամյակային հաշվետվությունները, որոնք արտացոլում են Հայաստանի Հանրապետության նախարարությունների միջոցով ֆինանսավորվող ծրագրերի իրականացման աստիճանը բնորոշող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ տվյալները, դրանց դինամիկան և վերլուծությունը: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ նախարարություններ, ՀՀ կառավարությանն առընթեր մարմիններ, մարզպետարաններ, տեղական ինքնակառավարման մարմիններ, այլ գերատեսչություններ |
| | | | Պետական քաղաքականության ներկայացմանն ու մեկնաբանմանը նվիրված հեռուստաեթերի ժամերի քանակական հարաբերությունը պետական կառավարչական հիմնարկների հաշվետվությանը նվիրված հաղորդումների ժամաքանակին, | Տվյալները բացակայում են | | |
| | | | Պետական կառավարման մարմինների հաշվետվությունները պարունակող պաշտոնական կայքերի թվի հարաբերությունը պետական կառավարչական հիմնարկների գոյություն ունեցող ինտերնետային կայքերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան արդյունավետ է հակակոռուպցիոն քաղաքականությունը տվյալ բնագավառում) | Տվյալները բացակայում են | | |

### 3.18 Կոռուպցիայի քրեականացում և իրավապահ գործունեություն

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 98. Ամբողջականացնել և որոշակիացնել կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը | 98.1Ապահովել կոռուպցիայի քրեականացման բնագավառում միջազգային ընդունելի մոտեցումներին համահունչ օրենսդրության և դրա կիրարկման պրատիկայի ամփոփումն ու կատարելագործումը | Կոռուպցիոն հանցագործությունների հստակեցված ցանկով վարվող և հրապարակվող վիճակագրության | ՀՀ -ում առանձնացված կոռուպցիոն հանցատեսակների թվի հարաբերությունը ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» դրույթներով սահմանված կոռուպցիոն հանցատեսակների ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան արդյունավետ է կատարվում կոռուպցիայի քրեկանացման մասով Հայաստանի ստանձնած միջազգային հանձնառությունները) | 1 | Արդյունք 1. Իրականացված չէ:<br>Նախատեսվում է ՀՀ քր.օր 190 հոդվածում փոփոխություն կատարելու վերաբերյալ օրենքի նախագծի մշակում: Ներկայում գործում է ՀՀ գլխավոր դատախազի 2008թ. նոյեմբերի 19-ի <Կոռուպցիոն հանցագործությունների մասին> թիվ 82 հրաման, որով սահմանվել է կոռուպցիոն հանցագործությունների ցանկը, որն իր մեջ ներառում է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված 31 հանցակազմ:<br>Ցուցիչ 1. ՀՀ առանձնացված կոռուպցիոն հանցագործությունների ցանկը համապատասխանում է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի դրույթներով սահմանված կոռուպցիոն հանցատեսակների ընդհանուր թվաքանակին:<br>ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թ,թ, միջացառումների ծրագրի 98,1 կետով նախատեսված որպես պատասխանատու ՀՀ գլխավոր դատախազությանը վերաբերող միջոցառումների իրականացման ուղղությամբ 2011թ, 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության կողմից հարցումներ են ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն, արտաքին գործերի նախարարություն, ոստիկանություն, ԱԱԾ, ազգային վիճակագրական ծառայություն և հատուկ քննչական ծառայություն` կարծիք կամ առաջարկություն հայտնելու ծրագրի հիշյալ կետի ակնկալվող արդյունքների և մոնիտորինգի ցուցիչների իրականացմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ: Ստացված տեղեկատվությունը, կարծիքները և առաջարկություններն ուսումնասիրվել են և դրա արդյուներով ՀՀ գլխավոր դատախազության նախաձեռնությամբ ստեղծված աշխատանքային խմբի անդամներից կազմվել է ենթախումբ` բաղկացած ՀՀ գլխավոր դատախազության, արդարադատության նախարարության, արտաքին գործերի նախարարության և ԱԱԾ աշխատողներից:<br>Ցուցիչ 1. Հնարավոր կլինի հաշվարկել ԱՊՀ համաձայնագրի ստորագրումից և վերոնշյալ աշխատանքային խմբի ենթախմբի կողմից ձեռք բերված արդյունքների ամփոփումից հետո:<br>ՀՀ օրենսդրությունը նախատեսում է իրավաբանական անձանց քաղաքացիա-իրավական (այդ թվում` նյութական) եվ վարչական պատասխանատվության վերաբերյալ դրույթներ, սակայն իրավաբանական անձի քրեական պատաս-խանատվության ինստիտուտը դեռևս բացակայում է: | ՀՀ դատախազություն<br>ՀՀ արդարադատության նախարարություն |
| | 98.2 Հստակեցնել ակտիվ և պասիվ կաշառակերության հանցակազմերի իրավական կարգավորումը | Միջազգային մոտեցումներին համահունչ նորմերի առկայություն ՀՀ քրեական օրենսգրքում | Ակտիվ և պասիվ կաշառակերության քրեականացման միջազգային փորձն ուսումնասիրվել է, ՀՀ քրեական օրենսգրքի 311, 312, 311.1, 312.1 հոդվածների վերանայվել են` միջազգային փորձին համահունչ (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Կատարվել է մասնակի:<br>ՀՀ արդարադատության նախարարի հրամանով ստեղծված աշխատանքային խումբը, ուսումնասիրելով ակտիվ և պասիվ կաշառակերության քրեականացման միջազգային փորձը` մշակել է «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին « ՀՀ օրենքի նախագիծ, որով վերանայվում են ՀՀ քրեական օրենսգրքի 311, 312, 311.1, 312.1 հոդվածները: «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն:<br>Ցուցիչ 1. Ցուցիչի հիմքը այն է, որ «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին « ՀՀ օրենքի նախագիծը ուղարկվել է ՀՀ կառավարություն: | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | 98.3 Սահմանել ակտիվ և պասիվ ազդեցության չարաշահում առանձին իրավախախտումը | Քրեականացված է ազդեցության պասիվ չարաշահումը, հստակեցվել է ազդեցության ակտիվ չարաշահման | ՀՀ քրեական օրենսդրությամբ պաշտոնեական ազդեցության ակտիվ չարաշահումը քրեականացված է (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Կատարվել է ամբողջությամբ:<br>«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 23.05.11 ՀՕ-143-Ն օրենքով ամրագրվել է 311.2 հոդվածը համաձայն, որի . «Իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական նպատակով օգտագործելը` անձամբ կամ միջնորդի միջոցով դրամի, գույքի, գույքի նկատմամբ իրավունքի, արժեթղթերի կամ որևէ այլ առավելություն ստանալը` իրավաբանական կամ ֆիզիկական անձանց օգտին որևէ | ՀՀ արդարադատության նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | հանցակազմը | | | պաշտոնատար անձի կամ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:<br><br>Ցուցիչ 1-ի հիմքը այն է , որ ընդունվել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 23.05.11 ՀՕ-143-Ն օրենքը: | |
| | 98.4 Վերանայել պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար պատասխանատվության ենթարկելու նախապայմանները | Վերանայված է պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար պատասխանատվություն ենթարկելու գույքային վնասի չափի նախապայմանը | Պաշտոնեական լիազորությունները չարաշահմամբ դրսեւորվող կոռուպցիան քրեորեն պատժելի իրավախախտում է համարվում անկախ դրա առաջացրած վնասի չափից (այո/ոչ) | Ոչ | Արդունք 1. Կատարված չէ<br>Անհրաժեշտ է լրացուցիչ քննարկել պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար պատասխանատվություն ենթարկելու գույքային վնասի չափի նախապայմանը վերացնելու նպատակահարմարության հարցը:<br><br>Ցուցիչ 1-ի հիմքը այն է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի դիսպոզիցիային հանված չէ վնասի առկայության նախապայմանը:<br><br>Ցուցիչ 2.-ի հիմքը այն է, որ ՀՀ քրեական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ դեռևս կատարված չեն: Անհրաժեշտ է լրացուցիչ քննարկել նշված հանցագործությունը որպես առանձին հանցատեսակ, այլ ոչ թե ընդհանուր հանցատեսակի որակյալ տեսակ նախատեսելու նպատակահարմարության հարցը:<br><br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | | | ՀՀ քրեական օրենսդրությամբ պաշտոնատար անձի կողմից գույքի հափշտակումը, ապօրինի յուրացումը կամ ոչ նպատակային օգտագործումը սահմանվել է որպես ինքնուրույն կոռուպցիոն հանցակազմ (այո/ոչ) | Ոչ | | |
| 99.Բարձրացնել կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը | 99.1 Նվազեցնել կոռուպցիոն հանցագործությունների լատենտայնությունը | Կաշառք տալու հանցակազմի պարագայում անձը ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե խոստումից կամ առաջարկից հետո անձը այդ մասին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և ապա համագործակցել է նրանց հետ՝ հանձնելով կաշառքի առարկան կաշառք տալու նմանակում օպերատիվ-հետախուզական միջոցառման շրջանակներում: | Կոռուպցիոն հանցագործությունների մասին հայտնելու արդյունքում բացահայտված հանցագործությունների հարաբերությունը հայտնելու արդյունքում չբացահայտված դեպքերին | Տվյալներ չկան | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>ՀՀ արդարադատության նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կողմից իրականացվում է կոռուպցիոն հանցագործությունների լատենտայնության նվազեցման վերաբերյալ միջազգային փորձ: Համատեղ քննարկումների արդյունքում ոչ նպատակահարմար է համարվել օրենսդրության մեջ փոփխություններ կատարելը, քանի որ գործող օրենսդրությունը հստակ կանոնակարգում է հանցագործությունների մասին հայտնելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը:<br><br>Ցուցիչ 1. ՀՀ արդարադատության նախարարությունում նման տեղեկատվություն չի հավաքագրվում: | ՀՀ արդարադատության նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | 99.2 Վերանայել և հստակեցնել կաշառքի պրովոկացիայի հանցակազմը և կարգավորումները | Ներդվել են օպերատիվ փորձարարության՝ օրենքով նախատեսված պայմանների խստագույն պահպանմամբ իրականացումը երաշխավորող օրենսդրական կարգավորումներ՝բացառելով կաշառքի պրովոկացիայի հնարավորությունները: | Կաշառքի պրովոկացիայի հանցակազմը և կարգավորումները վերանայվել են հայեցողական որոշումները բացառելու առումով (այո/ոչ) | | 99.2 ենթակետը ուժը կորցրել է ՀՀ կառավարության 02.06.2011թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 1272-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 748-Ն որոշումով; | ՀՀ ԿԱ Ոստիկանություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն |
| | 99.3 Միջազգային լավագույն պրակտիկային համապատասխան հստակ կարգավորման ենթարկել կաշառք տալու նմանակման և օպերատիվ փորձարարության իրականացման պայմանները | Օպերատիվ փորձարարությունը թույլատրելի է միայն կաշառքի ստացման հանցագործության նախապատրաստման կամ սկզբի մասին օպերատիվ տեղեկությունների կամ կաշառքի շորթման փորձի վերաբերյալ հաղորդման առկայության դեպքում: | Կաշառք տալու/ստանալու համար նմանակման գործողությունների դեմ բավարարված դատական բողոքարկումների հարաբերությունը իրականացված օպերատիվ նմանակումների քանակին | | 99.3 ենթակետը ուժը կորցրել է ՀՀ կառավարության 02.06.2011թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 1272-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 748-Ն որոշումով; | ՀՀ ԿԱ Ոստիկանություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն |
| | | | Կաշառք տալու/ստանալու դեպքերի բացահայտման համար իրականացված օպերատիվ փորձարարության դեմ բավարարված դատական բողոքարկումների հարաբերությունը իրականացված փորձարարությունների քանակին | | | |
| 100. Ներդնել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը | 100.1 Քրեականացնել իրավաբանական անձի օգտին ֆիզիկական անձի կողմից կատարված կոռուպցիոն հանցագործությունը | Ներդված է ֆիզիկական և իրավաբանական անձանց սուբսիդիար պատասխանատվության սկզբունքը | ՀՀ քրեական օրենսդրությամբ իրավաբանական անձի օգտին ֆիզիկական անձի կողմից կատարված կոռուպցիոն հանցագործության նկատմամբ սահմանվել են համապատասխան պատժատեսակներ և պատժաչափեր (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>Ուսումնասիրվել է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի կիրառման միջազգային փորձը: Վեր են հանվել իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող սանկցիաները, որոնք համապատասխանում են ՀՀ օրենսդրությամբ իրավաբանական անձանց համար նախատեսված տույժերին:<br>Ցուցիչ 1-ի և 2-ի հիմքը այն է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 311.2-րդ հոդվածում ամրագրված է «1. Իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական նպատակով օգտագործելը՝ անձամբ կամ միջնորդի միջոցով դրամի, գույքի, գույքի նկատմամբ իրավունքի, արժեթղթերի կամ որևէ այլ առավելություն ստանալը՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց օգտին որևէ պաշտոնատար անձի կամ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից իր | ՀՀ արդարադատության նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ՀՀ քրեական օրենսդրությամբ ֆիզիկական անձի կողմից սեփական ազդեցությունը ի նպաստ իրավաբանական անձի շահադիտական նպատակով 0գտագործելու նկատմամբ սահմանվել են համապատասխան պատժատեսակներ և պատժաչափեր (այո/ոչ) | Այո | լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար`<br>պատժվում է տուգանքով` նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ` առավելագույնը երեք տարի ժամկետով:<br>2. Նույն արարքը, որը կատարվել է ակնհայտ ապօրինի գործողության կամ անգործության համար`<br>պատժվում է ազատազրկմամբ` երեքից հինգ տարի ժամկետով:<br>3. Նույն արարքը, որը կատարվել է`<br>1) շորթմամբ,<br>2) խոշոր չափերով,<br>3) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,<br>4) (4-րդ կետն ուժը կորցրել է 23.05.11 ՀՕ-143-Ն)<br>պատժվում է ազատազրկմամբ` չորսից յոթ տարի ժամկետով:<br>4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են`<br>1) կազմակերպված խմբի կողմից,<br>2) առանձնապես խոշոր չափերով`<br>պատժվում են ազատազրկմամբ` հինգից տասը տարի ժամկետով` գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:<br>(3112 հոդվածը լրաց. 30.04.08 ՀՕ-49-Ն, փոփ. 23.05.11 ՀՕ-143-Ն)<br><br>Ցուցիչ 3-ի արժեքի հիմքը պայմանավորված է նրանով, որ ՀՀ քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն է սահմանում փողերի լվացման համար, անկախ այն բանից, թե հանցագործությունը ում օգտին է կատարված: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրք 190-րդ հոդվածի համաձայն. « 1. Հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում)` պատժվում է ազատազրկմամբ` երկուսից հինգ տարի ժամկետով` սույն օրենսգրքի 55-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված գույքի բռնագրավմամբ:<br>2. Նույն արարքը, որը կատարվել է`<br>1) խոշոր չափերով,<br>2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ`<br>պատժվում է ազատազրկմամբ` հինգից տասը տարի ժամկետով` սույն օրենսգրքի 55-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված գույքի բռնագրավմամբ:<br>3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է`<br>1) առանձնապես խոշոր չափերով,<br>2) կազմակերպված խմբի կողմից,<br>3) պաշտոնեական դիրքն օգտագործելով`<br>պատժվում է ազատազրկմամբ` վեցից տասներկու տարի ժամկետով` սույն օրենսգրքի 55-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված գույքի բռնագրավմամբ:<br>4. Սույն հոդվածում խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող | |
| | | | ՀՀ քրեական օրենսդրությամբ ֆիզիկական անձի կողմից ի շահ իրավաբանական անձի կատարած փողերի լվացման նկատմամբ սահմանվել են համապատասխան պատժատեսակներ և պատժաչափեր (այո/ոչ), | Այո | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | գումարը (արժեքը), իսկ առանձնապես խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը):<br>5. Սույն հոդվածի իմաստով հանցավոր ճանապարհով ստացված գույք է հանդիսանում ցանկացած գույքը, ներառյալ` դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում` քաղաքացիական իրավունքների այլ օբյեկտներ, որոնք ուղղակի կամ անուղղակի առաջացել կամ ստացվել են սույն օրենսգրքի 104-րդ, 112-113-րդ, 117-րդ, 122-րդ, 131-134-րդ, 166-րդ, 168-րդ, 175-224-րդ, 233-235-րդ, 238-րդ, 261-262-րդ, 266-270-րդ, 281-րդ, 284-րդ, 286-289-րդ, 291-292-րդ, 295-րդ, 297-298-րդ, 308-313-րդ, 329-րդ, 352-րդ, 375-րդ, 383-րդ, 388-րդ և 389-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների կատարման արդյունքում:<br>(190-րդ հոդվածը փոփ., լրաց. 14.12.04 ՀՕ-16-Ն, փոփ. 01.06.06 ՀՕ-119-Ն, խմբ. 28.11.06 ՀՕ-206-Ն, փոփ. 10.06.09 ՀՕ-149-Ն)»:<br><br>Իրավիճակը գնահատվում է դրական: | |
| 101. Սահմանել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և դրանք կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու օպտիմալ և միջազգայնորեն ընդունելի վաղեմության ժամկետներ | 101.1Ուսումնասիրել կոռուպցիոն հանցագործությունների համար վաղեմության ընդունելի ժամկետների տևողության հարցում միջազգային փորձը | Միջազգային մոտեցումներին համահունչ` կոռուպցիոն հանցագործությունների համար պատասխանատվության վաղեմության առավել երկար ժամկետների առկայություն | ՀՀ օրենսդրության մեջ կոռուպցիոն իրավախախտումների առնչությամբ վարույթ հարուցելու համար սահմանվել է վաղեմության ավելի երկար ժամկետ քան այլ հանցատեսակների պարագայում (այո/ոչ) | | Արդյունք 1. Իրականացված չէ:<br>Նախատեսվում է իրականացնել 2011թ. ընթացքում: ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թ,թ, միջոցառումների ծրագրի 101,1 կետով նախատեսված որպես պատասխանատու ՀՀ գլխավոր դատախազությանը վերաբերող միջոցառումների իրականացման ուղղությամբ 2011թ, 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության կողմից հարցումներ են ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն, արտաքին գործերի նախարարություն, ոստիկանություն, ԱԱԾ, ազգային վիճակագրական ծառայություն և հատուկ քննչական ծառայություն` կարծիք կամ առաջարկություն հայտնելու ծրագրի հիշյալ կետի ակնկալվող արդյունքների և մոնիտորինգի ցուցիչների իրականացմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ: Ստացված տեղեկատվությունը, կարծիքները և առաջարկություններն ուսումնասիրվել են և դրա արդյունքով ՀՀ գլխավոր դատախազության նախաձեռնությամբ ստեղծված աշխատանքային խմբում կազմվել է ենթախումբ` բաղկացած ՀՀ գլխավոր դատախազության, արդարադատության նախարարության, արտաքին գործերի նախարարության և ԱԱԾ աշխատողներից: | ՀՀ դատախազություն ՀՀ արդարադատության նախարարություն |
| | | | Վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով կարճված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերի հարաբերությունը բացահայտված կառուպցիոն հանցագործությունների թվին | | | |
| | 101.2 Վերանայել դատախազներին և դատավորներին անձեռնամխելիությունից | Դատավորի նկատմամբ քրեական հետապնդման հարուցման հարցում | Դատախազի և դատավորի նկատմամբ քրեական հետապնդման հարուցման | Ոչ | Արդյունք 1.Կատարված է մասնակի:<br>Դատախազի նկատմամբ քրեական հետապնդման հարուցման հարցում վերադաս անհատական որոշում կայացնողների մասնակցության նվազեցմանը ուղղված մասով փոփոխություններ են նախատեսվել «Դատախազության մասին» Հայաստանի | ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | գրկելու ընթացակարգերը | վերադաս անհատական որոշում կայացնողների մասնակցության նվազեցմանը ուղղված ՀՀ դատական օրենսգրքում փոփոխությունների նախագիծ | հարցում վերադաս անհատական որոշում կայացնողների մասնակցությունը նվազեցված է (այո/ոչ) | | Հանրապետության օրենքում փոփոխություններ լրացումներ կատարելու մասին» 2010 թվականի մայիսի 20-ին ՀՕ-84-Ն օրենքով, համաձայն որի ., 5. Դատախազի նկատմամբ քրեական հետապնդում հարուցում է գլխավոր դատախազը կամ գլխավոր դատախազի տեղակալները»:<br><br>Դատավորներին ուղղված պահանջը հակասում է ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածին:<br>Ցուցիչ 1-ի հիմքը այն է, որ ընդունվել է «Դատախազության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2010 թվականի մայիսի 20-ին ՀՕ-84-Ն օրենքը:<br>Դատավորի նկատմամբ քրեական հետապնդման հարուցման հարցման վերադաս անհատական որոշում կայացնողների մասնակցությունը նվազեցնելուն ուղղված պահանջը հակասում է ՀՀ Սահմանդրությանը:<br>Առաջարկվում է ցուցիչը վերասահմանել որպես՝ <<Դատախազի նկատմամբ քրեական հետապնդման հարուցման հարցում վերադաս անհատական որոշում կայացնողների մասնակցությունը նվազեցված է>>:<br><br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | դատախազություն ՀՀ դատական դեպարտամենտ |
| 102. Ապահովել կոռուպցիոն հանցագործությունների համար համարժեք և համադրելի խստության, արդյունավետ պատժատեսակներ ու պատժաչափեր | 102.1Ուսումնասիրել կոռուպցիոն հանցագործությունների համար սանկցիաների տարբերակման միջազգային փորձը | Կառուպցիոն հանցագործություններ ի համար պատասխանատվությ ան հարցում քրեաիրավական ներգործության մեթոդներին զուգահեռ՝ նաև քաղաքացիաիրավակ ան և վարչաիրավական ներգործության մեթոդների նախատեսում | Պասիվ կոռուպցիոն արարքների թվի հարաբերությունը ակտիվ կոռուպցիոն արարքների ընդհանուր թվաքանակի վրա (որքան մոտ է մեկին այնքան բարձր է կոռուպցիայի քրեականացման արդյունավետությունը) | | Արդյունք 1. Իրականացված չէ:<br><br>ՀՀ գլխավոր դատախազությունում եվ այլ պատկան մարմինների կողմից պարբերաբար ուսումնասիրվել է կոռուպցիոն հանցագործությունների համար սանկցիաների տարբերակման միջազգային փորձը, որի հիման վրա ՀՀ ԱԺ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» 2009թ. հունիսի 10-ի օրենքով խստացվել է ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ, 195-րդ եվ 205-րդ հոդվածներով նախատեսված արարքների համար նախատեսված պատիժը:<br><br>ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թ,թ, միջացառումների ծրագրի 102.1 կետով նախատեսված որպես պատասխանատու ՀՀ գլխավոր դատախազությանը վերաբերող միջոցառումների իրականացման ուղղությամբ 2011թ. 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության կողմից հարցումներ են ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն, արտաքին գործերի նախարարություն, ոստիկանություն, ԱԱԾ, ազգային վիճակագրական ծառայություն և հատուկ քննչական ծառայություն՝ կարծիք կամ առաջարկություն հայտնելու ծրագրի հիշյալ կետի ակնկալվող արդյունքների և մոնիտորինգի ցուցիչների իրականացմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ: Ստացված տեղեկատվությունը, կարծիքները և առաջարկություններն ուսումնասիրվել են և դրա արդյուներով ՀՀ գլխավոր դատախազության նախաձեռնությամբ ստեղծված աշխատանքային խմբում կազմվել է ենթախումբ՝ բաղկացած ՀՀ գլխավոր դատախազության, արդարադատության նախարարության, արտաքին գործերի նախարարության և ԱԱԾ աշխատողներից:<br><br>Արդյունք 2. Իրականացված չէ:<br><br>ՀՀ ԱԺ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» 2009թ. հունիսի 10-ի օրենքով խստացվել է ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ, 195-րդ եվ 205-րդ հոդվածներով նախատեսված արարքների համար նախատեսված պատիժը:<br><br>Ցուցիչ 1. Դեռեվս առկա չէ ցուցիչի հաշվարկի մեթոդաբանությունը:<br>Առաջարկվում է մշակել ցուցիչի հաշվարկի համար անհրաժեշտ մեթոդաբանությունը: | ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ արդարադատության նախարարություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 103. Զարգացնել կոռուպցիայի արդյունքում ստացված եկամուտների առգրավման և բռնագրավման մեխանիզմները | 103.1Ներդնել հանցավոր ճանապարհով ձեռք բերված և բռնագանձված միջոցների կառավարման թափանցիկ և արդյունավետ մեխանիզմներ, այդ թվում՝ վերածել բռնագանձված միջոցները պետական սեփականության և դրանք ուղղել հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ հարակից այլ ծրագրերի | Հանցավոր ճանապարհով ձեռք բերված և բռնագանձված միջոցները պետական սեփականության վերածելու և դրանք հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ հարակից այլ ծրագրերի ուղղելու իրավական կարգավորումների մշակում | Նույն ժամանակահատվածում, դատարան ուղարկված պետությանը պատճառված նյութական վնասի վերաբերյալ գործերով նյութական վնասի չափի հարաբերությունը գործը մինչև դատարան ուղարկելը վերականգնված գումարի չափին (որքան մոտ է մեկին այնքան զարգացած է կոռուպցիայի արդյունքում ստացված եկամուտների առգրավման և բռնագրավման մեխանիզմների արդյունավետությունը) | Տվյալներ չկան | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն:<br>ՀՀ արդարադատության նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կողմից իրականացվում է միջազգային փորձի ուսումնասիրություն: Բացի այդ ՀՀ Նախագահի 2010թ. ապրիլի 26-ի թիվ ՆԿ-58-Ա կարգադրությամբ ստեղծվել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը մշակող աշխատանքային խումբ և նախատեսվում է հանցավոր ճանապարհով ձեռք բերված և բռնագանձված միջոցների կառավարման կարգավորումների սահմանումը ամրագրել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում:<br><br>Ցուցիչ 1. ՀՀ արդարադատության նախարարությունում նման տեղեկատվություն չի հավաքագրվում:<br><br>Ցուցիչ 2. ՀՀ արդարադատության նախարարությունում նման տեղեկատվություն չի հավաքագրվում:<br><br>Ցուցիչ 3. ՀՀ արդարադատության նախարարությունում նման տեղեկատվություն չի հավաքագրվում:<br><br>Առաջարկվում է Ցուցիչ 1-3-ի հաշվարկման և ներկայացման նպատակով ընդլայնել տվյալ միջոցառման կատարման պատասխանատուների ցանկը:<br><br>Իրավիճակը գնահատվում է բավարար: | ՀՀ արդարադատությա ն նախարարություն |
| | | | Նույն ժամանակահատվածում կոռուպցիոն հանցատեսակների մասով բռնագրավված միջոցների չափի հարաբերությունը, նույն գործերով, առգրավված միջոցների գումարային չափին (որքան մոտ է մեկին այնքան զարգացած է կոռուպցիայի արդյունքում ստացված եկամուտների առգրավման և բռնագրավման մեխանիզմների արդյունավետությունը) | Տվյալներ չկան | | |
| | | | Նույն ժամանակահատվածում կոռուպցիոն հանցագործությունների պատճառով պետությանը հասցված վնասի չափի հարաբերությունը վերականգնված վնասի գումարային չափին (որքան մոտ է մեկին այնքան զարգացած է կոռուպցիայի արդյունքում ստացված եկամուտների առգրավման և բռնագրավման մեխանիզմների արդյունավետությունը) | Տվյալներ չկան | | |
| 104.Բարձրացնել | 104.1Գործանականում | Կառուցչին | ՀՀ քրեադատավարական | Ոչ | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն: | ՀՀ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| վկաների, փորձագետների և տուժողների, ինչպես նաև տեղեկություններ հաղորդող անձանց պաշտպանության ինստիտուտի արդյունավետությունը | պատշաճ կիրառել վկաների, փորձագետների և տուժողների պաշտպանության օրենսդրության առկա նորմերն ու մեխանիզմները, և ընդլայնել դրանց շրջանակն այլ արդիական միջոցներով | հանցագործություններ ի վերաբերյալ տեղեկություններ հաղորդող անձանց համալիր պաշտպանությունն ապահովող նորմերն ամրագրված են ՀՀ քրեադատավարական օրենսդրության մեջ | օրենսդրության մեջ ամրագրվել է տեղեկություններ հաղորդող անձանց պաշտպանության մասին դրույթներ (այո/ոչ) | | ՀՀ արդարադատության նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կողմից իրականացվում է միջազգային փորձի ուսումնասիրություն: Բացի այդ ՀՀ Նախագահի 2010թ. ապրիլի 26-ի թիվ ՆԿ-58-Ա կարգադրությամբ ստեղծվել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը մշակող աշխատանքային խումբ և նախատեսվում է վկաների, փորձագետների և տուժողների պաշտպանությանն ուղղված մեխանիզմները ամրագրել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում:<br><br>Ցուցիչ 1-ի արժեքի հիմքն այն է, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքն դեռևս ընդունված չէ:<br><br>Ցուցիչ 2. ՀՀ արդարադատության նախարարությունում նման տեղեկատվություն չի հավաքագրվում: | արդարադատության նախարարություն |
| | | | Իրավասու մարմիններին կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ փաստերի մասին կամովին տեղեկատվության տրամադրման դեպքերի քանակի հարաբերությունը նույն ժամանակահատվածում կոռուպցիոն հանցատեսակների մասով հարուցված քրեական գործերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան բարձր է պաշտպանության ինստիտուտի արդյունավետությունը) | Տեղեկություններ չկան | | |
| | 104.2 Պաշտպանության տակ գտնվող անձանց տեղափոխության համար այլ պետությունների հետ կնքել համաձայնագրեր և հաստատել պայմանավորվածություններ | Պաշտպանության տակ գտնվող անձանց տեղափոխության համար այլ պետությունների հետ կնքված համաձայնագրեր և հաստատված փոխադարձ պայմանավորվածություններ | Պաշտպանության տակ գտնվող անձանց տեղափոխության համար այլ պետությունների հետ կնքվել են համաձայնագրեր և հաստատվել են պաշտոնական պայմանավորվածություններ (այո/ոչ) | | Արդյունք 1. Իրականացված չէ:<br>ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թ,թ, միջացառումների ծրագրի 104,2 կետով նախատեսված որպես պատասխանատու ՀՀ գլխավոր դատախազությանը վերաբերող միջոցառումների իրականացման ուղղությամբ 2011թ, 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության կողմից հարցումներ են ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն, արտաքին գործերի նախարարություն, ոստիկանություն, ԱԱԾ, ազգային վիճակագրական ծառայություն և հատուկ քննչական ծառայություն՝ կարծիք կամ առաջարկություն հայտնելու ծրագրի հիշյալ կետի ակնկալվող արդյունքների և մոնիտորինգի ցուցիչների իրականացմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ: Ստացված տեղեկատվությունը, կարծիքները և առաջարկություններն ուսումնասիրվել են և դրա արդյունքերով ՀՀ գլխավոր դատախազության նախաձեռնությամբ ստեղծված աշխատանքային խմբում կազմվել է ենթախումբ՝ բաղկացած ՀՀ գլխավոր դատախազության, արդարադատության նախարարության, արտաքին գործերի նախարարության և ԱԱԾ աշխատողներից: | ՀՀ դատախազություն<br>ՀՀ ԿԱ ոստիկանություն<br>ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն |
| 105. Բարձրացնել իրավապահ մարմինների գործունեության արդյունավետությունը կոռուպցիայի դեմ պայքարում | 105.1 Հստակորեն տարանջատել կոռուպցիոն իրավախախտումների դեմ պայքարի գործունեություն իրականացնող | Կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների գործունեության համակարգման և փոխգործակցության հստակ | Հայաստանի Հանրապետությունում սահմանված է կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության վարման միասնական համակարգ (այո/ոչ) | | Արդյունք 1. Իրականացված չէ:<br>ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թ,թ, միջացառումների ծրագրի 105,1 կետով նախատեսված որպես պատասխանատու ՀՀ գլխավոր դատախազությանը վերաբերող միջոցառումների իրականացման ուղղությամբ 2011թ, 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության կողմից հարցումներ են ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն, արտաքին գործերի նախարարություն, ոստիկանություն, ԱԱԾ, ազգային | ՀՀ դատախազություն<br>ՀՀ ԿԱ ոստիկանություն,<br>ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | պետական մարմինների գործառույթները | ընթացակարգերի ներդրում, այդ թվում` կոռուպցիոն հանցագործություններ ի միասնական վիճակագրության վարում | Նույն ժամանակահատվածում կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ հարուցված քրեական գործերի թվի հարաբերությունը ավարտված գործերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան արդյունավետ է իրավապահ մարմինների գործունեությունը կոռուպցիայի դեմ պայքարում) | | վիճակագրական ծառայություն և հատուկ քննչական ծառայություն` կարծիք կամ առաջարկություն հայտնելու ծրագրի հիշյալ կետի ակնկալվող արդյունքների և մոնիտորինգի ցուցիչների իրականացմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ: Ստացված տեղեկատվությունը, կարծիքները և առաջարկություններն ուսումնասիրվել են և դրա արդյունքերով ՀՀ գլխավոր դատախազության նախաձեռնությամբ ստեղծված աշխատանքային խմբում կազմվել է ենթախումբ` բաղկացած ՀՀ գլխավոր դատախազության, արդարադատության նախարարության, արտաքին գործերի նախարարության և ԱԱԾ աշխատողներից: | ՀՀ հատուկ քննչական ծառայություն |
| | | | Նույն ժամանակահատվածում կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ կարճված գործերի թվի հարաբերությունը հարուցված քրեական գործերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է զրոին այնքան արդյունավետ է իրավապահ մարմինների գործունեությունը կոռուպցիայի դեմ պայքարում) | | | |
| | | | Կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ դատարանի կողմից կայացված դատավճիռների թվի հարաբերությունը հարուցված քրեական գործերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան արդյունավետ է իրավապահ մարմինների գործունեությունը կոռուպցիայի դեմ պայքարում) | | | |
| 106. Ապահովել կոռուպցիայի դեմ պայքարում իրավապահ մարմինների և քաղաքացիական | 106.1Սահմանել իրավապահ մարմիններին կոռուպցիոն իրավախախտումների | ՀՀ քրեական օրենսգրքի նորմերը համալրել մարմիններին կոռուպցիոն | ԶԼՄ-ներով ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից իրավասու մարմիններին ուղղված կոռուպցիոն | | Արդյունք 1. Իրականացված չէ:<br>ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թ,թ, միջացառումների ծրագրի 106,1 կետով նախատեսված որպես պատասխանատու ՀՀ գլխավոր դատախազությանը վերաբերող միջոցառումների իրականացման | ՀՀ դատախազություն<br>ՀՀ ԿԱ ոստիկանություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| հասարակության միջև ակտիվ և արդյունավետ համագործակցությունը | վերաբերյալ տեղեկություններ հաղորդելը խրախուսող գործուն իրավական մեխանիզմներ | իրավախախտումների վերաբերյալ տեղեկություններ հաղորդելը և հանցագործությունների բացահայտումը խրախուսող իրավական մեխանիզմներով | հանցագործությունների մասին հաղորդումների թվի հարաբերությունը, նույն ժամանակահատվածում, այդ մարմինների կողմից կոռուպցիոն հանցատեսակների մասով հարուցված քրեական գործերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան արդյունավետ է իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության միջև համագործակցությունը) | | ուղղությամբ 2011թ, 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության կողմից հարցումներ են ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն, արտաքին գործերի նախարարություն, ոստիկանություն, ԱԱԾ, ազգային վիճակագրական ծառայություն և հատուկ քննչական ծառայություն՝ կարծիք կամ առաջարկություն հայտնելու ծրագրի հիշյալ կետի ակնկալվող արդյունքների և մոնիտորինգի ցուցիչների իրականացմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ: Ստացված տեղեկատվությունը, կարծիքները և առաջարկություններն ուսումնասիրվել են և դրա արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազության նախաձեռնությամբ ստեղծված աշխատանքային խմբում կազմվել է ենթախումբ՝ բաղկացած ՀՀ գլխավոր դատախազության, արդարադատության նախարարության, արտաքին գործերի նախարարության և ԱԱԾ աշխատողներից: | |
| | | | ԶԼՄ-ներով իրավասու մարմինների կողմից հակակոռուպցիոն պայքարին նվիրված պաշտոնական հաղորդումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում այդ մարմինների կողմից հասարակության հետ համագործակցությունը քաջալերող քարոզչության դեպքերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան արդյունավետ է իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության միջև համագործակցության խրախուսումը): | | | |
| | | | Ֆիզիկական և իրավաբանական անձանց, լրատվության միջոցների հաղորդումներով հարուցված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերայլ գործերի հարաբերությունը հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների հանցագործության նյութական հետքերի եւ | | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | հետեւանքների հայտնաբերմամբ հարուցված գործերի թվին: | | | |
| | 106.2 Զարգացանել կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ ստացվող տեղեկությունները վերլուծելու և դրանց արագ արձագանքման համակարգերը | Կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ տեղեկություններ հաղորդելը խրախուսող քարոզչական աշխատանքներ, կոռուպցիոն հանցագործություններ ի վերաբերյալ հաղորդումների, դրանց արդյունքում ձեռնարկված միջոցառումների հրապարակայնությու նն ու ամենամյա հաշվետվողականությ ունն ապահովող մեխանիզմների առկայություն | Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկությունների ստացման և դրանց արձագանքման միջազգային փորձն ուսումնասիրվել է (այո/ոչ) | | Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն<br>2011թ. 1-ին կիսամյակի ընթացքում շարունակվել են տեղեկատվության տրամադրման աշխատանքները: Այսպես, ՀՀ գլխավոր դատախազության պաշտոնական կայք էջում տեղադրվել է կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ 20 մամուլի հաղորդագրություն: ԶԼՄ-ների կողմից պաշտոնական հաղորդագրություններն ունեցել են ավելի քան 200 արձագանք` արտատպումների, եթեր հեռարձակվելու միջոցով: ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական վարչությունը 02.03.2011թ. «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնին տեղեկատվություն է տրամադրել 2010թ. ընթացքում դատախազների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթների և էթիկայի նորմերի խախտման դեպքերի կապակցությամբ կատարված ծառայողական քննությունների արդյունքների վերաբերյալ: «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությունը 2011թ. ապրիլ ամսին եթեր է հեռարձակել կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի ուղղությամբ դատախազության համակարգի կատարած աշխատանքների վերաբերյալ, որում հանդես են եկել ՀՀ գլխավոր դատախազը, նրա տեղակալը և ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության պետը: ՀՀ գլխավոր դատախազության աշխատակազմի կազմակերպական-մեթոդական և հանրային կապերի վարչության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի համատեղ նախաձեռնությամբ 2011թ. հունվարի 29-30-ին Ծաղկաձորում ՀՀ դատախազության համակարգի աշխատողների և ԶԼՄ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ` «Տեղեկատվության և արտահայտվելու ազատությունները քրեական դատավարության ընթացքում» ծրագրի շրջանակներում իրականացվել է սեմինար-քննարկում «Իրավապահ մարմինների և ԶԼՄ-ի դերը կոռուպցիայի դեմ պայքարում» թեմայով: Սեմինարում հանդես են եկել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը և ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության պետը: ՀՀ գլխավոր դատախազության աշխատակազմի կազմակերպական-մեթոդական և հանրային կապերի վարչության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի համատեղ նախաձեռնությամբ 2011թ. մարտի 19-20-ին Աղվերանում կազմակերպվել է աշխատանքային քննարկում`»Տեղեկատվության ազատության առանձնահատկությունները իրավապահ մարմիններում» թեմայով, որին մասնակցել են ԶԼՄ-ի ներկայացուցիչներ, դատախազության, ոստիկանության, արդարադատության նախարարության աշխատողներ և դատավորներ: Քննարկմանը զեկուցումով հանդես է եկել ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության պետը: Միջոցառումները մշտապես լուսաբանվել են ԶԼՄ-ով: | ՀՀ դատախազություն<br>ՀՀ ԿԱ ոստիկանություն,<br>ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն<br>ՀՀ հատուկ քննչական ծառայություն |
| | | | Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկությունների ստացման և արագ փոխանակման միջգերատեսչական գործուն համակարգ, այդ թվում`զլմ-ների կողմից կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներին ընթացք տալու մեխանիզմները ներդրված են (այո/ոչ) | | | |
| 107.Զարգացել է միջազգային համագործակցությունը կոռուպցիոն | 107.1Ընդլայնել փոխադարձ իրավական օգնության, քրեական գործերով վարույթների | Փոխադարձ իրավական օգնության, քրեական գործերով | Կոռուպցիոն հանցատեսակների մասով միջազգային երկկողմ և | | Արդյունք 1. Իրականացված չէ<br>Շարունակվում է տարբեր միջպետական ու գերատեսչական երկկողմ հարաբերություններով քննարկվել նշված ցուցիչով նախատեսված իրականացման ուղիները: | ՀՀ դատախազություն<br>ՀՀ ԿԱ ոստիկանություն |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011թ.** | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| հանցագործությունների դեմ պայքարում | փոխանցման, հանցանք կատարած անձանց հանձմանն հարցերը կարգավորող երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի շրջանակը | վարույթների փոխանցման, հանցանք կատարած անձանց հանձմանն հարցերը կարգավորող կնքված երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրեր | բազմակողմ համաձայնագրերի ու պայմանագրերի շրջանակներում համագործակցության դեպքերի թվի հարաբերությունը, նույն ժամանակահատվածում, միջազգային պայմանագրերի բացակայությամբ քրեական գործերով իրավական օգնության դեպքերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան բարձր է միջազգային համագրոծակցությունը կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարում) | | | ՀՀ արտաքին գործերի նախարարություն |

**3.19** Կադրերի պատրաստում և վերապատրաստում, կոռուպցիայի մասին տեղեկատվության կառավարում

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011թ.** | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 108.Իրականացնել կոռուպցիայի դեմ պայքարի կրթա-լուսավորչական քաղաքականության առանձին ծրագեր | 108.1Սահմանել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ուսուցման գործընթացին ներկայացվող պահանջներ | Հանրակրթական և մասնագիտական կրթության հաստատություններում իրա կանացվում է համապատասխան դասընթացներ ու թեմաների ուսուցում | Կոռուպցիայի հիմնախնդիրն ու հակակոռուպցիոն թեմատիկ դասընթացներ իրականացնող հանրակրթական և մասնագիտական կրթական հաստատությունների տեսակարար կշիռը ընդամենը հանրակրթական, և մասնագիտական կրթական հաստատություններում | 0,9 | Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն:<br><br>Հանրակրթության ոլորտում հակակոռուպցիոն թեմաները ներառվել են հիմնական դպրոցի <<Հասարակագիտություն>> առարկայի դասավանդման մեջ: ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող <<Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի>>` <<Կրթությունն ընդդեմ կոռուպցիայի>> ենթածրագրի շրջանակներում <<Ապագան քոնն է>> ՀԿ-ի կողմից ստեղծվել է <<Կրթությունն ընդդեմ կոռուպցիայի>> մեթոդական ուղեցույց-ձեռնարկը հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար, իսկ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում այն ուսուցանվում է ուսումնական պլանների պահուստային ժամերի հաշվին: <<Ապագան քոնն է>> ՀԿ-ի աջակցությամբ նախատեսվում է հակակոռուպցիոն թեմաների ուսուցումը 3 դասաժամի սահմաններում ներառել նաև ուսումնական պլանի պարտադիր բաղադրիչում:<br>Հակակոռուպցիոն ծրագրերի ուսուցման միասնական գործընթացը նախատեսվում է իրականացնել 2011-2012 ուսումնական տարում, հիմք ընդունելով ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիրը և ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատված <<Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների համալիր գործողությունների ծրագիրը>>:<br>Հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման գործում ՀՀ կրթության և գիտության նախարարությանը աջակցելու է ԵԱՀԿ-ի Երևանի գրասենյակը և <<Ապագան քոնն է>> ՀԿ-ն, որոնց հետ կնքվել է համագործակցության հուշագիր:<br><br>Միաժամանակ <<Ապագան քոնն է>> ՀԿ-ն ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող <<Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի>> աջակցությամբ 2011թ. փետրվարի 23-ից մարտի-5-ը ժամանակահատվածում ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցներում իրականացրել է <<Հակակոռուպցիոն տասնօրյակ>> մրցույթը, որի արդյունքում հանրակրթական դպրոցների ուսուցիչները հանդես են եկել հակակոռուպցիոն բաց դասերով, իսկ 318 աշակերտներ ներկայացրել են <<Կոռուպցիան և նրա կործանարար հետևանքները>> խորագրով իրենց շարադրությունները, նկարներ և տեսաֆիլմեր: Մրցույթի արդյունքների ամփոփումից հետո ընտրվել են լավագույն բաց դասերի հեղինակ 39 ուսուցիչներ` հանրապետության տարբեր մարզերից:<br>2011 թվականի փետրվար-հունիս ամիսներին <<Ապագան քոնն է>> ՀԿ-ն <<Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի>> շրջանակներում իրականացրել է <<Կրթությունը կոռուպցիայի կանխարգելման միջոց>> ծրագիրը` ՀՀ նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում հակակոռուպցիոն կրթության ներդրմանը աջակցելու նպատակով:<br>Ծրագրի շրջանակներում հնգօրյա հակակոռուպցիոն դասընթացներ են իրականացվել Երևանի և ՀՀ մարզերի 19 ուսումնական հաստատություններում` 9 նախնական և միջին մասնագիտական, 10 բարձրագույն ուսումնական հաստատություններում, որոնցում ընդգրկվել է ավելի քան 1000 ուսանող:<br>19 ուսումնական հաստատություններից յուրաքանչյուրում ձևավորվել է նախաձեռնող երիտասարդների խումբ, որոնց կողմից կազմակերպվել և իրականացվել են հակակոռուպցիոն երիտասարդական միջոցառումներ: Միջոցառումների օրինակելի ծրագրերն ու սցենարները ընդգրկվել են <<Հակակոռուպցիոն դասընթացների և միջոցառումների կազմակերպման ուղեցույց>> գրքույկում: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | <<Կրթությունը կոռուպցիայի կանխարգելման միջոց>> ծրագիրն ամփոփվել է <<Իրազեկված երիտասարդությունը չկոռումպացված հասարակության գրավականն է>> խորագիրը կրող միջոցառմամբ, որի ընթացքում ՀՀ մարզերի և Երևան քաղաքի 19 բարձրագույն և նախնական, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շուրջ 200 նախաձեռնող, ակտիվ և կառուցողական մտածելակերպ ունեցող ուսանողներ ստացել են հավաստագրեր:<br><br>Ցուցիչ 1.<br>Ցուցիչ 1-ի արժեքը հաշվարկվել է ԱՎԾ-ի տվյալների և ՀՀ կրթության և գիտության նախարարության տվյալների հիման վրա: Հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների ընդհանուր թիվը 1402 է, նախնական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների թիվը` 28, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների թիվը` 81, բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների թիվը` 23: Հակակոռուպցիոն թեմաների ուսուցում իրականացվել է 1393 հանրակրթական դպրոցներում, 9 նախնական և միջին մասնագիտական, 10 բարձրագույն ուսումնական հաստատություններում: | |
| | 108.2 Համապատասխան մասնագիտությունների գծով բարձրագույն կրթության հաստատություններում, առանձին մասնագիտությունների կրթական ծրագրերում ներդնել կոռուպցիայի կանխարգելման, բացահայտման և հանրային իրազեկման թեմաներ | Իրականացվում է համապատասխան դասընթացներ, թեմաների ուսուցում և հետազոտություններ բարձրագույն կրթության հաստատությունների առանձին մասնագիտություններում և գիտական հաստատություններում | Կոռուպցիայի հիմնախնդրների շուրջ իրականացված թեմատիկ դասընթացների, գիտական և հետազոտական աշխատանքների ու ուսումնասիրություններ ի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում տվյալ հաստատության կողմից ներկայացված գիտահետազոտական աշխատանքների ընդհանուր թվաքանակում | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն:<br>Բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կրթական ծրագրի մասնագիտությունների` <<Տնտեսագիտության հիմունքներ>>, <<Իրավագիտության հիմունքներ>> և <<Քաղաքագիտության հիմունքներ>> առարկաների ծրագրերում (որոնցից մեկի ուսուցումը պարտադիր է ուսանողի համար), ներառվել են կոռուպցիային և դրա կանխարգելմանը վերաբերող թեմաներ:<br>Հակակոռուպցիոն կրթական ծրագրերին աջակցելու նպատակով <<Ապագան քոնն է>> ՀԿ-ն ԵՊՀ-ի հետ կնքել է համագործակցության երկկողմ հուշագիր:<br><<Ապագան քոնն է>> ՀԿ-ն <<Կրթությունը կոռուպցիայի կանխարգելման միջոց>> ծրագրի շրջանակներում կազմակերպել է 9 միջբուհական հանդիպում-քննարկումներ նախաձեռնող երիտասարդների մասնակցությամբ:<br><br>Նախատեսվում է հակակոռուպցիոն ծրագրերի ուսուցման միասնական գործընթացը իրականացնել 2011-2012 ուսումնական տարում, հիմք ընդունելով ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիրը և ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատված <<Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների համալիր գործողությունների ծրագիրը>>:<br><br>Ցուցիչ 1.<br>Կրթության և գիտության ոլորտում չկա մեխանիզմ այդ ցուցիչի արժեքի հաշվարկման համար:<br>*Առաջարկ*<br>Անհրաժեշտ է մշակել ցուցիչի հաշվարկի համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման մեխանիզմը: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա |
| | 108.3 Զարգացնել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ուսուցման գործում ներգրավված բարձրագույն ուսումնական հաստատությունների կարողությունները | Ըստ վերապատրաստման ծրագրի դասախոսական անձնակազմի վերապատրաստման դասընթացների իրականացում | ԲՈՒՀ-ի դասախոսական անձնակազմի համար կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում մշակված է վերապատրաստման դասընթացների ծրագիր և պլան (այո/ոչ) | Այո | Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն:<br>Վերապատրաստման դասընթացների իրականացումը նախատեսվում է 2011 թվականի երկրորդ կիսամյակում: <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի կողմից իրականացվելու են վերապատրաստումներ ՀՀ բուհերի աշխատակազմերի համար` արդյունավետ կառավարման և որակի վերահսկման ուղղությամբ: Ներկայումս մշակվել է վերապատրաստման ծրագրի փաթեթը, որին մասնակցել են միջազգային փորձագետներ:<br><<Ապագան քոնն է>> ՀԿ-ն` ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող <<Հակակոռուպցիոն | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | գործողության մոբիլիզացման ծրագրի>>՝ <<Կրթությունը կոռուպցիայի կանխարգելման միջոց>> ենթածրագրի շրջանակներում վերապատրաստել է 32 ուսուցանողների, որոնք ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները կկիրառեն իրենց հաստատություններում՝ նախնական (արհեստագործական) ու միջին մասնագիտական, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ աջակցելով կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված միջոցառումների և տեղեկատվական դասընթացների կազմակերպմանը: Այդ գործընթացում իրենց համար ուղենիշ կհանդիսանա <<Հակակոռուպցիոն դասընթացների և միջոցառումների կազմակերպման ուղեցույց>> գրքույկը:<br><br><<Ապագան քոնն է>> ՀԿ-ի կողմից <<Կրթությունը կոռուպցիայի կանխարգելման միջոց>> ենթածրագրի շրջանակներում տպագրվել է նշված ուղեցույցի 1000 օրինակ: | |
| | 108.4 Ապահովել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ուսուցման համակարգի ներդրման աշխատանքների լուսաբանումը | Մամլո հաղորդագրություններ, կլոր սեղաններ, հեռուստահաղորդումներ | Կոռուպցիայի հիմնախնդրների շուրջ տպագրված տեղեկատվական նյութեր | ՀՀ ԿԳՆ – 15, 100 | Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն:<br><br>Պատրաստվել և Հանրային ռադիոյով հեռարձակվել է նոր հաղորդաշար <<Կրթությունն ընդդեմ կոռուպցիայի>>: Հեռարձակվել է 15 հաղորդում, որոնց ընթացքում ներկայացվել են կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային փորձը և հանրապետության առանձին բուհերում հաստատված ծրագրերով նախատեսված միջոցառումների ընթացքն ու փուլային արդյունքները: Հանրային ռադիոյով շուրջ 100 անգամ հեռարձակվել է հակակոռուպցիոն ուղղվածության ռադիոգովազդ: Նախապատրաստական փուլում է հեռուստագովազդի պատրաստման աշխատանքները: ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքում և կրթական պորտալում բացվել են <<Հանրային քննարկում>> բաժինները, որոնք հնարավորություն են տալիս հանրությանը մասնակցել իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին՝ ապահովելով մասնակցություն և թափանցիկություն (22 իրավական ակտերի նախագծեր): Եզրափակիչ փուլում է ՀՀ ԿԳՆ պաշտոնական նոր, եռալեզու կայքի ձևավորման աշխատանքները: Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ձեռնարկված միջոցառումները լուսաբանվել են նաև <<Կրթություն>> շաբաթաթերթում: Այս խնդրի հետ կապված տեղեկատվությունը տրամադրվել է նաև տարբեր լրատվամիջոցների:<br><br>Ցուցիչ 1<br><br>Հանրային ռադիոյով հեռարձակվել է 15 հաղորդում, շուրջ 100 անգամ հեռարձակվել է հակակոռուպցիոն ուղղվածության ռադիոգովազդ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Համապատասխան ուսումնական հաստատություն |
| 109.Ներդնել և ապահովել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում հանրային ծառայողների շարունակական վերապատրաստման | 109.1Հաստատել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում հանրային ծառայողների վերապատրաստման ծրագրերը և սահմանել դրանց կազմակերպման կարգը | Ըստ հաստատված ծրագրի հանրային ծառայողների վերապատրաստման դասընթացներ: | Կոռուպցիայի հիմնախնդիրն ու հակակոռուպցիոն թեմատիկ մոդուլների վերանայման ու լրամշակման հաճախականությունը, տոկոս | Տվյալները բացակայում են | Արդյունք 1-3 Չի իրականացված:<br>Իրականացումը կապահովվի Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի ընդունումից հետո: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ քաղաքացիական |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| համակարգ | | | կոռուպցիայի դեմ պայքարում ըստ մասնագիտությունների իրականացված վերապատրաստման մոդուլների քանակը, հանրային ծառայության վերապատրաստման ընդհանուր դասընթացներում, տոկոս | Տվյալները բացակայում են | | ծառայության խորհուրդ,<br>ՀՀ գլխավոր դատախազություն,<br>ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն,<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն,<br>ՀՀ Պետական եկամուտների կոմիտե և այլ շահագրգիռ պետական մարմիններ |
| | 109.2 Գնահատել հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման մեջ ներգրավված պետական մարմիններին կից վերապատրաստման հաստատությունների կարողությունները և սահմանել այդ հաստատությունների միջոցով վերապատրաստման ենթակա պաշտոնյաների ու կազմակերպությունների շրջանակը | վերապատրաստման ենթակա պաշտոնյաների և վերապատրաստում իրականացնող կազմակերպությունների շրջանակը համապատասխանեցված է պահանջարկին | հակակոռուպցիոն թեմատիկայով վերապատրաստում անցած մասնագետների թիվը տոկոսով կարիքների գնահատման հետազոտությամբ սահմանված ցանկի նկատմամբ | Տվյալները բացակայում են | Արդյունք 1-4 Չի իրականացված:<br>Իրականացումը կապահովվի Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքը գործողության մեջ դնելուց հետո: | ՀՀ կառավարության աշխատակազմ,<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ,<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն,<br>ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ գլխավոր դատախազություն,<br>ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն,<br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն,<br>ՀՀ Պետական եկամուտների կոմիտե և այլ շահագրգիռ պետական մարմիններ, |
| | 109.3 Հաստատել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում շարունակական վերապատրաստման ծրագրերը և ուսումնական ձեռնարկները՝ ըստ ոլորտների | Նոր մշակված կամ թարմացված ուսումնական ձեռնարկներ և վերապատրաստման ծրագրեր ու մոդուլներ ըստ ոլորտների | ըստ ոլոտների կոռուպցիայի դեմ պայքարի հաստատված ուսումնական ձեռնարկների, վերապատրաստման ծրագրերի ու մոդուլների քանակ | ՀՀ ԿԳՆ – 1 | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br><br>*ՀՀ կրթության և գիտության նախարարություն*<br>ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող <<Հակակոռուպցիոն գործունեության մոբիլիզացման ծրագրի>>՝ <<Կրթությունը կոռուպցիայի կանխարգելման միջոց>> ենթածրագրի շրջանակներում <<Ապազան քոնն է>> ՀԿ-ի կողմից մշակվել և տպագրվել է <<Հակակոռուպցիոն դասընթացների և միջոցառումների կազմակերպման ուղեցույցը>>, որը նախատեսված է մասնագիտական ուսումնական հաստատությունների համար: Այն ներդրվելու է մասնագիտական կրթության | ՀՀ կրթության և գիտության նախարարություն,<br>ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ,<br>ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,<br>ՀՀ գլխավոր |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ոլորտում իրականացվող վերապատրաստումների հիմքում:<br><br>Ցուցիչ 1.<br>*ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից*` 1 ծրագիր-ուղեցույց մասնագիտական ուսումնական հաստատությունների համար: | դատախազություն, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն, ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ Պետական եկամուտների կոմիտե և այլ շահագրգիռ պետական մարմիններ |
| 110.Բարելավել կոռուպցիայի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, փոխանակման և վերլուծության համակարգը | 110.1 Հստակեցնել կոռուպցիայի դեմ պայքարի առանձին մարմինների միջև և միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների հետ կոռուպցիայի վերաբերյալ տվյալների փոխանակման ընթացակարգերը | կոռուպցիայի դեմ պայքարի առանձին մարմինների միջև և միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների միջև տվյալների փոխանակումը կատարվում է | Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցությամբ բացահայտված կոռուպցիոն դեպքերի թիվը, կամ համագործակցության պայմանագրերի ու համաձայնագրերի թիվը | | Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն,<br><br>ԱՊՀ երկրների շրջանակում մշակվում է կոռուպցիայի դեմ պայքարում տեղեկատվության փոխանակման ու համագործակցության վերաբերյալ համաձայնագրի նախագիծ:<br>ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թ,թ, միջացառումների ծրագրի 110,1 կետով նախատեսված որպես պատասխանատու ՀՀ գլխավոր դատախազությանը վերաբերող միջոցառումների իրականացման ուղղությամբ 2011թ, 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության կողմից հարցումներ են ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն, արտաքին գործերի նախարարություն, ոստիկանություն, ԱԱԾ, ազգային վիճակագրական ծառայություն և հատուկ քննչական ծառայություն` կարծիք կամ առաջարկություն հայտնելու ծրագրի հիշյալ կետի ակնկալվող արդյունքների և մոնիտորինգի ցուցիչների իրականացմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ: Ստացված տեղեկատվությունը, կարծիքները և առաջարկություններն ուսումնասիրվել են և դրա արդյուններով ՀՀ գլխավոր դատախազության նախաձեռնությամբ ստեղծված աշխատանքային խմբում կազմվել է ենթախումբ` բաղկացած ՀՀ գլխավոր դատախազության, արդարադատության նախարարության, արտաքին գործերի նախարարության և ԱԱԾ աշխատողներից:<br>Ցուցիչ 1,Հնարավոր կլինի հաշվարկել ԱՊՀ համաձայնագրի ստորագրումից և վերոնշյալ աշխատանքային խմբի ենթախմբի կողմից ձեռք բերված արդյունքների ամփոփումից հետո: | ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ ԿԱ Ոստիկանություն, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |
| | 110.2 Ամբողջականացնել կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ վիճակագրության համակարգը և ներդնել վիճակագրության վերլուծության մեթոդիկա | ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը ապահովում է կոռուպցիայի դեմ պայքարին վերաբերող ամբողջականացված պաշտոնական վիճակագրությունը, | Օրենսդրորեն կանոնակարգված են կոռուպցիոն իրավախախտումների շրջանակը (այո/ոչ)<br><br>Մշակված է կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ վիճակագրական վերլուծության մեթոդիկա (այո/ոչ) | Ոչ<br><br>Ոչ | Արդյունք 1. իրականացված է մասամբ:<br><br>Կոռուպցիոն իրավախախտումների շրջանակի օրենսդրորեն կանոնակարգվածության հիմնախնդիրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) ՀՀ օրենքներով սահմանված լիազորություններից դուրս է: Այդուհանդերձ, ՀՀ ԱՎԾ-ն նույնաբովանդակ գրություններով դիմել է սույն կետով սահմանված միջոցառման բովանդակությունից բխող լիազորությունների տիրապետող պետական կառավարման մարմիններին` ՀՀ գլխավոր դատախազությանը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը, ՀՀ կառավարությանն առնթեր ՀՀ ոստիկանությանը: Պատասխան գրություն ստացվել է ՀՀ գլխավոր դատախազությունից (18.07.2011թ., թիվ 36/14-11 գրություն), որտեղ Օրենսդրորեն կանոնակարգվածության տեսանկյունով ՀՀ գործող օրենսդրությունից կոռուպցիոն հանցագործություններ որակվող բոլոր 31 արարքները համակարգված | ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ ԿԱ Ոստիկանություն, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Հաստատվել է կոռուպցիոն դեպքերի, այդ թվում` միջազգային պայմանագրերով, ՀՀ հանձնառությունների իրականացման մոնիտորինգի արդյունքների, վիճակագրության վարման միասնական մեթոդիկան (այո/ոչ) | Ոչ | ձևով զետեղված են ՀՀ գլխավոր դատախազի 2008թ. նոյեմբերի 19-ի «Կոռուպցիոն հանցագործությունների ցանկը սահմանելու մասին» թիվ 82 հրամանում, ինչը հրապարակային է և զետեղված է «Դատախազությունն ընդդեմ կոռուպցիայի» ձեռնարկում, որի տպագրությունը ֆինանսավորված է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից (Երևան, 2009թ., 132 էջ):<br><br>Արդյունք 2. իրականացվել է մասամբ:<br><br>«Կոռուպցիոն հանցագործություն» հասկացությունը վիճակագրական մեթոդաբանության առարկա չէ: Այն իրավական հասկացություն է: «Հանցագործության» որակումը և՛ իրավական, և՛ մեթոդաբանական առումով հանդիսանում է իրավագիտության առարկան: Այս առումով, կոռուպցիոն հանցագործությունների օրենսդրական և իրավակիրառական սահմանումները այդ ոլորտի լիազորություններին տիրապետող պետական մարմինների խնդիրների շարքին են դասվում:<br><br>ՀՀ դատախազությունում յուրաքանչյուր կիսամյակ կատարվում է կոռուպցիոն հանցագործությունների դեպքերի բացահայտման, գրանցման և քննության (մինչդատական վարույթ և դատաքննություն) վիճակի վերլուծություն և ամփոփում, որի արդյունքներով զեկուցագիր է ներկայացվում ՀՀ գլխավոր դատախազին:<br><br>Արդյունք 3-ը չի իրականացվել:<br><br>Միջազգային պայմանագրերով ՀՀ հանձնառությունների իրականացման մոնիթորինգը ՀՀ ԱՎԾ-ին ՀՀ օրենքներով սահմանված լիազորություններից դուրս է: Ենթադրվում է, որ հիշատակված մոնիթորինգի արդյունքների հիման վրա համապատասխան լիազորությունների տիրապետող պետական կառավարման մարմիններն ամփոփ տեսքով ՀՀ ԱՎԾ-ին կտրամադրեն Ցուցիչ 3-ից բխող կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ տվյալները` համագործակցելով ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ` որպես միջազգային պայմանագրերի ՀՀ ռեեստրի վարողի:<br><br><u>Հիմնական եզրակացություն</u><br><br>Չնայած այն հանգամանքին, որ խնդրո առարկան վիճակագրական լիազորություններից դուրս է, այդուհանդերձ, կոռուպցիոն իրավախախտումների (հանցագործությունների) վերաբերյալ մեթոդաբանական հիմքը հանդիսանում է երկրում նմանատիպ արարքները սահմանող օրենքները և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերը: Վիճակագրությունը ձևավորվում է կոռուպցիոն իրավախախտումների ոլորտում համապատասխան լիազորությունների տիրապետող իրավապահ պետական մարմինների կողմից բոլոր դեպքերի (ըստ օրենսդրությամբ սահմանված տեսակների) գրանցումների հիման վրա ձևավորված վարչական ռեգիստրների տվյալներով, որոնք անարգել այդ մարմինները պետք է տրամադրեն ՀՀ ԱՎԾ-ին` վերջինիս կողմից այն ամփոփ տեսքով որոշակի պարբերականությամբ հրապարակելու (հանրությանը ներկայացնելու) նկատառումներով: Պարբերական հրապարակումները հնարավորություն կընձեռեն բացահայտելու կոռուպցիոն բնույթի հանցագործությունների միտումները ժամանակային երկար հատվածում, հնարավորություն կստեղծեն իրավապահ ոլորտի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների, գիտակրթական և այլ ոլորտի ու ողջ հանրության համար ընդլայնելու իրենց վերլուծական գիտելիքները և միջազգային ու տարածաշրջանային տեղեկատվություն փոխանակության արդյունքում բացահայտել ու ծրագրավորել կոռուպցիայի դեմ պայքարի առաջնահերթ թիրախներն ու համագործակցության ոլորտները, ինչը և բխում է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի» 61-րդ հոդվածի պահանջներից:<br><br><u>Իրավիճակը`</u> Բավարար<br><br>Գործընթացը գտնվում է սկզբնական փուլում, առկա են պատասխաններ չունեցող | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011թ.** | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | բազմաթիվ հարցեր, խնդրո առարկա ոլորտում ՀՀ ԱՎԾ-ն չունի օրենսդրորեն կոորդինացիոն պահանջվող կարգավիճակ: Թերևս հարկ է ՀՀ-ում ձևավորել խնդրո առարկա ոլորտում համակարգման համապատասխան լիազորություններով օժտված մարմին կամ որևիցե իրավապահ պետական լիազոր մարմնի պատվիրակել խնդրո առարկա ոլորտում համակարգողի լիազորություններ:<br><br><u>Առաջընթացը`</u><br><br>Հաշվի առնելով ՀՀ գլխավոր դատախազության գրությանը կից ներկայացված «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թ.թ. միջոցառումների ծրագրի 98.1, 101.1, 102.1, 104.1, 105.1, 106.1, 107.2, և 110.1 կետերով նախատեսված որպես պատասխանատու ՀՀ դատախազության կողմից հարցումներ են ուղարկվել շահագրգիռ գերատեսչություններին և կարծիքներն ու առաջարկությունները ամփոփվել ու ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կազմում ընդգրկվել են ՀՀ գլխավոր դատախազության, «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ի, ՀՀ արդարադատության և արտաքին գործերի նախարարությունների, ՀՀ ազգային անվտանգության և ՀՀ ոստիկանության ներայացուցիչները:<br><br><u>Առաջարկներ</u><br>Առաջարկվում է ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացված ցուցանիշների համակազմի օրինակով, ինչպես ՀՀ գլխավոր դատախազությունում, այնպես էլ պետական լիազոր այլ մարմիններում ու վարչական լիազորությունների տիրապետող մնացած պետական (վարչական իրավախախտումներ գրանցող) մարմիններում ձևավորել էլեկտրոնային հենքով վարչական ռեգիստրներ, այդ մարմինների համապատասխան տեղեկատվությունը կենտրոնացնել խնդրո առարկա ոլորտում ստեղծվելիք համակարգող մարմնի ռեգիստրում (հատկապես որ նման մարմնի ստեղծման անհրաժեշտությունն արձանագրված է ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 8-ի նիստի թիվ 27 նախագծի` «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ «ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ» տեղեկանքում ՀՀ ԱՎԾ առաջարկությունների մասին փորձագիտական խմբի մոտեցումների ձևակերպման մեջ` 5-րդ առաջարկի վերաբերյալ), որի ամփոփ տվյալները առցանց ռեժիմով կտրամադրվի ՀՀ ԱՎԾ-ին` որոշակի պարբերականությամբ (ամսական կամ եռամսյակային և տարեկան)` ամփոփ հրապարակումների համար: | |
| | 110.3Իրականացնել կոռուպցիայի մակարդակը, գերիշխող տեսակները, բնագավառներն ու ոլորտները գնահատող ուսումնասիրություններ և հետազոտություններ, այդ թվում` դրանց իրականացումը պատվիրակել քաղաքացիական հասարակության կառույցներին, ինչպես նաև պաշտոնական վիճակագրության հետ համադրել և կիրառել | ՀՀ կառավարության պատվերով իրականացվել են կոռուպցիայի մակարդակի գնահատման, առանձին բնագավառներում կոռուպցիայի տարածվածության և միտումների, կոռուպցիոն ռիսկերի գնահատման և դրսևորումների բացահայտման վերաբերյալ ուսումնասիրություններ և հանրային հարցումներ | Տեղական կազմակերպությունների կողմից ՀՀ կառավարության պատվերով իրականացված կոռուպցիայի մակարդակի գնահատման, առանձին բնագավառներում կոռուպցիայի տարածվածության և միտումների, կոռուպցիոն ռիսկերի գնահատման և դրսևորումների բացահայտման | | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br>2010թ. Հայաստանի գործարար շրջանում անցկացված կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտությունը ԱՄՆ ՄԶԳ «հակակոռուպցիոն գործողության մոբլիզացման ծրագրի» օժանդակությամբ իրականացնում է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ – Հայաստան կազմակերպության կողմից:<br><br>ՀՀ պետական բյուջեի մասին 21.12. 2010թ. ՀՕ-176-Ն օրենքի հավելված 1-ի աղյուսակ 16-ով` դրամաշնորհների տրամադրման ծրագրերով 2011թ. համար ՀՀ կառավարության աշխատակազմին ՀՀ կառավարության գործունեության գնահատականների, կյանքի որակի և համայնքային կարիքների գնահատման հետազոտությունների իրականացման համար հատկացվել է 103.685.0 հազ.դրամ: Այլ ընթացիկ դրամաշնորհներ հոդվածով ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր է կնքվել, IPSC քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի հետ: Հետազոտության արդյունքները տես www.gov.am կայքում: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, ՀՀ հանրապետական գործադիր մարմիններ քաղաքացիական հասարակության միավորումներ (Համաձայնությամբ) |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | դրանց արդյունքների վերլուծությունը | | վերաբերյալ ուսումնասիրություններ ի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում արտերկրյա հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված համանման ուսումնասիրություններ ի ընդհանուր թվաքանակին | | | |

**3.20** Կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության աջակցություն

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011թ.** | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 111. Ընդլայնել քաղաքացիական հասարակության իրազեկությունը կոռուպցիայի, դրա պատճառների, վտանգների բնույթի, սպառնալիքների վերաբերյալ | 111.1 Իրականացնել կոռուպցիա երևույթի պատճառների, հետևանքների, էության վերաբերյալ թեմաներով քարոզարշավներ | Կոռուպցիայի պատճառների, հետևանքների, էության վերաբերյալ թեմաներով իրականացված քարոզարշավներ: | կոռուպցիայի, դրա պատճառների, վտանգների բնույթի, սպառնալիքների վերաբերյալ քաղաքացիական հասարակության իրազեկության մակարդակը , տոկոս | Տվյալները բացակայում են | Արդյունք1.Կատարված է մասնակիորեն<br><br>Կոռուպցիոն խնդիրների և հակակոռուպցիոն մոտեցումների վերաբերյալ գիտելիքների ընդլայնման և կոռուպցիայի շուրջ հասարակական իրազեկության բարձրացման նպատակով Հայաստան Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի (ՀԳՄԾ) կողմից 2008-2011թթ. կազմակերպել է յոթ հակակոռուպցիոն համաժողով՝ ՀՀ տարբեր պետական կառույցների, ՀԿ-ների և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ: ՇՊԱԿ-ների միջոցով իրականացվել են նաև հասարակական իրազեկման և կրթական աշխատանքներ: ՇՊԱԿ-ները տպագրում են տեղեկատվական նյութեր, այդ թվում՝ բրոշյուրներ ու լրատվաթերթիկներ, ունեն կայքէջ, և հասարակական իրազեկման քարոզարշավներ անցկացնելու և իրենց ծառայությունները գովազդելու համար օգտագործում են ցուցատախտակներ և հեռուստատեսային ու ռադիո հոլովակներ:<br><br>ՀԳՄԾ-ն դրամաշնորհ է տրամադրել ՛Հասարակական երկխոսության և զարգացման կենտրոն՛ ՀԿ-ին՝ դպրոցականների կողմից կոռուպցիայի թեմայով լուսանկարների և տեսաժապավենների փառատոն կազմակերպելու համար: ՀԳՄԾ-ն աշխատել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ՝ հակակոռուպցիոն կրթությունը հանրակրթական դպրոցներում ներդնելու նպատակով: ՀԳՄԾ դրամաշնորհառու ՛Վանաձորի ՀԿ կենտրոնն՛ իրականացրել է երիտասարդությանն ուղղված մամուլի դրամաշնորհային ծրագիր՝ քաղաքացիական ակտիվության խթանման և երիտասարդության շրջանում հակակոռուպցիոն դիրքորոշումների ամրապնդման նպատակով: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, Քաղաքացիական հասարակության միավորումներ (համաձայնությամբ) |
| | 111.2 Ապահովել կոռուպցիայի դեմ պայքարի պետական քաղաքականության իրականացման լուսաբանումը | Պետական բյուջեում նախատեսվել և տեղական ՀԿ-ներին և ԶԼՄ-ներին տրամադրվում են կոռուպցիա երեւույթի պատճառների, հետևանքների, էության վերաբերյալ թեմաներով քարոզարշավներ իրականացնելու դրամաշնորհներ<br><br>Կոռուպցիայի դեմ պայքարի պետական քաղաքականության իրականացման ընթացքը լուսաբանող հաղորդաշար ՀՀ հանրային հեռուստատեսությամբ հանրային ծառայությունների վերաբերյալ քաղաքացիներին իրազեկող տպագիր և էլէկտրոնային նյութերի պատրաստում ու | Կոռուպցիայի հիմնախնդրների շուրջ իրականացված քարոզարշավների թվի հարաբերությունը նույն ժա-մանակահատվածում կրթալուսավորչական բնույթի քարոզչական միջոցառումների ընդհանուր թվաքանակին | | Արդյունք 1. Կատարված չէ<br>ՀՀ 2011թ. պետական բյուջեում տեղական ՀԿ-ներին և ԶԼՄ-ներին կոռուպցիա երեւույթի պատճառների, հետևանքների, էության վերաբերյալ թեմաներով քարոզարշավներ իրականացնելու դրամաշնորհներ տրամադրելու վերաբերյալ ֆինանսական միջոցներ նախատեսված չեն:<br><br>Արդյունք 2. Կատարված է մասնակիորեն<br>Կոռուպցիայի դեմ պայքարի պետական քաղաքականության իրականացման ընթացքը լուսաբանող հաղորդաշարերի, հանրային ծառայությունների վերաբերյալ քաղաքացիներին իրազեկող տպագիր և էլէկտրոնային նյութերի պատրաստման ու տարածման ուղղությամբ Հայաստան Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի (ՀԳՄԾ) կողմից 2008-2011թթ. կազմակերպել է յոթ հակակոռուպցիոն համաժողով: Դրա հետ մեկտեղ համանման աշխատանքներ են իրականացվել ՀՀ տարբեր պետական կառույցների, ՀԿ-ների և այլ դոնոր կազմակերպությունների աջակցությամբ:<br>ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ իրավապաշտպան մարմինների հակակոռուպցիոն գործողությունների վերաբերյալ ֆիլմ է պատրաստվել և իրականացվել հասարակական իրազեկում: Բացի այդ, «Աքիլես» - ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպության ճանապարհային ոստիկանությունում կոռուպցիոն ռիսկերի հայտնաբերման ծրագրի շրաջանակներում իրականացվել է «Եթե ձեզ կանգնեցրել է տեսուչը» գրքույկի տպագրություն, վարորդների իրավունքների և պատասխանատվության վերաբերյալ իրազեկում: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, ՀՀ հանրային հեռուստառադիոընկերություն, ԶԼՄ-ներ |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | տարածում | | | | |
| | 111.3 Ապահովել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական վեբ-կայքերում հակակոռուպցիոն տեղեկատվության պարբերական հրապարակումը | ՀՀ տարածքային կառավարման մարմինների գործող վեբ կայքերը ուղղակիորեն կապված են ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության պաշտոնական կայքին | ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության վեբ կայքին միացված պաշտոնական վեբ կայքերի ընդհանուր թիվը նշված ժամանակա-հատվածում | | Արդյունք 1. Կատարված չէ:<br><br>ՀՀ կառավարության պաշտոնական ինտերնետային կայք էջում գոյություն ունի ծրագրեր բաժին որտեղ կա հակակոռուպցիոն ռազմավարության պատուհան: Այդուհանդերձ, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության պաշտոնական կայք չի ձևավորվել: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, համապատասխան պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ |
| 112. Ամրագրել քաղաքականության որոշումների կայացման գործում մասնակցության պարտադիր մեխանիզմներ | 112.1 Որոշումներ կայացնողներին կից առանձին խորհուրդներում ու հանձնաժողովներում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավում | Տարածքային կառավարման մարմինների` մարզային խորհուրդների կազմը համալրված է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներով | Օրենքների և Ենթաօրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ հասարարական կառույցների կողմից տրամադրված ուսումնասիրությունների, եզրակացությունների, հիմնավորումների, հանրային կարծիքի, տոկոս | | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ<br>ՀՀ տարածքային կառավարման մարմինների մարզային խորհուրդները համալրված են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներով: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիաի դեմ պայքարի խորհուրդ, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն |
| 113. Ապահովել հակակոռուպցիոն մարմինների գործունեության հրապարակայնությունն ու դրանց հասանելիությունը քաղաքացիական հասարակությանը | 113.1 ՀՀ մարզերում ձևավորել քաղաքացիների հակակոռուպցիոն հանրային ընդունարաններ | Ապահովված է քաղաքացիների հակակոռուպցիոն հանրային ընդունարանների կապը համապատասխան հակակոռուպցիոն մարմնի հետ | | | Արդյունք 1.Կատարված է ամբողջությամբ<br><br>Հայաստան Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի (ՀԳՄԾ) կողմից ստեղծված Հակակոռուպցիոն հանրային ընդունարանները ( ՇՊԱԿ) ձևավորված են և գործում են ՀՀ բոլոր մարզերում և Երևանում: ՀՀ դատախուզության և Հայաստանում գործող ՇՊԱԿ-ների ցանցի միջև 2011թ. հուլիսի 19-ին ստորագրված համագործակցության հուշագրով սահմանվում են դատախազության մարմինների ու ՇՊԱԿ-ների համագործակցության մեթոդներն ու եղանակները, մասնավորապես կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, կոռուպցիայի դեմ պայքարում ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերի և իրավունքների պաշտպանության ապահովման գործում: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, ԱՄՆ ՄԶԳ հակակոռուպցիոն ծրագիր |
| | 113.2 Հակակոռուպցիոն բոլոր մարմիններին կից ապահովել կոռուպցիոն դեպքերի մասին անանուն հեռախոսային «թեժ գծերի» և էլեկտրոնային կապի այլ միջոցներով անվճար խորհրդատվություն | | ՀՀ պետական կառավարման մարմիններին կից գործող անանուն հեռախոսային «թեժ գծերի» թվի հարաբերությունը հանրային ծառայություններ մատուցող պետական մարմինների | | Արդյունք նախատեսված չէ | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ դատախազություն ,ՀՀ ԿԱ ոստիկանություն, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ ԿԱ պետական եկամուտների |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ընդհանուր թվաքանակին | | | կոմիտե, ՀՀ վերահսկիչ պալատ |
| | 113.3 Հրապարակայնացնել հակակոռուպցիոն մարմինների գործունեությունը՝ ԶԼՄ-ներով պարբերական հաղորդումների, հրապարակումների, հանրային քննարկումների, լսումների, տպագրված բուկլետների, կոնֆերանսների և հանրային քարոզարշավի ժամանակակից այլ միջոցներով | Արդյունքներն ըստ գործողությունների ծրագրի | ԶԼՄ-ներով կոռուպ-ցիոն դեպքերի բացահայտմանը նվիրված հրապա-րակումների թվի հարաբերությունը նույն ժամանա-կահատվածում օրինախախտումները լուսաբանող հրապարակումների ընդհանուր թվաքանակին | | Արդյունք 1.Կատարվել է մասնակիորեն:<br>Գործողությունների ծրագիր չի մշակվել,<br>սակայն ՀԳՄԾ-ն դրամաշնորհներ է տրամադրել`ԶԼՄ-ներով հակակոռուպցիոն քարոզարշավների համար:Մասնավորապես,»Հատուկ ռեպորտաժ» հեռուստաշարը, «Ականատես. Իրական պատմություններ» ռիելիթի շոուն, (Հայաստանի հանրային հեռուստատեսություն), հակակոռուպցիոն թոք շոուներ՛Լոռի ՄԻԳ՛ հեռուստաընկերությամբ, հակառուպցիոն քարոզարշավ «Լոռի» հեռուստաընկերությամբ , հեռուստահազորդաշարեր «Ալտ» հեռուստաընկերություն (Արմավիր) տարբեր ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ, դրամաշնորհ «Հայաստանի հանրային կապերի ասոցիացիային» բարձրացնելու հասարակության, մամուլի և գործարարների իրազեկությունը` քաղաքացիների իրավունքների պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, ՀՀ դատախազություն ,ՀՀ ԿԱ ոստիկանություն, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, ՀՀ վերահսկիչ պալատ |
| 114. Զարգացնել քաղաքացիական հասարակության կարողությունները կոռուպցիայի դեմ պայքարում | 114.1 Տրամադրել հակակոռուպցիոն մոնիտորինգի, կոռուպցիայի մակարդակի, տարածվածության գնահատման և ուսումնասիրությունների իրականացման դրամաշնորհներ և պետական պատվերներ | Պետական պատվերի շրջանակներում ֆինանսավորվել են մասնագիտական ոչ պետական միավորումների կողմից կոռուպցիայի մակարդակի, տարածվածության գնահատման և ուսումնասիրությունների նախաձեռնություններ | ՀՀ պետական բյուջեով ՀԿ-ներին տրամադրվելիք դրամաշնորհների ծավալում հակակոռուպցիոն մոնիտորինգի, կոռուպցիայի մակարդակի, տարածվածության գնահատման և ուսումնասիրությունների իրականացման համար նախատեսված միջոցներ, տոկոս | 106380/ | Արդյունք 1. Կատրաված է ամբողջությամբ<br><br>ՀՀ պետական բյուջեի մասին 21.12.2010թ. ՀՕ-176-Ն օրենքով հավելված հավելված 1-ի աղյուսակ 16-ի սահմանված դրամաշնորհների տրամադրման ծրագրերով նախատեսվել է 2011թ. համար ՀՀ կառավարության գործունեության գնահատականների, կյանքի որակի և համայնքային կարիքների գնահատման հետազոտություններ ծրագրով հատկացվել է 106,380.0 հազ.դրամ: Այլ ընթացիկ դրամաշնորհներ հոդվածով ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր է կնքվել, IPCS քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի հետ: Հետազոտության արդյունքները տես www.gov.am կայքում:<br><br>Ցուցիչ 1. Ցուցիչ 1. Եթե հաշվարկենք ՀՀ պետական բյուջեի դրամաշնորհների նկատմամբ, ապա նույնիսկ 1 տոկոս չի կազմում, իսկ կոնկրետ ՀԿ-նրին տրամադրվող դրամաշնորհների ծավալը հնարավոր չէ առանձնացնել: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |
| | 114.2 Քաղաքացիական հասարակության մոնիտորինգի խմբերի, այդ թվում՝ հետաքննող լրագրողների համար կազմակերպել վերապատրաստման ծրագրեր և դասընթացներ | Քաղաքացիական հասարակության մոնիտորինգի խմբերի համար կազմակերպվել են վերապատրաստման 10 դասընթացներ ՀՀ 10 մարզկենտրոններում և Երևանում<br>Հետաքննող լրագրողների համար կազմակերպվել են վերապատրաստման 10 դասընթացներ ՀՀ 10 | Քաղաքացիական հասարակության մոնիտորինգի խմբերի, այդ թվում՝ հետաքննող լրագրողների համար կազմակերպված վերապատրաստման դասընթացների և դրանց մասնակիցների թիվը | | Արդյունք 1. Կատարված չէ:<br>Քաղաքացիական հասարակության մոնիտորինգի խմբերի համար 2011թ. առաջին կիսամյակում վերապատրաստման դասընթացներ չեն կազմակերպվել:<br>ՀՀ պետական բյուջեում այդ նպատակով միջոցներ նախատեսված չեն: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, Մասնագիտացած ՀԿ-ներ (Համաձայնությամբ) |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | մարզկենտրոններում եւ Երևանում | | | | |
| 115. Ակտիվացնել երկխոսությունը և համագործակցությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու բնակչության միջև | 115.1 Ներդնել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի արդյունավետ կիրարկումն ապահովող ընթացակարգեր և սահմանել վերահսկողություն՝ դրանց պահպանման նկատմամբ | «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի կիրակման մոնիտորինգի արդյունքներ | Տեղեկատվություն ստանալու վերաբերյալ ՀՀ պետական մարմիններին եւ ՏԻՄ-երին ուղղված դիմում/հարցումների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում այդ մարմինների կողմից տրամադրված տեղեկատվության ընդհանուր թվաքանակին | 100%: | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ:<br>ՀՀ արդարադատության նախարարության կողմից ամբողջութամբ կատարվում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի պահանջները::<br><br>Ցուցիչ 1-ի արժեքը հիմքն այն է, որ Նախարարությունում տեղեկատվության ստացմանն ուղղված բոլոր նամակներն պատասխանվել են: Ցուցիչ 1-ի արժեքը տրամադրվել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի կողմից:<br><br>Իրավիճակը գնահատվում է բավարար : | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ (Համաձայնությամբ) |
| 116. Հզորացնել և զարգացնել տեղեկատվության մատչելիությունն ապահովող մարմինների կարողությունները | 116.1 Նշանակել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում տեղեկատվության ազատության հարցերով պատասխանատու պաշտոնյաներ և իրականացնել նրանց մասնագիտական վերապատրաստման ծրագրեր | ՀՀ քաղաքային համայնքերում առանձնացված հաստիքով նշանակվել են տեղեկատվության տրամադրման պատասխանատուներ | Վերապատրաստում անցած տեղեկատվության ազատության հարցերով պատասխանատու պաշտոնյաների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում այդ պաշտոնյաների ընդհանուր թվաքանակին, | | Արդյունք 1. Կատարված չէ:<br>2011թ. առաջին կիսամյակում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում տեղեկատվության ազատության հարցերով պատասխանատու պաշտոնյաներ չեն նշանակվել: Նման պատասխանատու պաշտոնյաների հարցը կարգավորվում է «տեղեկատվության ազատության մասին»ՀՀ օրենքում կատարվող լրացումների հետ, որը 2010թ. հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ուղարկվել ՀՀ Ազգային ժողով: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ |
| | | | Տեղեկատվության ազատության իրավունքի խախտման դեպքերով պատասխանատվության ենթարկված պետական պաշտոնյաների տեսակարար կշիռը ընդհանուր խախտումների թվում: | | | |
| | | | «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման դատական հայցերով ի օգուտ քաղաքացիների | | | |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | | բավարարված վճիռների թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում ներկայացված հայցադիմումների ընդհանուր թվաքանակին | | | |
| 117. Բարելավել ֆիզիկական և իրավաբանական անձ-վարչական մարմին հարաբերությունների վարչարարությունը | 117.1 Պարբերաբար վեր-լուծել և շարունակակա-նորեն կատարելագործել վարչարարության օր-ենսդրական պրակտիկա-յի կիրարկման արդյունք-ները | Հակակոռուպցիոն հանրային ընդունարանների և մեկ պատուհանի համակարգն ու ընթացակարգերը ընդլայնված են | Պետական միջոցների հաշվին հանրային պաշտպանության անվճար իրավաբանական օգնություն ստացած սոցիալապես անապահով առանձին խմբերի ներկայացուցիչների թվի հարաբերակցությունը անվճար իրավաբանական օգնություն ստացած քաղաքացիների ընդհանուր թվի նկատմամբ | | Արդյունք 1.Կատարված է ամբողջությամբ<br>Հայաստան Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի (ՀԳՄԾ) կողմից ստեղծված Հակակոռուպցիոն հանրային ընդունարանները ( ՇՊԱԿ) ձևավորված են և գործում են ՀՀ բոլոր մարզերում և Երևանում:<br>Մեկ պատուհանի համակարգն ու ընթացակարգերը ներդրվել են նաև ՀՀ ոստիկանության անձնագրերի ու վիզաների ծառայության, ավտոմեքենաների տեխնիկական զննության և ավտոմեքեաների հաշվառման ու համարանիշների տրամադրման գործընթացներում: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, ՀՀ նախարարություններ |
| | | | Վարչական դատարանում պետության դեմ ուղղված հայցերի թվաքանակի հարաբերությունը ի վնաս պետության կայացված դատավճիռների քանակին (որքան մոտ է 1-ին այնքան բարձր կարելի է համարել ձայնի լսելիության մակարդակը) | | | |
| | 117.2 Վարչական մար-մինների կողմից քաղա-քացիներին մատուցվող ծառայությունների ըն-թացակարգերում բացա-ռել այլ պետական մար-միններից պահանջվող տեղեկատվությունը | Մոնիտորինգի և գնահաման նոր ընթացակարգերը սահմանված են | | | Արդյունք 1.Կատարված է ամբողջությամբ<br>1.ՀՀ կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N 30 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2011 թվականի մայիսի 12-ի 12.05.11 N 772-Ն որոշումով կանոնակարգվել է հողերի նպատակային նշանակության փոփոխման ընթացակարգը, հստակեցվել այն նախաձեռնելու իրավունք ունեցող անձանց շրջանակը: Դրա արդյունքում հնարավորություն է ընձեռնվել քաղաքացիներին փոփոխելու հողերի կատեգորիան:<br>2. ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 21-ի N 558-Ն որոշման ընդունմամբ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի (բացառությամբ անտառային | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիաի |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | քաղաքացիների միջոցով ստանալը | | | | հողերի) նպատակային նշանակության վերաբերյալ որոշման առկայության պայմաններում, վերացվել է  հանքավայրի շահագործման, հանքային իրավունքով ծանրաբեռնված և փաստացի շահագործման փուլում գտնվող՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի՝ լեռնահատկացման ակտով սահմանված չափով ու սահմաններով նոր որոշման ընդունման անհրաժեշտությունը:<br>3. ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N 733-Ն որոշմամբ սահմանվել են նոտարական ծառայությունների վճարովի մատուցման սակագները, հստակեցվել է դրանց գանձման ընթացակարգը, որի արդյունքում նոտարական ծառայությունների սակագները միասնականացվել են:<br>4. ՀՀ կառավարության 2011 թվականի  մարտի 31-ի N 350-Ն որոշմամբ տրանսպորտային միջոցի սեփականատերը տեխնիկական զննություն անցնելու նպատակով այսուհետ բանկից ստանում է տեխնիկական զննության կտրոնը՝ կատարելով համապատասխան վճարումներ, և միայն դրանից հետո տրանսպորտային միջոցը տեղափոխում է տեխնիկական զննության կայան, որտեղ լրացուցիչ վճարումներ այլևս չեն կատարվում:<br>5. ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի <<ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> N 716-Ն որոշմամբ տրանսպորտային միջոցների պետական հաշվառման գործողությունները, անկախ տրանսպորտային միջոցի կամ դրա սեփականատիրոջ հաշվառման վայրից, այսուհետ կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության վարչական մասի և տարածքային հաշվառման-քննական բոլոր ստորաբաժանումների կողմից, ընդ որում, տրանսպորտային միջոցի օտարման դեպքում տրանսպորտային միջոցը նախկին սեփականատիրոջ անվամբ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պետական գրանցումից և սույն կարգով սահմանված կարգով հաշվառումից հանվում է նոր սեփականատիրոջ սեփականության իրավունքը «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով գրանցելու և սույն կարգով սահմանված կարգով հաշվառելու հետ միաժամանակ՝ նույն հաշվառման ստորաբաժանման կողմից:Հաշվառման գործողությունները՝ սկսած քաղաքացու կողմից դիմելու, վերջացրած հաշվառման համարանիշեր և հաշվառման վկայագիր տրամադրելը այսուհետ կատարվում են <<մեկ հոսքագծի>> սկզբունքով:Վերացվել է տրանսպորտային միջոցի հաշվառման, հաշվառումից հանելու և վերահաշվառելու դիմումներ լրացնելու, ինչպես նաև իրավաբանական անձանց համար պետական գրանցման վկայական և պատճեններ ներկայացնելու պահանջը:<br>6.  ՀՀ կառավարության 2006 թվականի ապրիլի 14-ի <<ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 20-ի N 581-Ն և 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N 1158-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N 424-Ն որոշմամբ ճանապարհային ոստիկանության հաշվառման-քննական ստորաբաժանումները «A», «B» և «C» կարգերի ու «A1», «B1» և «C1» ենթակարգերի տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական ստանալու վարորդական քննություններն ընդունելու համար քաղաքացիներից որևէ ուսումնական կազմակերպություն ավարտելու վերաբերյալ, ինչպես նաև փաստաթղթեր չեն պահանջվում պոլիկլինիկական, հոգեբուժական և նարկոլոգիական բժշկական հաստատություններից Ճանապարհային ոստիկանությանն էլեկտրոնային և թղթային կրիչների միջոցով այն ստանում է ՀՀ առողջապահության նախարարությունից:<br>Ընդունված որոշումների կատարման նկատմամբ մոնիտորինգը իրականացվում է ՀՀ վարչապետի վերահսկողության ծառայության, ինչպես նաև քաղաքացիների շրջանում իրականացվող հարցումների միջոցով: | դեմ պայքարի խորհուրդ, |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգի ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 118. Ապահովել Զանգվածային լրատվության ոլորտը կարգավորող մարմինների մասնագիտական անկախությունն և ինքնուրույնությունը | 118.1 Բարձրացնել զանգվածային լրատվամիջոցների տնտեսական և մասնագիտական անկախության մակարդակը | Զանգվածային լրատվության միջոցների և լրագրողների հանդեպ ճնշումները բացառելուն ուղղված օրենսդրական պահանջների կատարման նկատմամբ իրականացվում է վերահսկողություն | Զանգվածային լրատվության միջոցների և լրագրողների հանդեպ ճնշումների բացահայտված դեպքերի քանակը | | Արդյունք 1. Կատարված չէ<br>ՀՀ կառավարության աշխատակազմը չունի «Զանգվածային լրատվության միջոցների և լրագրողների հանդեպ ճնշումները բացառելուն ուղղված օրենսդրական պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության» գործառույթ:<br>Առաջարկվում է այն փոխանցել ՀՀ արդարադատության նախարարությանը, որը ունի համապատասխան կառուցվածքային միավոր: | ՀՀ կառավարության աշխատակազմ, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ դատախազություն ԶԼՄ-ներ, Քաղաքացիական միավորումներ(Համաձայնությամբ) |
| | | | Լրատվամիջոցների հավատարմագրման և գործունեության ազատ միջավայրի ապահովման խախտումների վերաբերյալ հրապարակումների քանակը և բողոքների թիվը | | | |

**3.21** ՀՌԻՄԾ մոնիտորինգի ու գնահատման համակարգը

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 120. Ապահովել ՀՌԻՄԾ միջոցառումների մոնիտորինգի (մասնակցային մոնիտորինգի) և դրանց արդյունավետության գնահատման իրականացումը հանրային կառավարման, տնտեսության առանձին ոլորտներում և ճյուղերում | 120.1 Ձևավորել և շարունակականորեն զարգացնել ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման ինստիտուցիոնալ կարողությունները | ՀՌԻՄԾ մոնիտորինգի, վերլուծության և գնահատման ընթացակարգերը սահմանված են, ուղեցույցները ներդրված են<br><br>Քաղաքացիական հասարակության կառույցների միջև տեղեկատվության և փորձի փոխանակումն ու դրանց միավորումը քաղաքացիական հակակոռուպցիոն ցանցում ապահոված է | 1.ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման համապատաս-խան միավորների առկայու-թյունը պետական կառավար-ման մարմինների ընդհանուր թվում | 100 տոկոս | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ<br>ՀՌԻՄԾ մոնիտորինգի իրականացման ուղեցույցը և ձևաթղթերը մշակվել են ԱՄՆ ՄԶԳ հակակոռուպցիոն գործողությունների մոբիլիզացման ծրագրի օժանդակությամբ, փորձագետների կողմից ու հավանության են արժանացել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովի նախագահի կողմից, որի հիման վրա պատրաստվել են ՀՌԻՄԾ 2009թ. տարեկան, 2010թ. առաջին եռամսյակի, տարեկան և 2011թ. առաջին կիսամյակի դրությամբ մոնիտորինգի հաշվետվությունները:<br>Արդյունք 2. Կատարված է մասնակիորեն<br>Քաղաքացիական հասարակության կառույցները հակակոռուպցիոն ցանցում միավորելու ուղղությամբ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովի նոր կազմում ռոտացիոն սկզբունքով ներգրավվում են հակակոռուպցիոն գործունեություն ծավալող ՀԿ-ներ:<br>**Ցուցիչ 1**. ՀՀ պետական կառավարման 22 մարմինների 44 մասնագետներ անցել են ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման վերապատրաստման դասընթաց և պատրաստել ՀՌԻՄԾ 2009թ. տարեկան և 2010թ. առաջին եռամսյակի մոնիտորինգի հաշվետվությունը:<br>**Ցուցիչ 2.** ՀՀ կառավարության կողմից ՀՌԻՄԾ ներառված ոլորտներում մասնակցային մոնիտորինգ իրականացնելու նպատակով պատվերներ չեն տրամադրվել: Դրանք իրականացվում են դոնոր կազմակերպությունների աջակցությամբ ու ֆինանսավորմամբ:<br>**Ցուցիչ 3.** ՀՌԻՄԾ 2009թ. և 2010թ. առաջին եռամսյակի ամփոփ հաշվետվու-թյուններն ընդունվել են ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կողմից՝2010թ. հոկտեմբերի 12-ի նիստում ( արձանագրություն N 13.7/[54783]-10):<br>**Ցուցիչ 4.** ՀՌԻՄԾ և դրա իրականացման արդյունքների վերաբերյալ հանրային քննարկումներ դեռևս չեն կազմակերպվել<br>**Ցուցիչ 5.** ՀՌԻՄԾ շրջանակներում ներառված ոլորտներում և համակարգերում առկա կոռուպցիոն ռիսկերի գնահատման մասնակցային մոնիտորինգի զեկույցների վերաբերյալ տվյալներ չկան<br>**Ցուցիչ 6.** ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի ներքո գործող կառուցվածքա-յին միավորի բացակայության պայմաններում, պետական կառավարման մարմինների ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման միավորների և ՀՀ կոռուպցի-այի դեմ պայքարի խորհրդի միջև համագործակցությունը մասնակիորեն ապահովվել է ՀՌԻՄԾ մոնիտորինգի փորձագիտական խմբը:<br>**Ընդհանուր գնահատականը**՝ բավարար<br>**Առաջարկություն**: Ստեղծել կամ ձևավորել ՀՌԻՄԾ մոնիտորինգի մասնագիտացված կառուցվածքային միավոր, որի ուժերով ապահովել քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը ՀՌԻՄԾ մոնիտորինգի գործընթացներում՝սահմանելով մասնակցային մոնիտորինգի մեթոդաբանություն ու ընթացակարգեր: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, համապատասխան պետական կառավարման մարմիններ |
| | | | 2.ՀՀ կառավարության կողմից ՀՌԻՄԾ ներառված ոլորտներում մասնակցային մոնիտորինգ իրականացնելու նպատակով ներկայացված պատվերների քանակը | Տվյալներ չկան | | |
| | | | 3.ՀՌԻՄԾ ամփոփ հաշվետվու-թյուններն ընդունված են ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կողմից | Այո | | |
| | | | 4.ՀՌԻՄԾ և դրա իրականացման արդյունքների վերաբերյալ հանրային քննարկումների քանակը | Տվյալներ չկան | | |
| | | | 5.ՀՌԻՄԾ շրջանակներում ներ-առված ոլորտներում և համա-կարգերում առկա կոռուպցիոն ռիսկերի գնահատման մասնակցային մոնիտորինգի զեկույցների քանակական աճ, տոկոս | Տվյալներ չկան | | |
| | | | 6.Ապահովված է համագործա-կցությունը պետական կառա-վարման մարմինների ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման միավորների և ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի ներքո գործող կառուցվածքային միավորի միջև | Այո/մասնա կիորեն | | |
| | 120.2 Սահմանել ՀՌԻՄԾ կատարողական հաշվե-տվությունների, այդ թվում` տարեկան արդ-յունքների ամփոփման չափորոշիչներ և ընթացա-կարգեր | ՀՌԻՄԾ 2011թ. կատարողական հաշվետվություն<br><br>ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայիով ստանձնած պարտավորությունների | 1. OECD և GRECO, ՄԱԿ-ի կո-ռուպցիայի դեմ կոնվենցիայի պահանջների կատարման մոնիտորինգի զեկույցներ, չկատարված հանձնառություն-ների ազդեցության գնա-հատականը, փորձագիտական | | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ<br>ՀՌԻՄԾ մոնիտորինգի 2011 թ. առաջին կիսամյակի կատարողական հաշվետվությունը պատրաստված է ըստ սահմանված ուղեցույցի ու տիպային ձևաթղթի հիման վրա:<br>ՀՌԻՄԾ 2011թ. արդյունքների առաջին կիսամյակի տարեկան մոնիտորինգի հաշվետվությունը պատրաստ կլինի 2011թ. օգոստոսի վերջին և կներկայացվի ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովին: | ՀՀ կառավարության աշխաակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | կատարման վերաբերյալ զեկույց | գնահատական | | Արդյունք 2. Կատարված չէ<br>ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցը 2011թ չի կազմվի: Հայաստանը այն կիրականացնի ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի կողմից սահմանված ժամանակացույցին համապատասխան:<br>Տես http://www.unodc.org/unodc/en/treaties/CAC/IRG.html<br>Ցուցիչ 1. GRECO-ի երաշխավորությունների կատարման վերաբերյալ Հայաստանի առաջընթացի զեկույցը ներկայացվել է GRECO-ի քարտուղարություն: http://www.coe.int/t/dghl/monitoring/GRECO<br>OECD երաշխավորությունների կատարման վերաբերյալ Հայաստանի առաջընթացի զեկույցը ներկայացվել է OECD- ի քարտուղարություն: www.oecd.org/corruption/acn<br>**Ընդհանուր գնահատականը**՝ լավ<br>**Առաջարկություն:** ՀՌԻՄԾ կատարողական հաշվետվությունների պատրաստման հետ մեկտեղ, OECD և GRECO-ի երաշխավորությունների կատարման վերաբերյալ մոնիտորինգի զեկույցների պատրաստման պատասխանատվությունը վերապահել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի իրականացման հանձնաժողովին կից ստեղծվելիք մասնագիտական կառուցվածքային միավորին: | |
| | 120.3 Ներգրավել հակա-կոռուպցիոն մոնիտորինգի միջազգային լավագույն փորձն ու տեխնիկական աջակցությունը | Իրականացված Թյունինգ և Թայեքս ծրագրեր հակակոռուպցիոն մոնիտորինգի միջազգային փորձի ընկալման վերաբերյալ | Միջազգային լավագույն փորձը յուրացրած ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման միավորների թիվը ՀՌԻՄԾ մոնիտորինգի համակարգ ներգրավված միավորների ընդհանուր թվում, տոկոս | Տվյալները բացակայում են | Արդյունք 1. Կատարված է մասնակիորեն<br>ՀՌԻՄԾ մոնիտորինգի գործում նախագծված Թյունինգ և Թայեքս ծրագրեր չեն իրականացվել:Դրա փոխարեն միջազգային լավագույն փորձը փոխանցվել է ԱՄՆ ՄԶԳ հակակոռուպցիոն գործողությունների մոբիլիզացման ծրագրի , ԵԱՀԿ Երևանի գրասենյակի արդար կառավարման ծրագրի, ինչպես նաև ԵՄ ու ԵՀ խորհրդատուների կողմից: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |
| | 120.4 Կազմակերպել պե-տական մարմինների և քաղաքացիական հասա-րակության կառույցների ներկայացուցիչների հա-մար ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման վերաբեր- | Կազմակերպված վերապատրաստման դասընթացներ պետական կառավարման և քաղաքացիական հասարակության կառույցների | Վերապատրաստում անցած պետական ծառայողների թիվը, ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման համակարգում ընդգրկված պետական ծառա-յողների ընդհանուր թվում, տոկոս | 100 տոկոս | Արդյունք 1. Իրականացված է մասնակիորեն:<br>2010թ. մայիս և հունիս ամիսներին ՀՀ պետական կառավարման մարմինների ՀՌԻՄԾ պատասխանատուների համար ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողությունների մոբիլիզացման ծրագրի օժանդակությամբ կազմակերպվել է 2 վերապատրաստման դասընթացներ:<br><br>Ցուցիչ 1. 2010թ. մայիս և հունիս ամիսներին ՀՀ պետական կառավարման | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորի նգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատո ւ մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | յալ համատեղ վերապատ-րաստման դասընթացներ | ներկայացուցիչների համար, այդ թվում մասնակցային մոնիտորինգի մեթոդաբանության և գործիքների վերաբերյալ | ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնա-հատման գործառույթներ ստանձնած քաղաքացիական հասարակության միավորների ներակայացուցիչներից վե-րապատրաստում անցածների թվաքանակը, տոկոս | Տվյալները բացակայու մ են | մարմինների ՀՌԻՄԾ պատասխանատուների համար ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողությունների մոբիլիզացման ծրագրի օժանդակությամբ կազմակերպվել է 2 վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են ՀՀ պետական կառավարման 24 գերատեսչությունների 50-ից ավելի պատասխանատուներ: | |
| 121. Ապահովել քաղաքացիական հասարակության կողմից ՀՌԻՄԾ ազդեցության ընկալման գնահատման իրականացումը | 121.1 Գնահատել տնային տնտեսությունների, գոր-ծարարների և հասարա-կության առանձին թիրախ խմբերի շրջանում կո-ռուպցիայի մակարդակի կրճատման նկատելիու-թյունը և դրա տեմպերից ու պետական մարմինների մատուցած հանրային ծառայությունների որակից բավարարվածությունը | Տնային տնտեսությունների, գործարարների և հասարակության առանձին թիրախ խմբերի շրջանում կոռուպցիայի մակարդակի և ՀՀ պետական մարմինների մատուցած հանրային ծառայությունների որակի վերաբերյալ հարցում<br><br>Հարցման արդյունքների հիման վրա միջոցառումների ծրագրում փոփոխությունների կատարում<br><br>Կոռուպցիայի մակարդակի կրճատման նկատելիությունը և դրա տեմպերից, ինչպես նաև ՀՀ պետական մարմինների մատուցած հանրային ծառայությունների որակի բավարարվածության վերաբերյալ ամփոփ գնահատական, զեկույց | 1.ՀՀ Կառավարության կողմից ՀՌԻՄԾ ներառված ոլորտներում մասնակցային մոնիտորինգի հարցումներ իրականացնելու նպատակով հայտարարված մրցույթների քանակը | 1 | Արդյունք 1. Իրականացված է ամբողջությամբ<br>ԱՄՆ ՄԶԳ հակակոռուպցիոն գործողությունների մոբիլիզացման ծրագրի շրջանակներում Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների միջոցով 2010թ. իրականացրել է «կոռուպցիան Հայաստանում. Տնային տնտեսությունների 2010թ. հետազոտություն»: Այն վերջին երեք տարիներին իրականացված համաման 3-րդ հետազոտությունն է: ՀՀ կառավարության պատվերով «ԱյՓիԷսՍի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի կողմից իրականացվել է ՀՀ իշխանությունների գործունեության գնահատականները. տեսանելիությունը, ձեռքբերումներն ու բացթողումները սոցիոլոգիական հետազոտությունը, որի 7-րդ բաժինը նվիրված է պետական կառույցներում օրենքների խախտմանը և կոռուպցիոն դրսևորումներին:<br><br>Արդյունք 2. Իրականացված չէ:<br>ՀՌԻՄԾ միջոցառումներում փոփոխությունների կատարումը նախատեսված է 2012թ.-ին<br>Արդյունք 3. Իրականացված է ամբողջությամբ<br>ՀՀ կառավարության պատվերով «ԱյՓիԷսՍի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի կողմից իրականացվել է ՀՀ կառավարության գործունեության գնահատականների, կյանքի որակի և համայնքային կարիքների գնահատման սոցիոլոգիական հետազոտությունը,<br>Ցուցիչ 1.: ՀՀ պետական բյուջեի մասին 21.012.2010թ. ՀO-176-Ն օրենքով հավելված հավելված 1-ի աղյուսակ 16-ի սահմանված դրամաշնորհների տրամադրման ծրագրերով նախատեսվել է 2011թ. համար ՀՀ կառավարության գործունեության գնահատականների, կյանքի որակի և համայնքային կարիքների գնահատման հետազոտություններ ծրագրով հատկացվել է 106,380.0 հազ.դրամ:<br>Ցուցիչ 2. Տվյալները բացակայում են<br>Ընդհանուր գնահատականը՝ բավարար | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |
| | | | 2.Քաղաքացիական հասարակության կողմից ՀՌԻՄԾ ազդեցության ընկալման գնահատման հաշվետվություններում ներառված առաջարկների թիվը | Տվյալները բացակայու մ են | | |

### 3.22 Հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմիններ

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք 2011թ. | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| 123. Զարգացնել Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կարողությունները հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և վերանայման, համակարգման, հսկողության և արդյունքների գնահատման գործառույթների իրականացման գործում | 123.1Ամբողջականացնել Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կազմը | Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման հաշվետվություններ, զեկույցներ, կայացրած որոշումներ | Խորհրդի կողմից հրավիրված նիստերի քանակ, | 0 | Արդյունք 1. Կատարված է ամբողջությամբ<br>ՀՌԻՄԾ 2009թ. և 2010թ. առաջին եռամսյակի ամփոփ հաշվետվություններն ընդունվել են ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կողմից՝2010թ. հոկտեմբերի 12-ի նիստում ( արձանագրություն N 13.7/[54783]-10):<br>ՀՌԻՄԾ 2010թ. տարեկան և 2011թ. առաջին կիսամյակի արդյունքների մոնիտորինգի հաշվետվությունները պատրաստ են քննարկման ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովի նիստում:<br><br>GRECO-ի երաշխավորությունների կատարման վերաբերյալ Հայաստանի առաջընթացի զեկույցը ներկայացվել է GRECO-ի քարտուղարություն: http://www.coe.int/t/dghl/monitoring/GRECO<br>OECD երաշխավորությունների կատարման վերաբերյալ Հայաստանի առաջընթացի զեկույցը ներկայացվել է OECD- ի քարտուղարություն: www.oecd.org/corruption/acn | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |
| | | | ՀՀ միջազգային հանձնառությունները, պայմանավորված ՝ ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայիով, OECD և GRECO-ի երաշխավորություններով, իրականացված են | այո | | |
| | 123.2 Վերանայել Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի գործառույթների շրջանակը | Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կողմից իրականացվում են գիտելիքների ընդլայնման ու տարածման, քաղաքացիական հասարակության ներգրավվման, կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ քաղաքացիների դիմումներին, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին արձագանքման գործառույթները | | | Արդյունք 1. Իրականացված են մասնակիորեն<br>«Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի հունիսի 1-ի ՆՀ-100-Ն հրամանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»<br>ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծը մշակվել է ՀՌԻՄԾ մոնիտորինգի ու գնահատման փորձագիտական խմբի կողմից: Այն քննարկվել է հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի իրականացման հանձնաժողովի 2010թ. հուլիսի 21-ի ու հավանություն է արժանացել ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի 2010թ. հոկտեմբերի 12-ի նիստում(արձանագրություն N 13.7/[54783]-10): Այդուհանդերձ մինչ օրս հրամանագրի նախագիծը ՀՀ նախագահի կողմից չի ստորագրվել ու ուժի մեջ չի մտել: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |
| | 123.3 Ստեղծել Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից կառուցվածքային ստորաբաժանում | Կառուցվածքային ստորաբաժանման կողմից ապահովվում է կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի բնականոն գործունեությունը<br><br>Հակակոռուպցիոն ռազմավաության և | Կառուցվածքային ստորաբաժանման կողմից ապահովվում է կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի բնականոն գործունեությունը, (այո/ոչ) | Ոչ | **Արդյունք 1-2. Իրականացված չեն:**<br>ՀՌԻՄԾ մոնիտորինգը իրականացվում է ժամանակավոր փորձագիտական խմբի ուժերով:<br><br>Ցուցիչ1. Կառուցվածքային ստորաբաժանում չի ձևավորվել<br>Ցուցիչ 2. ՀՀ պետական բյուջեում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսված չեն<br><br>**Ընդհանուր գնահատականը**՝ անբավարար<br>**Առաջարկություն:** Ընդունել Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի հունիսի 1-ի ՆՀ-100-Ն հրամանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»<br>ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծը: Դրա հիմա վրա ձևավորել ՀՌԻՄԾ մասնագիտական | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |

| Ռազմավարության դրույթներ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք **2011թ.** | Մոնիտորինգային ցուցիչներ | Մոնիտորինգի ցուցիչի փաստացի արժեքը | Մեկնաբանություններ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|---|---|---|
| | | միջոցառումների ծրագրի առաջընթացի հաշվետվություն, միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցներ | | | կառուցվածքային ստորաբաժանումը, որը հնարավորություն կտա նաև ապահովելու ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի ու մոնիտորինգի հանձնաժողովի բնականոն գործունեության կազմակերպման ու նիստերի համար նյութերի նախապատրաստման գործընթացները:<br>**Ընդհանուր գնահատականը**՝ անբավարար | |
| | | | ՀՀ պետական բյուջեում նախատեսված են համապատասխան ֆինանսական միջոցներ ,(այո/ոչ) | Ոչ | | |
| 124. Բարձրացնել կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման մարմինների միջև համագործակցության արդյունավետությունը | 124.1 Սահմանել կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման մարմինների միջև համագործակցության հստակ ընթացակարգեր | Սահմանված ընթացակարգերի արդյունքներն գնահատված են | | | Արդյունք 1. Իրականացված չէ:<br>ՀՌԻՄԾ մոնիտորինգը իրականացվում է ժամանակավոր փորձագիտական խմբի ուժերով: | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |
| | 124.2 Զարգացնել կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման մարմինների միջև համագործակցության կարողությունները | Մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համատեղ իրականացված վերապատրաստման ծրագրեր | Համատեղ իրականացված վերապատրաստման դասընթացների, քանակ | | Արդյունք 1. Իրականացված չէ:<br>ՀՌԻՄԾ մոնիտորինգը իրականացվում է ժամանակավոր փորձագիտական խմբի ուժերով:<br>Ցուցիչ 1. Համատեղ վերապատրաստման դասընթացներ չեն իրականացված | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, |

## 4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՌԻՄԾ մոնիտորինգի պատասխանատու գերատեսչությունների կողմից առաջարկվում է վերանայել միջոցառումների ծրագրի ինչպես ակնկալվող արդյունքները, դրանց իրականացման պատասխանատուներին, այնպես էլ գնահատման մոնիտորինգի ցուցիչները: Մասնավորապես.

1. ՀՌԻՄԾ 10. Բարելավել ՀՀ օրենսդիր իշխանությանը ՀՀ կառավարության հաշվետվողականությունը ռազմավարական դրույթի՝ 10.1 Հզորացնել ՀՀ ԱԺ հանձնաժողովների մասնագիտական կարողությունները, միջոցառման իրականացումը **ՀՀ ֆինանսների նախարարությունն** առաջարկում է վերապահել ՀՀ ԱԺ աշխատակազմին, նկատի ունենալով, որ ԱԺ-ի բնականոն գործունեությունը ապահովում է ՀՀ ԱԺ աշխատակազմը:
2. ՀՌԻՄԾ 20. Ապահովել գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման համակարգերի թափանցիկությունն ու անկախությունը ռազմավարական դրույթի վերբերյալ **ՀՀ կրթության ու գիտության նախարարությունը** առաջարկում է պատասխանատո կատարող ճանաչել ՀՀ կառավարության աշխատակազմին, քանի որ միասնական քննությունների իրականացման գործընթացը համակարգում է «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որը գործում է ՀՀ կառավարության աշխատակազմի ենթակայությամբ:
3. ՀՌԻՄԾ 36. Ընդլայնել վեճերի լուծման այլընտրանքային միջոցների կիրառումը ռազմավարական դրույթը **ՀՀ արդարադատության նախարարությունը** առաջարկում է հանել, քանի որ «ընտանեկան, աշխատանքային վեճերով արբիտրաժի ինստիտուտի ներդրման հետ կապված օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը չկա, քանի որ ելնելով ընտանեկան և աշխատանքային վեճերի առանձնահատկություններից (ալիմենտային պարտավորություններ. ամուսնական պայմանագրից բխող վեճեր, երեխաների դաստիարակության հետ կապված վեճեր, ծնողական պարտականություններից բխող վեճեր, կոլեկտիվ պայմանագրի հետ կապված վեճեր և այլն) դրանք կարող են քննության առնվել և լուծվել միայն դատական կարգով»:
4. ՀՌԻՄԾ Քաղաքական կոռուպցիա ոլորտի 56, 57, 58 կետերի ռազմավարական դրույթներով նախատեսված միջոցառումների իրականացման հետ կապված **ՀՀ արդարադատության նախարարությունը** գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովի հետ կապված օրենքների նախագծերը պետք է մշակվեն ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կամ ԱԺ պատգամավորների կողմից:
5. ՀՌԻՄԾ 70. Բարձրացնել համայնքի ֆինանսական անկախությունը և համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի կառավարման արդյունավետությունը ռազմավարական դրույթի՝ 70.6 Ապահովել գույքահարկի և հողի հարկի հաշվառման և գանձման տեղեկատվական ավտոմատացված համակարգերի արդյունավետ շահագործումը միջոցառման վերաբերյալ **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն** առաջարկում է միջոցառման պատասխանատու գերատեսչություն նախատեսել ՀՀ ֆինանսների և ՀՀ տարածքային կառավարման նախարարություններին, որոնք տնօրինում են համապատասխան տեղեկատվությանը:
6. ՀՌԻՄԾ 78. Ուժեղացնել մասնավոր հատվածում կոռուպցիայի առաջարկի կանխարգելումը ռազմավարական դրույթի 78.1 Ամբողջականացնել հաշվապահական հաշվառման և աուդիտի միջազգային չափորոշիչների ներդրումը միջոցառման 1-3 ցուցիչների տվյալների հավաքման մեխանիզմների վերաբերյալ **ՀՀ ֆինանսների նախարարությունը** առաջարկում է «Հարկային, մաքսային և վիճակագրական ծառայություններին ոչ առձեռն ներկայացված հաշվետվությունների թիվը, տոկոս՝ հաշվետվությունների ընդհանուր թվի նկատմամբ (ԱՀՌԾ Սոցիալական և քաղաքացիական մեկուսացվածություն և անհավասարություն. մոնիտորինգի ցուցանիշներ e5.2- e5.4 ցուցանիշեր)» ցուցիչը տեղափոխել ՀՌԻՄԾ 13-րդ ռազմավարական դրույթի ցուցիչների կազմ:
7. ՀՌԻՄԾ 83. Ամբողջականացնել հանրային ծառայության բոլոր տեսակների օրենսդրական կարգավորումը, ռազմավարական դրույթի՝ 83.1 Ներառել պետական առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունները հանրային ծառայության շրջանակներում միջոցառումից **ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհուրդը** առաջարկում է հանել՝ «ՀՀ հանրային ծառայությունների մասին նոր ռազմավարության նախագիծ» ձևակերպումը:
8. ՀՌԻՄԾ 89. Ամբողջականացնել պետական և համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագրերը ռազմավարական դրույթը **ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհուրդը**

**և ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը** առաջարկում են վերասահմանել և այն ընդհանրացնել ՀՌԻՄԾ 109.3 ռազմավարական դրույթի միջոցառման հետ՝ ըստ համապատասխան ոլորտների:

9. ՀՌԻՄԾ 93. Ամբողջականացնել և օպտիմալացնել հանրային ծառայողների վարքագծի և շահերի բախման կարգավորումը ռազմավարական դրույթը **ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը** առաջարկում է ռազմավարական դրույթի միջոցառումներն առանձնացնել ըստ ծառայության տեսակների՝ համապատասխանաբար նրանց ճանաչելով որպես պատասխանատու կատարող մարմիններ: Բացի այդ, վերախմբագրել «Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին ռազմավարություն», «Հանրային ծառայողների էթիկայի կանոնների և շահերի բախման մասին օրենքի նախագիծ» ձևակերպումները:

10. ՀՌԻՄԾ 110. Բարելավել կոռուպցիայի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, փոխանակման և վերլուծության համակարգը ռազմավարական դրույթում, 110.2 Ամբողջականացնել կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ վիճակագրության համակարգը և ներդնել վիճակագրության վերլուծության մեթոդիկա միջոցառման վերաբերյալ **ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը** առաջարկվում է ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացված ցուցանիշների համակազմի օրինակով, պետական լիազոր այլ մարմիններում ու վարչական լիազորությունների տիրապետող մնացած պետական (վարչական իրավախախտումներ գրանցող) մարմիններում ձևավորել էլեկտրոնային հենքով վարչական ռեգիստրներ, այդ մարմինների կոռուպցիայի դեմ պայքարի համապատասխան տեղեկատվությունը կենտրոնացնել խնդրո առարկա ոլորտում ստեղծվելիք համակարգող մարմնի ռեգիստրում: Վերջինիս ամփոփ տվյալները առցանց ռեժիմով կտրամադրվի ՀՀ ԱՎԾ-ին՝ որոշակի պարբերականությամբ (ամսական կամ եռամսյակային և տարեկան)՝ ամփոփ հրապարակումների համար:

11. ՀՌԻՄԾ 91. կետով Բարձրացնել հանրային ծառայության համակարգում վարձատրության մակարդակի մրցունակությունը ռազմավարական դրույթի 91.1 Սահմանել պետական և համայնքային ծառայողների վարձատրության միջնաժամկետ և երկարաժամկետ քաղաքականությունը, միջոցառման վերաբերյալ **ՀՀ Աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությունը** առաջարկում է վերանայել ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի 91 և 92 կետերով նախատեսված միջոցառումները և դրանց իրականացման ժամկետները՝ դրանք համապատասխանեցնելով երկրի ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակին:

ՀՌԻՄԾ փորձագետների կողմից առաջարկվում է.

12. Ընդունել Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի հունիսի 1-ի ՆՀ-100-Ն հրամանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծը:
13. Դրա հիմա վրա ձևավորել ՀՌԻՄԾ մոնիտորինգի մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում, որը հնարավորություն կտա ապահովելու ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի ու մոնիտորինգի հանձնաժողովի բնականոն գործունեության կազմակերպման ու նիստերի համար նյութերի նախապատրաստման գործընթացները: Դրա հետ մեկտեղ ՀՌԻՄԾ մոնիտորինգի մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումը կապահովի ՀՌԻՄԾ կատարողական հաշվետվությունների OECD և GRECO-ի երաշխավորությունների կատարման վերաբերյալ մոնիտորինգի զեկույցների պատրաստումը:
14. ՀՌԻՄԾ 2009, 2010 և 2011թ. մոնիտորինգի հաշվետվությունների արդյունքներով, 2012թ. լրամշակել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագիրը: Մասնավորապես, հիմք ընդունելով կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում նոր մարտահրավերներն ու առաջնահերթությունները, մշակել ՀՌԻՄԾ 2013-2016թթ. ժամանակահատվածի համար գործողությունների նոր ծրագրի նախագիծ:
15. Նկատի ունենալով, որ ԱՄՆ ՄԶԳ «Հակակոռուպցիոն գործողությունների մոբիլիզացման ծրագիրը» ավարտվել է 2011թ. սեպտեմբերին, անհրաժեշտ է 2011թ. և հետագա տարիների համար պատվիրել «Կոռուպցիան Հայաստանում համապետական ներկայացուցչական սոցիոլոգիական զանգվածային հետազոտություն», որը կներառի ՀՌԻՄԾ-ով սահմանված

միջոցառումների ու ակնկալվող արդյունքների ազդեցության գնահատականները՝ ըստ ոլորտների ու բնագավառների: